Owsowmnasirowt'iwn manik'ea-pawlikean t'onrakec'inerow alandin ek gr-narekac'icc' t'owlt'ẹ

grec' Barsel Sargisean

Sargisean, Barseġ

urn:nbn:de:hbz:5:1-1564

~~Goussen 3536~~
~~4°~~

Goussen 4' 3536

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՄԱՆԻՔԷԱ—ՊԱՒՂԻԿԵԱՆ ԹՈՆՐԱԿԵՑԻՆԵՐՈՒ ԱՂԱՆԴԻՆ

ԵՒ ԳՐ. ՆԱՐԵԿԱՑԻՈՅ ԹՈՒՂԹԸ

g 3536

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՄԱՆԻՔԷԱ-ՊԱՒԼԻԿԵԱՆ ԹՈՆՐԱԿԵՑԻՆԵՐՈՒ ԱՂԱՆԴԻՆ

ԵՒ ԳՐԻՖԻԿԱՅԻՈՅ ԹՈՒՂԹՔ

ԳՐԵՑ

Հ. ԲԱՐՄԵՂ Վ. ՄԱՐԳԻՍԵԱՆ

ՅՈՒԽՏԷՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ



ՎԵՆԵՏԻԿ, Ս. ՂԱԶԱՐ

ՌՅԽԳ — 1893

3536

ՄԱՆ

ըէն.
Ենայ
հետ
բայց
դ-ին,
դաւա
մուն

Գրա
մարա
բակեց

1. «

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՆ

ՄԱՆԻՔԷԱ-ՊԱՒՂԻԿԵԱՆ ԹՈՆՐԱԿԵՑԻՈՑ ԱՂԱՆԴՆ

ԵՒ ԳՐ. ՆԱՐԵԿԱՑԻՈՑ ԹՈՒՂԹԸ

ԱՐԻՈՑՍ սկիզբն Ռուսա-Հայոց մամուլն՝ (1) իւր նորա խայծ պտուղներուն հետ կ'ընծայէր բանասիրաց, իբրև կաղանդչէք, յոյժ ցանկալի և շահագրգիռ մնացորդ մ'ալ ի դարու մեր արդիւնաշատ նախնեաց անյայտացած գանձերէն. այսինքն է՝ Նարեկեան վանաց առաջին վանահօր՝ Անանիայի Խոստովանաւորեան գիրը, որ թէպէտև իր մեծ գիտութեան հետ անարատ վարուց և սրբութեան համբաւ իսկ ստացած էր, բայց ամբաստանուելով իբրև համախոհ Թոնրակեցւոց աղանդին, ստիպուեցաւ իւր համանուն կաթողիկոսէն սուրբ հաւատոյ դաւանութիւն տալ իր մահուան անկողնոյն և օրհասական ժամուն մէջ, և երդմամբ նզովել անոր հակառակադեն աղանդը։

Գրոյս հրատարակողը՝ Մխիթարեան, այսպէս նաև անոր ընդդիմաբանողք՝ կարծեցին, թէ այս եղած ըլլայ Անանիայի՝ Թոնրակեցւոց դէմ գրած այն նշանաւոր երկասիրութիւնը, զոր

1. «Արարատ ամսագիր». Վաղարշապատ. 1892 Յունուար։

կը յիշատակեն գովեստիւք՝ ազգային հին մատենագիրք։ Սակայն իմ կարծիքով՝ արդէն լոյս տեսած այդ Գիր խոստովանութեանը՝ բնաւ պէտք չէ շփոթել Թոնրակեցւոց դէմ գրուած երկասիրութեան հետ, որ բոլորովին տարբեր սեռի գրութիւն մ'էր և արժանաւոր գլուխ գործոց՝ Նարեկայ մեծանուն վանահօր։ Մանաւանդ թէ այս վերջին գրուածքս՝ որ կը մնայ տակաւին ծածկուած, չգիտեմ ո՞ր անկեան և խաւարի մէջ՝ խոստովանութեան գրէն տարբեր յառաջ գրուած էր ջատագովութեան ձևով և ամենամեծ համբաւ հանած։

Ստուգիւ՝ այսպիսի մի եղելութեան ակն յայտնի ապացոյց են նախ նոյն ինքն Անանիայի գրութեան վերջաբանի սոյն խօսքերը. «Ի բոլոր սահմանեալ ամպարշտացն դաւանութեանց հեռի գոլով, ըստ յառաջագոյն գրելոց վասն նոցա»։ Բ. Ն. Շնորհալին՝ իւր առ Միջագեաս գրած թղթի մէջ՝ յետ յիշելոյ Թոնրակեցւոց մոլորամիտ բարբանջմունքը, դէք կ'ըսէին, թէ «Եկեղեցի՝ ոչ չինեալն է 'ի մարդկանէ, այլ մեք միայն, և մարդոցն գիրք, և որ 'ի նմա կարգեալքն են խաչ օրհնել և եկեղեցի, և այլքն ոչ են ընդունելիք». անդէն վրայ կը բերէ այսպէս. «Արդ՝ ընդդէմ զայսոսիկ և զայնպիսիսն ասողացն՝ յառաջագոյն հոգացին վարդապետքն ժամանակին, և գրեցին բանս խմաստութեան և լուծին բաւականապէս զտութիւն նոցա. և որ դք ընթերցեալ է զԳիրս երանելոյն Անանիայ Նարեկացւոյ վարդապետի որ ընդդէմ անիծելոյն Սմբատայ անքերի ուղիղ զայսոցիկ զպատասխանի»։ Իսկ Անանիայի ձեռքերնիս հասած թղթի մէջ որովհետև այսպիսի առարկութիւններ և պատասխաններ չկան և ոչ անունն անդամ՝ Սմբատայ. ուրեմն պէտք է որ մեզ անծանօթ մի ուրիշ գրուածքի մէջ ըլլային, զորս Շնորհալին իսկ կարդալու բաղդն ունեցած էր։ Գ. Գր. Մագիստրոս, առ կաթ. Աստուծոյ ուղղած թղթին մէջ, ուղելով Սմբատայ բոլոր ամպարիշտ գործոց և վարդապետութեանը վրայ գաղափար տալ. «Աղէ, ո՛ռ ընթերցիր, եթէ գտցես յայդմ դաւառի, զԳիրս Անանիայի սրբոյն և զերիցս վարդապետին... և զՑեառն Յովհաննէսի Հայոց վերադիտողի, թէ որպիսի՞... անիծեալն այն Սմբատ երևեցաւ»։ Առ Յովհաննու անկարելի էր գտնել զանուն Սմբատայ. ուրեմն հետևութիւնն յայտնի է։ Գ. ապացոյց մ'ալ կու տայ մեզ ամենաշնորհ վարդապետն Գր. Նարեկացի՝ որ իւր առ Ուխտն Կձաւոյ վանից գրած թղթոյն մէջ Թոնրակեցւոց մոլորութիւնները մի առ մի յիշատակելէն վերջ՝ կ'ըսէ առ Մուշեղ. «Արդ՝ զայսոսիկ հօրեղբայրն մեր (Ան. Նարեկացի՝ զոր յառաջուընէ յիշած էր) և վարդապետ՝ մեծաւ քննութեամբ

խնդիրս արարեալ իբրև զԱստուծոյ չատագով, և անդստին իբր զիմաստուն նախամարտիկ տապալեաց զառաստպեղաբան հայ-հոյուրքիւն անօրինելոցն Թոնրակեանցն»։ Յոյժ երախտապարտ ենք Գրիգորի մեզ ընծայած այս և ուրիշ տեղւոյն, ուր «զարմանագիծ հակաճառութիւն» ևս կ'անուանէ Անանիայի սոյն գրութիւնը։ Դիտելու ենք, որ սուրբ վարդապետս՝ առաջին տեղւոյն մէջ մատնանիշ կ'ընէ իւր հօրեղբօրը՝ մեծաւ քննութեամբ եղած և յէջմիածին հրատարակուած թղթէն տարբեր բաներ պարունակող և ընդարձակ գրուածքի մի վրայ։ Բ. թէ Անանիա՝ այն գրուածքով եղաւ իբրև նախամարտիկ և առաջին տապալիչ Թոնրակեցւոց մոլորութիւններուն։ Գ. թէ անկէց վերջ եկող մատենագիրք, այսինքն է Գր. Նարեկացին, Գր. Մագիստրոս և այլք՝ Անանիայի այն գրութենէն իբր 'ի ճոխ և ամենազէն զինարանէ առին յեռոյ իրենց զէնքերն և պատերազմեցան Թոնրակեցի մոլորեցուցիչներու դէմ։ Արդ՝ այսչափ յայտնի և որոշ վկայութեանց հանդէպ կը զարմանամ, թէ ի՞նչպէս Միաբանն և իրեն ընդիմաբանողք դարձեալ անճիշդ կարծիքներ հաղորդեցին Անանիայի գրութեան մասին։

Յոյժ ցաւալի է արդարև այսպիսի մեծ կարևորութիւն ունեցող գրուածքի մի կորուստն, որով միայն կարելի էր Հայոց և Թոնրակեցւոց յայնժամու եկեղեցական և քաղաքական կացութեանը վրայ կատարեալ գաղափար մի կազմել։ Սակայն միւս կողմանէ կ'ուրախանանք, որ այսպիսի ցաւալի կորստեան մի պակասը կու գայ լեցնել Գր. Նարեկացւոյ մէկ անտիպ թուղթը, որ՝ ինչպէս ըսուեցաւ, գրուած է առ Ռէխան Կճաւայ, և անոր խորագիրն է. «Թուղթ ամենաշնորհ վարդապետին Գրիգորի Նարեկացւոյ, զոր գրեաց 'ի հոյակապ և յականաւոր Ռէխտրն Կճաւայ, վասն կարգեացն անիծելոց Թոնրակեանց Յաւնէսի և Յաւրէսի, որ եկն զգետիս ոչխարաց և 'ի ներքոյ գայլ յափշտակող. որ և 'ի պտղոյն ճանաչեցաւ ամենից. զոր շուեալ երանելի վարդապետն գրեաց սակս ազատութեան 'ի չար կարգեացն»։

Անանիայի «խոստովանութեան գիրն» հրատարակուելէն անմիջապէս վերջ կարելի էր հրատարակել 'ի վայելս ուսումնասիրաց՝ նաև Ս. Գրիգորի այս թուղթս (¹), որ շատ մեծ առաւելութիւններ ունի պատմական և այլ կէտերով քան զառաջինը. բայց ժամանակն և պարագայք չներեցին ինձ։ Երկրորդ՝ ևս

1. Զոր կը յիշէ նաև Աղ. Երիցեան իբրև ծանօթ գրութիւն մի, առանց մի խօսք ըսելու, թէ ո՞ւր տեսած է զայն. որով կարծել կու տայ, թէ ի լրոյ գիտէր միայն։

մոռդիր էի միայն այս ծածկուած դանձս 'ի լոյս ածել պահանջուած լուսաբանութեամբք. բայց որովհետև Անանիայի յիշեալ գրութեան առթիւ՝ երկու դէմ ընդդէմ կարծիքներ ևս 'ի հրապարակ եկան Թոնրակեցւոց աղանդին և Հայոց վերաբերութեամբ՝ այլ և այլ դիտաւորութիւններով. այս պատճառաւ իսկ կարևոր համարեցայ մանաւոր ներածութեամբ մի ընդարձակել այս գրութեանս սահմանը, Մանիքէա—Պաւղիկեան Թոնրակեցւոց աղանդի ծագումն և կրած այլակերպութեանց պատմութիւնն հիմնաւոր կերպով ուսումնասիրելու համար, և ցուցնելու անոր մեր ազգին և պատմութեան վրայ գործած ազդեցութիւններն։ Առ այս մեծապէս նպաստամատոյց պիտի լինի մեզ մանաւանդ Գրիգորի Նարեկացւոյ պէս Թոնրակեցւոց աղանդին հմուտ և ականատես վարդապետին ծանրակշիռ հեղինակութիւնը։

Անանիայի «Խոստովանութեան գրի» հրատարակիչը՝ Մինաբան կամ լաւ ևս Գալուստ—Դպիր՝ Ցէր Մկրտչեան, իւր գրած Յառաջաբանի(1) մէջ կը համարի, թէ Թոնրակեցի կոչուած աղանդաւորաց շրջանը Թ դարու առաջին կէսէն կը սկսի և կը տևէ մինչև երկրորդ կէս ԺԱ դարուն։ Բ. Թէ այս և թէ Պաւղիկեան աղանդը՝ բուն հայկական հողի վրայ ծագեցան, կ'ըսէ, և անկէց անցան 'ի փոքր Ասիա, 'ի Միջագետս, Բալկանեան թերակղզին, Մինչին Եւրոպա, հիւսիսային Իտալիա և հարաւային Ֆրանսա։ Գ. Թէ այս կրկին աղանդները պէտք է նկատել իբրև հայ հոգևոր—մտաւոր կեանքի ինքնուրոյն արտայայտութիւն՝ մեծ և նշանաւոր իւր հետևանքներով։ Դ. Թէ նորակրօնութեան և բոլոր բողոքական—աւետարանական եկեղեցեաց բուն նախահայրերն և հիմնադիրք Հայոց աշխարհէն դուրս եկան։

Իսկ Մուրացանի կարծիքով(2), ընդհակառակն, Ա. Թոնրակեցւոց աղանդն իսկապէս հայկական մտաց ինքնուրոյն արտայայտութիւն չէր, այլ շարունակութիւն Պաւղիկեանց ծանօթ աղանդին, որուն վրայ, գուցէ հայ աղանդաւորներն յաւելեր են մի երկու (!) ուրիշ մոլորութիւններ ևս։ Բ. Պաւղիկեանց աղանդը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ հին Մանիքեցւոց աղանդը, որուն հիմնադիրն էր Մանի անուամբ քրիստոնէացած պարսիկ քահանայ մի։ Գ. Այս մոլորութիւնս իւր ծագմանէն երկար և կէս դար վերջ մնաւ 'ի Հայս, այն է 'ի կէս Է. դարուն։

1. Արարատ ամս։ Թիւ Ա. տարի ԻԵ. Յունուար։
2. Տես Նոր-Դար N°. 33 և 35, ԻՆՆԵՐՈՐԴ տարի, փետր. 1892։

Արդ՝ իրարու հակառակամարտ այս կարծիքներս և տեսութիւնքս՝ ուրոյն առանձին նկատելով կը պարունակեն մերթ ճիշդ, մերթ անճիշդ և մերթ ալ խառնաշփոթ եղելութիւններ, որով անկարելի է որոշ գաղափար կազմել վերոյիշեալ աղանդոց և անոնց ծագման և զարգացման վրայ։ Ստոյգ է Մխաբանի ըսածը, թէ Թոնրակեցւոց աղանդը՝ Թ դարու առաջին կէսին սկսաւ 'ի Թոնրակ։ Բայց կարելի՞ է եզրակացնել ասկէց, թէ այս է բուն ժամանակակէտ ծագման կամ սկզբնաւորութեան անոնց դաւանած աղանդին. ոչ բնաւ. որովհետև Հայք միայն Թոնդրակեցի կամ Թոնրակեցի անուանակոչութեամբ կը ճանչնային այն աղանդը և այն իսկ պարզապէս Թոնրիկ կամ Թոնրակ աւանին մէջ յերևան գալուն պատճառաւ. իսկ օտարազգի մատենագիրք՝ Պաւղիկեան կամ Մանիքեցւոց աղանդ անուանեցին և կ'անուանեն ցայսօր։ Երկրորդ՝ համարելով թէ այս կրկին աղանդներն իսկ հայ հողին վրայ սնած և բարգաւաճած ըլլան, սակայն և այնպէս կրնայ ըսուիլ իրաւամբ, թէ հայ հոգևոր–մտաւոր կեանքի ինքնուրոյն ծնունդ և արտայայտութիւն եղած լինին։ Ո՛չ երբէք. վասն զի Կայլիանիկեայ որդին Պօղոսը կամ Պայլիկ, ինչպէս մօր անուանէն՝ որ աւելի յունարէն հնչումն ունի, յոյն եղած կ'երևի՝ քան հայազգի. մանաւանդ եթէ դիտենք որ ինչպէս Թոնրակեանց աղանդը՝ Պաւղիկեանցին, այս վերջինս ալ՝ դարերով յառաջ մոռացուած հնագոյն աղանդի մի վերայայտնութիւնը կարէր լինել և էր իսկապէս։ Այս կէտս յետոյ պիտի քննենք անտարակոյս։ Եւ այն ընդհանուր եզրակացութիւնը՝ որով բոլոր բողոքական–աւետարանական դաւանանքներն իբրև նորախայծ շառաւիղներ կը համարուին Պաւղիկա – Թոնրակեան նախածնող աղանդին, այնքան հիմնաւոր չերևիր ինձ, այլ պարզապէս Գերմանիոյ և Անգղիոյ բողոքականներն և աւետարանականները շոյելու համար հնարուած դիւտ. վասն զի այն աղանդները,–զոր յետոյ քննելու առիթ պիտ'ունենանք,–գրեթէ բոլորովին հեթանոսական էին, և կը ձկտէին 'ի կործանումն քրիստոնէութեան, խորհրդոց եկեղեցւոյ և բարոյականին առհասարակ. իսկ բողոքական և աւետարանական եկեղեցիք, ընդհակառակն, կ'ընդունին ոչ միայն հին և նոր կտակարանները, այլ նոյն իսկ Մկրտութեան և Ս. Հաղորդութեան խորհուրդները և քրիստոնէական վեհ բարոյականը։

Գալով Մուրացանի յայտնած կարծիքին՝ կ'ըսենք, թէ անոր առաջին նախադասութիւնը թէև ճշմարտանման, բայց և այնպէս հայ աղանդաւորաց ընծայուած մասը խիստ աննշան է և ենթադրական, մինչդեռ իրաք անոնց խաղացած դերն և Պաւ-

ղիկեան աղանդին վրայ հետ զհետէ յաւելցուած երանդները՝ կարծուածէն շատ աւելի եղած են, ժամանակի կացութեան և ազգային առանձնայատկութեանց և պարագայից բերման համաձայն։ Պաւղիկեան աղանդն՝ ըստ ամենայնի յար և նման և հարթ հաւասար դնելը Մանիքեցւոց աղանդին և մոլորութեանց՝ է խիստ անկատար գաղափար մի տալ անոնց մասին. և սակայն զայս կը հաստատէ Մուրացան՝ իւր Բ. նախադասութեանը մէջ։ Բայց մենք պիտի չանանք ցուցնել, թէ Պաւղիկեանք՝ ժամանակին և պարագայից համեմատ ուրիշ շատ տարբեր ձևակերպութիւններ ևս մոցուցին իրենց համայնքի մէջ, որոնք Մանէսի և անոր յաջորդաց մտքէն անգամ անցած չէին, թող թէ գործադրուած։ Դեռ խնդրական համարելու ենք Մուրացանի Գ. նախադասութիւնն իսկ, որով ուզած է նա հաստատել, թէ Մանիքեցւոց աղանդը՝ իւր ծագմանէն երեք և կէս դար վերջ հաղիւ մուտք գտաւ Հայոց մէջ. վասն զի մեր կարծիքով՝ նոյն իսկ չորրորդ, հինգերորդ և վեցերորդ դարերում՝ ոչ միայն մնած՝ այլ հաւանօրէն արմատ իսկ ձգած էր հայ հողի և ազգաբնակութեանց մէջ՝ տարբեր անուանակոչութեամբք. իսկ յէ դարուն բուն Պաւղիկեան անուամբ վերերևեցաւ, Մէդուսայի պէս այլ և այլ կապանքներ լուծելով և տարբեր կերպարանքներ առնելով։ Ուստի մինչև հիմա ըրած մեր այս դիտողութիւններէն կարեն իմանալ ընթերցողք, թէ ի՞նչ տեսակէտերով պէտք է՝ և մենք մոտաւիր ենք ուսումնասիրել Պաւղիկեան – Թոնրակեաններու աղանդը։ Եւ որպէս զի այսպիսի ուսումնասիրութիւն մի հաստատուն հիմանն վրայ յեցած և ոչ օդոյ մէջ կեցած ըլլայ՝ պէտք է ցուցնել այն հին և նոր աղբիւրները՝ զորս ճանաչելու միջոց ունեցանք, և ոյք քննադատական արուեստին առաջնորդութեամբը դիմելով 'ի մի՝ կարող են կազմակերպել վերոյիշեալ աղանդոց մերկածուփ ծոմն, որուն յատակն ամէն բանէ աւելի՝ կը լուսան զառածմունք և հրէշք մարդկեղէն մոաց, և 'ի վերոյ կը շնչեն հովեր և կարկք ախտից և ունայնասիրութեան։

Հին աղբերաց նկատմամբ՝ դիտելու ենք որ մեր ազգին և աշխարհի մէջ կատարուած իրաց համար աւելի նշանակութիւն ունին տոհմայինք, և տոհմայնոց մէջ ալ նշանաւոր են Ասողիկ, Գ. 3, Աբ. Լաստիվերտցի՝ գլ. ԻԲ և ԻԳ, Գր. Մագիստրոս (1), Ն. Շնորհալի (2), Գր. Նարեկացի՝ իւր վերոյիշեալ թղթովը, Յովհ.

1։ Թուղթք՝ առ Կաթողիկոսն Ասորւոց և առ Սարգիս՝ Թոնրակեցի առաջնորդն Թուլայիից։

2. Թուղթ առ Միքայեղոս Ասորւոց։

Օձնեցի (1), Մնանիա Նարեկացին՝ արդէն յիշուած կրկին գրութիւններովն, որոնց ճոխն և ամենապատումը մեզի հասած չէ դժբաղդաբար, բայց անոր զեղմունքը տակաւին կը գտնուին յետագայից գրուածոցը մէջ՝ փոքր 'ի շատէ, և Թէոդորոս (2) Քրութենաւոր։ Իսկ յօտարաց՝ հնագոյն և հմտագոյնքն են նախ Պետրոս Սիկիլիացին (3), որ կը ծաղկէր մօտ 840 փրկչական թուականին. բայց իւր գրութեան նիւթը՝ հայ աղբերացմէ հաւաքած է, յամի Տեառն 868–869, երբ կայսեր կողմանէ զրկուեցաւ 'ի Տեփրիկա կամ Տիվրիկ, իբր յանձնակատար, նոր Մանիքեցւոց հետ գերելոց փոխանակութեան վրայ բանակցելու համար. և տեղւոյն Պաւղիկեցի իշխանին հետ, որուն անունն էր Խրիշոսխիր, վիճաբանութեան իսկ ելաւ՝ դարձնելու համար։ Իսկ անոր գրութեան բուն ժամանակամիջոցն՝ է մօտ յամն 872. այս ինքն է 'ի Կ. Պոլիս վերադառնալէն վերջ։ Երկրորդ աղբիւրն է բազմահմուտն Փոտ (4), որ կենդանի մատենադարան մի կոչուելու արժանիքն ունի հին ազգաց և բիւզանդական մատենագրութեանց պարունակութեամբ։

Նոր աղբերացմէ՝ ուշադրաւ են Greseler (5), Neander (6), Wiener et Engelhard (7), Journal des Religions (Paris), Wetzer (8) և Welte, և Bergier (9) իսկ յաղգայնոց, բայց 'ի վերև յիշուածներէն, ծանօթ էին ինձ Հ. Մկ. Զամչեան (10), և Աղ. Երիցեան (11)։

Օտարազգի հին աղբերաց այն երկասիրութիւնքը, զոր յիշեցինք, գրէթէ ամէնքն ալ Պաւղիկա–Թոնրակեցիներու աղանդը՝ Մանիքեցւոցին հետ նոյնը կը թուին համարել, վերջնոյն անունը միայն դրոշմելով իրենց գրուածոց ճակատին վրայ, թէ-

1. Ընդդէմ Պաւղիկեանց և Երևութականաց գրած ճառերուն մէջ. տպ. Վենետկոյ, 1833։

2. Ընդդէմ Մայրագումեցոյն. Վենետիկ 1833։

3. Hist. de Manichoeis. Bibl. Patrum, Lugd. XVI, 753:

4. Enarratio de Recentiorum Manich. Lib. I. Տես Bibl. Patrum, Gallandii, XIII, ed. Venetiis CIƆIƆCCLXXIX;

5. Etude et Critique, II, I.

6. Histoire de l'Église, III.

7. Journal Critique, VII, 1 sq. 129, sq.

8. Dictionnaire Encyclopédique de la Théologie Catholique. Traduction de J, Goschler, Paris, 1863, Tome XVII.

9. Dictionnaire de Théologie, Lille, 1844.

10. Պատմ. Հայոց. հտ. Բ։

11. Փորձ. Զորրորդ տարի N°. X. տպ. Տփղիսի, 1880։

պէտք փոխ՝ Պետրոս Սիկիլիացիէն աւելի քննաբան գտնուելով՝ Նորաճիւն (1) Մանիքեցւոց յաւելուածը կ'ընէ, որ շատ բան կը նշանակէ։ Իսկ ազգային մատենագրաց քով հազիւ հազ (2) Մանիքեցի անուան յիշատակութեան կը հանդիպինք Պաւղիկեանց վրայ խօսած պարագայից մէջ, այլ մերթ Պաւղիկեան, մերթ Երևութական, մերթ Թոնրակեան, և այլն, յորջորջած են ընդհանրապէս, իբրու այն թէ այս վերջիններս՝ Մանիքէութենէն բոլորովին տարբեր աղանդներ ըլլային։ Սակայն այս ընդհանուր երևոյթս՝ ունի իւր մասնաւոր պատճառները, զոր այլուր պիտի տեսնենք։

Հին աղբերաց այս անորոշ և տարտամ կացութեան պատճառաւ՝ նորք ևս մինչև ցայսօր որոշ և վճռական սահման մի չկարացին տալ Մանիքէա—Պաւղիկեան աղանդի մասին. որով կրօնից պատմութեան մէջ ահագին նշանակութիւն ունեցող և Արևելքի քրիստոնեայ ժողովուրդները դարերով յուզող այս բազմագլխեան աղանդը մնաց ցարդ իբրև գորդեան անլուծանելի կնճիռ մի։

Ուստի անոր գաղտնիքը լուծելու և բնորոշ գաղափար մի կազմելու միակ միջոցն է, ըստ իս, ունելով այն հանգոյցի նախկին ծայրը, կամ լաւ ևս՝ գտնելով անոր նախնական սկզբունքները, զորս հիւսեցին Մանի և Մանիքեցիք, դարձնել զայն ժամանակաց բազմաշրջիկ անիւին վրայէն, անցնել արևելեան ազգաց և բազմակերպեան հերետիկոսութեանց դիւթիչ մթնոլորտներէն,—որք թէպէտև քրիստոնէական հողի վրայ ձևացան, բայց հեթանոսական մտաց և բարուց ներշնչութիւնք էին իրաք, և տպաւորեցին հետզհետէ այն աղանդին վրայ իրենց յարափոփոխ երանգներն և ձևակերպութիւններն,—և այնպէս գալ հասնիլ մեր դարաւերջին, յորում՝ աւարտեցաւ այն հանգուցին վերջին ծայրը՝ գոգցես իմն վերստին հիւսուելու և ձգուելու համար յարևելից՝ յարևմուտս և հիւսիսէն՝ ցհարաւ, ինչպէս որ ըսած էր Պաւղիկեան աղանդապետներէն նշանաւոր մէկն, այն է Սարդիս։ Այո՛, պէտք է նախ դիտել, թէ Մանիքեցւոց աղանդն ի՞նչ էր իւր ծննդեան կամ նախկին կազմութեանը մէջ, և թէ յետագայ դարուց մէջ ի՞նչ նոր կերպարանափոխութիւններ և անուանակոչութիւններ ստացաւ։ Եւ ստուգիւ այսպիսի հարց և փորձ մի ընելն՝ ոչ այլ ինչ է, բայց եթէ լրջօրէն քննել և իմանալ Պաւղիկա—Թոնրակեան աղանդի ծագումն և յառաջխա-

1. Διήγησις περὶ τῶν νεοφάντων Μανιχαίων αναβλαστήσεως.

2. Գր. Նարեկացւոյ յիշեալ թղթին մէջ միայն գրուած է «Մանիենցւոց», այսինքն է Մանիքեցւոց։

զացումը։ Սակայն այս ալ պէտք է ըսել, թէ ես հօս ոչ թէ այս աղանդոց բոլորական պատմութիւնն՝ այլ այն աղանդին և պատմութեան շարժիչ պատճառներն և պարագաներն աւելի մատնանիշ ընելու նպատակ ունիմ։ Բաց ասի՝ պիտի ջանամ, ըստ կարելւոյն, լուսաբանել նոյնպէս պատմութեան մթին կողմերը։

Գնոստիկածին այն հինաւուրց աղանդը, որ զուգելով արևելեան վառ երևակայութիւնն՝ արևմտեան սրամիտ խոհերու հետ՝ ընկղմեցաւ և ընկղմեց հնդ–արիական ազգերը մերթ բնութեան գաղտնածածուկ և ստուերանիստ խորոցը մէջ, և մերթ արփաճեմեց մարդկութեան հորիզոնին վրայ՝ պատկելով իւր կախարդասար գլուխը բիւրազգի բժժանօք. որ մերթ հարուածեցաւ մինչ 'ի մահ և պարտասեցաւ, և մերթ ելաւ դարձեալ յասպարէզ՝ խաղալու իր մոգական դերն, ընդհանրապէս Մանիքէութիւն կոչուած է և ճանչցուած։ Սակայն այս անուանակոչութեանս, ինչպէս և անոր ծագմանը մասին, կը տարաձայնին իրարմէ արևելեան և արևմտեան աղբերք (1)։ Առաջինները, այսինքն է ասո-

1. Զորս քննասիրաց դիւրութեան և գրուածքիս ատաղձի համար՝ կարևոր կը համարիմ ատոնց յիշատակել։ Ս. Արքելաոս՝ Acta Disputationis cum Manete, որուն ասորի բնագիրն անյայտացել է և միայն լատիներէն հին թարգմանութեամբը ծանօթ.—Աղեքսանդր Լիկոպօլսեցի՝ տես Gallandi, Bibl. Patrum t. IV.—Սրապիոն Թումիզացի.—Տիտոս Բոստրացի.—Դիդիմոս Աղեքսանդրացի։ Սոցա գործերը կը գտնուին առ H. Canisii, Lect. antiq. ed. Basnage, Amstelodami 1725, vol. I, և Gallandi, Bibl. Patr. t. V, VI,—Ցատպիոս,—Մարիոս,—Վիկտորին Ափրիկեցի, Liber ad Justinum Manichoeum, contra duo principia Manich. in Sirmordi Opera varia, t. I, և Gallandi, t. VII.—Ս. Եփրեմ Ասորի՝ ճառ Վիճաբ, ընդդէմ Հերետիկոսաց,—Ս. Եպիփան Haeres. 66.—Ս. Կիւրեղ՝ Catech. VI.—Ս. Օգոստինոս՝ De Actis cum Felice Manichoeo, De More Manich., Contra Juli, De Genesi, contra Manich. Liber de Haeres. C. 46;—Այսպէս նաև Ս. Հերոնիմոս, Ռուփինոս, Մեծն Լևոն և Պրոդոկեցիոս, Մեծն Բասիլ, Ապողինար, Դիոդոր Տարսոնացի, Եշտեբիոս Եմեսացի։ Մեր սուրբ Հարցմէ նշանաւոր է Եզնիկ՝ իւր Եղծ աղանդոց փոքրիկ բայց աննման երկասիրութեամբը։

Իսկ նորերէն՝ Տիլլմոն՝ Mém. t. IV, l'Héresie des Manichéens, p. 367-411,—Բոսոբաք՝ Hist. Critique de Manichée et du Manichéisme, Amsterdam, 1734—1739, 2 Vol.—Կալ՝ Hist. liter. script. ecl. s. v. Manes, Basileæ,, 1741, vol. I. p. 138-45.- Վալիս Hist. Haeres. V. I, p. 683.—Բասնագիոս՝ In Praef. general., C I.—Հ. Թոմմ. Զէքքարի՝ Exercitationes in universa Leonis M. Opera, Romæ, 1751, p. 1-200.—Ա. Նէանդր՝ Hist. de l'Église, t. I, part. II, p 813-59, Hambourg, 1829.—Վէցլէր և Վէլտ՝ Dictionnaire Encyclopédique de la théologie, t. XIV. p. 165-175, Paris, 1862.—Բեռժիէ՝ Dictionnaire Encyclopédique, Lille, 1844;

բա–արաբ և հայա–պարսիկ հեղինակութիւնք, թէև համեմատութեամբ կրսեր, բայց որովհետև մի և նոյն հողի և ազգաբնակութեանց մէջ կ'ապրէին, յորս ամէն ինչ էր աւանդական անցելոյն, և ուր ապրեցաւ և գործեց նա ինքն Մանի. ուստի ըստ այսմ՝ անոնց վկայութիւնքն ևս աւելի ճիշտ և նշանակալից ըլլալու են՝ քան թէ յոյն և լատին աղբերացը, որոնք թէպէտև հնագոյն, թէպէտև ծանրակշիռ՝ բայց գրէթէ մի և նոյն ականէ կը բղխեն և միակերպ կ'ընթանան։ Այո՛, 'ի նկատի ունելով Ս. Աբգելաոսի յիշեալ գրութեան յունարէն թարգմանութեան մի գոյութիւնը՝ կարելի է ըսել, թէ Ս. Կիւրեղ Երուսաղեմացին, Եպիփան, Սոկրատէս, Թէոդորետոս և այլ Հարք Դ. դարուն զայն կարդացել և անոր հետևել են, թէպէտև յարդեաց ոմանք հակառակը կարծեցին։ Ուստի բաց 'ի Բոսորեէ և Նէսանդրէ՝ քննադատք առ հասարակ կ'ընդունին Ս. Աբգելաոսի գործերն իբրև բաւական աղբիւր ոչ միայն Մանէսի պատմութեան, այլ և արևմտեան հեղինակութեանց։

Ըստ Ս. Աբգելաոսի՝ Մանէսը չէ բուն հնարիչ Մանիքեցւոց աղանդին, այլ Սկիւթիանոս ոմն Սարակինոս, որ երկար ճանապարհորդութիւններ ընելէն յետոյ՝ հաստատուեցաւ Յեգիպտոս։ Սա՝ Ցերեբինթ անունով աշակերտ մ'ունէր, որ կը կոչուէր Բուդդաս կամ՝ լաւ ևս Բուդէս, և ինք զինքը կուսածին կը համբաւէր. հրեշտակի մի ձեռքով տարուած մեկնակ լերան մի վրայ և հոն սնած։ Ցերեբինթ՝ իր վարդապետին համար չորս գիրք գրած կ'աւանդուի, որոնք հետևեալ մակագրութիւններս կը կրէին. Գաղտնիք, Գլխաւոր կետեր, Աշտարան և Գանձ։ Սկիւթիանոսի մահուանէն վերջ՝ այս չորս երկասիրութիւններն հետը առած Ցերեբինթ չոգաւ Քաւդէութեան կեդրոնատեղին՝ Բաբելոն, որ այն ժամանակ պարսկական իշխանութեան ներքև կը գտնուէր, և չէր կորուսած դեռ իր նախկին փայլը։ Հոն բարձը 'ի գլուխ պարծելով եգիպտական իմաստութեամբ՝ կը վարդապետէր համաշխարհական իրաց նախագոյակ վիճակն՝ յառաջ քան զարարչագործութիւն, և արեգական և լուսնի միջոցով հոգւոց գաղթելն և փոխանցումը վիճակէ 'ի վիճակ։ Կ'ըսուի թէ օր մի տանեաց վրայ իր մոգական գործողութիւնները խուռն բազմութեան առջև կատարած ժամանակ՝ Սիմոն Մոգի պէս զարկաւ(1) զգետնի և մեռաւ։

1. Այս դէպքս՝ հայերէն «Գիրք Հերձուածոցի մէջ (տպ. Էջմիածնի 1892) Կերինթոսի վրայ եղած կը պատմուի, հանդերձ Մանեայ արարուածներով. բայց ժամանակն և պարագայք անյարմար կ'երևին։

Յետ որոյ անոր այրի կինը՝ յիշեալ չորս գրուածոց հետ եօթնամեայ դերի մ'ևս գնեց, որուն անունն էր Կուբբիկոս, զոր ուսոյց և վարժեցոյց 'ի գիրս և յարուեստ Տերեբինթայ։ Այրին մեռնելով՝ պատանին Կուբբիկոս գնաց Պարսից ոստանը, և տեղափոխութեան հետ՝ անունն ևս փոխելով կոչուեցաւ Մանիէս, ըստ յունին։ Բայց արևելեայք Մանի կը յորջորջեն. իսկ լատինք՝ Մանիքէոս (1)։

Մանէս՝ ունեցաւ անդ երեք աշակերտներ, Թոմման, Ատտաս և Հերմաս, որոնք Ասորի քրիստոնեաներ եղած կ'երևին՝ ըստ հնչման անուանց, զորս յղեց, կ'ըսուի, 'ի Հնդիկս և յԵգիպտոս՝ իր աղանդը տարածելու նպատակով. թէպէտև դեռ ամբողջ դրութեան մի վերածած չէր զայն, այլ ժամանակակից Մոգութեան և Քաւդէութեան պարունակին մէջն էր։ Այս ժամանակ Շապհոյ, — հաւանօրէն Երկայնակեցի, — արքայորդին ծանրը կերպով հիւանդանալով՝ խոստացաւ Մանէս արքայից արքային բժշկել զնա իւր մոգական արուեստովը. բայց վրիպեցաւ 'ի հնարից. մեռաւ արքայորդին, և Մանէս թագաւորին հրամանաւ բանդ դրուեցաւ։ Երբ մոռացած նա իր կրած վշտերը՝ ապագայ աղանդին կազմակերպութիւնը կ'երկնէր 'ի մտի, դարձան անոր արբանեակներն և պատմեցին, թէ անկարելի է ծաւալել նոր վարդապետութիւնը. վասն զի քրիստոնեայք մեծ ընդդիմութիւններ կ'ընեն։ Այս ատենս հրամայեց հնարագէտն Մանէս՝ իրենց երուն գնել շուտով քրիստոնէից սրբազան գրքեանը. և իւր անսովոր աղանդը քրիստոնէից ևս դիւրամատչելի ընելու համար, մտածեց իր հեթանոսական դրութեան՝ քրիստոնէական երևոյթ մի տալ։ Եւ բաղդը բանեցաւ. զի հանդիպելով Ս. Գրոց այն տեղոյն՝ ուր Հոգւոյն Սրբոյ գալուստը կ'աւետի՝ տարակուսեալ և լքեալ մարդկութեան, իշխեց նա յետին յանդգնութեամբ իրեն պատշաճեցնել զայն։ Խրախուսեց այսու իր յուսաբեկ աշակերտներն և ղրկեց վերստին քարոզելու իր աղանդը։ Քիչ օրէն ինքն իսկ փախչելով բանդէն՝ ամրացաւ Միջագետաց և Պարսից սահմանագլուխը գտնուող Արաբիոն դղեկին մէջ. և այն հողին վրայ՝ ուր Միսասոռաճոռքեան և Երկոռոռքեան կրօնքները մերթ բուռն կերպով իրարու կ'ընդհարկանէին, և մերթ ալ գնոստիկեան խնամատութեան և Հնդ—արիական բնապաշտութեան յոգերով կաշկանդուած՝ երկու իրարապատ վիշապներու նման կը կնճռէին, հոն նախ սկիզբն տուաւ իւր անսովոր գործին։

1. Տես առ Ֆապրիցիոսի, Bibl. Graeca, ed. Harles, vol. VII, p. 310-311, այս անուանց ծագման մասին եղած տարբերութիւնները։

Յաջող ելք ունենալու համար՝ վաստակեցաւ Քաշկարէն Մարկեղոս անունով հարուստ և զօրաւոր մէկն, որուն, իբրև Քրիստոսի առաքեալ, յորդորական նամակ (1) մ'ալ գրեց՝ ընդունելու իւր աղանդը, որուն մէջ գոգցես իմն կը ներկայացնէր զԱստուած՝ իբրև հեղինակ չարին. իսկ զՔրիստոս իբրև լոկ մարդ կանանցածին։

Մարկեղոս՝ խնայցոյց այս բանս Ս. Աղքեղաոսի, որ չդանդաղեցաւ բնաւ հրաւիրելու զՄանէս հրապարակային վիճաբանութեան։ Հրաւէրքն ընդունուեցաւ, և Մանէս յաղթուելով քրիստոսազօր մեծ խնաստասիրէն՝ վերադարձաւ իր ամրոցը. բայց հոն կալանաւորեցաւ հրամանաւ Շապհոյ, և յամի ցեառն 277 կենդանւոյն մորթեղերծ եղաւ իբրև հերետիկոս։ Ագաւասիկ Մանիքեցւոց աղանդապետի համառօտ պատմութիւնն՝ ըստ արևմտեան աղբերաց։

Իսկ արևելեան աղբիւրք՝ տարբեր կերպով կը ներկայացնեն զայն։ Մանի՝ Պարսիկ էր, կ'ըսուի, ծագմամբ և քրմական նըշանաւոր ընտանիքէ մի։ Իր մանկութենէն 'ի վեր զրադաշտական վարդապետութեան և կրօնից մէջ ծնած և սնած էր. իսկ հասակն առնելով՝ ընդդրկած էր զՔրիստոնէութիւն և եղած հովիւ Էնվազի քրիստոնեայ հօտին։ Ցժգոհ ըլլալով իւր նոր կըրօնքէն՝ ուզեց մէկ դրութեան վերածել Քրիստոսի և Զրադաշտայ վարդապետութիւնքը, և ինքզինքը ներկայացուց իբրև բարեզարդիչ ոմն՝ յԱստուծոյ կոչուած և ներշնչուած։ Այսու հանդերձ վերստին հալածուելով 'ի քրիստոնէից՝ արտաքսեցաւ 'ի բաց։ Յամին 270 շահեցաւ Շապհոյ բարեկամութիւնը. բայց երբ Մոգերը ծանուցին և ամբաստանեցին զնա իբրև մոլորեցուցիչ՝ փախաւ նա արևելեան Հնդկաստան և 'ի Ճենս։ Ժամանակ մի ծածկուած մնաց Թուրքաստանի այրերէն միոյն մէջ, ուր յօրինեց շարք մի պատկերներու, որոնք այլաբանօրէն ձևերով կը ներկայացնէին իր վարդապետութիւնը, և յետոյ կազմեցին այն խորհրդաւոր գիրքը՝ զոր Պարսիկք անուանեն Իրտէնկի–Մաանի։ Կը համբաւէր, թէ ինքն ունէր օդոյ մէջ վերաթռչելու զօրութիւն մի, և թէ անոի բերած էր իւր սրբազան մատեանը։ Կ'աւանդուի, թէ արքայն Վռամ ուղած է անգամ մի ներկայ գտնուելու Մանեայ՝ Պարսից Մոգերուն հետ ըրած վիճաբանութեանը, ուր դարձեալ մոլորեցուցիչ յայտնուեցաւ Մանի. և չուզելով յետս կոչումն ընել, յամին 277 եղաւ մորթեղերծ։

1. Այս նամակս հասած է առ մեզ, և կը գտնուի Ս. Աղքեղաոսի Acta Disputationis cotra Man., n. 5, և Ս. Եպիփանի Haeres, 66, n, 6, գործերուն մէջ։

իսկ անոր կաշին լեցուելով կախուեցաւ Ճոնտիշապուհի քաղաքի դրան վերև՝ միւս հեռուողներն ահաբեկելու համար։ Ա-հա արևելեան աւանդութեանց հակիրճ բովանդակութիւնը, որ ինչ ինչ կէտերով կը տարբերի արևմտեայց աւանդածներէն։

Բայց կան էական կէտեր՝ որոնք արևմտեան աղբերաց քաջ կը համաձայնին. օրինակ իմն՝ դնելով Մանէսի մահը փրկչական թուականին 277, թէև անոր չարատանջ մահուան պատճառ եղող աղբայք բոլորովին կը տարբերին իրարմէ. այսինքն է ըստ առաջնոց՝ Շապուհ, և Վռամ ըստ վերջնոց։ Եղնիկ՝ արևելեան և արևմտեան աղբերացմէ նշանակուած՝ բոլորովին տարբեր պատճառ մի կու տայ Մանեայ սպանման. այսինքն է՝ «Յանդիմանեալ յաղջկանց խաղտելոց՝ մերթեղերծ մահուամբ պակասեցաւ 'ի կենաց»։ Տես տպ. Վենետկոյ, 1826։ Մանէսի ազգային ծագման մասին իսկ՝ երկուստեք եղած տարաձայնութիւնը՝ հակասական ըլլալէ հեռի է. որովհետև արևմտեան աղբերք՝ թէպէտև անոր ազգութիւնը նշանակած չեն, բայց Պարսիկ ըլլալն ալ մերժած չեն այնու։ Սակայն մէկ կողմէն մեզ ընծայուած Կուբրիկոն, իսկ միւս կողմէն Մանի անուանց աչքի զարնող տարբերութիւնքը՝ Մանէս և Մանիքէոս ուղղագրութեան ձևերուն տակ դեռ աւելի կը խրթնանան և կը կնճռին. մանաւանդ թէ եղրակացնել կու տան, թէ Մանիհեանց աղանդապետին անունը կամ՝ ազգանունն այլ ինչ եղած է երբեմն. և թէ այս վերջին պիտակ անուններս յետոյ ուրեմն դրուեցան անոր՝ բոլորովին տարբեր պարագայից մէջ։ Եւ իրաք Ս. Աղքելաոս (1) կը թուի հաստատել մեր կարծիքը. զի կը ծանուցանէ, թէ ասորա-քաղդեարէն լեզուի մէջ, որով գրեց նա իր գործերը, Մենահեմ (2) = Menahem, Manem Միխթարիչ կը նշանակէ, որ կը համապատասխանէ յունարէն Παράκλητος ին։ Եւ ինչպէս տեսանք, նա իւր գրութիւնն և գրութիւնը հաստատելէն վերջ, այսինքն է յամի Տեառն 270 ստուգիւ այս մակդիրս իրեն սեփականեց։ Եղնիկ (3) միշտ արևելեան ձևով՝ Մանի՝ կը վարէ. որ աւելի հին է, ինչպէս տեսանք փոքր ինչ յառաջ և համապա-

1. Acta Disp. Contra Man. n. 36.

2. Առանց մերժելու Ս. Աղքելաոսի մեկնութիւնը՝ աւելի հաւանական կը թուի ինձ ստուգաբանել Մանէս կամ Մանի անունը արիական բարբառով՝ Manyu, սանսկրիտ Manyu, զէնդ Mainyu, այսինքն է հոգի, միտք, մտածութիւն և փոխաբերաբար՝ նաև մարդ, որոց նախկին և հնագոյն ուղղագրութիւնքն են manus և manu, manas և mananh. Տես Fick, Jndogermanisches Wörterbuch. p. 294, Göttingen, 1871.

3. Եղծ աղանդոց. Վենետիկ, էջ 116, 117. 287, 290, 293։

տասխանող պարսիկ, զանդիկ և սանսկրիտ բարբառին։ Իսկ Գր. Նարեկացւոյն ծանօթ է նաև արևմտեայց Կուբրիկոսը՝ բայց տարբեր ուղղագրութեամբ, այսինքն է՝ Կումբրիկոս, որ աւելի ճիշդ կը թուի ինձ, որով կարելի է սրբագրել յոյն և լատին ձեռագրաց հետևեալ աղաւաղ ձևերը Κίβρικον, Corbicium, Urbicum:

Իսկ Մանէսի գրուածոց նկատմամբ՝ երկուստեք մեծ անմիաբանութիւն մի կը տեսնուի. զի Ցերեբինթէն ծնացած և արևմտեան աղբիւրներէն յիշուած չորս գրուածքը՝ գէթ ըստ արտաքին ձայնին՝ նոյնութիւն մի չեն ցուցներ արևելեան կամ պարսիկ աղբերաց յիշատակած Էրտէնկի–Մանի մնակագրութեան հետ։ Այս անուանակոչութեանս նշանակութիւնն ինձ ծանօթ չէ. սակայն հնդկա–գերմանական erdenken կամ denken բառին հետ ուղղակի ազգականութիւն կամ աղերս մ'եթէ ենթադրենք, այն ատեն կարելի է հետևցնել, թէ Էրտէնկի–Մանի՝ Ցիշատակարան կամ Գիրք յիշատակաց Մանեայ թարգմանուի։ Եւ հաւանօրէն այս Էրտէնկի–Մանի՝ խմբագրութիւն ինչ էր քառամասն քառանուն գրոցն Ցերեբինթայ, զորս յիշատակեցինք յառաջագոյն։ Գաղտնիք կոչուած մասին մէջ բարգաւաճելով կը ներկայացնէր Մանի՝ մոգութեան այլ և այլ արուեստները, և ընութեան և Մանիքեցւոց համայնքի մէջ գործուած ծածուկ բանները։ Գլխաւոր կէտերով՝ կը ներկայացնէր իր աղանդին կամ հաւատապատումի էական և հիմնաւոր սկզբունքները։ Աշտարանովը՝ կ'ընծայէր Նոր կտակարանէն խեղաթիւրուած տեղեր և ծուռ վարդապետութիւնները։ Իսկ այս երեք գրքերը Մանեայ Պատկերներուն հետ ի միասին կը կազմէին անոր և բոլոր Մանիքեցւոց Գանձը կամ դաւանաբանութիւնը։ Ուստի այս մեկնութեամբս կ'ունենանք Մանեայ միակ գլուխ գործոցը, և ոչ թէ իրարմէ հնգաթիւ տարբեր գործեր, ժամանակագրական կերպով, ինչպէս կը կարծեն ոմանք յարգեաց, տեսնելով այն խմբագրութենէն մեզի հասած հատուածները միայն և կամ հատատուած Ս. Եպիփանու Adversus Haereses. lib. II գրոց մէկ տեղւոյն վրայ, ուր կ'ըսուի. « Libros emim varios edidit, quorum unus viginti duas in partes distributus est, alphabetico ordine pro literarum quibus Syri utuntur numero ». Մեր այս կարծեաց իբրև մի այլ կռուան համարելու է այն իրողութիւնը՝ որ պարսիկ աղբերք՝ չորս առանձին գրուածոց յիշատակութիւն չեն ըներ, այլ Էրտէնկի–Մանի միայն կը յիշեն։

4. Զի առ Ուխտն Կճաւայ գրուած Թղթոյն մէջ թուելով զնախահարս Թոնրակեանց, կ'ըսէ. « Արդ՝ զինչ պարգևս ընտրութեան տեսեալ 'ի գարշելին Կուռիրիկոս»։

Բայց կարևորը մեզի համար է գիտնալ, թէ ինչպիսի՞ պատճառներ մղեցին զՄանէս յօրինելու այն հաւատապատում դըրութիւնն. ի՞նչ կը պարունակէր այն գլուխ գործոցն, և թէ ինչպիսի՞ ազդեցութիւններ ունեցաւ իր ժամանակցաց և յետագայ դարուց վրայ։

Մարդկային ազգի պատմութեան մէջ չի կայ բան մի՝ որ այնքան բուռն կերպով յուզած ըլլայ հին աշխարհն, ինչպէս և նորը, հեթանոսութեան արբանեակները՝ զոյդ ընդ քրիստոնէից, ինչպէս յուզեցին ճշմարտութեան և ստութեան, արարչութեան և ինքնագոյութեան, բարւոյ և չարի, երջանկութեան և թշուառութեան, հոգւոյ անմահութեան և հանդերձեալ կենաց, գոյութեան և չգոյութեան խնդիրները։ Բնութեան Դրուբեան հեղինակին հետ՝ նոյնպէս և ջոկք ամենայն դրական իմաստասիրաց կը խոստովանին, թէ այս գաղափարներս այնքան ընդհանուր են և խորարմատ՝ զորս պատմաբանօրէն ժխտելն անկարելի է։ Արդ՝ մէկ կողմէն արարածոց բնութեան մէջ՝ ամենուրեք և ամէն ժամանակ տեսնուած բարւոյ և չարի, արդարութեան և անիրաւութեան կռիւը, իսկ միւս կողմէն ալ հոգւոյ յաւերժական ձկտման և իրաց բարեշրջութեան արտաքնայարդար երևոյթները՝ յայլ և այլ կարծիս և կրօնս բաժանեցին իմաստնոց հետ նաև ռամկին մտքերը։ Նոյն իսկ փրկչական թուականութեան 240ին՝ Խսիի և Ոսիրիսի պաշտօնատարքը՝ թանձր աւելորդապաշտութեանց և հոգեփոխութեան անդնդոց մէջ կը թարթափէին անառաջնորդ։ Ինդոսի և Գանգէսի միլիոնաւոր բնակիչները՝ համայնաստուածութեան և բնապաշտութեան անել բաւղին մէջ կը տարուբերէին։ Պարսկաստանի և Մարաստանի ազգաբնակութիւնները՝ մերթ արևապաշտութեան և մերթ երկուութեան, այսինքն է բարւոյ և չարի հակաքարշ սկզբունքներու նժարից մէջ կը շարժէին մշտատատան և տարակուսեալ։ Յոյնք և Իտալիա՝ Նոր–Պղատոնական կամ գնոստիկեան վարդապետաց հետ մերթ բանականութեան և մերթ սկեպտականութեան մէջ կը յածէին և կը յածեցնէին իրենց ազդեցութեան ներքև եղող ազգերն և ժողովուրդները։ Հրէից և Ասորւոց պէս դերազանցօրէն միաստուածեան ժողովուրդք՝ կորսնցընելով իրենց հաւատոյ և յուսոյ հաստատութեան խարիսխը, մնմնայի միայն կը ծառայէին, ամենուրեք լինելով արդելք քրիստոնէութեան և ամէն աղանդաւորաց գործակից։ Թէպէտև ամէնքն ալ ճշմարտութեան և բարութեան էին հետամուտք, բայց կարծիս միայն և երկբայութիւնս կը տեսնէին։ Ամէն բանի մէջ դժուարութեանց անանցանելի լեռներու կը հանդիպէին՝ այն

մնաց և մոլորութեան գիշերուան մէջ։ Քրիստոնէութիւնը՝ թէև իր լուսաւոր վարդապետութիւնը ծաւալած էր՝ արդէն այն մթաւորական խաւարի մէջ, և Ս. Հարց անպարտելի փաղանգ մ'ևս հանած էր իր գերազանցութեան իբրև մի մի վկաներ. բայց որովհետև բարձրամիտ հեթանոսութիւնը չէր ուզեր տակաւին գերել իւր համոզումն և բնաւորական ազատութիւնը՝ յայտնեալ ճշմարտութեանց ներքև, այն պատճառաւ իսկ ծագեցան բազմահոյլք հերետիկոսաց. և Արևելք և Արևմուտք առ հասարակ կ'երկնչէին 'ի գիւտ ճշմարտութեան. մանաւանդ երբ նոր կտակարանն ևս եղաւ անոնց ասպարէզ մրցութեան։ Քրիստոնէութիւնն իբրև նորապաքանչ լմն զօրութիւն՝ շփոթեց բոլոր հինաւուրց աղանդներն, և հեթանոսք եկան խառնուեցան ընդ քրիստոնեայս. մարդկային միտքն ընկճուած կը զգար ինքզինքը գերբնական ճշմարտութեանց հանդէպ, և գերբնականը՝ կարծես թէ կը մնար անոնց միշտ անտես և անհաս։ Այս մնաւորական ընդհանուր պատճառաց վրայ՝ յաւելցնելու ենք այն քաղաքական–բարոյական մեծ յեղափոխութիւնը, որ կատարուեցաւ յամի Տեառն 226, այսինքն է Սասանեան Հարստութեան և զրադաշտական դենի վերանորոգութիւնը՝ Արտաշիր Ա. ձեռքով, զորս Պարթևները կռապաշտութեան վերածած էին՝ Քրիստոսէ երկու և կէս դար յառաջ։

Արդ՝ կրօնական և իմաստասիրական և քաղաքական այսպիսի համաշխարհական տագնապի մի ժամանակ՝ յասպարէզ ելաւ Մանի, որ և Կումբրիկոս. որ ուզելով ամենուն ընդունելի վարդապետութիւն մի հնարել, առաւ իր ժամանակի ամէն աղդաց և աշխարհաց մէջ շրջող կրօնական և իմաստասիրական հաւատալիքն, և իւր ճարտար գրչին և գաղափարաց կաղապարի մէջ ձուլելով զանոնք՝ ուսումնական դրութեան մի վերածեց։

Ստագիրացին Արիստոտել ըսած էր երբեմն «Ծնունդոց» գրոց հեղինակին համար. «Ո՛վ աստուածայինդ Մովսէս, պանչելի բաներ կ'ըսես, բայց չես ապացուցաներ»։ Իսկ Մանի՝ այսպիսի ընտրողական դրութեամբ՝ յաւակնեցաւ մեկնել բարւոյ և չարի, արարչագործութեան և ինքնագոյութեան, և այլն, գաղտնիքը, որոնցմով այնքան դարեր և հանճարներ վաստակեցան և վաստակեցուցին, վրիպեցան և վրիպեցուցին։ Ոմանք արդի քննադատից՝ Սփէնսըրի և Վինդէի հետ կը համարին, թէ Մանեայ դրութեան իբրև նախկին սկզբնահարք եղած են ոչ միայն Եգիպտացիք՝ Օսիրիսի և Տիւփոնի արարուածներովն, այլ և Քաղդէացիք և հնոյն Եղեգայի իմաստասէրները, Պիւթագորէն սկսեալ ցԱրիստոտել և Պլոտինոս։ Որոց վրայ պէտք է յաւելուլ

նոյնպէս Բ դարու հերեսիովտապետներէն Բասիլիդէս և վաղեն-տին, Բարդածան և Մարկիոն։ Սակայն ինձ աւելի հաւանական կ'երևի ըսել, թէ Մանի՝ ընդհանրականն ունէր ի նկատի՝ քան թէ մասնաւորը։ Այո՛, Մանիքէութիւնը վերլուծելով՝ կը գտնենք անոր մէջ հրէից գրոց աւանդած արարչագործութիւնը երկու անստեղծ սկզբանց ընծայուած. եգիպտական հոգեփոխութիւնը՝ նոր ձևով ներկայացուած և նրբացած. հնդկային կամ պրահմական համայնաստուածութիւնը, պարսկական կրակապաշտութիւնը, գնոստիկեան արտահոսումն (emanatio) և էակաբանութիւնն, և քրիստոնէական վարդապետութեան խեղաթիւրուած մեկնութիւններն՝ այլով քանդերձ։ Ս Եպիփան (1) իսկ փոքր 'ի շատէ կը հաստատէ զայս « Manichoeus enim cum gentibus gentilis est, ac Solem, Lunam, Sidera, Demonesque veneratur: Gentilis, inquam, estô carissimi! ejusque secta Græcorum superstitiones tradit: Magorum quoque præstigias complectitur, in iisque volutatur. Astronomos laudat: quorum curiosas artes persequitur, ac verbo tenus Christi nomine gloriatur. In quo Cenchritidis simillima est ».

Ըստ ծնունս ճշմարտութիւնը դեռ աւելի ակներև պիտի լինի՝ Մանիքեցւոց վարդապետութեան գլխաւոր կէտերու յառաջբերութեամբը, զորս կարևոր կը համարինք համառօտել ասա՝ Պաւղիկեան–Թոնրակեցիներու վարդապետութեանց հետ զուգակշռելու համար։ Բայց նախ քան զամենայն՝ կ'ուզեմ ասա ուսումնասիրաց ուշադրութիւնը դարձնել յոյժ կարևոր կէտի մի վերայ, զոր գիտղդաբար հին մատենագիրները ընաւ 'ի նկատի առած չեն և չէին կրնար առնուլ. վասն զի անոնց գրութեանց նպատակը՝ պարզապէս ջատագովական էր, և այս սահմանէս դուրս ամենայն ինչ երկրորդական նշանակութիւն ունէր անոնց առջև։ Մնտարակոյս Մանէսի սոյն գրութեան ինչպէս հիմը կը կայանար այն արտաքնայարդար հակասութեանը վերայ, — որ կ'երևի յամենայնի, — այսինքն է, մէկ կողմէն աստուածային բնութեան, իսկ միւս կողմէն ալ մարդկութեան անկեալ բնութեանը մէջ. ընդ մէջ այն յարատև կռուին որ 'ի վերուստ և ներքին ճակատամարտին. այսպէս ալ անոր իմաստասիրական և կրօնական նպատակն էր բանաւոր լուծում մի տալ այս երևելի և աներևոյթ աշխարհաց մէջ երևցած դաղտնեացը, — թէպէտև քրիստոնէութեան միայն վերապահեալ էր այն։ Սակայն Մանեայ քաղաքական և բարոյական նպատակը բոլորովին ուրիշ էր. այսինքն է՝ նա գոլով աղգաւ պարսիկ, ուզեց իրմէ 30 տա-

1. Adversus Hæreses, Lib. II.

րի առաջ վերահաստատուած Զրադաշտականութիւնը՝ իր ժամանակի պահանջմանց համեմատ բարեփոխելն, և կամ իր նախկին բարեձեւութեան շրջանակին մէջ ներկայացնել և իւր ազգին յայնժամու անբարոյականութիւնը՝ որ իր գերագոյն կէտին հասած էր՝ քրիստոնէական բարոյականին մերձեցնել, և կամ գէթ անոր վերարկուաւը ծածկել, իր հայրենիքը նիւթական անկումէն ազատելու համար։ Եւ ստուգիւ՝ այս է պատճառը, որ ոչ ժողովուրդն և ոչ թագաւորն ինքնին, այլ Մոգերն անդէն ի սկզբան կ'ընդդիմանան անոր վարդապետութեան, որոնց համար կ'ըսէ Եւսեբիոս իր « Պատրաստութիւն Աւետարանի » կոչուած գրքին մէջ, թէ իրենց աղջիկներուն հետ կ'ամուսնանային և մայրապականութիւնն անգամ օրինաւոր կը համարէին։ Այս պատճառաւ և նա ինքն Մանի ամուսնութիւնը կ'արգելու և կուսութիւն կը քարոզէ։ Սակայն մենք յոյժ երախտապարտ ենք մեր եռամեծ վարդապետին Եղնիկայ կողբացւոյ, որ այս ծածկեալ ճշմարտութիւնս երկու խօսքով յերևան կը հանէ՝ ըսելով. « Եւ եթէ նոյն քէշ է երկոցունց, (այսինքն է Մանեայ և Մոգուցն) ընդէ՞ր ատիցեն Մոգք զգանդիկս, եթէ ոչ զի վարուքն զատ են 'ի միմեանց, թէպէտև կերպարանօք և ոչ ճշմարտութեամբ »։ Եւ քիչ յետոյ կը յաւելու. « Բայց զի Մանի կամեցաւ վերագոյն քան զնոցայն կեղծեօք վարս ցուցանել, թէ ամենեին իսկ ազատ 'ի կարեաց ցանկութեանց իցէ »։ Ուրեմն եթէ կեղծեօք և եթէ համոզմամբ՝ Մանեայ նպատակն յոյժ օգտակար և փրկարար էր իւր հայրենեաց համար, գէթ քաղաքական տեսակէտով։

Ահաւասիկ անոր դրութեան եռաթիւ, եռանկիւնակալ նախադասութիւնները, որոնց վերայ շինուեցան ապա բազմահոյլք մոլորամիտ ենթադրութեանց. Ա. Ամբողջ տիեզերքս՝ իմա և մարդն՝ խառնակոյտ զանգուռաճ մ'է բարւոյ և չարի, և յաւերժական կռիւ և կռուի։ Բ. Յառաջագոյն այս այսպէս եղած չէր։ Գ. Եւ ոչ իսկ միշտ այսպէս պիտի մնայ։ Մանի՝ այս դժուարին ձեռնարկս 'ի գլուխ հանելու համար կը յենու զանդիկ կամ հին պարսկադեն գաղափարաց վերայ, ըստ որում լոյսն առնուած է իբրև նշանակ Աստուածութեան, բայց յետոյ Արևա–հրապաշտութեան մէջ փոխանակեց ընդ Աստուծոյ, կամ բարի սկզբան։ Եւ ըստ կարծեաց բազմահնար աղանդապետին 1. ի սկզբանէ կային երկու անստեղծ, կենդանի և հաւասարազօր էակներ, որոնց մին, — այսինքն է լոյս և հոգի, — է բարի. իսկ միւսն, — այս է նիւթ և խաւար, — է չար։ Այս արարչագործ սկզբանց իւրաքանչիւրն ունի իր անկախ թագաւորութիւնն, և բացարձակապէս կը հակառակի միւսին։ Հաւասարապէս կազմակեր-

պեալ այս կրկին թագաւորութիւնքս՝ բաժնուած են բոլորովին իրարմէ, և իւրաքանչիւրը կազմուած է հինգ դաւառներէ, որոնց մէջ կը բնակին այն զոյգ մի սկզբունքներէ բղխած անթիւ անհամար ուրիշ էակներ։ 2. Ոչ չարն և ոչ ալ չարի խառնուրդն Աստուծմէ կը յառաջագայի, այլ իր յաւիտենական արմատն ինքն իր մէջ ունի։ 3. Խաւարի և ցանկութեան իշխանները՝ տեսնելով հեռուէն լուսոյ թագաւորութեան պայծառութիւնը՝ նախանձեցան, և որոշեցին հարկանել և նուաճել զայն։ Այն ժամանակ ուզելով Աստուած ապահովել իր տէրութիւնն՝ արտադրեց զնայրն կենաց, որ ծնաւ զնախամարդն πρῶτος ἄνθρωπος. այսինքն է Յիսուս կամ Յէշու։ Նախամարդը՝ զօրանալով՝ սկսաւ կռուիլ խաւարի թագաւորութեան դէմ, բայց պարտեցաւ. և խաւարի իշխանները գողացան անոր լուսեղէն զրահները, թանգուզելով իրենց մէջ։ Այս ճգնաժամիս Աստուած օգնութեան ղրկեց նախամարդոյն՝ զհոգին կենաց ζῶν πνεῦμα, որ էջ, ալ կարկառեց և փրկեց զնա. սակայն պարտելոյն զէնքերը մնացին խաւարի իշխանին իշխանութեան ներքև, և Յիսուսը տկարանալով՝ չկարէր զանոնք ազատել. ուստի և այն ազատագրելի մասը, այսինքն է Յէշուն կրակաւ՝ կը տուայտէր (1) խաւարի թագաւորութեան գերութեան մէջ, և սակայն հարկը կը պահանջէր, որ այս ազատութիւնս կատարուի։ 4. Յետ այնորիկ Աստուած վերատին (2) ուրիշ էակներ ստեղծեց, այսինքն են կոյսն շուռոյ և հոգին սուրբ ὁ πρεσβύτης ὁ τρίτος. ուստի երեք են էակներ՝ որք կը գործակցին լուսաւոր մասը՝ խաւարի գերութենէն ազատելու համար. այսինքն են հոգին կենդանի, որ, — ունելով զգերագոյն տեսչութիւն, — այս նպատակաւ ստեղծեց զաշխարհ՝ աստուածային կամաց համաձայն. ստեղծեց և զմարդն Ադամ՝ ըստ նմանութեան նախամարդոյն, զոր ընդ աղօտ նկա-

1. Այս նախադասութիւնս ամբողջ հետևութիւն է Մարկիոնի վարդապետութեան. բայց Մանի մեծապէս փոփոխած է զայն՝ իր դրութեան համեմատ և համաձայն ընելու համար։

2. Դիտելու ենք՝ որ Մանեայ այս վարդապետութիւնը՝ Ծննդ. Ա. 2. թուահամարի վերայ հաստատուած է, որ Ս. Օգոստինոսի և ուրիշ Ս. Հարց իսկ պէս պէս մեկնութեանց առիթ տուաւ. իբր թէ առաջին արարչութիւնը՝ չարի արբանեկաց ձեռքով խանգարուած ըլլայ. ուստի և երկրորդ արարչագործութիւն մ'ալ տեղի ունեցած։ Հ. Ռայշ իւր La Bible et la Nature նշանաւոր երկասիրութեան մէջ համառօտելով բոլոր հնոց կարծիքները, կը ցուցնէ, թէ մինչև Կարոլոս Մեծի ժամանակ առ քրիստոնեայս իսկ ընդհանուր էր այս կարծիքս։ Արդի երկրաբանք և մեկնիչք իսկ դեռ կը պաշտպանեն երկրորդ արարչութեան մի գոյութիւնը. սակայն Մանի գնոստիկեան իմաստով կը հասկնայ զայն։

ուած էր, և ըստ պատկերի իւրում։ 5. Մարդս բաղկացած է լուսոյ իշխանութենէն գողցուած հոգիէ մի, որ է մասն Աստուծոյ և բղխումն (1), և նիւթաղանգ մարմինէ մի, որ խաւարէն յառաջ եկած է, ճոխացեալ 'ի բնէ ներգործութեամբ և մղուած կոյր ցանկութենէ։ 6. Մարդ արարածն՝ հարկաւորապէս երկու (2) հոգի ունի, մին՝ բարի և միւսն՝ չար. և ասկէց յառաջ կուգան անդադար կռիւք և ներքին ընդդիմամարտութիւնք։ 7. Գերաբուն Աստուծմէն արտահոսեալ, — կարողութեանց ձեռքով, — կենաց հոգին զօրացած՝ յաղթեց խաւարի իշխաններուն, և կազմեց զերկնից հաստատութիւնը։ 8º. Նա ինքն հոգին՝ յեռոյ նախամարդոյն լուսէն ձևացոյց արեգակն և լուսինը, յարդարելով անոնց՝ իբրև երկու լուսափիւռ նաւերու անդուլ և անդադարելի ընթացքը։ 9. Նիւթէն թափանցեալ աղօտաճաճանչ լուսովն՝ ստեղծեց զերկիրս, և դրաւ զայն Ոմոփորոսի (3) Ὠμοφόρος ուսոցը վերայ, որ երբ կը ծանրաբեռնի և կը շարժէ իւր ուսը, այն ատեն կը լինի երկրաշարժ։ 10. Լուսափայլ կուսի պաշտօնն է ակներև գործել լուսոյ այն մասերը, որոնք հաստատութեան վերայ կը գտնուին։ Օժանդակուած է նա իր արական–իգական օգնականներէն, որոնք մերթ նենգութեամբ և մերթ հրապուրանօք կը կորզեն զլոյսն՝ բարձունքէն վար ինկած խաւարի իշխաններու ձեռքէն։ 11. Նիւթի և խաւարի մէջ թանգուղեալ լոյսը՝ երբեմն ազատարար Յիսուսի, այսինքն է Արեգական, և երբեմն ալ օդոյ ազդեցութեամբը, — որուն մէջ բաղմած է և կը գործէ հոգին սուրբ, — կը զերծանի. և այլ և այլ կերպարանաց, այսինքն է մերթ բոյսի և մերթ պտղոց կերպարանօք կը յայտնուի, մինչև որ բոլորովին նիւթէն ազատուի։

12. Ո՛ր և է մարմին՝ հոգևորեալ (4) է 'ի բնութեան։ 13. Ինչպէս մարմինէ՝ մարմին, այսպէս ալ հոգին՝ հոգիէ կը սերի (5).

1. Այս և ուրիշ տեղեր Մանի յայտնապէս գնոստիկեանց էակարանութեանը կը հետևի՝ 'ի ձեռն արտահոսման (emanatio) և ոչ ստեղծագործութեան։

2. Պղատոն երեք հոգի կը դնէր 'ի մարդն, ըստ վկայութեան Արիստոտելի, բայց ոչ ըստ հասկացողութեան Մանեայ։

3. Որ ըստ Դիցաբանութեան Յունաց Ատլաս ևս կը կոչուի, որդի Նեպտունի կամ Յաբեթի, զոր Արամազդը պատժեց կրելու զերկրագունդն իր ուսոց վերայ։

4. Առ Ս. Օգոստինոսի՝ Contra Faust. I, 20, n. 2 Մանիքեցիներէն մին կը յաւելոյր, թէ որ և է ծառի մէջ կաշկանդուած կայ կրական Յիսուսը. « Jesus patibilis omni suspensus ex ligno; quapropter et nobis similiter erga panem et calicem par religio est ».

5. Դիտելու ենք, որ Մանի հոս Տերտուղիանոսի հոգի-ազանդութեան traducia-

և սերումն՝ կորուստ ինչ է լուսաւոր մասին մարդոյ, այն է հոգւոյն։ Հոգի մի որչափ անգամ ծնանի, այնչափ ևս կ'ընկղմի 'ի նիւթ։ 14. Խոտելի է հետևաբար ամուսնութիւնն և արգելեալ՝ չար սկիզբէն, այսինքն է նիւթէն ազատ մնալու համար։ 15. Հոգիները մարմին մարմին փոխանցելով և այլակերպելով կը մաքրուին (1), և բարի սկզբան հետ կը միանան, որք են արեգակը, լուսինն և աստղերը. և այս է պատճառն, որ լուսինը կ'աճի ցլրուն լուսոյ։ Եւ երբ կը պարպէ իր լոյսն ենթալուսնեայց մէջ, վերստին կը սկսի իւր ընթացքն և կը լուսաւորուի։ Լուսոյ անջատման այս ընդհանուր և յարաժամ փոխանակութիւնս՝ որ սեփական է նոյն իսկ աստեղաց, մարդկան և անհոգի բնութեան, այնչափ պիտի շարունակուի՝ մինչև որ ազատութեան ընդունակ եղող լոյսը բովանդակապէս զերծանի։ Իսկ նիւթն՝ երբ ալ բոլորովին կորսնցնէ իր մէջ գերուած օտարասեռ լոյսն, այնուհետև անգործ զանգուածի մի պիտի վերածուի և հրակիզի (2)։ 16. Աշխարհիս վերջն ուրիշ բան չէ՝ բայց եթէ վերահաստատութիւն αποκατάστασις առաջնաստեղծ վիճակին. այսինքն է՝ բացարձակ անջատումն և անկախութիւն երկուց թագաւորութեանց, այն է բարւոյն և չարի, լուսոյն և խաւարի։ 17. Իբրև անմիջական հետևանք հոգեփոխութեան՝ չկայ ոչ յարութիւն մեռելոց և ոչ իսկ վարձուց հատուցումն։ 18. Հին կտակարանը չար սկզբան կամ դիւի գործ է, որուն մէջ թէև դրուած են ինչ ինչ ճշմարտութիւններ՝ բայց բազմաթիւ մոլորութիւնները քօղարկելու համար միայն։ Իսկ Նորը՝ մասամբ միայն Աստուծոյ գործն է և ընդունելի, իսկ ըստ մեծի մասին յետագայ դարերու գիւտ։

Յայս վայր մէջ բերուած կէտերուն համար կրնանք վստահութեամբ ըսել, թէ ստուգիւ Մանեայ վարդապետութիւնք են. իսկ հետևեալներն՝ հաւանօրէն անոր հետևողաց յաւելուածներ ըլլալու են։ 19. Ներկայ դարուս բանականաց այս նախահայրերը ուղածնուն պէս կը մեկնաբանէին Ս. Գիրքը. և Յով. Ա-

nismus կամ հոգեծնութեան կը հետևի՝ թանձր առմամբ, որ նիւթապաշտութեան կը տանի։

1. Այս վարդապետութիւնս՝ Պղատոն բարգաւաճեց, բայց հոգիներու նախագոյութիւնն ընդունելով հանդերձ, որ աւելի դժուարահաւատալի և հակասական կ'ըլլայ աննիւթին՝ նիւթական միջնորդաւ փոխանցումը։ Սակայն Մանի ուրիշ հնդիկ կամ զանդիկ աղբիւր մ'ալ ունեցած պիտի ըլլայ։

2. Այս նախադասութիւնս Պետրոս Առաքելոյ մէկ տեղւոյ սխալ հասկացողութեանը վերայ յեցած է, յորում կ'ըսուի, թէ երկիրս առաջին անգամ ջրհեղեղաւ կորեաւ. իսկ երկրորդ անգամ հրով հրդեհեալ՝ պիտի լուծանի։

ւեստարանչի այն խօսքը, թէ « Եւ լոյսն 'ի խաւարի անդ լուսաւորէ, և խաւար նմա ոչ եղև հասու », Մանեայ դրութեան իբր 'ի հաստատութիւն ըսուած կ'առնուին։ 20. Քրիստոսի սընորինականքն և մահը՝ իրական չէր, այլ առ աչք ևեթ, կամ իբրև այլաբանական նշանակներ էին լուսաւոր բնութեան կրած իրական նեղութեանցը։ 21. Քրիստոս միայն 'ի Թաբոր երևցաւ իր յատուկ բնութեամբը, երբ այլակերպեցաւ 'ի լոյս։ 22. Բոլոր հին և նոր կտակարաններէն և անոնց հեղինակներէն վերագոյն ոմն էր Մանի, այսինքն է Մխիթարիչն և տէր անզուգական, որ իւր հեռուոցաց առջև բացաւ լուսեղէն աշխարհի հնգաթիւ գաւառները։ 23. Չէին յարգել զխաչն՝ իբրև փրկութեան գործի, և ոչ իսկ զկոյսն սուրբ՝ իբրև Ցիրամայր։ 24. Զբանն Աստուած կամ հոգին Յիսուսի՝ կը համարէին իբրև մասն մի աստուածային լուսոյն. և Յիսուսի հետ երանելոց հոգիներ ևս արեգական հետ միացած է, կ'ըսէին։ 25. Այս պատճառաւ իսկ կը պաշտէին զարեգակն և զհուր։ 26. Կը մերժէին զՄկրտութիւնն, իբրև աւելորդ ինչ. որովհետև հոգւոց մաքրութիւնը՝ մարմնոց 'ի մարմին փոխանցութեան մէջ կը կայանար։

Մանիքեցւոց բոլոր բարոյականն և անոր գործադրութիւնն՝ հետևեալ երեք կէտերու մէջ կը բովանդակուէր. Ա. Կնիք բերանի, որ կ'արգելու ամէն հայհոյութիւն, այսինքն է Մանիքեցւոց վարդապետութեան և Մանեայ հակառակ ո՛ր և է խօսք կամ բան. կ'արգելու ուտել միս և ձու, և խմել կաթ և գինի։ Բ. Կնիք ձեռաց՝ որով արգիլեալ է կենդանիներ մեռցընել, ծառեր կտրել և պտուղ քաղելը։ Գ. Կնիք սրտի՝ որ կ'արգելու զամուսնութիւն և զծնունդ. բայց այս իսկ Ռեկնդիրք կամ Նորամուտ կոչուած դասուն համար։ Իսկ Ընտրեալք՝ որոնք միայն էին գիտակք գաղտնեաց աղանդին, առանձնաշնորհեալ էին և ազատ։

Արդ՝ այսպիսի իմաստասիրական–կրօնական դրութիւն մի՝ որ արտաքին ձևով այնքան գիւտաւոր և հանճարեղ կը տեսնուի, ներքսապէս ոչ այլ ինչ է՝ բայց եթէ աչքի զարնող հակասութեանց խառնակոյտ մի և յեղարկումն տրամաբանութեան։ Սակայն Ա. բևեռքը՝ որ տրամաբանութիւնէն աւելի՝ երևակայութեան ծնունդը կը սիրէ և մեծարէ ընդհանրապէս, բազմապիսի դժուարութեանց մէջ իսկ՝ ոխանոյով ընդունեցաւ զայն։ Իմաստասէրք և հեթանոսք՝ այս դրութեամբս՝ իբրև բանին լուսովը գըտնուած և լուծուած համարեցան Աստուծոյ և բնութեան, արարչագործութեան և փրկագործութեան գաղտնիքը, զորս կ'որոնէին դարուց 'ի դարս. և Մանիքէութիւնն՝ համարուեցաւ իբրև օղ միութեան հեթանոսական այլ և այլ աղանդոց՝ ընդ Քրիստո-

նէութեան։ Եւ յիրաւի, Արիստոկրիտոս՝ Մանեայ գլխաւոր հեռևողաց մին, որ գրով իսկ թողուց իր վարդապետին Աստուծաճաքանչուրիւնը Θεοσοφία, կը ճգնի ցուցնել իսկ, թէ Հրէութիւնն, Հեթանոսութիւնն և Քրիստոնէութիւնը բացարձակապէս մի և նոյն էին։ Ակուսաս, Ադամանտոս, Փաւստոս, Փելիքս, Փորտունատոս և Սեկունդոս, որոց դէմ կռուեցաւ Ս. Օգոստինոս առանձին գրուածներով, — թէև ինքն իսկ երիտասարդութեան փայլուն հասակին մէջ բռնուեցաւ անոնց ծուղակին մէջ, — էին մի մի ջերմ պաշտպան և զարգացուցիչ Մանիքէութեան։ Քանի՛ քանի գիտնականներ, բարձրաստիճան եկեղեցականներ, ինչպէս և յետոյ թագաւորք և թագուհիք ընդդրկեցին զայն, և եղեն իբրև մի մի հիմնաքարինք յօրինուածութեան եկեղեցւոյն Մանիքեցւոց, որոց մասին եկեղեցական պատմութիւնը քիչ բան հաստուցել է մեզ և կամ ոչնչացուցել։

Բայց և այնպէս՝ եղած գրաւոր և անգիր աւանդութիւններէն դատելով՝ կարելի է ըսել, թէ Մանիքեցւոց եկեղեցին՝ քրիստոնէականին ծառայական նմանողութեամբը կազմակերպուած էր։ Սուտակասպաս Մխիթարիչն Մանի՝ ինքն իսկ Քրիստոսի նման երկոտասան աշակերտներ ընտրած էր՝ քարոզելու իր նոր վարդապետութիւնը. այս ընտրութիւնս յաջորդական էր և միշտ մի և նոյն թուով։ Երեքտասաներրորդն՝ իբրև փոխանորդ Մանեայ՝ իրենց գերագոյն պետն էր։ ԺԲ ընտրեալքը կը ձեռնադրէին 72 եպիսկոպոսներ, — անշուշտ նմանողութեամբ 72 աշակերտացն Քրիստոսի, — սրբա ալ քահանաներ կը ձեռնադրէին։ Սարկաւագներ և քարոզիչներ ևս ունէին։

Մեծ փոյթ կը տանէին Առաքելոց անուամբ անհարազատ գրուածներ յօրինելու և տարածելու. և Թովմաս և Փիլիպպոս Առաքելոց ընծայուած Աւետարաններն (¹) և շատ մի անհարազատ գրութիւններ, որոնցմով ուզեցին ճոխացնել Նոր Կտակարանը՝ Մանիքեցւոց (²) գործ էին։

Իրենց պաշտամունքը՝ ամենածածուկ կերպով կը կատարէին։ Եկեղեցւոյ այն խորհուրդները, որոնք նիւթոյ ձեռքով կը կատարուին, կամ լաւ ևս որոց մէջ նիւթն է իբրև միջոց շնորհաց՝ մերժուած էին։ Ս. Հաղորդութիւնը Ընտրելոց ներկայութեամբը միայն կը կատարէին, բայց առանց գինւոյ. զի գինին՝ էր, ըստ Մանիքեցւոց, բաժակ դիւաց։ Իսկ իրենց Ագապներն՝ ոչ այլ ինչ

1. Հայերէն «Գիրք ՃԾԸ Հերձուածոցի» մէջ Թովմայի Աւետարանին իբրև բուն հեղինակ Մանի նշանակուած է։

2. Տես Ս. Օգոստինոս. Epist. 64, n. 3. — Կամ Hist. liter. script. eccl. vol I. d. 141—143, — Ֆապրիցիոս, Bibl. Gr. ed. Harles. vol. VII, p. 322։

էին՝ բայց եթէ անպարկեշտ խնճոյքներ՝ պէսպէս անառակութեամբք լի, թէև Մանի այնպէս աւանդած չէր նոցա։

Այս նորօրինակ վարդապետութեամբս՝ թէև ուզած էր Մանի իւրաքանչիւր ազգաբնակութեանն՝ իրեն յատուկ դաւանութիւնը մատակարարել, բայց այնու հանդերձ շատ ժայռերու զարնուեցաւ. որովհետև այն ազգերէն իւրաքանչիւրն իր դաւանութեան առընթեր՝ հակառակն ևս ակներև կը տեսնէր։ Այո՛, կայսերը Հռոմոց, որք իրենց տէրութեան մէջ կրօնից իբրև գերագոյն պետ ճանչցուած էին և պաշտուած, չէին հանդուրժեր իրենց տեղ Մանի կամ նորա յաջորդը փոխանակուած տեսնել. այսպէս ըսելու ենք նաև արքայից արքային համար։ Այս պատճառաւ իսկ Մանէսի և Մանիքէութեան նախկին հալածողները Դիոկղետիանոս և Շապուհ եղան։ Սոցա յաջորդեցին ապա մեծն Կոստանդիանոս, Վաղենտիանոս Ա, Բ, Գ. Թէոդոս մեծն, Ոնորիոս, Կրտսերն Թէոդոս, Յուստինոս, Յուստիանոս, և այլն։ Սակայն չնայելով այնպիսի հալածանաց՝ Գ. Դ և յաջորդ դարերուն մէջ տարածուեցաւ այս աղանդս յաջ և յահեակ բոլոր Հռովմէական կայսերութեան մէջ, այսինքն է 'ի Պարսկաստան, 'ի Միջագետս, Ասորիքի, Պաղեստինու, Եգիպտոսի, Աֆրիկէի, Իտալիոյ, Գաղղիոյ և Սպանիոյ մէջ։ Իր հաստատութեան առաջին դարուն՝ այս աղանդս դեռ իր նախկին պարզութեան և պարզնակին մէջն էր. բայց յետ այնորիկ այնքան կերպարանափոխութիւններ կրեց, որքան որ կուսակցութեանց և դպրոցներու բաժնուեցաւ։ Այնպէս որ Թէոդորետոս՝ անկէց մէկ դար վերջ գրելով Մանիքեցւոց մասին կ'ըսէ, թէ եօթանասնուն այլևայլ աղանդոց բաժնուած էր, որոնք երկու սկզբանց դաւանութեան մէջ միայն կը միանային իրարու. իսկ յայլն ամենայն կը զանազանէին յիրերաց։ Իմ նպատակէս դուրս է այս տեղ մի առ մի յիշել բոլոր այն աղանդներն՝ իրենց արարուածներով ի միասին վերոյիշեալ աշխարհաց մէջ. սակայն զանց չպիտի ընենք ցուցնելու հատուածիւ անոր ունեցած ամենամեծ ազդեցութիւնն և յառաջադէմ զարգացումները մի քանի նշանաւոր հերետիկոսութեանց մէջ։

Այո՛, բոլոր այն հերետիկոսութիւնքը, որք երկուութեան վերայ հիմնեալ էին և կը մերժէին զամուսնութիւն, եկեղեցւոյ խորհուրդներն և տնօրինականքը՝ Մանիքէութեան ծնունդ են։ Արաբիոյ անապատին և հին աշխարհի մէջ ցանուած և ցրուած այն կրօնական և մտաւորական յեղափոխութեանց շատերը, որք Կոստոսի կոփիչ և կռանիչ ուռան ներքև ծեծուելով՝ նոր նոր կերպարանք և ձևեր առին և յուղեցին Քրիստոսի սուրբ եկեղեցին և քրիստոնէական հաւատքը, Մանիքէութեան աշխարհահոծ

խառնակութենէն յառաջ եկան և պարզեցին իրենց անկախութեան դրօշը։ Մանիքէութեան պարտիզէն բուսաւ յԳ. դարուն նախ Ցերակացւոց աղանդը յանուն Ցերակսի Եգիպտացւոյ։ Այս աղանդս որ յիշուած է հայերէն ՃԾԸ Հերձուածոց Գրքին մէջ, Ս. Եպիփան (1) ևս ընդարձակօրէն կը խօսի և կը հերքէ անոր մոլորութիւնները, առանց ըսելու, թէ Մանիքէութենէ կը շառաւիղէր։ Սակայն Բոսօբրը հիմնաւոր փաստիւք ապացուցուց զայն։ Այս աղանդիս մէջ հակառակ Մանեայ ընդունուած է մեռելոց յարութիւնը, բայց ըստ հոգւոյ միայն։ Բանականութիւնը բացուելէն յառաջ մեռնող տղաքը՝ չեն կարող ժառանգել զերկնից արքայութիւնը. վասն զի բարեգործութեամբ դեռ արդիւնաւորած չեն զայն։ Մելքիսեդեկն ուրիշ բան չէր՝ բայց եթէ մարմնացեալ Հոգին սուրբ. և Մանեայ երկու սկզբանց վերայ երրորդ մ'ալ կը յաւելոյր. այսինքն է Աստուած, Նիւթ և Զարն։ Բ. Բրախիտաց աղանդը մի և նոյն դարուն։ Այս անուանակոչութեանս բուն պատճառն ինձ յայտնի չէ. սակայն Վէցլէրի և Վէլտի Հանապատում Բառարանին մէջ (հտ. ԺԴ) յունարէն βράχις բառէն ածանցեալ կը համարուի, որ կը նշանակէ հեղուն. որովհետև Մանի, որուն կը հետևէին, մորթեզերծ եղած ժամանակ՝ հոսած էր իւր արիւնը ցվերջին կաթիլ։

Գ. Արիանոսութիւնը որ ծնաւ յամի 319 փրկչական թուականին, և դարեր տևեց, ծնունդ է, ըստ իս, Մանէսի վարդապետութեան 3. և 24. նախադասութեանց։ Սակայն այն ինչ որ Մանեայ դրութեան մէջ իբրև երկրորդական կէտ մ'ենթադրուած է, նոյնը Արիոսի դրութեան մէջ առաջին տեղին ունի. և յունական կիրթ հանճարոյ բոլոր խմաստասիրական ներքութիւններն՝ հօն կը ձկտին՝ եղրակացնելու արարածոց բնութեան մէջ երևցած 12 կերպ ծննդենէ կամ յառաջադայութեանց, թէ սկզբնաւորեալը կամ բանը λόγος իր սկիզբէն կրտսեր է, և հետևաբար անհաւասար գոյացութեամբ։ Դ. Պրիսկիլլականութիւնը (2), որ մօտ 381ին երևցաւ 'ի Սպանիա, ուղղակի շառաւիղած է Մանիքէութեան 2⁰. և 4⁰. նախադասութիւններէն։ Այս բանիս հաստատութիւնը կը գտնենք նոյն իսկ Ս. Հերոնիմոսի (3) և Պրիսկիլլայ ժամանակակից Սուլպիկիոս Սևերոսի (4) քով։

1. Adversus Hoereses, 67:

2. Պրիսկիլլայ բազմահարուստ և հրապուրող կնոջ ձեռքով, որ կը վարդապետէր, թէ աշխարհս չէ Աստուծոյ՝ այլ դիւի գործ. և թէ Քրիստոսի ծնունդն և մահ չէին իրական։

3. Epistola 43 ad Ctesiph. col. 476:

4. Hist. Sainte I. 2, C, 46;

Մանեայ վարդապետութեան մէջ երրորդութեան գաղափարը թէպէտև խիստ աղուաղ և մոլար, բայց կայ իրաք. իսկ Պրիսկիլլեանք՝ ընդ հակառակն, յառաջ անցնելով ժխտեցին բոլորովին երից անձանց գոյութիւնը, գնոստիկեան սորակարգեալ էակաց անհամար շարք մի հնարելով իրարմէ յառաջագայեալ։ Մանեայ միւս մոլորութիւններն ընդունելէն դուրս՝ յաւելին ուրանալ նաև մարդուս անձնիշխան ազատութիւնը, և կոյր ճակատագրին ընծայեցին զամենայն։ Այս վարդապետական փոփոխութեանս պատճառն յայտնի է Մանիէն գծուած բարոյականի մեծ յեղափոխութեամբը. վասն զի փոխանակ Ագապի՝ մասնաւոր տեղ մի կը ժողուէին, գիշեր ատեն, արք և կանայք. մերկամարմին աղօթելէն վերջ՝ անձնատուր կ'ըլլային յանառակութիւնս. և Աստուծոյ նուիրեալ պաշտօնը ափրոդիտական խնջոյիւք կը պղծէին։

Ե. Պեպուզացւոց (1), Ալոգիանոսաց (2) և Պողիանոսաց աղանդները, զոր Ս. Եպիփան և Եպիփանի Ընդդէմ Հերձուածոց գրութենէն համառօտուած հայերէն « Գիրք ՃԾԸ Հերձուածոցը » մէջ կը բերեն՝ իրենց զզուելի արարուածներով՝ Մանիքեցւոց և Մոնդանեանց աղանդներէն շատ աւելի գած են, և մինչև կապադովկիոյ և Փռիւգիոյ խորերն արմատացած։ Զ. Բորբորիտաց (3) աղանդն ևս, զոր կը յիշատակէ Ս. Եփրեմ Ասորի իւր Հերկրորդ Երգին մէջ, զոյգ ընդ աղանդոյ Մանիքեցւոց՝ ուրիշ բան չէր՝ բայց եթէ այս վերջինիս ծնունդ, և քոյր Պրիսկիլլեանց աղանդին։ Այո՛, Բորբորիտք՝ Մանիքեցւոցմէ տեսական մոլորութիւններն աւելի ժառանգած էին. իսկ անբարոյական մծդնէութիւնքը՝ որ անոնց յատուկ բնադրոշմն էր, 'ի Պրիսկիլլեանց անտի առած էին։ Քիչ յառաջ յիշուած հայերէն Գիրք Հերձուածոցին հետ՝ հին Ոսկեփորիկ մ'ալ երբև բնորոշ յատկութիւն կ'ընծայէ Բոր-

1. Հայերէն գրչագրաց ոմանք « Պեկուզացւոց » կը գրեն, և ոմանք Պեպուզացւոց. բայց երկուքն ալ անճիշտ են, զի Փռիւգիոյ այն քաղաքն՝ ուր այս աղանդս յայտնուեցաւ՝ Պրիսկիլլա և Կուինտիլլա կախարդասար կանանց ձեռքով, Պեպուզ կը կոչուէր։

2. Այս անունս՝ ըստ Ս. Եպիփանի կազմուած է յունարէն α և λόγος մասնիկանց, որ կը նշանակէ առանց բանի. վասն զի սոքա չէին ընդուներ զԲանն Աստուած, Յովհաննու Աւետարանին համաձայն։

3. Ազգային մատենագիրները՝ Մ. Խորենացիէն և Կորիւնէն սկսեալ կը յիշատակէն անոնց գառնենի կերպարանաց տակ ծածկուած գայլենի գարշութիւնները, յորջորջելով զանոնք մերթ բորբորիանոս, մերթ բորբիոս և մերթ բորբիանոս։ Այս ձևերուս առաջինը միայն մատ է յունարէն բառին βόρβορος, որ կը նշանակէ տիղմ, գայռ. այսինքն է տղմասէր, վաւաշ և այլն։ Հաւանօրէն'ի Յունաց կամ յԱսորուց փոխ առնուած է։

բորիտաց « Ցղմայինք, զի զամենայն մեղս անիտիր գործեն » ։ Երկրորդ ապացոյց մ'ալ Բորբորիտաց աղանդը Մանիքեցւոցէն ծագած լինելուն՝ կու տայ մեզ Գր. Մագիստրոս, զի Ասորւոց Կաթողիկոսին գրած թղթին մէջ Թոնրակեցւոց աղանդապետին համար կ'ըսէ. « Վաւաշ, շամբուշ Բորբորիտն պիղծն Սմբատ » ։ Իսկ արդ ինչպէս պիտի տեսնենք Թոնրակեցւոց աղանդը՝ Պաւղիկեանցէն և սա ալ Մանիքէութենէ շառաւիղած էր. ուրեմն հետևութիւնն յայտնի է ։

Ուրեմն ցայս վայր յառաջ բերած պատմական իրողութեանց՝ կարենք եզրակացնել այժմ, թէ այսքան բազմապիսի ճիւղաւորութեամբք Արևելքի և Արևմուտքի մէջ տարածուող աղանդը՝ պէտք է որ նոյնչափ ևս քաղաքական և բարոյական ազդեցութիւններ ունեցած ըլլայ այս աշխարհաց պատմութեան վրայ ։

Բաբելատան, Մարատան, Ափրիկէ, Ասորիք և Պարսկատան, որոնք եղան իբրև նախկին թատերք Մանիքէութեան, ամենէն աւելի վարակուած էին այն աղանդի մոլորութիւններով ։ Այնպէս որ Եղնիկ կողբացին Ե. դարու առաջին կիսում գրելով Եղծ Քէշին Պարսից, հաւասար (1) կը դտնէր զայն ընդ վարդապետութեան Մանեայ ։ Իսկ Հայք՝ այք ոչ միայն դրակից՝ այլ և ազգակից և կրօնակից իսկ էին Պարսից, 'ի հարկէ չկարէին ազատ մնալ 'ի Մանիքէութենէ, մանաւանդ երբ այս վերջինս պարսկադէն Արևապաշտութեան հետ սերտիւ միացած և նոյնացած էր ։ Մ. Խորենացւոյ և Մ. Կաղանկատուացւոյ աւանդածներն ուշի ուշով քննելով՝ կը տեսնենք, որ Գ. և Դ. դարերում արդէն Աղուանից, Սիւնեաց և Վասպուրականի ժողովուրդներն արևապաշտութեան և դիւապաշտութեան խորը գահավիժած էին ։ Եւ Մատենահատից և Խլաթայ կողմերը կատարուած պիղծ պաշտամունքը՝ մի մի կռուան են ըսածնուս ։ Իսկ Ե դարում Թէոդորոսի Մոպսուէստացւոյ և Նեստորի ձեռքով, — որոնք Մանեայ վարդապետութեան 2ᵒ. և 23ᵒ. մոլորութիւնները չարագոյն կերպով նորոգեցին, — յայտնուեցան Մանիներիք նաև ՅԱյրարատ. բայց այս անգամ Արևորդիս և Երևոյթականս

1. Զի յիշեալ գրութեան մէջ ուզելով ընդդիմաբանել Պարսից Մոգերուն, կըսէ. « Հարկ է տալ պատասխանի և ցուցանել՝ թէ ոչ ինչ աւելի քան զոր Մանի, զոր Նոքա մոլթեցին, ասեն ։ Զի նա երկու արմատս բարւոյ և չարի ասէ, և զայն ոչ յոլութեամբ և ծննդեամբ, այլ ինքնակացս՝ միմեանց հակառակ. և Նոքա զնոյն ասեն՝ տենչանօք Զրուանայն յոլութեամբ և ծննդեամբ ։ Նոքա (Մանիքեցիք) արևապաշտք, և սոքա ծառայք արեգական ։ Նոքա ամենայն անչնչոց շունչ կարծեն. և սոքա նոյն օրինակ զնոյն իմանան ։ Որով յայտ է թէ վարուք ևեթ մեկնեալ են 'ի միմեանց. զի Նոքա կերպարանօղք են, և սոքա գեղիք. այլ կրօնիւք նոյնք և նոյնպիսիք » ։

(¹) կ'անուանէին իրենք զիրենք, և կամ անոնց հետ միաբան դոր-
ծելով։ Կորիւն « սատանայական աղանդ » կը կոչէ զայն. և յի-
բաւի. վասն զի ինչպէս տեսանք 'ի վեր անդր և պիտի տեսնենք
'ի հետևեալն, — Պաւղիկեանց վրայ խօսած ժամանակ, — զդև
կամ Դեմիուրգոս կը պաշտէին Մանիհեցիք։ Մ. Խորենացի,
Գ. գլ. Խէ. « Հեթանոսական մոլորութիւն » կ'անուանէ, վասն
զի համաձայն Մանիհեցւոց Քրիստոսի Աստուածութիւնը կ'ու-
րանային։

Այս դիւական և հեթանոսական աղանդս ջախջախելու համար
է, որ Ս. Մեսրովբ կամ Մաշտոց կրկին և կրկին կ'ընթանայ
Գողթն գաւառէն 'ի Սիւնիս և յԱղուանս, և անտի դարձեալ ի
Գողթն և յԱյրարատ։ Այո՛, նոյն իսկ Ս. Պրոկղի, Ակակիոսի
և Ասորւոց՝ առ Ս. Սահակ գրուած տագնապալից և յանձնա-
բարական թղթերն և անոնց պատասխանիքը մէկ կողմէն, իսկ
միւս կողմէն ալ ազգային յիշատակարանք կը ցուցնեն, թէ Մա-
նիքէութեան այս ժիր արբանեակներս, այսինքն է Բորբորիք,
Արևորդիք և Երևութականք, կարծուածէն աւելի կրօնական և
քաղաքական շփոթութիւններ յառաջ բերին 'ի Հայս. կազմեցին
Հայոց մէջ պարսկադէն կուսակցութիւն մի և հրաւիրեցին Պար-
սից անվերջ ոտնձգութիւնները մեր ազգին և աշխարհի վերայ։
Բայց աստի՝ մեր մեծեռանդն թարգմանչաց անդուլ ջանքով
և հոգևոր շանթերով, և անտի աշխարհական իշխանութեան
գաւազանի զօրութեամբը շուտով խայտառակեցան անոնց նեն-
գաւոր դաւադրութիւնքը, դէթ առժամանակեայ կերպով։ Սա-
կայն հայ հողին վրայ անոնց ցանուած սերմերը թէև ամլութեան
դատապարտուած 'ի Ե դարուն, բայց այնպէս չի մնացին նոյն
դարավերջին և 'ի սկիզբն Զ երորդին։

Այս դարուս ազգային գրականութեան և յիշատակարանաց
պակասութեան աղագա՝ կը պակսին դժբաղդաբար նոյնպէս
լրացուցիչ տեղեկութիւնք։ Սակայն մէկ կողմէն Եւտիքէսի մոլո-
րութիւնն որ վաղենտինեայ և Մանեայ 20°. նախադասութեանը
վերանորոգութիւնն էր, ըստ վկայութեան Յովհաննու (²) Օձնեց-
ւոյ. և միւս կողմէն Զենոն և Մնասական կայսերաց ներող քաղա-
քականութեամբը, մանաւանդ թէ վերջնոյս մայր դշխուհւոյն զՄա-
նիքէութիւնն ընդունելովն՝ երբ ամէն հալածանք ևս դադրեցան,
և անոնք քսան և եօթն տարի անընդհատ ազատութիւն վայե-

1. Դիտելով որ յԳ. դարուն իսկ այս աղանդս կար, և Եւսեբիոս իւր Եկեղ. պատ-
մութեան Ե. Գրոց ԺԲ. գլխուն մէջ կը յիշատակէ զայն։

2. Որ Ընդդէմ Երևութականաց ճառին մէջ այսպէս կ'ըսէ. « Զվաղենտինոս և
զՄանի, որ կարծեաք ասացին զերևումն Քրիստոսի և զմի բնութիւն »։

լեցին՝ և տարածուեցան բիւզանդական կայսրութեան մէջ, կարելի բան չէ՝ որ 'ի Հայս ևս արձակ համարձակ ճարակած չըլլան։ Այո՛, Պարսից արքային Կաւատայ՝ Հայոց սահմանագլխուն վերայ բռնի գումարած ժողովակներն ասի, և անտի յաճախ ուրացութիւնք քրիստոնական հաւատոց, խանդարմունք եկեղեցական օրինաց և բարոյականի՝ լիովին կը հաստատեն մեզ զայս տխուր ճշմարտութիւնս։

Վեցերորդ դարուն վերջերը Մանիքէութիւնն այսպիսի կացութեան մէջ էր, երբ կայսրն Յուստինոս՝ մանաւանդ թէ նորա յաջորդը տարբեր քաղաքականութեամբ զինեալ, փորձեցին վերջնական հարուած մի տալ անոր և իրենց միահեծան գաւազանի ներքև նուաճել զայն։ Սակայն այս բազմագլխեան վիշապս, այս բազմահնար Մէդուսան, որ կեղծուպատիր դիմակի տակ ծածկուած՝ գիտէր ժամանակին և պարագայից համեմատ կերպ 'ի կերպս լինել և իր հալածիչները խաբել, ամիսոփեցաւ ոչ եթէ լոկ քաղաքի մի կամ գաւառի խորը, այլ որ չարագոյն է՝ դաղտնածածուկ մարդկան համոզման մէջ, ուր չեն կարող մըտնել ոչ զէնք և ոչ բռնութիւնք։ Ոմանք արդի քննադատից՝ մերս այս վայր նշանակած պատմական և այլն պատճառներէն բոլորովին տարբեր պատճառ մի կու տան Մանիքեցւոց աղանդի տարածուելուն. այսինքն է քրիստոնէից՝ անոնց դէմ յարուցած անգութ հալածանքներն և մահուանքը։ Սակայն այսպիսի ենթադրութիւն մի ճշմարիտ կրօնից արբանեկաց համար միայն կըրնայ պատմական և կատարեալ իրողութիւն համարուիլ, և ոչ թէ Մանիքեցւոց, որոնց մոլորութեանց իբրև ճշմարիտ ժառանգներ պիտի ելլէին անուանեալքն Պաւղիկեանք. և թէ մոլորութիւնը՝ միայն անուանս և դիմակներ փոխելով կրնայ յարատեւել։ Ահաւասիկ ժամանակակէտ և անցք հին Մանիքէութեան՝ 'ի նորն, կամ լաւ ևս 'ի Պաւղիկէութիւն։ Ցեսնենք այսուհետև, թէ ի՞նչ պայմաններու և պարագայից մէջ սկսաւ երևնալ Պաւղիկեանց ոլորան. ինչպիսի՞ միջոցներով սկսաւ յառաջ վարել իր նախահայր Մանիքեցւոց գործն, և թէ դեռ ուրիշ ի՞նչ մոլորութեանց ծնունդ տուաւ։

Կանխաւ յիշեցինք, թէ ի՞նչպէս արևմտեան և արևելեան կայսերք Հռոմոց անդադար կրօնական խնդիրներու միջամտելով, բուռն հալածանքներ յարուցին Մանիքեցւոց և ուրիշ ժամանակակից հերետիկոսաց դէմ։ Արդ՝ սոքա բազմապիսի տանջանաց և մահուան սարսափի ձեռքէն ազատելու համար՝ փախան կայսրութեան հեռագոյն սահմանները. այսինքն է յԱսորիս, յԵգիպտոս և յԱրաբիա։ Այնպէս որ այս ժամանակամիջոցիս Նաղով-

բացուց, Երիոնիտներու, Արիանոսաց, Նեստորականաց և Եւտիքականաց հետ՝ Մանիքեցիք ևս կը վիստային Արարիոյ մէջ. որոնք գրէթէ առ հասարակ վրէժխնդրութեան ոգւով լեցուած՝ անհաշտ ատելութիւն մ'ևս կը սնուցանէին ուղղադաւան Եկեղեցւոյ և անոր դաւանութեանց դէմ։ Հրէութեան, կռապաշտութեան և հերետիկոսութեանց այս խառնարանիս մէջ՝ ամէնքն ալ նորաձևութեանց կը սպասէին, և ամէն օր նորանոր ծրագիրներ և ազանդներ կազմելու հետ էին. մինչև իսկ անապատի մարդարէին առաջին տուն տուողներն՝ անոնց միջէն էին։ Մարդկային կրից և յեղափոխութեան հրաբուղխն արդէն լեցուած էր, և չարութեան բաժակը բերանաբաց կեցած էր ժայթքելու երկրիս երեսը։ Նոր շունչ մ'և նորագործ զօրութիւն մի բաւական էր առ այն։ Հագարացւոց մեծ և անուանի յեղափոխիչը տեսնելով կրօնից այս ահագին տարաձայնութիւնները, ուզեց զանոնք միութեան մի վերածել։ Այսպէս ուրեմն Հարաւայնոց հովին և հոսանքին հետ՝ ձգեց տարաբ բոլոր վերոյիշեալ խառնիճաղանճ ազանդաւորները՝ վերատին սփռելու քրիստոնէական հողին և բիւզանդական կայսրութեան մերձագոյն սահմանաց վերայ։ Այո, է դարու առաջին կիսուն և ճիշտ այն ժամանակ երբ Արաբացիք տիրելով Հայաստանի՝ կը յառաջէին յԱրևմուտս, վերատին յայտնուեցան Մանիքեցիք Սամոսատի և Դարանաղեաց լեռներու մէջ։ Բայց այսուհետև Մանիքէութիւնը աւելի Պաւղիկեան ազանդ կամ պարզապէս Պաւղիկէութիւն վերակոչուած է, կամ յանուն նորոգողին և կամ մի այլ պատճառաւ։

Պաւղիկեան ազանդին Մանիքէութենէ ունեցած տարբերութիւնը մատնանիշ ընելէն յառաջ, կարևոր կը համարիմ առ խօսել համառօտիւ ազանդապետին ծագմանը կամ ազգայնութեանը մասին, լուծելու համար այն դժուարակնճիռն հարցերէն մին, որ այլ և այլ անճիշտ եզրակացութեանց պատճառ եղաւ ազգային և օտարազգի մատենագրի մատնոյ մէջ։

Ազգային մատենագիրներէն Յովհ. Օձնեցին՝ ընդդէմ Պաւղիկեանց գրած ճառին մէջ կը յիշատակէ զՊօղոս՝ պարզապէս Սամոսատցի անուանակոչութեամբ՝ այսպէս. « Աւադիկ Պօլիկեանքըդ, որ 'ի Պօղոսէ Սամոսատացւոյ դեղեալ »։

Պետրոս Սիկիլիացին (1) անոր ազգանունն ևս կ'ուանդէ, ը-

1. Hist. de Manichoeis. Ed. Lugduni, կ'ըսէ. « Etenim Samosatenae mulieri Callinicae geminierant liberi Paullus et Joannes: hosce duos serpentes illa vipera genitrix aluit, nefariamque sectam edoctos Samosatis praecones erroris emisit, que Phanariae ditionem ingressi, in vicum quendam pervenere, ibique rudes parumque certas fidei nacti incolas venenum impietatis, et dirum hostis lolium sparserunt »:

սելով, թէ Կալլինիկէ անունով Մանիքեցի կին մի ծնաւ երկու բեակ օձեր, և իժի նման կը սնուցանէր զանոնք թունաւոր վարդապետութեամբ, որոց միոյն անունը Պօղոս էր, իսկ միւսին Յովհան. և թէ առաջնոյն անուամբ նոր Մանիքէութիւնը կոչուեցաւ Պաւղիկէութիւն. և թէ Սամուսատէն տարածուեցաւ աղանդս 'ի Փանարիա, որ կը կոչուի այսօր Եպիսպարիս։

Փոտ՝ իր Պատմ. նոր Մանիքեցւոց երկասիրութեան Ա. գրոց ԺԶ գլխուն մէջ՝ խօսելով անոնց աղանդապետին վերայ՝ Պեռրոսի Սիկիլիացւոյ տեղին գրէթէ նման բառերով մէջ բերելէն յետոյ, — որ յայտնի նշան է նոյնութեան նախկին հասարակաց աղբեր մի, — նոյն գրոց ԺԸ. գլխուն մէջ յառաջ կը բերէ (1) ուրիշ աւանդութիւն մի՝ բոլորովին հակասող առաջնոյն։ Այժմ աւելորդ է ըսել, թէ այդ երկու դէմընդդէմ աւանդութիւնք՝ նոյնպէս երկու տարբեր ազգի և ժողովրդեան մէջ շրջող արտայայտութիւններ են. այլ այս աւելի դիտելու ենք, որ Փոտ այս երկրորդ տեղւոյն մէջ ոչ միայն Պօղոսի ազգատոհմը՝ այլ նոյն իսկ ազգութիւնը կը յիշէ յայտնապէս, ըսելով, թէ Պօղոս անուամբ հայազգի մի երկու որդի ունէր, միոյն անունը Գենեսիոս, իսկ միւսին Թէոդորոս։ Այս մարդս՝ ընդհանուր կերպով ամէն ուրացողաց դէմ կնքուած մահուան դատավճռէն խոյս տալով՝ եկաւ Եպիսպարիս, և հոն կը սփռէր իր ամպարշտութեան չար սերմունքը. և թէ աւելի այս՝ քան թէ Կալլինիկեայ որդւոյն Պօղոսի անունով Մանիքեցւոց աղանդը Պաւղիկեան կոչուած կը կարծուի։ Փոտի այս երկրորդ կարծեացը կը համաձայնին նոյնպէս Կղ. Կալանոս, հտ, Ա. և Բարոնիոս, հտ. Թ։ Իսկ Հ. Մկ. Զամչեան, ընդհակառակն, կը մերժէ Փոտի և անոր հետևողաց այս կարծիքն, ըսելով, թէ « Այն Պօղոս՝ որ յիշի ասա, ոչ էր 'ի Հայոց, այլ յայլմէ ազգէ՝ բնակեալ յաշխարհին Փոքուն Հայոց. և զի զայն աշխարհ պատմիչքն Յունաց կոչեն Հայաստան, վասն այնորիկ թերևս և այն Պօղոս համարեալ իցէ Հայ, նոյնպէս և որդիքն »։ Բազմահմուտ Հ. Մ. Զամչեանի մէջ բերած հերքողական պատասխանին՝ ենթադրական իսկ համարելով, սակայն և այնպէս թէ Գենեսիոս և թէ Թէոդորոս յունահնչիւն անուանքը կարող են

1. « Paullus autem quidam gente Armenius, duum filiorum pater, quorum alter Gegnesius, Theodorus alter audiebat, mortem evadit fuga, quae contra universam multitudinem decreta fuerat. Ac venit ille quidem Episparim superius a nobis commemoratam, ibique impietatem disseminare studiebat: Ex hoc porro Paullo, pars non minima apostatarum denominationem suam trahere potius, quam ex filios Callinicae detestabilem Manichoeorum gentem fuisse dictam, arbitratur ».

անոր կառան լինել. բայց Փոտի կարծիքը՝ պատմական հիմ մ'ևս ունենալու է անպատճառ, և աւելի ծանրակշիռ։ Այս պատմական հիմն՝ կամ Յունաց առ Հայս ունեցած յայնժամու առելութեանը պարզապէս արդիւնք համարելի է, որով կը ջանային յարմար պարագայից մէջ ամբաստանել զՀայս. և կամ իրօք Պողոս անունով հայազգի (1) Մանիքեցի մ'ալ եղած է է. դարու երկրորդ կէսին, որ Կալլինիկեայ որդւոյն Պողոս Սամոստացւոյն արդէն սկսած գործին յետոյ ուրեմն զարգացուցիչ և տարածիչ ըլլայ Հայոց մէջ։ Արդ՝ եթէ Փոտ ժամանակագրական կարգաւ ըրած է Նոր Մանիքեցւոց պատմութիւնն, այն ատեն երկրորդ ենթադրութիւնն աւելի ճշմարտանման կ'երևի ինձ. և վստահանալով Փոտի երկրորդ տեղւոյն վերայ կը համարձակիմ մնաւանդ ըսել, թէ հաւանական է որ այս հայազգի կոչուած Պողոսը՝ Կալլինիկեայ որդւոյն Պողոսի որդին եղած ըլլայ, և թէ նա հայ կարող էր լինել 'ի հօրէ և ոչ 'ի մօրէ։ Նա իր հօրը անմիջապէս չէր կարող յաջորդել, այլ իր հօր յաջորդին։ Յիրաւի, մեր այս կարծեաց 'ի նպաստ՝ դիտելու ենք նախ, որ Պետրոսի Սիկիլիացւոյն, ինչպէս և Փոտի առաջին տեղւոյն մէջ, Փանարիա կը յիշուի իբրև ժողովատեղի Պողոսի, իսկ երկրորդ տեղւոյն մէջ՝ Եպիսպարիսը։ Արդ Եպիսպարիսն՝ եթէ Փանարիայի նոր անուանակոչութիւն մի համարինք, և եթէ անկէց բոլորովին տարբեր տեղ մի, հետևցնել կու տայ նոյնպէս տարբերութիւն անձի և ժամանակի։ Բ. Դիտելու ենք, որ Փոտ Պողոսի Սամոստացւոյն յաջորդել կու տայ զԿոստանտինոս, և անկէ վերջ կը դնէ զՀայազգին Պողոս, զոր Յոյնք կը կարծէին իբրև նախկին պետ Պաւղիկեանց։ Գ. Յոյն մատենագրաց քով Պաւղիկեան աղանդն ի սկզբան Παυλοιωάνναι = Պաւղ–Յովհաննեան կը կոչուէր՝ Սամոստացի զոյգ հարազատներու անուամբ. բայց վերջէն Παυλικιάνοι — Պաւղիկեանքի փոխեցաւ։

Բայց դիտելով մէկ կողմէն, որ Պետրոս Սիկիլիացին՝ Կոստանտինոս աղանդապետին երևումը կը դնէ յամի Տեառն 653. և

1. Հայերէն « Գիրք ՃԾԸ Հերձուածոցի » մէջ կը գտնենք այս նկատմամբ հետևեալ հետաքրքրաշարժ տեղեկութիւնը. « Ապա կին մի Շէրի անուն՝ այնր (այսինքն է Քաղերդական կամ Պոլիկենաց) աղանդոյն եկեալ զկնի Թուրքացն՝ եկն 'ի Հայս, և Պող ումն յԱյրարատեայ գաւառէն՝ որ աշակերտեալ էր սրբոյն Եփրեմի, առևանկեաց զկինն, և խառնակեցաւ աղանդն ընդ քրիստոնէութեան։ Զարեգակն՝ զՔրիստոս ասէին՝ ոչ մեռեալ և ոչ յարուցեալ. և վասն այսորիկ ծոմանան 'ի կիրակէի։ Եւ եկեալ սուրբն Եփրեմ ոչ կարաց քակել զնա յաղանդոյն, և անէծ զնա և գնաց »։ Արդ՝ կամ այս Եփրեմն Խորին Ասորիէն տարբեր մէկն է, և կամ Քաղերդական աղանդը Դ. դարուն իսկ կար։ Բայց ինձ առաջինն աւելի հաւանական կը թուի, և կը յուսամ յետոյ այս կէտս լուսաբանել։

այնպիսի պարագաներով (1) կը ներկայացնէ զնա, որոնք կարծել կու տան, թէ նա ինքն եղած ըլլայ նախապետ այն աղանդին, և ոչ Պողոս ոք. իսկ միւս կողմէն ալ նոր Մանիքէութեան հինաւուրց անուանակոչութիւնը՝ Պաւղիկեռքիւն կ'ելլեն մեզ ընդ առաջ իբրև նորանոր դժուարութեան ժայռեր, զոր առանց հարթելու՝ կարելի չէ յառաջ վարել զպատմութիւն։ Ուստի ես իրաք հարկ կը զգամ այս մասին մի նոր կարծիք ևս արտայայտել աստ, որով կը յուսամ թէ ոչ միայն այս դժուարութիւնքս պիտի հարթին, այլ նոյն իսկ Պողոսի Սամոստացւոյ և Հայազգի Պողոսի մասին եղած աւանդութիւնքն ևս իրենց բանաւոր լուծումը պիտի ընդունին։ Արդ՝ իմ կարծիքովս Նոր Մանիքէութիւնը յէ դարուն Պաւղիկեան կոչուած է ոչ թէ Սամոստացւոյն կամ Հայազգի Պողոսի մ'անուամբ, այլ նոյն ինքն հեթանոսաց Առաքելոյն Պողոսի անունով, զոր կամ մի ոմն 'ի նոր Մանիքեցւոց, և կամ անոնց ընդհանուր համայնքը ուզեց իրեն կամ իրենց աղանդին յատկացնել։ Մեր այս կարծեաց 'ի հաստատութիւն կան այնպիսի պատմական և չջնջելի ապացոյցներ, որոնց առջև գրէթէ ամէն տարակոյս կը փարատի։

Նախ 'ի պատմութենէ գիտենք, թէ ինչպէս Մանիքեցիք՝ այսպէս ալ Պաւղիկեանք զիրենք Ցարսոնացւոյն իբրև ճշմարիտ աշակերտներ կ'անուանէին, կարծելով թէ ունին բոլոր անոր դիտութիւնն և իմաստութիւնը. և անոր վկայութիւնը Ս. Գրքէն վեր կը դնէին։ Բ. Դիտելու ենք, որ Պաւղիկեանք կը նզովէին թէ զՄանի և թէ զՊողոս Սամոստացին։ Արդ՝ այս բանս անհասկնալի պիտի մնայը, եթէ նոքա պարզապէս Մանէսի գծած սահմանին մէջ մնացած և հնացած ըլլային, և կամ զՊողոս Սամոստացի ճանչնային իրենց իբրև նախահայր։ Գ. Դիտելու ենք որ Պաւղիկեցի մեզ ծանօթ աղանդապետներէն իւրաքանչիւրը՝ Պողոս Առաքելոյ այս ինչ կամ այն աշակերտի անունը կը ստանձնէր, և իբրև անոր կենդանի անձնաւորութիւն՝ այնպէս կը ներկայանայր ժողովրդոց՝ զանոնք որսալու համար։ Եւ ստուգիւ Կոստանտինոսը՝ Սիղուանոս կը կոչէր ինքզինքը, Սիմէոնը՝ Տիտոս, Գենեսիոսը՝ Տիմոթէոս, Ափրոնէոսը՝ Եպափրոդիտէս և Սարգիսը՝ Տիւքիկոս։ Այսպէս ալ իրենց մոլորութիւնները սերմնած տեղերը՝ Պողոս Առաքելոյ աշակերտաց առաքելութեան

1. Զի կ'ասանդէ, թէ այս ժամանակիս Մանիքեցի փախստական սարկաւագ մի՝ Աստրիքէն գալով 'ի Հայս, իր հայրենիքն 'ի Մանանդի, հիւրընկալութիւն գտաւ Կոստանտինոսէն, որուն 'ի փոխարէն երկու գրուածք ընծայեց, մինը՝ Մանիքեցւոց Աւետարան, իսկ միւսը Պողոսի Առաք. թղթերը, անշուշտ խեղաթիւրուած. և թէ այդ օրէն 'ի վեր Կոստանտինոս խորհեցաւ հիմնել զվարդապետութիւն Պաւղիկեանց։

տեղերու պիտակ անուամբք կ'անուանէին։ Օրինակի աղագաւ, Մակեդոնիա կ'անուանէին զԿիբոսսա, Աքայիա՝ զՄանանաղի, Կողոսացիս՝ զԱրգոնաւտս, Եփեսացիս՝ զՄոփսուեստացիս, Լաոդիկեցիս՝ զԿիւնեցիս կամ զգաւառն Կանիս։ Արդ՝ ուշի ուշով դիտելու ենք, որ հօս Պօղոս Առաքելոյ անունն և Առաքելութեան թեմ մի յիշուած չէ։ Ուրեմն ասկէ կը հետևի, թէ կամ Կոստանտինոսի նախորդ աղանդապետն, — որուն ազգն և անունը դեռ խորհրդական քօղով ծածկուած կը մնայ, — նա ինքն կը կրէր առաքելապետին անունը, և կամ լաւ ևս, Կոստանտինոսէն հիմնուած աղանդը, ուսկից յառաջ եկաւ Պաւղիկէութիւն, այսինքն է Պաւղոսականուղղիւնն։ Դ. Դիտելու ենք, որ հնագոյն աղբերք առհասարակ փոքր 'ի շատէ նշանակած են մեզ յիշեալ աղանդապետներու իւրաքանչիւրին բռնած ուղղութիւնը, կատարած գործն և ունեցած ահաւոր կատարածը. և այս իսկ պատմական և անձնական որոշ պարագաներով։ Իսկ Կալլինիկեայ որդւոյն վարդապետութեանը, գործերուն և մահուանը վերայ որոշ տեղեկութիւնք կը պակսին։ Եւ այս իսկ ապացոյց մ'է, թէ նա գուցէ թէ պատմական անձնաւորութիւն մ'իսկ եղած չըլլայ. այլ չփոթութիւն ինչ հինաւուրց Պօղոսի Սամոսատացւոյ՝ որ 262 փրկչական թուին եղաւ եպիսկոպոս Անտիոքայ, մոլորեցաւ և ցանեց զնախասերմունս Պաւղիկեան մոլորութեանց։ Այսպէս և՛ Կալլինիկէ անունը՝ փոխառութիւն մ'է հաւանօրէն սրբուհւոյն Կալլինիկեայ, զոր Մանիքեցի կին մի իրեն սեփհականած էր։ Ուրեմն իրաց այսպիսի խրթնացեալ վիճակի մէջ տրամաբանական չէ պնդելը, թէ Պաւղիկեան աղանդը՝ հայ հանճարոյ գիւտ է, թէև իրօք հայ հողին վերայ աւելի խոր արմատ ձգած և ընդարձակ շառաւիղներ տարածած ալ համարինք։

Պաւղիկէութեան ծագումն և անուանակոչութիւնն այսպէս ստուգաբանելէն վերջ, այժմ տեսնենք, թէ ի՞նչ աղերս ունի այն Մանիքեցւոց վարդապետութեան հետ, և կամ ի՞նչ կէտերով կը տարբերի անկէ։

Արդ՝ Պաւղիկեանց վերայ երկասիրող հին և նոր աղբիւրներն ուշադրութեամբ քննելով, կը տեսնենք, որ տեսականին մէջ դարձեալ երկու, այսինքն է չար և բարի սկզբանց վարդապետութիւնն է, որուն վերայ իբրև յառանցքի կը դառնան բիւրաղդի մոլորութիւններ։ Իսկ գործնականին մէջ՝ մի և նոյն կեղծաւոր միջոցները՝ դեռ աւելի կատարելագործուած ըստ բերման ժամանակին և պարագայից։ Կոստանտինոս, — որուն կ'ընծայեն Պետրոս Սիկիլիացին և փոտ՝ Պաւղիկեան դրութեան կամ աղանդի կազմակերպութիւնը, — տեսնելով, որ Մանիքէութիւնը՝

իւր մի քանի աչքի զարնող հեթանոսական և առասպելապատում՝ իրաց համար խիստ ընդդիմութիւն կը կրէր, և թէ անոր հետևողաց բաժինն էր չարատանջ և անարգական մահը միայն, ուստի խորհեցաւ թօթափել և մաքրել զայնս. իսկ մնացածները՝ քրիստոնէական՝ բայց ոչ քրիստոնէավայել վարդապետարանի մի մէջ փոխադրել։ Պարագաներն ևս օգնեցին. այսինքն է Աստրիքէն իր հայրենիքը վերադարձող Սարկաւագը, զոր այլուր յիշեցինք, տուաւ անոր Εὐαγγέλιον և Απόστολος։ Կոստանդինոս կարդաց, խմացաւ անոնց պարունակութիւնն և լուեց, հետամուտ լինելով յօրինման իւր ծրագրին։ Այս խորհրդաւոր գրութիւնքս կրկին ուրուագիրներու կը նմանէին, որոնց չիտակ կողմը՝ քրիստոնէից կը ներկայացնէին, անոնց պատուհաններէն աղատուելու համար. իսկ իրենք իրենց մէջ բոլորովին յեղաշրջուած կը հասկընային և կը մեկնէին զանոնք։ Այսպէս ուրեմն մէկ կողմէն այս երկու գրուածքս աչաց առջև ունելով Կոստանդինոս, միւս կողմէն ալ ժամանակի պահանջը, այսպէս կազմեց իր նոր հաւատապատումը. այսինքն է առ երեսս կեղծաւորելով՝ մէկդի թողուց Վաղենտինեայ երեսուն էակաց և աստուածոց առասպելարանութիւնքը Τερατολογίας τῶν τριάκοντα Αἰώνων καὶ θεῶν, զոր Մանի ընդունած էր իր ընտրական գրութեան մէջ, կամ լաւ ևս 'ի Հաղանդարանին։ Թողուց Կուբրիկոսէն հնարուած անձրևի զրկուելի առասպելը, որ Պետրոս Սիկիլիացւոյ և Փոտի աւանդածին նայելով, իբր թէ փախչող կուսին զկնի ընթացող գեղանի պատանեկին փրփրերախ քրտինքէն յառաջ կու գար և մոգական զօրութիւն ունէր։ Աստր նման դեռ ուրիշ անհաւատալի բաներ ևս 'ի բաց թողուց։ Իսկ Բասիլիդէսի շամբուշ անառակութիւններէն չկարենալով հրաժարիլ և հրաժարեցնել իրենները, հնարիմացութեամբ մի հրապուրիչ քօղի տակ ծածկեց զանոնք, աւելցընելով անոնց վերայ ամէն տեսակ մեղնէութիւն։

Իր այս գրութիւնը՝ Պօղոս (1) Առաքեալէն ընդունած կը համբաւէր, և զինքը Սիղուանոս կ'անուանէր։ Թուղթեր ևս կը գրէր առ Կիբրոսացիս՝ Մակեդոնացիս անուանելով զանոնք։ Ս. Գրոց ամէն խմաստները փոխեց, և իր այն վարդապետարանը՝ հազար և մի նոր մոլորութեանց դուռ բացաւ։ Իր գրութենէն դուրս եղած որ և է գրուածք մերժեց և դատապարտեց, և իբր օրէնսդիր և հիմնադիր քսան և եօթն տարիներու կարճ շրջանին մէջ գրէթէ ամէն կողմ ծաւալեց անլուր մոլորութեանց հետ նաև անբարոյականութիւնը. և այնքան մեծ աղ-

1 Վերը արտայայտած մեր կարծիքը Պաւղիկեութեան անուանակոչութեան նկատմամբ, այս տեղւոյն կրկին ևս կը հաստատուի։

դեցութիւն ունեցաւ իր հետեւողաց վերայ, որ զինքը միայն Աստուծոյ տեղ պաշտելու համար՝ նզովեցին և զՄանի՝ այլովքն հանդերձ։

Այս նոր Մանիքեցիներու բռնած ցածոգի և կեղծաւոր ընթացքին վերայ դեռ աւելի որոշ գաղափար մի տալու համար, յիշենք Կոստանտինոսի յաջորդներէն միոյն, այն է Գենեսիոսի արարքը։ Սա յամին 717–741 երբ Լէոն կայսեր հրամանաւը կաւանաւորուած բերուեցաւ 'ի Կ. Պոլիս, և Պատրիարքին կողմէն հարցաքննութեան ենթարկուեցաւ, թէ ինչո՞ւ բաժնուած էր ուղղափառ եկեղեցիէն, պատասխանեց, թէ ինքը մոքէն իսկ այնպէս բան անցուցած չէր բնաւ. որովհետև ուղղափառ եկեղեցոյ անուամբ Պաւղիկեան համայնքը կը հասկնար միայն։ Երկրորդ անգամ երբ հարցաւ, թէ ինչո՞ւ համար կը մերժէ Ս. Կուսին պաշտօնը. նենգութեամբ նզովեց զայն, որ Աստուածամօր պարտուպատշաճ յարգանքը կը զլանայ. բայց նա ինքն Աստուածամայրը ըսելով երկինքը կամ վերինն Երուսաղէմը կը հասկնար։ Այսպէս կը վարուէին մեացած բոլոր հաւատոյ մնասանցը նկատմամբ. այնպէս որ ինչ որ ըսուեցաւ աստ Կոստանտինոսի և Գենեսիոսի համար՝ նոյնը կ'ընէին բոլոր Պաւղիկեանները. և անոնց ամենուն նշանաբանն էր կեղծաւորութիւն, խաբէութիւն և վատութիւն։ Ասկէ կրնան մեր ընթերցողք տեսնել, թէ մոլորութեան և պղծութեան այս արբանեակները՝ ոչ միայն բոլորովին զուրկ էին նախնի դարուց և Աւետարանի դիւցազուններէն, որոց նշանաբանն էր ընդ հակառակն տէրունական Այո՝ այո, և ոչ՝ ոչ. և արձակ համարձակ կը խոստովանէին բրոնաւորաց, որոյ և հրոյ առջև իրենց սուրբ հաւատքն և ներքին համոզումը, քաջութեամբ տանելով աքսորանաց, տանջանաց և մահուան, — այլ նոյն իսկ մեր դարու ո՛ր և է պատիւ և սկզբունք ունեցող մարդէ մի։ Ուստի ուրացող կոչուելու միայն արժանի են անոնք. և ուրացողք ոչ միայ՛ն քրիստոնէական ճշմարիտ հաւատքին, այլ նոյն իսկ իրենց դաւանած դենին։

Արդ՝ մենք այս պատմական ամենատոյդ եղելութիւնքս և տեղեկութիւնք 'ի նկատի ունենալով, մեծապէս կը զարմանանք այն գրողներուն վերայ, որք չգիտեմ, թէ ի՞նչ նպատակներով կը գրուատեն և կը բաղդատեն անոնց քաջութիւնը՝ նախնի քրիստոնէից անտեղիտալի և անբաղդատելի քաջութեան և հաստատամտութեան հետ, հիմն 'ի վեր տապալելով պատմական իրողութիւնները։

Մէջ բերենք այժմ այս նոր Մանիքեցւոց վարդապետութեան գլխաւոր կէտերն և հիններէն ունեցած տարբերութիւնքը։

Կոստանտինոս՝ Մանիքէութեան հիմանը վերայ ուղելով բարձրացընել իր վարդապետութեան նոր շէնքը՝ դրաւ անոր իբրև անկիւնակալ, Ա. կերպապէս ընդդիմադրութիւն մ'ընդ մէջ բարի Աստուծոյ, — ցէր երկնից անուանելով զնա, և աստուծոյն չարի, — կոչելով զսա Զորոչթիւն կամ Արարող Δημιουργός աշխարհի։

Արդ՝ Պաւղիկեան դրութեան այս գլխաւոր սկզբունքէս ակնեւ կը տեսնուի, թէ ոչքան հեռացել էին հին Մանիքեցիներէն. վասն զի Մանիքէութեան մէջ, — ինչպէս տեսանք, — հոգիւն կեանդանի՝ նկատուած էր իբրև բարեմոյն էակ մի. մինչդեռ աստ՝ աշխարհքիս ստեղծագործութիւնը չար հոգւոյ մի կ'ընծայուի։ Եւ այս տեսական փոփոխութիւնս դիտմամբ ըրին, որպէս զի 'ի գործնականին անխղճաբար անձնատուր ըլլան 'ի չարն և յախտաւոր յօժարութիւնս բնութեան։

Բ. Մարդուս մէջ գտնուած որ և է բարեմասնութիւն՝ բարի Աստուծոյն կը վերագրէին. իսկ յոռեմասնութիւնքը, այսինքն է ստորին մասը, զգայականութիւնն և նիւթականը՝ աստուծոյ չարի։ Դէմիուրգոսը՝ ստեղծած է զմարմին. իսկ Աստուած ստեղծած է զհոգին։ Սա կը ջանայ ձգել զմարդիկ 'ի բարին. իսկ նա խոտորեցնել 'ի չար անդր։ Գ. կ'ընդունէին մարդկութեան անկեալ վիճակը, բայց այնու իսկ երջանիկ կը համարէին զմարդ, ըսելով, թէ բարի Աստուածը՝ այն առթիւ 'ի գութ շարժեցաւ մեծագոյն ևս բարիքներ ընելու մարդկութեան։ Դ. կ'ընդունէին Երրորդութեան գոյութիւնը, բայց գնոստիկեան մտոք փոքրկացնելով զՈրդի և զՀոգի։ Ե. Քրիստոս իր մարմինը յերկնից բերաւ յերկիր, չկարենալով յերկրէս առնուլ զայն՝ առանց ապականելու. վասն զի երկիրը՝ Դէմիուրգոսին գործ է։ Հետևաբար կուսէն չծնաւ նա, այլ իբրև խողովակէ մ'անցաւ անոր միջէն, յաշխարհ մտնելու համար։ Զ. Ոչ թէ Մարիամ կոյսն, այլ երկինքը կամ վերինն Երուսաղէմ է Քրիստոսի մայրը։ Է. Մարիամ՝ Յիսուսէն վերջ դեռ ուրիշ որդիներ ալ ունեցաւ։ Ը. կը մերժէին ուղղափառ եկեղեցւոյ ամէն պաշտամունքն և արտաքին արարողութիւնները։ Թ. Մկրտութիւնն և ընթրիքը կը կատարէին՝ առանց զգալի նիւթոց, այլ պարզապէս բանիւ և ձևով. որովհետև ըստ Պաւղիկեանց՝ Մկրտութիւնն ուրիշ բան չէր, բայց եթէ Քրիստոսի այն վարդապետութիւնը, թէ « Ես եմ լուրն կենդանի »։ Այսպէս և ընթրիքը՝ պարզապէս նշանակ է Քրիստոսի այն վարդապետութեանը, թէ « Ես եմ հացն կենաց »։ Ժ. Կը մերժէին սրբոց բարեխօսութիւնն և անոնց ընծայուած յարգութիւնը. որովհե-

տև, կ'ըսէին, սուրբերը ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ՝ Դէմիուրգոսի ծառաները, որոնք դատաստանին օրը բարի Աստուծոյ երեսէն պիտի ձգուին։ ԺԱ. Կ'արհամարհէին Քրիստոսի սուրբ խաչն՝ իբրև փայտ չոր և զուրկ աստուածային զօրութենէ։ ԺԲ. Եկեղեցւոյ նուիրապետութիւնը (1) բացէ 'ի բաց կը մերժէին։

ԺԳ. Հին կտակարանը բոլորովին մերժուած էր անոնցմէ. իսկ նորէն՝ Պօղոսի թղթերն և Ղուկասու Աւետարանը միայն կ'ընդունէին, որովհետև սա Պօղոսի աշակերտած էր, կ'ըսէին։ ԺԴ. Ս. Պետրոսի առ կաթուղիկեայս գրուած թղթերու հետ՝ անձն ևս կը դատապարտէին. վասն զի, կ'ըսէին, զՔրիստոս ուրացաւ նա, և Հրէից, — զորս իրենք մեծապէս կ'ատէին, — շատ առանձնաշնորհութիւններ տուաւ։

Այս գլխաւոր և արմատական մոլորութիւններէն յառաջ կուգային ապա ուրիշ անթիւ զառածմունք 'ի գործնականին։ Կը ցաւինք որ Պետրոս Սիկիլիացին և Փոտ Պաւղիկեանց պատմական մանրամասնութեանցը զբաղելով, — յայնժամու սովորութեան համեմատ, — զանց ըրած են մէջ բերելու բոլոր անոնց կրօնական և բարոյական դրութիւնը՝ քննաբանօրէն։ Սակայն յոյժ շնորհապարտ ենք մեր Յովհ. Օձնեցի հայրապետին, որ անոնց պակասը՝ գէթ մասամբ մի լեցուցեր է։ Այո, նա կը վկայէ, թէ Պաւղիկեանք, ոյք զխաչապաշտ քրիստոնեայս՝ իբրև կռապաշտս կը ծաղրէին և կը ծանակէին, իրենք, ընդհակառակն, չարեաց 'ի չարիս վերացեալ ելին. այսինքն է Պատկերամարտութենէ 'ի խաչամարտութիւն և 'ի քրիստոսատեցութիւն, և անկէց դիւապաշտութեան և անասնաձութեան անդնդոց մէջ դահավիժեցան։ Եգիպտացւոց հետ մկնորսակ կենդանեաց պատիւ և պաշտօն կը մատուցանէին։ Յանէսի և Յամբրէսի հետ Ոլիմպոսի կայծակնահանու և փրփրերախ դիւին դիմաց երկիր կը պագանէին։ Զրադաշտ մոգին հետ արեգակն և լուսինը կը պաշտէին, և յափսիթերս անոր առջև ինկած ողբաձայն կ'աղաղակէին. « Արևիկ, Լուսիկ »։ Մանէսի և Սիմոն մոգի հետ կախարդութիւն կ'ընէին, իրենց օգնութեան կանչելով օդային և վերնոտ դևերը։ Աստրոդիտական կրքերն աստուածացուցին, անոնց մէջ դընելով իրենց երջանկութիւնը։ Բնութեան և կրօնից դրած պատուարն՝ որով միայն մարդկային բարոյականը կը պահպանուի,

1. Իրենց գլխաւորներն յառաջագոյն կը կոչուէին վարդապետք, որոնց ապա փոխանակեցին συνέκδημοι — ընկերք, մի և նոյն իշխանութեամբ։ Այս վերջնոցս օգնականները Ղուտարք νοτάροι կը յորջորջէին, որոց գործն էր՝ Ս. Գրոց ընտիր ընդօրինակութիւններ ընել։ Տուներն՝ որոնց մէջ կը համախմբուէին՝ ոչ թէ Եկեղեցի ἐκκλησία, այլ προσευχαί աղօթատեղի կ'անուանէին։

վերջին աստիճան անամօթութեամբ քակեցին։ Անոնց համար չկար խտիր մօր և որդւոյ, հօր և դստեր, եղբօր և քեռ մէջ։ Պղատոնէն երևակայեալ նորահնար Հասարակապետութիւնը՝ Պաւղիկեան համայնքի մէջ իրականութիւն դարձած էր, մասնաւորապէս վաւաշոտ և շնակեաց վահանի ձեռքով, զոր կը նկարագրեն քաջ Փոտ և Պետրոս Սիկիլիացի։ Մայրապակաութեան և քոյրառևանգութեան խոհերու մէջ շաղախուած՝ իբրև Քաղեայ և Աստարդեայ գարշելեաց՝ ստրկաբար կը ծառայէին անոնց։ Այնպէս որ սուրբ հայրապետիս վկայութեանը վերայ յեցած, կրնանք ըսել, թէ Մանանաղի, Կիբոսսա և Ջըրկայ կամ Ջրիկ՝ իբրև մի մի Սոդոմ Գոմորներ էին՝ անառակութեան ախտերով ողողուած. և ամէն տղմասէր մարդ կը փութայր ընկենուլ ինքզինքն այն հեղեղին մէջ։ Ահաւասիկ անոր խօսքերը. « Նախկին ժծղնէութեան պայդակենութեան խեշերանք. տղմասէր և ժանտագործք. ընդ խաւար զխաւարայինսն կատարելով ծանակութիւնս, առ միմեանս անպատկառացոյցք են պղծութեան. 'ի մէնջ վրիպանուն պատրողաբանութեամբ զանխլանալ կարծեն։ Ոչ գիտեն՝ թէ ո՞րպէս հոտոցն անկարածածկելիք են, ընքեամբ առ հոտոտելիսն բերեալ բուրմունք. սոյնպէս և վասն գործոցն հողմով համբաւուցն զյոլովից բախել զեկուցանէ լսելիս։ Այլ սակայն և դժուարագիտելի է յոքնաղան և բազմախուռն 'ի նոսա անտառացեալ չարութիւնն »։ Վերջէն կը նկարագրէ անոնց ֆիզիքական կացութիւնն այսպէս. « Ցեսա-նեմք 'ի ծառայութիւն զեկեալսն սատանայի՝ խեղանդամս և հոգեհաշմս, ծիւրեալս և կասեալս 'ի զօրութենէ »։

Ի պոռնկութենէ ծնուած ստնդեայ մանկունքը՝ հաւերու և ոչխարներու նման փողոտելով, ալիւրի հետ կը զանգէին, և պըժգալի արարողութիւններով (1) հանգոյն շաղղակեր խոզերու իրենց ծնունդը կ'ուտէին։ Անոնց ցամաքեալ դիակունքն և կմախքը՝ բարձրահայեաց տանիքներու վրայ դիզելով՝ իրենք ալ վարէն դէպ 'ի վեր նայելով՝ կ'երդնուին անոնց վրայ, ըսելով. « Բարձրեալն գիտէ »։ Իրենց քահանաները՝ կանանցմէ կ'ընտրէին իբրև Կուինտիլլայ, Պրիսկիլլայ և Մաքսիմիլլայի յաջորդներ. և Մոնդանոսի նման իրենք զիրենք Հոգի սուրբ կ'անուանէին (2), և այն լսիրշ կանանց ձեռքով մարդարէութիւններ և

1. Այսինքն է, հաց չինելով՝ ըստ վկայութեան հայերէն « Հերձուածոց Գրքին », կը բաշխէին իրենց հանդիսանքին՝ իբրև հաղորդութիւն պատարագաց կամ Ագապաց, և կը շամբչէին մոլեգնեալք։

2. Զուարճալի է Փոտի և Պ. Սիկիլիացւոյ աւանդածը Գենեսիոսի երկու որդւոցը Զաքարիայ և Յովեփայ մասին, ոյք իրենց հօր մահուանէն վերջ՝ երկու կու-

պատգամներ կու տային։ Իսկ այսպիսի մարգարէուհիներ ընտրելու համար՝ զարհուրելի և անլուր ոճիր մ'ալ հօն կը գործէին. այսինքն է, կանայքը բոլորաձև կը բազմէին, և անոնց մէջ առաջնածին եղողին երեխան առնելով՝ ձերբաձգութեամբ իրարու կը նետէին, մինչև որ այն խեղճուկն ըլլար չարամահ. և որու ձեռքին մէջ որ ոգեսպառ ըլլալով կը մեռնէր, զնա կը կարգէին իրենց աղանդապետ և կը պատուէին։ Մնոր անուամբ երդումներ կ'ընէին, ըսելով. « Վկայ ունիմ՝ քեզ անոր փառքը՝ որուն ձեռքը մեռաւ միածին որդի », և այլն։ Այս խրժդժութիւնս կամ Պեպուզացւոց աղանդէն փոխ առնուած է, — վասն զի թէ Ս. Եպիփանի քով և թէ հայերէն Հերձուածոց Գրքին (¹) մէջ, ինչպէս դիտեցինք, անոնց ընծայուած է. դիք անլուր հայհոյութեամբ կը յաւելուին և զայս, թէ Ցիտղէ կամ Պրիսկիլլա յղացած և ծնած էր զՔրիստոս, և իգական սեռիս եղած կ'առասպելաբանէին զնա, — և կամ Յովհ. Օձնեցին սխալմամբ Պաւղիկեանց վերագրած է զայն։

Ահա այս և սոնց նման ուրիշ շատ և շատ քաղաքական ոճիրներ և բարոյականի և մարդկային արժանապատուութեան դէմ գործուած ամպարշտութիւնք՝ արդէն բաւական էին քրիստոնեայ ազգաց և տէրութեանց ատելութեան հետ՝ աչալուրջ հսկողութիւնն իսկ Պաւղիկեանց վերայ դարձնել. վասն զի այս աղանդաւորքս իրենց կեդրոնատեղիներէն դուրս ելլելով՝ ուր որ

սակցութեան բաժնուեցան. վասն զի երէցը կ'ըսէր, թէ ինքը իր հօրմէն ժառանգած էր զՀոգին սուրբ. իսկ կրսերը կը պատասխանէր, թէ ինքն ալ ուղղակի երկնքէն ընդունած էր զայն։

1. Ուր ՃԾԳ երորդ աղանդին վրայ, որ Քաղերբական, այսինքն է արիւնարբուաց թարգմանուած է, հետևեալ նորութիւնը կը պատմուի 'ի հաստատութիւն ըսածնուս. « Թագաւոր ոմն Ցունաց աշխարհէն պատահեաց պիղծ աղանդին Պօլիկեանց և ոչ կարաց դարձուցանել զնոսա յաղանդէն իւրեանց, հալածեաց զնոսա անդր քան զլեառն Կովկաս։ Եւ կին մի առաջնորդէր նոցա, Մարէ անուն, կախարդ և կունդ։ Զարագործացն՝ բարի առնէր, և բարեգործացն՝ պատուհաս. և զկանայս՝ հասարակաց ուսուցանէր, և աւուրս Ե որոշեալ, — զոր մեք հասարակաց կոչեմք, — զայն սատանայական անուանէր, և 'ի նոսա հեղուլ արիւն մարդոյ՝ բարի ասէր. և որ ուտէ և ըմպէ զարիւն մարդոյ՝ այն արդարութիւն։ Եւ յաղդմանէ սատանայի տեսիլ տեսանէր և մանկունս փողոտէր և ասէր, թէ նոցա հոգիքն գան 'ի տեսիլ կախարդայ »։ Կրկին արժէք ունի մեզ համար այս տեղիս, նախ զի համանձայն Օձնեցւոյն Պաւղիկեանց կ'ընծայէ վերոյիշեալ խժդժութիւնը։ Բ. կը ցուցնէ թէ Կովկասու լերանցամէջն իսկ տարածուած էր Պաւղիկեան մոլորութիւնը, զոր ուրիշ ազգային և օտար մատենագիրք լուած են։ Հաւանօրէն Պրիգուններու, Մայլականներու և Դոխոբուռներու մէջ հնացած մի քանի մոլորութիւնքը՝ Պաւղի կեանքներէն մնացած ըլլան։

ոռք կը կոխէին, մարախի և խորշակի նման ամէն վարք ու բարք կ'ապականէին. մանաւանդ երբ Նիկեփոր խուժադուժ կայսրէն ալ օգնութիւն և պաշտպանութիւն գտան։ Պաւղիկեանց այս ապականիչ ընթացքը տեսնելով հայազգի կայսրն Լէոն, հարցաքննութեան ատեան մի բացաւ անոնց դէմ փութանակի, յանձնելով զայն Նեո-Կեսարիոյ եպիսկոպոսին Թովմասի և Պարակոնդակէսի՝ կառավարչին Փոքուն Հայոց։ Պաւղիկեանք՝ որ այս ժամանակներս արդէն երկու դիմամարտ կուսակցութեանց բաժնուած էին, այսինքն են Կիւնոխորիտք (¹) և Յաստատք (²). ուխտ ըրին իրարու հետ՝ սպաննել զհարցաքննողս։ Իրենց այս դաւադիր որոշումն 'ի գործ դնելէ յետոյ՝ շուտով փախան 'ի Մելիտինէ, որ է քաղաք Երկրորդ Հայոց։ Հոն ընդունելութիւն գտան Սարակինոսաց ամիրապետէն, զոր օտար աղբերք Մոնոքերատէս կ'անուանեն, որ փոքրիկ աւան մ'ալ, Արգաս, տուաւ անոնց 'ի բնակութիւն։ Տարիներով անդադար դուրս գալով՝ յարձակումներ կ'ընէին բիւզանդական կայսերութեան սահմաններուն վերայ. կ'աւերէին, կը սպաննէին և գերեվարութեամբ յետս կը դառնային։

Այս բանս մէկ կողմէն, իսկ միւս կողմէն ալ Պաւղիկեան ահաւոր աղանդապետին Սարգսի մահը տեսնելով Միքայէլ Գ. կայսեր խնամակալ դշխոյն Թէոդորա, վճռեց վերջնակապէս զանոնք բնաջինջ ընել։ Յամի Տեառն 835 Պաւղիկեանք սարսափելի հալածանքի մ'ենթարկուեցան, որ կարծես թէ հեթանոսաց անողորմ ժամանակները կը յիշեցնէ մեզ։ Կ'աւանդուի թէ հարիւր հազար Պաւղիկեանք, միայն Փոքր Ասիոյ մէջ, հրոյ և սրոյ զոհ եղան, և վերոյիշեալ կնկան սուրն և բարկութիւնը դեռ չի յագեցան։ Այս թշուառ զոհերու մէջ կը գտնուէր նաև Կաբաս-

1. Այս կուսակցութեանս գլուխն էր շնաբարոյն Վահան, յորմէ յառաջ եկաւ և անունս կիւնոխորիտք, այսինքն է շնաւանցիք կամ շնակեացք, յուն. κύων և χώρα կամ χώρος բառերէն ածանցեալ։

2. Առ Պետ. Սիկիլիացւոյ instabiles = Անհաստատք կը կոչուին, չգիտեմ ինչ պատճառաւ։ Այս միայն յայտնի է, որ Սարգսի հետևողք էին սոքա։ Հայերէն ՃԾԸ Հերձուածոց Գրքին մէջ Ագիսանոսք, — եթէ ըստ հնչման նոյն են և իրաք Յաստատներու հետ, — զուտ ազգային տիպ ունին։ Անոնց համար կ'ըսուի, թէ « Սոքա վարուք ըստ կաթողիկէ եկեղեցւոյ վարին, բայց 'ի վանս ուրեք ոչ բնակին։ Ունին և կարգս ինչ 'ի ծածուկ զօշաքաղութեան, և ընդ մեզ ոչ աղօթեն։ Եւ պատուեն զօդս և ըզպտուղս. և յորժամ 'ի մի վայր ժողովին 'ի խորհուրդս՝ զԱստուած ոչ յիշեն, այլ զհողմ և զտոհմականս. և դիւի ումեմն զոհ մատուցանեն Երան և Տոհմական կոչեցեալ անուն։ Եւ Զատիկ՝ ընդ Հրէայս կատարեն, և զամենայն բարեբար իւրեանց՝ յանասնոց և 'ի գազանաց պաշտեն։ Զեպիսկոպոսունս և զքահանայս մեր բամբասեն վասն ընչասիրութեան »։

հաս անուամբ սպայի մի ծերունի հայրը. բնականապէս որդիական գութն և գսրովը զարթուցին անոր մէջ վրէժխնդրութեան ոգին։ Թողուց շուտով կայսրուհւոյն ծառայութիւնը. փութաց յԱրգաս. անցաւ Պաւղիկեանց բանակին դլուխը. յարձակեցաւ Ամարասայ և Տփրիկայ կամ Տիվրիկի բերդերուն վրայ, և առաւ զանոնք. յառաջելով՝ մոտաւ կայսրութեան երկիրները. կըրկին և կրկին ճակատներ տուաւ բազմախուռն զօրաց և զօրավարաց դէմ։ Այս անակնկալ յաջողութիւններս տեսնելով ապա անոր աները խրիսոխերէս, ինքն ալ յարձակեցաւ Եփեսոսի վերայ. մոտաւ Ս. Յովհաննէս եկեղեցին և ապականեց զայն։ Այն ատեն Վասիլ կայսրը տագնապաւ՝ մեծագոյն բանակ մ՚ալ հանեց անոր դիմաց, բայց նա միշտ յաղթական կը յառաջէր 'ի խորս կայսրութեան։ Վատանդն ահագին էր երկուստեք. ճգնաժամն հասած էր։ Վերջապէս յաղթուեցան Պաւղիկեանք, իրենց զօրավարն ալ սպաննուեցաւ։ Արդ՝ այս վճռական ճակատամարտէս վերջ դադրեցան Պաւղիկեանք քաղաքական կուսակցութիւն կազմելէ. մնաւանդ թէ նուաճեցան խսպառ, և պատմութիւնը լռեց անոնց վերայ խօսելէն։ Սակայն յամին 969 Յովհ. Զմշկիկ կայսրը՝ գիջանելով Անտիոքայ Պատրիարքին Թէոդորի խընդիրքին, փոխադրել տուաւ զանոնք 'ի Փիլիպպուպոլիս և 'ի Թրակիա։ Այս տեղերուս և ժամանակիս մէջ դադրեցնելով մենք ալ արևմտեան Պաւղիկեանց պատմութիւնը, տեսնենք, թէ յարևելս և մնաւանդ հայ հողին վերայ ե՞րբ և ի՞նչ վիճակ ունեցան և գործեցին անոնք։

Յովհ. Օձնեցի ուզելով խօսել Պաւղիկեանց մասին, աղօտ ծանօթիւն մ՚ևս կուտայ անոնց ծագման վերայ 'ի Հայս. « Նախկին մեծդնէութեան պայդակենութեան խեշերանք. որք խրատեալք և ոչ իմաստնացեալք, 'ի Ներսիսէ կաթողիկոսէ, զկնի նորուն մնհուանն խուսեալք չոքան զողեցին յոլորտս ուրեք աշխարհիս մերոյ։ Եւ 'ի նոսա հատուածեալք եկին յարեցան կշտամբեալքն 'ի կաթողիկոսացն Աղուանից պատկերամարտք ոմանք, զի սիրէ առ համանմանիսն իւր հասանել վրիպեալն 'ի ճշմարտութենէն։ Եւ մինչև էր նոցա զօրավիգն գտեալ զկարապետս Դերաքրիստոսին, երկուցեալք և սարսեալք կային յուղիղ և 'ի գերապանծ կրօնիցն քրիստոսականաց... իսկ յորժամ այսմիկ որպէս մեծագունի և աղօտացելոյ՝ հասանել կարծեցին, յայնժամ 'ի դարանամութենէն սողեալ յորջից՝ յաշխարհամէջս և 'ի ժողովրդապնակս համարձակեցան յարձակել տեղիս, 'ի հեղեղական հեղձուցիչ ջուրցն մնան հասեալ նմա, Զրկայ անուանելով։ Որբանօր 'ի միասին ընթացեալ կուտեցան ամենայն ուստեք, որպէս

անգեղք աշխարհաց 'ի նեխաշաղիղ ինչ գէշ. և զանուանն իւրեանց զաղտախինս յանդգնեցան կախել զայնցանէ, որ զերկնից բարութեանց բուռն հարեալ ունիցին յուսով »։

Արդ՝ խմաստասէր հայրապետիս այս խօսքերը թէև ճարտասանական և այլաբանական ձևոց տակ փոքր ինչ անորոշ մնացած են, սակայն և այնպէս անոր մեզ աւանդած գլխաւոր կէտերն են Ա. թէ այն հինաւուրց մծղնէութեան և պայղակենութեան, — այսինքն է Մանիքէութեան, — խեշերանքը՝ որ է Պաւղիկեան աղանդաւորաց մնացորդը՝ Զդարէն և այսր ծածկուած կը մնար հայ հողին վերայ, զոր յիշեցինք։ Բ. թէ սոքա Ներսիսի Շինողի ժամանակ վերատին բազմացան և տարածուեցան 'ի Հայս. բայց մեծագործ հայրապետիս և որան յաջորդաց հոգածութեամբ և ազգու միջոցներով նուաճեցան գէթ ժամանակ մի, և հեռանալով ծածկուեցան մեր երկրի հեռաւոր և անծանօթ սահմանաց վերայ։ Գ. թէ Աղուանից կաթողիկոսներէն հալածուած ուրիշ աղանդաւորներ ալ եկան և անոնց հետ միացան։ Այն առեն, ուրեմն, զօրանալով անոնք՝ ելան իրենց որջերէն, սփռեցան Հայոց այլ և այլ կողմերն, և միամիտները մոլորեցնելով՝ որսալ իրենց նանրահաւատութեան ցանցին մէջ։ Դ. թէ անոնց կեդրոնատեղին էր Ջրկայ, ուր ամենէն աւելի համարձակ կերպով իրենց ամպարշտութիւնքը կը կատարէին։

Բայց թէ ուստի՞ և որո՞ց ձեռքով մուտք գտաւ Մանիքեցւոց այս խեշերանքն 'ի Հայս, — Ներսիսի կաթողիկոսութեան ո՞ր տարին և ի՞նչ պարագայից մէջ, — թէ Շինող հայրապետն ի՞նչ միջոցներով կարաց նուաճել զանոնք, — թէ յետոյ ինչպիսի՞ քաղաքական և բարոյական ազդեցութիւն ունեցան անոնք հայ ազգաբնակութեանց վրայ, — ի՞նչ կերպարանափոխութիւն կրեց այն աղանդն և Թոնրակեան անուանեցաւ, — հուսկ ապա թէ ի՞նչ վերջ ունեցաւ այս վերջինս և վերջնական հետևանքներ. արդ՝ այս կետերս ոչ միայն կարևոր են մեր եկեղեցական պատմութեան համար, այլ նոյն իսկ կարօտ քննութեան. և մենք պիտի ջանանք ըստ կարելոյն լուսաբանել զանոնք։

Կանխաւ խօսելով Կալլինիկեայ որդւոյն Պօղոս Սամոստացւոյ և ուրիշ հայազգի Պօղոսի մի վրայ, անցողաբար մէջ բերինք հայերէն Հերձուածոց Գրքէն՝ Շէթի անունով պարսկադէն Մանիքեցի կնկան մի 'ի Հայս գալուն և Այրարատ նահանգէն Պօղ անունով անձի մի զանիկայ առևանգելու միջադէպն, որով կ'ըսուի, թէ « խառնակեցաւ աղանդն (Մանիքեցւոց) ընդ քրիստոնէութիւն »։ Արդ՝ մէջ բերուած տեղւոյն պարզապէս Հայոց աւանդութիւն և 'ի հարկէ եկամուտ ըլլալն ակներև է. զի ե-

պիսկոպոսի քով չկայ յիշատակութիւնն անգամ այն անձանց։ Այժմ դիտելու ենք, որ այս աւանդութիւնս բաւական կռուան մ՚է կարծելու, թէ եօթներորդ դարուն Արաբիոյ կամ Թուրքաստանէն եկող Շէթիի և Պողոս Այրարատեցւոյ ձեռքով մըտած ըլլայ նոր Մանիքէութիւնն 'ի Հայս։ Արդ՝ այս պարագայիս մէջ փոսի արտայայտած երկրորդ կարծիքն՝ հայազգի Պողոսի և Պաւղիկէութեան անուանակոչութեան մասին՝ ըստ իմիք պատմականօրէն իսկ ստուգուած կը լինէր և ազգային աւանդութեան հետ ձեռք ձեռքի տուած, եթէ հեռեալ երկու հակաժամանակագրական անուանքն, այսինքն է Թրքաց և սրբոյն Եփրեմի (1) մեզ խոչընդոտն չելլէին. վասն զի հօն յիշատակուած Եփրեմն, — եթէ Ասորի Ս. Հայրն է, — Թուրք անուան հետ բոլորովին անմիաբանելի կը մնայ։ Ուստի ես չեմ վարանիր բնաւ՝ բոլորովին տարբեր անձնաւորութիւն մի համարել զնա. զի գրուածքիս հեղինակն այնպիսի հակաժամանակագրական խոշոր սխալ մ՚ընելու չափ ոգէտ չէր կարող լինել։

Իսկ գալով Թուրք անուան կիրառութեանը, դիտելու ենք, որ Է դարուն արդէն հաստատուած էին Թուրքաստանի մէջ, և յամի Տեառն 655 Արաբացւոց հետ կռիւներ ևս ունեցան. ինչպէս խազարք ըսուած Թուրքերն ալ՝ Ը դարուն խալիֆաներու հետ կը մրցէին՝ զՀայս իրարու ձեռքէն խլելու համար։ Բ. Թրքաց կատմամբ եղած դժուարութիւնը դեռ աւելի կը հարթի, եթէ դիտենք որ վերոյիշեալ տեղւոյ հեղինակին խօսքը Թրքաց մեծ արշաւանքին և Հայոց մեծաց տիրապետելուն վրայ չէ ուղղակի, այլ փոքրաթիւ խմբակաց կամ գաղթականներուն, որոնք Արաբացւոց հետևելով թափեցան 'ի Հայս. իսկ Արաբացիք յամին 652 արդէն տիրած էին Հայոց՝ վասակ Պատրիկի ձեռքով։ Ուրեմն այս կողմանէ իսկ անկարելիութիւն կամ հակասութիւն մի չենք տեսներ եզրակացնելու, թէ Շէթի անունով կենդ միջոցով վերատին մնած ըլլայ աղանդն նոր Մանիքեցւոց և արևպաշտութեան 'ի Հայս՝ Է դարուն. և թէ յանուն Պողոս Այրարատեցւոյ՝ Պաւղիկեան կամ Պողիկեան անուանուած։ Ահաւասիկ զոր 'ի վեր անդր ազգային աւանդութիւն անուանեցինք, և մէջ կը բերէ Փոտ։

Դիտելու ենք որ բազմահմուտն Հ. Միք. Զամչեանն (2) իսկ համաձայն Ճառընտրաց և Թղթոց գրքին՝ վերը նշանակած ժա-

1. Բնոյ եպիսկոպոսին Եփրեմայ ալ կրնայ պատշաճիլ յիշեալ միջադէպը. զի Գր. Մագիստրոսի առ Ասորւոց կաթողիկոսն գրած թղթին մէջ կը յիշուի իբրև դարձուցիչ մոլորելոց 'ի Թոնրակեանց աղանդէն։

2. Պատմ. Հայոց Հտ. Բ։

մանակամիջոցին, այսինքն է մօտ յամ Ցեառն 655, կը դնէ Պաւ-
ղիկեանց յայտնուիլն 'ի Հայս։

Սակայն Պաւղիկեանց ինչպէս յայտնուիլն՝ այսպէս և տարա-
ծուիլը շուտով եղաւ. և այս բանիս շարժիչ պատճառներ կային։
Ա. Դիտելու ենք որ Յովհ. Մայրագոմեցին և իր աշակերտը
Սարգիս, — որ մոլորութեան շաղին մէջ անցաւ անդը քան զիւր
վարդապետը, — յամի Ցեառն 645 ծագած կրօնական և եկեղե-
ցական տարաձայնութեանց պատճառաւ՝ արդէն Պաւղիկեանց
ցանելիք սերմերը բուսուցանելու համար հայ հողը պատրաս-
տած էին (1)։ Այս տաղանդաւոր և հայրենասէր անձս, այս ինքն է
Մայրագոմեցին, որ յառաջագոյն այնքան արդիւնաւոր հանդիսա-
ցած էր, — գէթ հակաքաղկեդոնեան կուսակցութեան առջև, —
Հայաստանեայց եկեղեցւոյ առանձնաշնորհութիւնները պաշտպա-
նելուն և Յունաց ոտնձգութեանց դէմ դնելուն համար, դժբաղ-
դաբար չի մնաց այն սահմանին մէջ, այլ մղուեցաւ և մղեց
զայրս 'ի ծայրայեղութիւն անդը։ Սա իր աշակերտին Սարգսի
հետ մէկ կողմանէ Յուլիանոսի Աղիկառնացւոյ մոլորական գրու-
թիւնները թարգմանելով, իսկ միւս կողմէն ալ երկասիրելով
զԹրատ վարք, զՀաւատարմատ և զԸնդեանակ և տարածելով ա-
մէն կողմ՝ պատճառ եղան Երևութականաց և Կաթարոսաց և
ուրիշ հակաքրիստոնէական աղանդոց. մանաւանդ թէ կամուրջ
մի կապեցին անցնելու սատի 'ի Պաւղիկէութիւն անդը։ Մայ-
րագոմեցւոյ յիշեալ գրուածներէն երկրորդը միայն, այն է
Արմատ հաւատոյ, կը գտնուի Էջմիածնի Ձեռագրատան թիւ
1500. 1. քառածալ և նոտրագիր գրչագրի մի մէջ, — ըստ վկա-
յութեան Մայր ցուցակին (էջ 171)։ Սակայն ինչպէս միւս եր-
կու գրութեանց, այսպէս և սորայս պարունակութիւնն ինձ յայտ-
նի չէ։ Բայց Թէոդորոսի Քռթենաւորի՝ Ընդդէմ Մայրագո-
մեցւոյ գրած ճառը՝ բաւական թանկագին տեղեկութիւններ
կու տայ նոցա մասին, յորմէ յիշեալ տեղին միայն մէջ կը բե-
րեմ, մնացածը յանձնելով 'ի կամս ուշիմ ընթերցողաց.
« Քանզի ահա վերայայտնեցան այժմ 'ի տանս Թորգոմայ նո-
րածին դառնութեան զարմք, օգտողք ճշմարտութեանն, որք
կաթարոսք արտաքուստ երևին գուարեալին զգեստոք և խա-
չակիր մարմնակրութեամբ, և ներկերպին գաղանադէմք, խրբ-
թազգեստք, խուճապողք, տգիտախոզխոզք, քծնարանք, գաղ-
տապատիրք, գողտրաբարբառք, ապաժուժախորհք, դժապանք։
Որք անսարսափելի մտօք և անձնանձնաւոր իմաստիւք ահա յա-
շակնեալք յարանգիսն առ բոլորից արարող և համագոյիցս փրր-

1. Տես Կանոն ԼԸ, Յով. Կաթողիկոս, Վարդան և Կիրակոս։

կող Բանի Աստուած. և 'ի բազէ տնօրինական կրիցն զմինն 'ի բաց կապտեն զակն հաշատոյն, որպէս զի զբոլորն ուրաւցին զփրկանակն զկիրառուրիւնսն. կիսափրկումն մարդոյն առադրելով՝ մասնառուրեամբ դաշանիլ զփրկանակն Բանի զտնօրինականուրիւնսն »։ Այլ թէ ի՞նչ եղաւ այսպիսի ծայրայեղ ձկտմանն վերջնական արդիւնքն, և ո՞րքան զղջացին անոնց յարող կուսակցութիւնը՝ վերջէն պիտի տեսնեն ընթերցողք։

Բ. Ուրիշ զօրեղ պատճառ մ'ալ Հայաստանեայց խուժանին և նոր վարդապետութեան՝ ի Հայս ներմուծած հակաքրիստոնէական վարքն ու բարքն համարելի է, իր ընդարձակ և հզօր ազդեցութիւններովը։

Արդ՝ այսպիսի նորանոր խլրտմանց և Պաւղիկեանց մոլորութեան առջևն առնելու համար է, կ'ըսուի (1), թէ Ն. Շինող կաթողիկոսն ստիպեցաւ եօթն և տասն եպիսկոպոսաց ժողովք մի գումարել, իր հայրապետութեան վեցերորդ տարին. այսինքն է յամի Տեառն 645։ Սակայն այս ժողովքս աւելի թեմական եպիսկոպոսաց և իշխանաց մէջ ծագած իրաւասական և ամուսնական խնդրոց համար էր, ըստ իս, քան թէ Պաւղիկեանց։ Եւ ասոր յայտնի ապացոյց են այն ժողովէն որոշուած և Շինող Հայրապետին և յիշեալ եպիսկոպոսաց ձեռնագրով կնքուած և վաւերացած ԺԲ կանոնները, ուր Պաւղիկեանց մասին՝ բնաւ խօսք չկայ։ Այո՛, քանի որ ողջ էր Հայոց նոր Լիւսանդրը՝ Թէոդորոս Ռըշտունի, նա իր երկաթեայ ձեռքովը թոյլ չէր տար Պաւղիկեանց գլուխ ամբառնալ. թէև ինքն իսկ երբեմն գժտուած և դողացուցած էր իր ժամանակակից անընկճելի կաթողիկոսը։ Բայց երբ յամի Տեառն 654 գնաց 'ի Դամասկոս, և հոն մեռաւ. այնուհետև շուտով, այսինքն է 655ին, մէջ տեղ եկան այն խաւարասէր և զաղրագործ աղանդաւորքն՝ յեղծումն և ապականութիւն միամտաց։ Մայրագոմեցւոյ աշակերտը՝ Սարգիս, որ արդէն իսկ ատելութեամբ լցուած էր կաթողիկոսին և եկեղեցւոյ դէմ, գընաց յարեցաւ անոնց, որոնք իրեն պէս կարող և մոլեռանդն գլուխ մի չէին ունեցած դեռ։ Մանաւանդ թէ խառնելով իրարու հետ Մանիներեցւոյ, Ցուլիանիստաց, Ապողինարեանց, Մարկիոնեանց, Սաբէլեանց և ժամանակակից դեռ ուրիշ աղանդներ, անոնցմէ նորահնար աղանդ մի յառաջ բերաւ, զոր Ցովհան պատմաբան կաթողիկոսը՝ « Զար և դառն հերձուած » կ'անուանէ. և մենք իրաւունք ունինք, — դէթ այս պարագայիս մէջ, — փոխէն և Պետրոս Սիկիլիացիէն յիշուած հզօր աղանդապետին Սէրգիոսի հետ նոյն համարել։

1. Զամչեան Հ. Միքայէլ, Պատմ. Հայոց Հտ. Բ. էջ 348։

Ասորւոց հնագոյն աղբիւրներ ևս ոչ միայն կը յիշեն այս Սարգիսն իբրև հերետիկոս, իւր եղբօր Յովհաննէսի հետ, այլ մերթ միայն և մերթ ալ միւսին դէմ հերքողական ճառեր ևս գրած են։ Այս, այս մասին անգին արժէք ունի անդղիացի նշանաւոր ասորագիտին Վրայթի մէկ ծանօթ հրատարակութիւնը՝ սոյն մակագրութեամբ. Catalogue of the Syriac Mss in the British Museum, 1871. Արդ այս երկասիրութեանս մէջ, — Part II, p. 921, 941, c. 2, 955, 948, e. 1; 971, cc. 1, 2, — նշանակուած են Ը երրորդ դարուն գրուած երկու ասորերէն ձեռագիրներ, որոնց մէջ կը գտնուին հատընտիր հատուածներ ասորի հեղինակութեանց՝ այսպիսի վերնագրով. Against Sergius, called the Armenian, and his brother John. — Against Sergius the Armenian. – Against the Armenians, Sergius and John his broter. Այսինքն է, Ընդդէմ Սարգսի՝ Հայ կոչեցեալոյն և իր եղբօր Յովհաննու. — Ընդդէմ հայազգի Սարգսին. — Ընդդէմ Հայոց՝ Սարգսի և իր եղբօր Յովհաննիսի։ Արդ այս աղբիւներէս կ'իմանանք, թէ հայազգի Սարգիսն ունէր իրեն համախոհ Յովհան անունով եղբայր մ'ալ, որոյ մասին ազգային մատենագիրներ լռած են։ Սակայն այսպիսի պարագայից մէջ քննադատին պարտքն է հետեւեալ հարցերն յարուցանել. Արդեօք այս հերձուածող Յովհաննէսն՝ ստուգիւ եղբայր էր Սարգսի, զոր անգիտանային ազգային մատենագիրք, թէ, ընդ հակառակն, է նա ինքն Յովհան Մայրագոմեցին, զոր Յոհան Պատմաբան կաթողիկոսին հետ Սարգսին վարժապետ և վարդապետ կը ճանչնայինք մինչև ցարդ։ Առաջին ենթադրութիւնը դժուար է ընդունել, ապա թէ ոչ՝ տոհմային մատենագրաց լռութիւնն անհասկնալի և անկարելի պիտի լինէր։ Իսկ երկրորդ ենթադրութիւնը ոչ միայն բոլորովին անհիմն չէ, այլ հաւանական կը թուի ինձ։ Այս բանիս բաւական կռուաններ են հետեւեալ պարագաները. Ա. Ինչպէս տեսանք Սարգիս և Յոհան Մայրագոմեցի ոչ միայն ժամանակակից էին, այլ մանաւանդ իրարու հետ ապրեցան, գործեցին, գրեցին և հնարեցին վերոյիշեալ Յուլիանիստաց, և այլն, չար համաղանդարանը։ Բ. Դիտելու ենք, որ վերոյիշեալ ասորի աղբիւրներն, եթէ իրօք կարծուածին չափ հին են, անոնց վկայութիւնն ևս աւելի ծանրակշիռ է, քան զտոհմայնոց։ Ուստի եթէ անոնց յիշատակած Յովհանը՝ Մայրագոմեցին է և ոչ այլ ոք, այնուհետև անհիմն չէ կարծել, թէ Մայրագոմեցին Յովհան ոչ միայն վարժապետ, այլ նոյն իսկ եղբայր ըստ մարմնոյ կամ՝ ըստ հոգւոյ եղած ըլլայ Սարգսին, — ինչպէս էր համախոհ անոր մոլորութեանը։ Այս բանս առ այժմ կարելի չէ վճռել, այլ միայն ենթարկել քննութեան։

Յուլիանոս սասրի Պատրիարքն, որ ըստ վկայութեան Ասսեմանեայ (Bibl. Orient. I. T. II. p. 105). յամի տեառն 706 յաջորդեց Աբրահամայ, և յամին 708 մեռնելով թողուց իր ախոռն Եդեսիայ, — գիրք մի գրած էր ընդդէմ Սարգսի և Յովհաննու, որոնց համար այսպէս կը գրէ Բար-Եբրեոս (Assemani Bibl. Orient. T. II. p. 333). « Eadem tempestate Edessae Episcopatum Orthodoxorum (idest Monophisitarum) tenebat Sergius, Armenus nuncupatus, qui una cum fratre Joanne in Mar Petri scripta insurrexit, affirmans non esse utique legenda. Ambo nihilominus a Juliano Patriarca reprehensi fuere, postquam sententias, quibus offensi fuerant, illis exposuisset: Vixque ab inani et futili zelo se continuere ».

Արդ՝ այս սասրի աղբերէս, — եթէ իրաք Յուլիանոս Պատրիարքի յիշեալ գրուածքէն առնուած է, — կարելի է հետևեալ հետաքրքրաշարժ ճշմարտութիւնները վերայայտնել. Ա. Թէ իրաք Յովհաննէս հերձուածող եղբայր մ'ալ ունէր հայազգին Սարգիս, իրեն համախոհ և գործակից, ինչպէս ըսուեցաւ քիչ առաջ։ Բ. Թէ Սարգիսն էր եպիսկոպոս եդեսիաբնակ Հայոց։ Գ. Թէ նա ժամանակակից էր երկաբնակ Պատրիարքին Ասորւոց՝ Յուլիանու, և թէ իր եղբօր հետ ի միասին գիրք մի գրեցին (յամի տեառն 705–708) ընդդէմ գրոցն Յուլիանու։ Դ. Թէ երկաքանչիւրն իսկ այն պատճառաւ խստիւ յանդիմանուեցան Պատրիարքէն և պատժուեցան։ Ե. Թէ Վրայթէն յիշուած ձեռագրաց մէջ գտնուած հատուածներէն առաջինն և կամ երրորդը, Յուլիանու գրուածքէն առնուած էր։

Սակայն դիտելու ենք և զայս. զի ոչ միայն տոհմային աղբիւրք կ'անդիտանան Սարգսին՝ Եդեսիոյ եպիսկոպոս ըլլալը, այլ նոյն իսկ Եդեսիոյ եպիսկոպոսաց ցանկին մէջ իսկ, — զոր մէջ կը բերէ Ասսեմանի T. I, p. 424, յանուն Դիոնիսեայ, — Սարգիսի անունն անգամ՝ չկայ։

Գալով մեր նիւթին, կ'ըսենք, այնչափ զօրանալու և վտանգաւոր ըլլալու դիրքի մէջ էր Պաւղիկեան աղանդը, որչափ որ Սարգսի թիւնալից գրութիւններն ընդարձակ շրջանի մէջ ընթերցողներ և հետևողներ ունեցան։ Գործելու ժամանակն էր, և Ներսիսի պէս շինող հայրապետ մի այլ ևս չկարէր համբերել այնքան և այնպիսի բարոյական աւերածներուն։ Նախ և յառաջ առանց դիմելու աշխարհական իշխանութեան, և գթած հօր մ'ամենայն գորովով և խոհեմութեամբ յորդորեց զանոնք՝ դառնալ իրենց թիւր ճանապարհէն, և հաւատացեալ հօտին մէջ քաղաքական և կրօնական յեղափոխութիւններ չպատճառել։ Բայց միշտ յամառ

գտնելով զանոնք դէպ 'ի իւր հայրական հրաւէրքն, անկէց վերջ դիմեց աշխարհական ատենին, և շանթիւ դրոշմելով անոնց յանցանքը ճակատնուն վրայ, և ամենապարտ մեր երկրէն դուրս աքսորեց։

Այս դէպքէս և ազգու միջոցներէն յետոյ՝ գրէթէ 12 տարի ծածկուած մնացին Պաւղիկեանք, և անոնց վրայ ալ չէր խօսուէր։ Բայց յամին 667 նորէն իրենց որջերէն և ապմասիկ վայրերէն դուրս գալով սկսան իրենց ամպարիշտ ձայնը լսեցնել։ Յովհ. Օձնեցին գեղեցիկ յարմարաբանութեամբ մի՝ ապմասէր գորտերու կը նմանեցնէ զանոնք, ըսելով, թէ ինչպէս անոնք ճահիճներու մէջ խորասուզուած՝ բերնով միայն իրենց ձայնը կը լսեցընեն, և միանգամայն կը գտնուին և կ'աներևութանան. այսպէս ալ ոչքա կ'ընէին հալածանաց և խաղաղութեան ժամանակ։ Բնաւ առիթ չէին կորուսաներ. ո՛ր և իցէ ազգային կամ քաղաքական կամ եկեղեցական տարաձայնութիւն կամ վէճ՝ բաւական էր անոնց համար մնրմնացեալ ևևգոչեան կերպարանքը յասպարէզ գալու. և միշտ ազատ և աշխարհաւեր կուսակցութեան կողմը բռնելու։ Յամի տեառն 667, Անաստաս կաթողիկոսի ընտրութեան վեցերորդ տարին, երբ Մայրագոմեցւոյ և Սարգսի թելադրութեամբ Մանազկերտեցւոց և Քաղկեդոնականաց, այսինքն է Մանազկերտի և Քաղկեդոնի ժողովներու կողմը բաժանուած կրկին կուսակցութիւնները կը յուզէին զՀայս, Պաւղիկեանք առաջնոյն յարեցան (1), Երևութականաց դրօշակի ներքև։ Եւ Քաղկեդոնի ժողովոյն և Քրիստոսի երկու բնութեան դէմ ղինուած ժամանակ՝ Քրիստոսի անօրինականքն և մեր փրկագործութեան խորհուրդն առհասարակ՝ առաջք և ոչ երբէք իրաք կատարուած կը համբաւէին։ Եւ Ղուկ. Իբ. 43–44 տեղին կ'ուզէին ջնջել յԱւետարանէն, պատճառելով, թէ այդ տեղին վերջէն ներմուծուած է. զի Լուսաւորչայ ճառերուն մէջ այն մասին բնաւ յիշատակութիւն չկայ։ Աստուածաբան Վարդապետն Թէոդորոս Քռթենաւոր թէպէտ առանձին ճառով (2) մի խորտակեց անոնց զրպարտութիւններն, և տրամաբանութեան անանցանելի պատնէշներ կանգնեց անոնց դէմ. բայց այսու հանդերձ հարկ էր, որ ուշ կամ շուտ գիտութիւնը՝ մոլեկան տգիտութեան, և դիրը՝ սրոյն տայր տեղի։ Եւ ատուգիւ Հաղարացի ոստիկանաց և Ամիրայից տիրապետութիւնը՝ կրօնական գաղափարաց և բարոյականի փոփոխութեան մասին իսկ մեծապէս ազդեցութիւն եղաւ

1. Տես Հ. Մկ. Զամչեան Հտ. Բ. 361–362։
2. Ճառ ընդդէմ Մայրագոմեցւոյ. տպգ. Վենետկոյ. 1833.

մեր աղգին, ինչպէս Դ և Ե դարուց մէջ պարսկական տիրապետութիւնը։ Այնպէս որ Եղիայի կաթողիկոսութեան վերջի տարիներն, — այսինքն է փրկչական թուականին մօտ յամին 717, — Սարգսի համախոհք Պաւղիկեանց հետ այլ և այլ ընծայատրութեամբ և խոստումներով գողնալով վէրթ ոստիկանի սիրտը, բրնացան քան զչափն։ Եւ գիտնալով թէ Հաղարացիք կ'ատեն զնը-կարս և զանդրիս, նախ սկսան անոնց ձեռքով գրգռել զՊատկերաւանարտուղիին. յետոյ անցան 'ի խաչամարտութիւն. հուսկ ապա քարոզել, թէ Աստուծոյ պէտք չէ պաշտօն մատուցանել արտաքուստ, զի անմատչելի է և անկարօտ մեր երկրպագութեան. այլ պէտք է պատուել զդէս, որպէս զի չարիք չընեն, և այլ այսպիսիս։ Ահաւասիկ այս դէպքս է, զոր կը յիշատակէ Օձնեցին ընդդէմ Պաւղիկեանց գրուած ճառին մէջ, ուր յետ յիշելոյ անոնց պատկերամարտութիւնը, խաչամարտութիւնն և անաստուածութիւնն, անդէն վրայ կը բերէ. « Այլ և խորամանկեալ գտին չարութեան իւրեանց զէն խողխողիչ քրիստոսասիրաց անձանց, դաշնակից լինելով բռնակալաց.... և 'ի հմտութիւն ածեալ նոցուն ստուերագիր առասպելապատում մատենիցն զհամբակացն իւրեանց խմբաւորութիւն »։ Ափսոս որ Օձնեցւոյ այս տեղին պակասաւոր է, — ըստ վենետիկեան տպագրութեան, — որով միայն կարելի էր իմանալ թերևս այն բռնակալաց անունքն և գործած կոտորածները։ Բայց դէթ այսու բաղդաւոր է իմաստասէր հայրապետս, որ կը ծանուցանէ մեզ, թէ Պաւղիկեանք իրենց սաներն իսկ փոխանակ Աւետարանի՝ այլազգեաց առասպելապատում գրոց գիտութեանը կը վարժեցնէին հեթանոսաբար։

Այսպիսի անսանձ ազատութեան համբաւը տարածուելով Հայոց սահմանակից աշխարհաց մէջ, Պաւղիկեանց հետ Արևորդիք ևս խուժեցին և խոյացան գիշակեր ա՛ գեղաց նման 'ի Հայս, քրիստոնեայ և դրէթէ անտէրունչ ժողովուրդ մի ունելով իրենց յորս և յաւար, զորս մոլորեցնելն էր իրենց միակ նպատակն, և հեթանոսութիւնն հանդերձ ամենայն պղծութեամբ տարածելը։

Պղծութեան այս արբանեակներս՝ բռնաւորաց զէնքն և զօրութիւնը ձեռք բերելէն վերջ, ուզեցին վաւաշտ Շամիրամայ նման կեդրոնանալ այնպիսի տեղ մի, ուր դիւրաւ կարենան համախմբել յԱրևելից և յԱրևմտից, կազմել անկախ հասարակութիւն մի հակաքրիստոնէական, և կատարել համարձակ զմարմնական հաճոյս հեթանոսութեան։ Ուստի յարմար գտան առ այս Աղձնեաց գաւառին մէջ Նփրկերտ կամ Մարտիրոսաց քաղաքի մօտերն եղող գեղաղուարճ լիճը։ Այս է զոր Օձնեցին Ջրկայ կ'ա-

նուանէ, առանց անոր աշխարհագրական դիրքը նշանակելու։ Այո՛, հօս ժողովեցան մէկ կողմէն Ազուանից Ուխտանէս, Եղիազար և Ներսէս կաթողիկոսներէն աքսորուած մոլի աղանդաւորք, որք Հաղարացւոց կրօնքն ընդունելով՝ հնարած կ'աւանդուին Եկիտաց չար աղանդն. իսկ միւս կողմէն ալ բիւզանդական սրոյ ձեռքէն փախչող կատաղեաց բազմութիւնը. և Ջրկայն եղաւ չարագոյն քան զհինաւուրցն Արշակաւան։

Վերոյիշեալ կաթողիկոսաց յաջորդութեան տարեթիւերէն և ուրիշ պատմական եղելութիւններէն դատելով, պէտք է որ երկայն տարիներ տեւած ըլլայ Պաւղիկեանց բնակութիւնն 'ի Ջրկայ. ինչպէս հոն կեդրոնացած բազմութիւնն ալ՝ թուով և գործունէութեամբ նշանաւոր։ Այնպէս որ այնուհետև անկարող կ'ըլլան ուխտապահ Հայք և անոնց դրացի և քրիստոնեայ ժողովուրդները՝ Պաւղիկեանց դէմ մնքառելու։ Մանաւանդ թէ Եղիա կաթողիկոսը սխալ հասկացողութեամբ Քաղկեդոնականաց դէմ կռուելու զբաղելով, և Լևոն կայսրն ալ Պատկերամարտից համախոհ լինելով, աւելի ևս նպաստեցին աղանդաւորաց զօրանալուն, որք ապահովագոյն կարծուած թումբերն իսկ պատռել կը սպառնային։

Դժուար չէ գուշակել, թէ այլևայլ ազգերէ և լեզուներէ համախմբուած այս համայնքիս մէջ որպիսի՛ խառնակութիւնք բարուց և մոլորութեանց տեղի ունեցան։ Այս է, արդարև, այն դառն և չար ժամանակը՝ զոր կ'ողբայ Օձնեցին՝ ըսելով. « Զի՞նչ ևս ասասցուք մեք, որ ոչ միայն վնեռինն չարագոյնս և բազմապատիկս քան զնոյնս (այսինքն է Յովհաննուն) ընդ մեզ բերեմք. այլ և ստուգապէս վերջնումն աւասիկ եկեալ հանդիպեցաք ժամանակի. որք յետինն յետնոց գտանին արդարև քարողք և վկայք. զժամանակս ասեմ և զմարդիկ ժամանակիս։ Քանզի ահա գտաւ որոգայթ իբրև զվարմ հաւորսաց ձգեալ 'ի մէջ ժողովրդեան ազգի իւրոյ՝ ըմբռնել զախմարս և զպարզամիտս 'ի մարդկանէ », և այլն։

Ջրկայի շրջակայներէն դուրս ելլելով անբարոյականութեան և անկրօնութեան այս ժանտախտներս, այս նենգաւոր և սուտանուն առաքեալներս, բաժնուեցան յորդաջուր գետոց նման յայլևայլ առաջս, և իրենց տղմալից վարդապետութեամբն ողողեցին զաշխարհս Հայոց, Յունաց, Ասորւոց և Արաբացւոց։ Ասոնցմէ և ճիշդ այս ժամանակիս ծագեցան այն ահաւոր և անվերջ կըռիւները պատկերաց դէմ, և ելին վանդալաց նման ամբարիշտ հերձուածողներ, որք յետոյ Խաւրացի և Կոպրոնիմոս կոչուած Լէոններու կայսերութեան օրերուն՝ պատճառեցին այնքան մա-

հեր, այնքան աղէտներ և այնքան աւերմունք գեղարուեստից և հրաշարուեստ նկարուց և քանդակաց։ Այսպիսի խառնաշփոթ և մրրկալից ճգնաժամի մէջ կը հեծէին և Հայք. կրօնական անդորրութեան հետ՝ գեղարուեստք ևս խոյս տուած էին աշխարհէս Հայոց։ Եղիա կաթողիկոսն անկէց եռքը անբաւական լինելով խաղաղել զայն, ցաւով և տրտմութեամբ կնքեց իր մահկանացուն, և Յովհան իմաստասէրն յաջորդեց անոր, զինեալ իմաստասիրական և վարչական մեծ հանճարով՝ մրցելու ժամանակին մոլորութեանց հոսանքին դէմ, անպարտելի դիւցազնի մի պէս։

Արդ՝ հայ հողին վրայ կատարուած բազմակնճիռն իրաց այս և ուրիշ կէտեր՝ որոնք պատմական և քաղաքական տեսակէտերով իսկ յոյժ կարևոր են, և մենք ջանացինք ցարդ և պիտի ջանանք՝ յետ այսորիկ բարգաւաճել, փոտի և Պետրոս Սիկիլիացւոյ քով խիստ հարևանցի կերպով յիշուած են, և կամ ոչ բնաւ։

Վեհիմաստ հայրապետին Օձնեցւոյ՝ կաթողիկոսական գահուն վրայ բարձրանալուն պէս՝ կարծես թէ Պաւղիկեանք անդէն առ ժամայն եղան կայծակնահար. որովհետև տեսնելով նա մէկ կողմէն իր նախորդին թոյլ և տարտամ վարչութիւնը, իսկ միւս կողմէն ալ իր հօտին օր ըստ օրէ վարատումը, փոխաց և ընդհանուր Հայաստանեայց ժողով մի գումարեց 'ի Դուին, — յամի տեառն 719, — այն է իր հայրապետութեան երկրորդ տարին. ուր նա ինքն հիանալի ատենաբանութեամբ մի, — որուն սկիզբն է « Համբերողացն նախատիպ մեծն Յովբ », և այլն, — ներկայացոյց համագումար ժողովականաց առջև Հայաստանեայց յայնժամու կրօնական բարոյական և քաղաքական տխուր կացութիւնը։ Հ. Մկր. Զամչեան (1), այս ատենաբանութենէս դատելով անշուշտ, երկք գլխաւոր իրաց համար գումարուած կը համարի այս մեծ ժողովքս. Ա. Պաւղիկեանց ամենաչար աղանդին դէմ պատուար մի կանգնելու, որ քան զչափն տարածուած էր Հայոց մէջ, — Եղիա կաթողիկոսին օրով և անխոհեմութեան պատճառաւ։ Բ. Քահանայից և աշխարհականաց մի մասին զեղծմանց և անբարոյական գործերուն համար։ Գ. Վերջ տալու այն հակառակամարտ կուսակցութեանց, որք ծագած էին յունաբաժին յունասէր Հայոցմէ ոմանց՝ ծխական խնդրոց վրայ հանած վէճերու պատճառաւ, որոնք գրգռեցին զՄայրագոմեցին, և անոր միջոցով՝ զչար աղանդաւորս։

Եւ ստուգիւ աչքէ անցընելով յիշեալ ժողովոյ և հայրապետի

1. Պատմ. Հա. Բ. էջ 388։

կանոնները (1), կը տեսնենք, որ ԼԲ բորդ կանոնն՝ ուղղակի Պաւղիկեանց և անոնց հետ ուրեք յարաբերութիւն ունողաց աղտոտութիւնը կը կաշկանդէ։ Դնենք հօս Ը. դարու այդ ծանրակշիռ յիշատակարանը բառ առ բառ. «Ո՛չ է պարտ 'ի չարաղանդ մծղնէիցն տեղիս, որ կոչին Պոլիկեանք՝ օթել ումեք, և կամ՝ յարել և խօսակից լինել, և երթևեկութիւն առնել. այլ ամենևին հեռանալ 'ի նոցանէ, դարշիլ և ատել զնոսա. զի որդիք սատանայի են, և լուցկիք յաւետենական հրոյն, և օտարացեալ են 'ի սիրոյ կամաց Աստուծոյ. եթէ ոք իցէ որ յարեսցի 'ի նոսա և 'ի սիրելութիւն և 'ի բարեկամութիւն եկեսցէ՝ պարտ է զայնպիսին խոշտանգել և ծանր պատուհաս 'ի վերայ ածել, մինչև զդաստասցին և առողջասցին 'ի հաւատս. ապա եթէ դարձեալ 'ի նմին գտցին վերստին՝ զայնպիսիսն հրամայեմք ամենևին հատանել և արտաքս ընկենուլ իբրև զժանտախտ յանդամոց եկեղեցւոյն Քրիստոսի, զի մի՛ արմատ դառնութեան 'ի վեր երևեալ՝ նեղիցէ, և նովաւ բազումք պղծիցին»։

Օձնեցի հայրապետին մեծութեան և ճարտար քաղաքագիտութեան իբրև անմիջական արդիւնք յիշելու ենք և զայս, թէ այնքան մեծ ազդեցութիւն ունեցաւ Հագարացւոց Վլիթ ոստիկանին վերայ, մինչև զի, այն որ Եղիայի օրով ինք զինքը Պաւղիկեանց համախոհ կը յայտնէր, այնուհետև սկսաւ զանոնք հալածել մեր երկրէն. և Յովհան այս կերպով հասաւ իր նպատակին։

Ասկէց վերջ պատմութիւնը կը դադրի խօսել Պաւղիկեանց մասին. այս յայտնի ապացոյց է, թէ դադարած և ցիրուցան եղած էին 'ի տար աշխարհ նաև այն աղանդաւորքը։ Եւ Բիւզանդիոնի ինքնակալաց և 100,000 հոգի ուտող հրոյ և սրոյ չըրածն՝ յաջողեցաւ 'ի գլուխ հանել մի միայն մարդ, և այն առանց մեծի արիւնհեղութեանց և կոտորածի, ինչպէս կը կարծեն ոմանք։ Իսկ այս յաւէտ յիշատակաց արժանի մարդն է մեծանուն հայրապետն Յովհան Օձնեցի. զի այն որ զօրաւոր էր գրչաւ՝ նոյնը զարմանալի հանդիսացաւ նաև արդեամբք վարչական հանճարոյն, և գրէթէ ընաջինջ բարձմամբ Պաւղիկէութեան, որ բազմագլխեան հիդրայի նման ժողովրդեան բարոյական և նիւթական կեանքը կը սպառէր։ Այնպէս որ կարելի է ըսել, թէ ոչ միայն անոր կենդանութեան ժամանակ, այլ նոյն իսկ մահուանէն վերջ, — գրէթէ 40 տարի, — ազատ մնացին Հայք այն բարոյական համճարակէն։

1. Տես Կանոնգիրքը՝ բաղդատութեամբ չորից օրինակաց՝ ի ձեռն Հ. Եփրեմ Վարդապետին մերոյ Սեթեան, անտիպ։

Բայց այս իսկ պէտք չէ մոռնալ, թէ Պաւղիկեանք՝ Օձնեցիէն ընդունած կարեվէր հարուածներուն, թէպէտև ակամայ տեղի տուին, բայց խպառ չանհետացան. այլ ժամանակին տիրող աղանդին, այն է Երևուբականաց դիմակովը կը շրջէին նոքա ամենուրեք, և ամէն բանի մէջ աստուածաբանական թեթև առարկութիւններով և դժուարակնճիռն խնդիրներով կը ջանային իրենց ստացածը չի կորսնցնել, մինչև որ նոր շրջանով մի մեծագոյնը վաստկին։

Արդ՝ նախընթաց յէջս իսկ արդէն արտայայտեցինք այս կարծիքս. ուստի այժմ կը մնայ ապացուցանել զայն. և ըստ իս հետևեալ եղելութիւնք՝ են մի մի հաստատուն ապացոյցներ առ այս։ Ա. Դիտելու ենք, որ Յովհ. Օձնեցի՝ Պաւղիկեանց ընդդիմաբանութենէն վերջ՝ առանց Թոնրակեցւոց մասին խօսք մ'ըսելու, Երևութականաց դէմ կը սրէ իր երկրորդ ճառը։ Եւ պատճառն է, որովհետև Թոնրակեցի անունը դեռ նշանակութիւն չունէր այն ժամանակ, և թէ Պաւղիկեանք Երևութականաց դրօշի տակ զինուորած էին՝ ընդդէմ ուղղափառութեան։ Բ. Այս ճառիս մէջ (էջ 61) ուղղելով իր խօսքն առ Երևութականն սկեպտիկեան, որ Քրիստոսի ամէն անօրինականքը կ'ուրանար, կ'ըսէ այսպէս. « Եւ ամենայնքս մեր՝ ըստ քեզ ստուեր և երևութիւնք առ 'ի յոյսն ակնկալութիւնք։ Ատոռնատ ապա Մանի և Մարկիոն կենդանասցին՝ զկնի այնքան ամաց՝ տեսանելով զքեզ իշխանաց եղեալ զարմ (1) »։ Գ. Խոսրովիկ Թարգմանչին ընծայուած հնգաթիւ. Յատագովական ճառերն իսկ՝ զորս այլուր (2) Ը դարուն ծաղկող հեղինակի մ'ընծայեցինք, այս առթիւ և այս ժամանակիս ոգւոյն դէմ գրուած են. որք կը ներկայացնեն մեզ յիշեալ աղանդաւորաց, Յուլիանիստաց, Սեբրիանոսաց, և այլոց մոլորութեանց սերմերն՝ իրենց մանրամասն առարկութեամբք և հերքումներով. և ընդհանուր և աշխարհաքարոզ եղելութեան մի առհաւատչեայք են։

Այս չարանենդ միջոցով, այսինքն է՝ Երևութականաց մեղմ երևցած վարդապետութեամբը՝ յաջողեցան 'ի Հայոց վտարուած և ցիրուցան եղած Պաւղիկեանք, — երկար տարիներէ վերջ, — հաւաքել իրենց ուժերն և վերընձիւղել Թոնրակեցիներու դառնահոտ ծաղիկներն, որոնք ապա պիտի պտակէին Դերաքրիստոսի կորստաբեր գործը։ Ասոնց իրրև պարառաջ եղած կ'աւանդուի, — ըստ տոհմային պատմագրութեան, — Ամբատ անուամբ հնարագէտ

1. Այս բառս գործածած է Օձնեցի՝ հաւնախոռ, հաւնակարծիք և հաւնադանդ նշանակութեամբ։

2. Տես « Բազմավէպ », 1892, Մայիս, Պրակ Ե։

և ահաւոր մարդը, զոր յոյն և լատին աղբերք, ընդհակառակն, Սարգիս (Sergius) կ'անուանեն։

Հօանեսուի ինձ Թոնրակեցւոց աղանդի վրայ խօսելէն յառաջ՝ հարթել անոնց աղանդապետի նկատմամբ մեզ ընդառաջ եկած դժուարութեան ժայռը, զոր մինչև ցայսօր ոչ ոք կանաց հարթել, թէպէտև շատերը մղուելով ազգային և օտարազգի հակընթացիկ հոսանքներէ զարնուեցան անոր և յետս կացին յընթացից՝ մեծաւ զարմացմամբ։

Արդ դիտելու ենք, որ Անանիայ Նարեկացւոյ մեզ ծանօթ թղթին մէջ՝ Սմբատայ յիշատակութիւն մ'անգամ չի կայ բնաւ. այսպէս նաև 'ի զուր է որոնել զայն առ Աբ. Լաստիվերտեցւոյ, որ երկու ընդարձակ գլուխս բանից նուիրել է Թոնրակեցւոց մանրամասն պատմութեան և տարածուելուն Հարք և Մանանաղի գաւառաց մէջ։ Գր. Նարեկացի և համանունն Մագիստրոս (1) կը յիշատակեն յանուանէ զՍմբատ, իբրև նախահայր և նախաչար աղանդոյն Թոնրակեցւոց, որոց ապա կը ձայնակցին յետագայք։ Երկոքեան իսկ Սմբատայ ժամանակամիջոցը կը դնեն Յովհ. Ովայեցի կաթողիկոսին օրերը, այսինքն է՝ մօտ յամի տեառն 840։ Իսկ արտաքին աղբերաց, այն է Պետր. Սիկիլիացւոյ և Փոտէն յիշուած Սարգիսն՝ որ և պիտակաբար Տիշքիկոս, ընդհակառակն, յամին 801 արդէն սկսած էր խաղալ իւր դերն, իբրև պետ հակավահանեան կուսակցութեան, և տարածել Պաւղիկեանց և իրեն յատուկ մոլորութիւններն և մեղնէութիւնքը։

Բ. Դիտելու է, որ ազգային աղբերաց յիշատակած Սմբատն՝ էր ընիկ Ծաղկոտն գաւառի՝ Զարեհաւանի գիւղէն. անտի եկած Ապահունեաց գաւառի Թոնտրիկ կամ Թոնրակ գիւղն, և հոն իր անառակութեանց մէջ հիւծուելով չարամահ եղած կ'աւանդուի։ Իսկ օտարազգի աղբերաց աւանդած Սարգիսն, ընդհակառակն, Գաղատիոյ Անիա գաւառին մէջ Տաբիա քաղաքին մօտ ծնած էր, ըստ Փոտի։ Եւ նա ինքն Սարգիս կ'ըսէ իր թղթոց մէջ, թէ « Ընթացայ յարևելից յարևմուտս և հիւսիսէն մինչև հարաւ Քրիստոսի (այսինքն է Պաւղիկեանց) Աւետարանը ծանուցանելու համար »։ Պատմութենէն իսկ քաջայայտ է, թէ նա, յամի տեառն 834, երբ լերան մի վրայ ծառ կտրելու զբաղած էր՝ Նիկոպոլսեցի մոլեռանդն հաւատացեալ մի զարկաւ սպաննեց։

Գ. Գր. Մագիստրոս, մի և նոյն թղթի մէջ կը գրէ Սմբատայ համար, թէ իր չար մոլորութիւնը Մէջուսիկ մականուա-

1. Զի Ասորւոց կաթողիկոսին գրած թղթին մէջ որոշակի կ'ըսէ. « Պիղծն Սմբատ, անիծեալն այն երևեցաւ յաւուրս տեառն Յովհաննէսի և Սմբատայ Բագրատունւոյ »։

նեալ Պարսիկ մոգէ մի ուսաւ, որ էր արուեստով բժիշկ և աստեղագէտ։ Իսկ Պետր. Սիկիլիացիէն և Փոտէն յիշուած Սարգիսին համար, ընդհակառակն, կ'ըսուի, թէ յարելով առ կին մի Մանիքեցի՝ անոր մոլորուած և ուրիշներու մոլորութեան առաջնորդ եղած է։

Արդ՝ բազմահմուտ Հ. Մկր. Զամչեան՝ (1) այսպիսի պատմական և հակաժամանակագրական անհամաձայնութեանց, — չըսեմ հակասութեանց, — հանդէպ իսկ կը համարի, թէ յոյն և լատին աղբերաց մէջ բերած Սարգիսը՝ կամ մի և նոյն անձն է հայ աղբերաց յիշատակած Սմբատայ հետ, և կամ ըլլալու է Մայրագոմեցւոյ չարաղանդ աշակերտը Սարգիս, որ արդէն փերկչական թուականին 655 ամէն 'ի վեր հնարեց և փորձեց տարածել իր բազմագլխեան և ճիւաղակերպ աղանդն, և եղաւ այնքան զօրաւոր բանիւ և գրով։

Բայց իմ կարծիքով՝ նախ և առաջ ենթադրական է, և մանաւանդ թէ դժուար է ենթադրել, որ Սարգիս և Սմբատ անուանք իրարու հետ շփոթուած ըլլան, — առանց ուրիշ նմանատիպ միջադէպերու, — զի են բոլորովին իրարու աննման թէ հնչումով և թէ ուղղագրութեամբ։ Երկրորդ դիտելու ենք, որ յամի տեառն 655 ծաղկող Մայրագոմեցւոյ աշակերտ Սարգիսը՝ չէր կրնար ապրած ըլլալ ցամն 835, զի այս կերպով հակաժամանակագրական խարոցը դեռ աւելի զգալի կ'ըլլայ։ Երրորդ՝ տոհմային աւանդութիւն հիմն 'ի վեր կը տապալի այդու. վասն զի, — ինչպէս ըսուեցաւ արդէն, — Գր. Նարեկացւոյ հետ զՍմբատ կը ճանչնան իբրև սկզբնահայր Թոնրակեան մոլի աղանդաւորաց։ Ուրեմն ընդունելով իսկ, թէ իրօք ազգային կամ օտարազգի աղբերաց կողմանէ շփոթութիւն մ'եղած ըլլայ, պէտք է ասկէ տարբեր միջոց մ'որոնել համաձայնութեան համար։ Ուստի կամ պէտք է ըսել, թէ Պետր. Սիկիլիացւոյ և Փոտէն յիշուած Սերգիոսը բոլորովին տարբեր անձն մի է, ազգաւ և աշխարհաւ օտար՝ քան թէ հայազգի. այս բանս անոր հօր անուանէն իսկ կրնայ դուշակուիլ, զոր Փոտ Դրիւնոս կ'անուանէ։ Եւ կամ է նա ինքն Զարեհաւանցին Սմբատ, որուն անունն օտար աղբերք փոփոխած են, ինչպէս ազգայինք ալ անոր ժամանակամիջոցն և ժամանակագրական կարգը։ Առաջին ենթադրութեան ուրիշ կռուան չկայ՝ բաց 'ի վերոյիշեալ ժամանակագրական անյարմարութենէն. իսկ երկրորդը կարելի է ապացուցանել կրկնակի փաստերով։

1. Պատմ. Հայոց Հտ. Բ. էջ 895.

Ա. Դիտելու ենք, որ Փոտ և Պետր. Սիկիլիացի (1) ճիշդ այնպէս կը նկարագրեն զՍերգիոս, ինչպէս որ մերս Գր. Նարեկացի և Մագիստրոս (2) կը նկարագրեն զՍմբատ։ Արդ՝ այսպիսի նմանատիպ նկարագիրք դիպուածով եղած չեն, այլ կամ այն է թէ մի և նոյն հնագոյն աղբերէ մի կը յառաջագային, և կամ մի և նոյն անձի վրայ յարմարուած են։ Ես չեմ կարծեր, որ Նարեկացին և Մագիստրոս ուղղակի առաջիններէն օգտուած ըլլան, և Սերգիոս անունը՝ Սմբատի փոխած. այլ ընդ հակառակն, երկոքեան իսկ, իրենց բազմիցս յիշուած գրութեանց մէջ, անոնցմէ աւելի առհմային աղբերէ մի հանած են, այսինքն է Անանիա Նարեկացւոյ անյայտացած գրութենէն (3), զոր և կը յիշեն իսկ յանուանէ։ Բայց թէ Անանիա՝ որ 935 էն վերջ.ձեռք զարկաւ իր ընդդէմ Թոնրակեցւոց գրուածքին, արդեօք առհմայի՞ն հնագոյն աղբիւրներ ունեցած էր իր դիմաց, թէ ընդհակառակն ժամանակակից ժողովրդեան բերանը շրջած և այլ ընդ-

1. Hist. de Manichœis, կ'ըսէ. « Sergius ille diabuli maximus propugnator: Sergius, acer ipse sub ovina pelle lupus, virtum fraudulentus simulator, quippe hac arte multis fucum faciebat: Sergius inimicus Christi, os impietatis, in Chisti matrem, sanctosque contumeliosus: Sergius Christi Apostolorum adversarius, qui et Prophaetas odio habuit, et a divinis litteris versus ad fabula et mendacia se convertit: Sergius Christi osor, Ecclesiæ perduellis, qui Dei filium conculcavit et... Sergius, tenebrio qui se lucidem sidus mentiebatur », Այսպէս կը գրէ նաև Փոտ։

2. Գրելով առ Կաթողիկոսն Ասորւոց, այսպէս կը խօսի զՍմբատայ և հետևողաց նորա. « Այսպիսի սովորութեամբ սովորեալ են գայլքդ այդ՝ հանդերձիւք ոչխարաց գողանալ մանկունս... չար գազանն այն, արիւնռուչտն, առնամոլին... պիղծն Սմբատ, անիծեալն այն երևեցաւ...։ Անբարի բարեձևութեան և խորամանկ խաբէութեանն և տղայաբար անուսումնութեանն և անաստուած վարդապետութեանն և անտեղի հաւանութեանն և գիշերային իւղագործութեանն և անճոռեմ ճոռոմաբանութեանն և նոր տաղտկալի և քստմնելի ախտակրութեանն, և անքահանայապետ քահանայագործութեանն, և խաւարչտին ձեռնադրութեանն, և անշնորհ մկրտութեանն և անյոյս դաւանութեանն և անկերկիւղ երկիւղածութեանն և խաւարասէր լուսափայլութեանն և հրեշտակակերպ դիւազգեցութեանն և սարազգեացդ գայլոց և թխացելոցդ այծեաց և մերկացելոցդ զՀոգին և զգեցելոցդ զսատանայ և աշակերտելոցդ ստանուէրն Սմբատայ՝ սասանողին հիման Առաքելոց և Մարգարէից »։

3. Եւ յիրաւի դիտելու ենք, որ Գր. Նարեկացին յիշեալ թղթին մէջ իր հօրեղբօր և մեծ վարդապետին գրութեան համաձայն համառօտելով Թոնրակեանց վարդապետութիւնը, կամ լաւ ևս ուրացութիւնքը, և պատմական դէպքերէն մի քանիսն, անդէն վրայ կը բերէ. « Եթէ ոչ՝ մեք զանուն պղծոյն (իմն Սմբատայ) ի սակաւ ինչ լրոյ գիտէաք »։ Իսկ Մագիստրոս՝ մատնանիշ ընելով Ասորւոց Կաթողիկոսին՝ Անանիայի գրութիւնը՝ կ'ըսէ. « Աղէ, սուտ ընթերցիր և գտցես յայդմ... որպիսի՞ չար գազան երևեցաւ պիղծն Սմբատ »։

այլոյ զրուցաց վրայ հիմնուած գրեց. այս բանս անոր անյայտացած գրութեան յայտնուելովը միայն պիտի որոշուի։ Այլ մենք այսքանս կարող ենք ըսել սատ, թէ Սմբատայ երևնալէն 60–70 տարի վերջ գրելով անոր դէմ, Անանիա կարէր պատմական և ժամանակագրական վրիպակներ գործել անոր մասին, որուն ապա հետևած ըլլան Գր. Նարեկացին և Մագիստրոս։ Եւ ստուգիւ, այսպիսի կասկած մի կարծես թէ դեռ աւելի ծանրակշիռ կը դառնայ, դիտելով, որ Սամուէլ Անեցի՝ զՍմբատը՝ Յովհան Պատմաբան կաթողիկոսին, և ոչ թէ Ովայեցւոյ ժամանակակից կը դնէ։

Բ. Դիտելու ենք, որ Սմբատ՝ Հայոց հայրապետներէն և իշխաններէն նզովք ընդունելով և հալածական 'ի կողմանս Յունաց անցած կ'աւանդուի 'ի տոհմային պատմագրութենէ։ Ուստի շատ հաւանական է, թէ այսպիսի պարագայից մէջ՝ նա իր մոլորութեան հետ անունն ևս ծածկած ըլլայ, և ինք զինքը Սարգիս անուանած. և կամ ընդ հակառակն յառաջագոյն Սարգիս կը կոչուէր յօտարաց, բայց երբ եկաւ 'ի Հայս և 'ի Թոնրակ, զինքը ծածկել ուզելով 'ի Հայոց՝ Սմբատ անուանեց. զի 'ի պատմութենէն իսկ կը գիտցուի, թէ նա այլ և այլ անուններ և տիտղոսներ սեփականած էր իր անձին. և թերևս այս մոլորեցուցիչս է, զոր Գր. Նարեկացին և Մագիստրոս յոքնակի անուամբ Յանէս և Յամբրէս իսկ կը յորջորջեն, — Թոնրակեցւոց մասին խօսած ժամանակ։

Յետ փոքր 'ի շատէ պարզելոյ Թոնրակեցւոց աղանդապետին կնճռոտ խնդիրը, տեսնենք այսուհետև անոնց վարդապետութիւնն և հայ ժողովրդեան մէջ խաղացած ազիտաբեր դերը։

Այս բազմահնար կեղծաւորս՝ զոր Փոտի և Պետր. Սիկիլիացւոյ հետ՝ Նարեկացին և Մագիստրոս իսկ միաբերան Դերաքրիստոսի կարապետ և նեռն կը կոչեն, ոչ միայն արտաքուստ քրիստոնեայ և քրձազգեաց ճգնող կը ձևանայր, այլ նոյն իսկ ինք զինքը լոյս, կեանք, և ձշմարտութիւն կ'անուանէր, այլովք հանդերձ. բայց ներքսապէս ոխերիմ թշնամի էր ամենայն քրիստոնական օրինաց, և գործով կը ջանայր կործանել զայն։ Աշխարհական մ'էր լոկ, և եպիսկոպոս կը ձևանայր. Սադուկեցւոց պէս կ'ուրանայր հանդերձեալ կեանքն և հոգւոյ անմահութիւնը։ Եպիկուրեան թանձր նիւթապաշտութեամբ կ'ուրանայր աստուածային նախախնամութիւնն, և ինք զինքը բաղդից և բաշխից տէր կ'անուանէր։ Պեղագիոսէն աւելի չարաչար կ'ուրանայր ոչ միայն Հոգւոյն սրբոյ շնորհքները, այլ նոյն իսկ Հոգւոյն Աստուծոյ գոյութիւնը՝ յափշտակութեամբ հանդերձ անոր սորո-

գելեաց։ Հեթանոսաբար կ'ուրանայր և կը մերժէր բոլոր եկեղեցւոյ սուրբ խորհուրդները։ Մարմնասիրութեամբ կ'ուրանայր դամենայն վարդապետութիւնս ուղիղ վարուց և բարոյականի։ Կ'ուրանայր թէ չկայ ոչ մեղք և ոչ ալ պատիժ. ոչ օրէնք և ոչ իշխանութիւն։ Միով բանիւ՝ ամէն բան կ'արհամարհէր անխըղճաբար. ամէն բանի վրայ կը ծիծաղէր. և ինչ որ միամիտները խաբելու և որսալու համար արտաքսապէս ընդունել կ'երեւցնէր՝ նոյնը ներքսապէս կը մերժէր։

Գր. Նարեկացին՝ որ մերձաւորագոյն էր ժամանակաւ Թոնրակեանց, յետ ըսելոյ, թէ «Բաղում՝ ինչ աստուածային և առաքելական՝ ամենայն ինչ ուրացեալ է 'ի նոցանէ», անդէն և անդ կը թուէ ապա Սմբատայ և անոր հետևողաց տասն և չորս ուրացութիւնքն և հակուրաց վարդապետութիւնը. այսինքն է Ա. Զեռնադրոշթիւնը. — Բ. Հաղորդոշթիւնը, զոր հասարակաց կերակուր կ'անուանէին. — Գ. Ծնունդն 'ի Ջրոյ և 'ի Հոգւոյ, կամ լաւ ևս Մկրտութիւնը. զոր Սմբատ իբրև ջուր ինչ լուալեաց ուսոյց իրեններուն. — Դ. Տէրունական կիւրակէն և հանգըստեան օրը, զոր բառնալով 'ի միջոյ ընդ սովորական աւուրս թուեաց. — Ե. Ծնրադրշթիւն կամ պաշտօն խորհրդական աղօթից և պաղատանաց. — Զ. Աւազանն սրբակերտութեան, — Է. Հաղորդոշթիւն անմահութեան. — Ը. Պոհոշթիւն և անխտիր մծղնէութիւն կը քարոզէր։ Թ. կը նշանակէր երկրպագելի Նշանն փրկութեան. — Ժ. Մարդապաշտ ուրացութիւն կամ մարմնապաշտոշթիւնն անոր տեղ կը փոխանակէր, զոր սուրբ հայրն՝ «գարշելի և անիծեալ քան զկռապաշտութիւն» կը համարի. — ԺԱ. Պատկերն ամոշնոշթեան անգոսնութիւն, որպէս զի համբրացեալ շուներ և մատակախանձ ձիերու պէս առ միմեանս յարձակին. — ԺԲ. Երուսաղեմաց կատակերգական երգիծանոշթիւն. — ԺԳ. Իրենց աղանդին գլխաւոր գարշութիւնը, կամ լաւ ևս գարշելի գլուխը՝ յանդգնաբար Քրիստոս կ'անուանէին. — ԺԴ. Քրիստոսի չարչարանաց անպատում բարեգործութեան երախտիքը մոռնալով, իրենց ստացուածքներն ապաւէն կենաց կը կարդային։ Այս էական կէտերու յիշատակութենէն վերջ, վրայ կը բերէ սուրբ վարդապետը, թէ «Արդ՝ ամենեքին նուազս 'ի յոքունց և սակաւս 'ի բազմաց գծագրեցի»։

Այո՛, սակաւ է դարձեալ Նարեկացւոյ յիշատակածն՝այն ծովացեալ և անտառացեալ մոլորութեանց քով, զոր Մագիստրոս սուղ բանիւս գեղեցիկ կ'արտաբերէ վասն Սմբատայ, թէ «Ուսուցանել սկսաւ զաւանեալն չարիս բոլոր, զոր ինչ 'ի կենցաղոշնս մոռաճոշթիւնն կրէ, որ զգործոց և որ ըստ հաւատոց թերու-

թեանց, և քարոզէր զբոլոր քահանայական ներգործութիւնս ոչնչացուցանել, մանաւանդ եթէ անոտի վարկանել »։

Եւ այլուր սարսափելի կոչելով անոնց հերձուածը, կ'ըսէ. « Զի ոչ եթէ 'ի մինն միայն մեղանչեն կամ յերկուս. այլ և 'ի բոլոր յօրինադրութիւնս իւրեանց. ամենեին արտաքոյ են հին և 'ի նոր օրինաց »։ Դեռ ուրիշ շատ հաղուագիւտ կէտեր կ'աւանդէ նա, զորս կարևոր կը դատեմ 'ի մէջ ածել, Թոնրակեցւոց վարդապետութեանն և կուսակցութեանց վրայ կատարեալ գաղափար մի տալու համար։

« Որպէս որ մահացու դեղս կամիցին պատրաստել՝ յամենայն 'ի խստագոյն և 'ի չարագոյն դեղոց իբրև զթոյնս իժից հաւաքեն բազմատեսակ, զի որոց առցեն առ ժամայն 'ի կենցաղոյս հրաժարիցին... այսպէս ոչ եթէ հերձուած սոցա միոյ պատճառի է կամ երկուց կամ երից, այլ յամենայն չարափառացն։ Ի կիշռոց, 'ի հնայից, 'ի կախարդուբեանց, յանհաւատութենէ և յամենեցունց զթոյնս չարութեան 'ի մի վայր ժողովեալ հերձուածս, հաւանեցան այնմ աստուածամարտ, ցանկապատառ, դիւամոլի, անօրինին Սմբատայ օրէնս դնել, և զլուսաւորիչ թողեալ ճանապարհ՝ հետևեցան կուրաչափիղ, կոպարական կորստեան ուղեգնացութեան... վասն որոյ և զգործս նորա գործեն անպատկառ։ Եւ այս ինչ են անօրէնութիւնք չարագործացն այնոցիկ. ոչ պահք նոցա, և ոչ խորութիւն արանց և կանանց և ոչ ընտանեաց. պատուեն և ոչ զմի ինչ, ոչ յաստուածայնոց և ոչ յեղելոց. այլ զամենայն ծաղր առնեն և զնոր օրէնս։ Եւ յորժամ յայտնի հարցեալք լինին, անիծանեն և երդնուն սատիկ և ուրանան. և այսպիսի խաբէութեան ոչ եմք անտեղեակ։ Ահա ադիկ Պօլիկեանքդ, որք 'ի Պողոսէ Սամոստացւոյ դեղեալք... Յորժամ ձեռնարկեալ հարցանեմք, ասեն, եթէ քրիստոնեայք եմք, և զԱւետարանն և զառաքեալսն սաղմոսեն յամենայն ժամ. և յորժամ հարցանեմք, թէ ընդէ՞ր ոչ մկրտիք՝ զոր հրամայեաց Քրիստոս և առաքեալն, ասեն. Ոչ գիտէք դուք զիսորհուրդ մկրտութենէն. մեզ ոչ է փոյթ մկրտել, քանզի մկրտելն՝ մահն է. և Յիսուս ոչ ասաց յընթրիսն վասն պատարագի, այլ վասն ամենայն սեղանոյ։ Եւ Մովսէս ոչ զԱստուծոյ ետես, այլ զստուերայ։ — Եւ ասեն արարիչ երկնի և երկրի զստուերայ և ամենայն մարդկային սեռի և ստեղծուածոց։ Ահա և այլք ոմանք 'ի Զրադաշտ մոգէ մոգք պարսկականք. և այժմ 'ի նոցունց դեղեալք արեգակնապաշտք, զոր և Արևորդիս անուանեն. և ահա են յայդմ գաւառի բազումք. և ինքեանք քրիստոնեայս զինքեանս յայտնապէս կոչեն, բայց թէ որպիսի մոլորութեամբ և անա-

ռակութեամբ վարին՝ գիտեմք։ Են ոմանք յանիծեալ ազգէդ Թոնրակեցւոց, որք անուանեն զինքեանս Կաշեցիք, և այն են չարութեան արմատ, և արդ գտանեն պատճառս ինչ հայհոյութեան 'ի Քրիստոս։ Թոնրակեցիք որք 'ի խնուն են և գրեն վասն Քրիստոսի, եթէ թլփատեալ է։ Իսկ Թուլայլեցիքդ՝ հրաժարին, եթէ Մեք թլփատեալ Աստուծոյ ոչ խոստովանիմք։ Եւ յայտնի լիցի քեզ, զի ո՛չ թլփատեալ խոստովանին զնա և ոչ անթլփատ 'ի սրտի իւրեանց, բայց միայն պատճառանօք կատականս 'ի վերայ մեր դնեն »։

Եւ ուրիշ տեղ մի այսպէս կ'ըսէ, — քաղելով իր տեղեկութիւններն այն նորադարձ Թոնրակեցիներէն իսկ, որոնք քաջ տեղեակ էին ամենայն գաղտնեաց չար առաջնորդաց, որք կը բնակէին որջացեալ 'ի « գազանային պղտանոց խրախին » . — « Քանզի միշտ յաճախէր չարութիւն նոցա յերիս ձևս նշանակեալս. որք 'ի չարն կատարելագոյնք են և կարող են ընդունել զմահացու դեղն, այլոցիկ քարոզեն իբրև անյոշտոշութեան ամենեին և անաստուծոյ ոչ թեան իբրու զեպիկուրեանցն։ Իսկ ոմանք նմանութեամբ Մանիքեցեացն, — զորս անիծանեն, — բայց զնոյն գործեն։ Իսկ զոմանս իբրև քրիստոնէական աւանդութեամբ ուսուցանեն առ յերեսս, և ինքեանք ամենեին ո՛չ խոստովանին, բայց զայն ևս այլանդակ յամենայն կարգաց և կրօնից քրիստոնէից. և ահա յայտնի, զի որոշեալք են և անեպիսկոպոս և անքահանայապետս չունին, և ասեն բանիւք, եթէ Մեք յարաւեան գնդեն եմք և հաստատով հաւատս նոցա. — բայց ո՛չ են հաւատս և ոչ միով հաւիք։ Այլ կան հակառակ և նշանակեալ միայն զհամանուն ձայնն որպէս շո՛շն, և շո՛շն, և շո՛շն. և զի՞նչ արդեօք յայսոսիկ հաստատութիւն բնութեան։... Եւ որ բնակեալքն էին ('ի խրճթին) 'ի Շնավանեն այն արք հանդերձիւք կրօնաւորաց, և բազմոցիւն կանանց բոզից »։

Ցայս վայր Մագիստրոսի տուած տեղեկութիւնքը թէև առհասարակ և խառն 'ի խուռն են, բայց և այնպէս յոյժ թանգագին ամենայն ուսումնասիրաց. վասն զի, — ինչպէս ինքը կը գրէ, — յիշեալ խրճթի մէջ եղած, կամ առ անօրէն առաջնորդն Ցեսու գրուած թղթէն համառօտուած են զոր, ասէ. « Խուզեալ մեր և գտեալ՝ ընթերցարք »։

Արդ՝ Սմբատայ վարդապետութիւնն ընդունելով իբրև ընդհանուր Թոնրակեցւոց վարդապետութիւն, — որովհետև ասոնց մէջ չեն տեսնուիր այնքան Մանիքեցւոց և Պաւղիկեանց մէջ երևցած բազմադիմի կուսակցութիւնները, այլ ամէնքն ալ Սմբատայ կը հետևէին իբրև միակ առաջնորդի և Քրիստոսի, —

ուրեմն կարեմք եզրակացնել, թէ մեծապէս կը տարբերի այն Մանիքեցւոց և Պաւղիկեանց աղանդներէն։ Այո՛, Մանիքեցիք կ'ընդունէին, – ինչպէս տեսանք, – հանդերձեալ կեանքը, հոգւոյ անմահութիւնը, մեղքն և մեղաց պատուհասը. որոնց համար կը ջանային ազատել զհոգին նիւթոյ կամ չարի սկզբան արարածներէն, և խառնել յաւիտենական լուսոյ կամ բարի սկզբան հետ։ Իսկ Թոնրակեցւոց համար, ընդհակառակն, այս կեանքէս և վայելքներէն դուրս ոչ ուրիշ կեանք և վայելք կար, և ոչ իսկ պատուհաս։ Պաւղիկեանք, – ինչպէս տեսնուեցաւ, անոնց վարդապետութեան Գ. որդ նախադասութեան մէջ, — կ'ընդունէին մարդկութեան անկեալ վիճակին հետ՝ նաև բարի Աստուծոյն այն առթիւ մարդկութեան՝ ընձեռած մեծագոյն պարգևները. երկրորդ, կը կատարէին, — գէթ ըստ ձևոյ և արարողութեան, — եկեղեցւոյ խորհուրդներէն զոմանս, և ունէին իրենց համար հաւատալիս և հաւատապատում։ Իսկ Թոնրակեցիք, ընդհակառակն, զայս ամենայն կեղծիս կը համարէին և կը ծաղրէին, և ընդունէին դուրս՝ գերբնական ոչ պարգև կը ճանչնային և ոչ ալ պարգևատու. որով Սմբատէն զատ չկար ուրիշ Հոգի շնորհաց և յուսոյ բարութեան։ Թէ՛ Մանիքեցիք և թէ՛ Պաւղիկեանք՝ գէթ չափով մի կ'ընդունէին նոր կտակարանն և անոր հեղինակութիւնը. իսկ Թոնրակեցիք Սմբատէն և անոր յաջորդներէն դուրս՝ ուրիշ ոչ հեղինակութիւն կը ճանչնային և ոչ իսկ սրբազան հեղինակս, զի քակած էին առհասարակ Աստուածոյ և Մարգարէից հիմունքը, հետևաբար քաղաքական և եկեղեցական օրէնք և օրէնդրութիւնք իսկ անոնց համար բրնաւորութիւնք էին։ Միով բանիւ, – նորահնար բառիս ճիշդ նշանակութեամբ, – հին աշխարհի ճշմարիտ Ոչնչականներն էին և Ընկերվարականներ, և ամէն բան կ'ուզէին ոչնչացուցանել։ Մնկրօնք և անաստուածք էին, ոչ միայն 'ի գործնականին, այլ և տեսական սկզբամբք։ Այնպէս որ նմանութեամբ կրնանք ըսել, թէ Թոնրակեցւոց աղանդը, – նկատելով իբրև պարտութիւն մ'ամենայն մոլորութեանց և հերետիկոսութեանց, – վերջին ժամանակաց Սոկիանեանոչբեան նախածնողն և նախադաղափարն եղած է. իսկ իբրև բ...ցատութիւն ամենայն կրօնից և աստուածպաշտութեան՝ կարելի է այժմեան Մասոնոչբեան կամ ազատ որմնադրաց աղանդին իբրև նախկին ներկայացուցիչ անուանել զայն։ Թէև առաջինը զուրկ էր արդի Մասոնութեան գիտական դրութիւններէն և քաղաքային գաղտնորոգայթ միջոցներէն, սակայն երկաքանչիւրին միակ նպատակն էր՝ մարդ ըստուած, կամ բանաւոր էակը, ազատ կացուցանելով ամէն կրօնական կապերէ, բարոյա-

կան պարտաւորութենէ, աստուածային և մարդկային գերիշխանութենէ, բարձրացնել և բազմեցնել զայն, — եթէ կարելի էր, — Սադայելի՝ քան թէ իր արժանապատուութեան գահուն վրայ. փոյթ չընելով ամենևին, թէ այդ երկրածին ենթադրուած Լեւիաթանն՝ Աստուծոյ պատուանդանի շուրջը կը հոլովի, նշաւակ է բիւրապատիկ կարեաց և աղետից. և Դանիէլի տեսլեան գազանի պէս խեցեղէն և լուծական խարխխներու վրայ յեցած՝ առանց աստուածպաշտութեան աւերիչ է և աւերակներ միայն կը թողու ամենուրեք. և թէ երկնասաստ բարկութենէն և ամենակալ զօրութենէ հոլովեալ վէմ՝ մի միայն՝ բաւական է զայն յաճիւն դարձընել և ցանել ընդ չորս հողմս երկնից։ Հայ հանճարն՝ ասկէց աւելի ահեղ և սարսափելի հրէշ մի չէր կարող ծնանել, — եթէ ինչպէս կարծեցին ոմանք՝ անոր սեփհական յղացմունք համարինք, — և ոչ ալ Եւրոպա, կամ լաւ ևս՝ բարեշրջութեան դարը պիտի կարենային պարծիլ զՈկինիանութիւնն և զՄասոնութիւնը ծնանելուն վրայ։ Սակայն իմ կարծիքով Թոնրակեցւոց աղանդն իսկապէս և բոլորովին հայ մտաւոր և բարոյական կեանքի արտաբերութիւն չէր, այլ զարգացումն այն չար մոլորութեանց, զորս զառաջինն ցանեցին Մանի և յաջորդք իւր, և հետզհետէ բեղմնաւորելով բարգաւաճեցին բարոյական խանգարմունք, կամ բնական պահանջք յաջորդող դարերուն և մարդկային յաջորդութեանց. այլ է բնական հետևանք այն թիւր ակզբանց և ընթացից, զոր հնարեցին մարդիկ և ոչ Աստուած, դէք երկրէս յառաջ եկան, և ոչ թէ ելին յերկնից։

Սմբատայ և անոր յաջորդ հայազգի աղանդաւորաց ձեռքով զարգացած այսպիսի աղիտաբեր վարդապետութենէ իսկ կարեն գուշակել ընթերցողք՝ անոր յառաջ բերած զարհուրելի հետևանքները. սակայն կ'արժէ որ այս տեղ հոլովելով պատմութեան յարաշարժ անիւը՝ յերևան ածենք անոնց ճշգրիտ պատկերը։

Սմբատ՝ Փարիսեցւոյ այս խմբոս, — որ խորախորհ գիտութենէ աւելի օժտեալ էր մոգութեան և կախարդութեան կրկնակի արուեստագիտութեամբք, և իր արտաքին ձգիչ կերպին հետ՝ ունէր նաև վերջին աստիճան ճարտասանական, համոզիչ և պատրող զօրութիւն մ'ալ, — այն օրէն 'ի վեր՝ երբ ոտքը դրաւ 'ի Թոնրակ, կարճ ժամանակի մէջ խմբեց և վարակեց իր մոլորութիւններուն այն աւանի բոլոր բնակիչները. զի ըստ վկայելոյ Մագիստրոսի, ոկսաւ ուսուցանել զամենայն չարիս, զորս միտք մարդկային կարեն խորհել և գործել 'ի կենցաղումս։ Այնպէս որ ինչպէս անկարելի չեղև Աբրահամու՝ Սոդոմացւոց և Գոմորա-

ցւոց մէջ գտնել տան արդարս, այսպէս ալ Թոնրակի մէջ դժուար էր, — այն կախարդասար աղանդապետին օրով, — գտնել տան միայն ուղղադատան որդիս եկեղեցւոյ։ Մագիստրոսի այս և միւս ընդարձակ տեղին, — զոր համառօտելով մէջ բերինք 'ի ծանօթութեան, — այլաբանական ասացուածոց ներքև շատ և շատ տխուր իրողութիւններ կը պարունակեն, որոնց դժբաղդօրէն թատր եղած էր աւանն Թոնրակ, զորս արժան է խուզել և 'ի վեր հանել։

Սմբատ իր կախարդական պատրողութիւններով և մեծ հեղինակութեամբն՝ անգամ մը ժողովրդեան վրայ բռնանալէն վերջ, սկսաւ այնուհետև քաղաքական ամէն անլուր ոճիրներ ևս գործել։ Բազմաթիւ ամուսիններ իրարմէ քակելով՝ անոնց անկողիններն իր անառակ և պակչոտ աշակերտներուն արձակ համարձակ պղծել կու տար. շատ աղաժրի մանուկներ իրենց մարց գրկէն և 'ի տեսանց յափշտակելով՝ իր արբանեկաց ձեռքով կը խողխողէր, և շատ գեղանի պատանիներ 'ի պղծութիւն անհաւատ ազգերու կը վաճառէր։ Եղբարս և քոյրս, — ինչպէս նաև սիրասուն աղջականներ և բարեկամներ, — իրենց բնակութենէն հանելով՝ 'ի տար աշխարհ կ'աքսորէր, որոնց ողբերն և աղի արտասուքը զերկինս և զերկիր բաւական էին շարժել, բայց ոչ նոյնպէս անոր սատանայակիր և սալացեալ սիրտը։ Միայնակեաց և միանձնուհիս, դէք իրենց կուսութիւնը Քրիստոսի նուիրած էին՝ մշտնջենաւոր զենմամբ, իր աշակերտներուն պղծել կու տար, և իրենց կրօնաւորական կեանքէն և լուսաւոր ճանապարհէն յետս կը դարձնէր, և յԱստուծոյ կ'օտարացնէր։ Շատ սրբակեաց քահանաներ և ժառանգաւորներ՝ ուղղափառ կրօնքէն խոտորեցնելով, 'ի գառանց՝ գայլս կը յարդարէր մարդախոշոշ։ Շատերը բանտից և արգելանաց մէջ փակելով՝ յանուշ արևէ կենաց կը զրկէր։ Միով բանիւ՝ ուր որ իր իշխանապետութիւնը կը հասնէր կամ՝ ոտքը՝ հոն եղեռնագործութեամբ կը լեցնէր. ամենուն ահաւոր և սարսափելի էր. ամենուն իբրև Նեռի մարմնաւորեալ անձնաւորութիւն կը ներկայանար, Սատայէլի գործը գերազանցապէս կատարելու, — ամենայն արուեստիւք և զարմանագործութիւններով։ Գր. Նարեկացին՝ կճառայ վանահայրն յորդորած ժամանակ, որպէս զի չի փափաքի հաւատարիլ մասին Թոնրակեցւոց, ծածկեալ ճշմարտութիւն մ'ևս կը յայտնէ մեզ. այսինքն է. « Զխառնիլ յարեան ընդ կոտորեալսն 'ի սրոյ վրէժխնդիր հեթանոս Ամիրային Ապլ-Վարդայ, որ երևեցաւ արդարև գաւազան սրտմտութեան 'ի ձեռն Ցեառն Յիսուսի »։ Վերջը կը թողում քննել, թէ ո՞վ էր տատ յիշուած Ամիրայն, և թէ

ԵՐԲ երևցաւ գաւազան բարկութեան Ցեառն. իսկ հօս գիտելու ենք, որ Ս. վարդապետիս յիշատակածն՝ է այն մեծ և անողորմ կոտորածներէն մին, զոր կամ՝ ամպարիշտն և հայրենատեացն Սմբատ, և կամ՝ իրեն յաջորդքը գործել տուին, Թ դարուն վերջերը։

Այսպէս ուրեմն Թոնրակեցւոց անկրօնութեան և անբարոյականութեան գործերու հետ՝ քաղաքական ոճիրներն ևս 'ի նկատի ունելով խղճամիտն Գրիգոր, չէր խղճեր գոչել 'ի լուր ամենայն աշխարհի, թէ « Եւ շարք շանց և գոռմարք գողոց, և գոռնդք գայլոց և դասք դիւաց, և ազիւք աշազակաց և կոյտք կերչաց, և բոյլք բարբարոսաց, և խռմբք խաչահանուռաց, և ժողովք չարեաց և արք արեանց, և երամք թռչնաւոր օձից, և վտառք մարդադէմ գազանաց, և կաձառք կախարդասարաս աղանդաւորաց. և ոչ միայն եկեղեցականաց, այլ և հեթանոսաց եւ անգոսնելիք »։

Սմբատայ՝ Ծաղկոտն գաւառէն 'ի Թոնրակ փոխադրուիլն ըստ ինքեան նշանակալից է արդէն. իսկ Մագիստրոսի առ Կաթողիկոսն Ասորւոց գրած թղթի հետևեալ տեղին՝ բոլորովին նոր և շահագրգիռ իրողութիւններ ևս կը յայտնէ մեզ։ Ահաւասիկ անոր խօսքերը. « Ցեսեալ իմ զպղտորումն մաքրագոյն ջրոցն, որ ծաւալէր, և հետեալ մինչև ցակն աղբերն՝ հանդիպեցայ ատրուշանին Թոնրակոյ, յորում թաղեալ կայր խմորն Սադուկեցւոց, և բորբոքէր թաղեալ անթեղն չարուրեան »։

Արդ՝ մեծ հռետորին սոյն խօսքերէն կ'իմացուին Ա. թէ Թոնրակեցւոց այն աւանին մէջ մշտաբորբոք ատրուշան մի կար, որով հուրը կը պաշտէին հեթանոսաբար, և անոր ոչ միայն անասուններ, այլ և անթիւ մարդիկ և պոռնկորդիս ևս կը զոհէին, ոյք հանգոյն շանց անտէրունչ կը բազմանային 'ի խուարչտին վայրս մեղնէութեան։ Բ. Այդ ատրուշանի պաշտօնատարքն և աւանի բնակիչներն առհասարակ՝ Սադուկեցւոց խմորներ էին. այսինքն է ոչ հոգւոյ անմահութիւն և ոչ ալ հանդերձեալ կենաց կը հաւատային։ Գ. թէ այդ չարութեան անթեղը կամ կրակը՝ Սմբատայ օրէն մինչև իր ժամանակ միշտ անշիջանելի մնացած էր։ Սակայն ևս կարծեմ, թէ Մագիստրոսէն գործածուած ատրուշան բառն՝ հօս բոլորովին տարբեր բան կը նշանակէ, քան թէ արուեստական հուր։ Այո՛, թէ այս և թէ Թոնրակ անունը թէպէտ և խորհրդաւոր և մթին, սակայն և այնպէս ունին իրենց բանասիրական և տեղագրական մեկնութիւնքը. այսինքն է երկաքանչիւրն իսկ յառաջ եկած են Կոգովտի և Ծաղկոտն գաւառներու մէջ տեղ գտնուող Թանտուրիկ կամ Թանտուրիկ

անուանեալ հրաբղխէն (1), զոր Հայք Թոնարիկ կամ Թոնրակ կ'անուանէին։ Ուրեմն Մագիստրոսի հանդիպած ատրուշանը՝ յիշեալ լերան հրաբղխային բաժակն է, որուն քով կը գտնուէր Թոնրակեցւոց աւանը, կամ չարութեան անթեղն։ Այս պատճառաւ ուրեմն հօն գնաց Սմբատ, որպէս զի այնու իսկ դիւրաւ յաջողի տարածել հրապաշտութեան և բնապաշտութեան չար աղանդն, ինչպէս իրօք ալ յաջողեցաւ։

Պատմութիւնն որոշակի աւանդած չէ, թէ Սմբատայ գալէն յառաջ՝ հօն կը գտնուէին արդեօք կրակապաշտ Մանիքեցիք, և կամ Պաւղիկեան աղանդաւորք։ Սակայն Սմբատայ՝ այն աւանն աւելի՝ քան ուրիշ տեղ ընտրելը մէկ կողմէն, իսկ միւս կողմէն ալ կարճ ժամանակի մէջ այն ազգաբնակութեան և անոր մերձակայ ժողովրդոց բոլորական անկումն յանդունդս մոլորութեան՝ են մի մի հաւանական փաստեր կարծելու, թէ ստուգիւ Սմբատէն յառաջ իսկ մուտք գտած էին անդ կամ կրակապաշտ Մանիքեցիք և կամ՝ ուրիշ նենգաւոր մշակներ, ոյք ոչ միայն երկիրը պատրաստած էին, այլ նոյն իսկ չար աղանդին որոմներն իսկ ցանած էին՝ բուսցնելու զուրացող Թոնրակեցիս։

Մնչուշտ շատերն հետաքրքիր են հօս գիտնալ, թէ այնքան և այնպիսի ախտաւոր մոլորութեանց և ոճրագործութեանց եղեռնաւոր առաջնորդը Սմբատ՝ ինչպիսի՞ մահ ունեցաւ և ե՞րբ։ Առ այս աւելորդ չենք համարիր վայրկեան մ'ընդհատել Թոնրակեանց պատմութեան թելը, մնեաւանդ երբ անյայտ ճշմարտութեան մի յայտնութիւնն ևս զայն կը պահանջէ 'ի մէջ։ Արդ՝ Թոնրակեցւոց վրայ գրող հին և նոր մեղի ծանօթ պատմագրաց անորոշ ակնարկութիւններէն այնպէս կ'երևէր ցարդ, թէ երկայն տարիներէ վերջ և իր բնական ախտակրութեամբն իջած ըլլայ 'ի հող մահու։ Սակայն մեծանուն վարդապետն մեր Գր. Նարեկացի, իւր յիշեալ թղթին մէջ՝ իբրև նոր և գեղեցիկ անակնկալ մի, բոլորովին այլ ինչ կու գայ աւետել մեզ. այսինքն է, հետաքրքրական պարագայով մի և բռնամահ եղած կը թուի աւանդել զայն։ Ահաւասիկ անոր խօսքերը, զոր ուղղած է առ անանուն առաջնորդն կճաւայ վանաց. « Քանզի և այն հզօր այր խնդրող վրիժուց նախատանացն Քրիստոսի, որ զանիծեալ զնախնիս նոցա խայտառակամահ սատակեաց, զայս ինչ ասէր յերկրորդն Յամբէսի, թէ Քրիստոս յերիր աշուր յարեաւ. արդ վինչ դու զքեզ Քրիստոս անուշանես, ապանուանեմ զքեզ և թաղեմ, և դու զկնի Լ աշուր կենդանացիր, ես գիտեմ, թէ Քրիս-

1. Տես Հ. Ղ. Վ. Ալիշանի « Այրարատ », յէջ 492–493։

տոս՝ իցես, թէպէտ այնքան աւուրբք բազմօք յետոյ յարիցես։ Արդ նա մերձ էր և դրացի դառնացողացն մոլեգնութեան. և զայն լուր 'ի բազմաց ճառողաց կրթեալ էր, և Քրիստոսի ճըշմարիտ յարութեան հաւատայր. և զնոցայն այպն արարեալ իբր զարժանիս հենգնելոյ՝ եթող յիշատակ բանից գովելեաց. քանզի և զայն Աստուած և ոչ երկրային խորհուրդ տնկեաց. հրամայեալ տնտեսեաց, նովաւ չարաւ զչարիս խրատեալ կամ սատակեալ »։

Արդ՝ Քրիստոսի անուան վրէժխնդիր և զօրաւոր մարդուս անունը, թէպէտև անյիշատակ թողուցած է Գրիգոր, — անշուշտ իր ժամանակակիցներուն ծանօթ ըլլալուն համար, — սակայն անոր գործը՝ Հայի մ'արժանի մոռատիպարն և բնագրոշմը կը ներկայացնէ արդարև։ Իսկ սպանուողն, իմ կարծիքով, պէտք է որ աղանդապետն Սմբատ եղած ըլլայ։ Եւ յիրաւի, Ա. զի Գրիգոր Թոնրակեցւոց նախահայրը խայտառակաւանի եղած կ'աւանդէ, և այդ նախահայրը Սմբատ էր, Նարեկացւոյ մի ուրիշ տեղւոյ համաձայն, զոր յառաջագոյն մէջ բերինք։ Բ. Դիտելու ենք, որ հօս սպանուողը որուն ուղղեալ են գծուած գիւտաւոր խօսքերն, երկրորդ Յամրէս և Քրիստոս անուանուած է. իսկ արդ ուրիշ տեղ, — ինչպէս տեսանք, — թէ Մագիստրոս և թէ Նարեկացի՝ զՍմբատ Յանէս և Յամրէս կ'անուանեն. և կը ծանուցանեն որոշակի, թէ Թոնրակեցիք Քրիստոս կը կոչէին զնա։ Գ. Մէջ բերած հատուածէն անմիջապէս վերջ՝ կը յաւելու. « Արդ դէպն Աստուած գիտացին զՄիածինն, և դատաւոր ամենայնի դաւանեցին. և պիղծն Սմբատ՝ կրկին Սիմոն՝ իշրոցն դառնարմատ և որոմնաբոյս աշակերտացն զինքն ետ երկրպագանել »։ Ուրեմն ակներև է, թէ այս վերջինս՝ առաջին նախադատութեանց պատճառական մասը կը կազմէ, և ըստ ածնիս քաջ կը հաստատէ։ Իսկ մենք դառնանք մեր առաջին նիւթին։

Թոնրակեցիք՝ իրենց իրրև որջ և կեդրոնատեղի ընելէն յետոյ զԹոնրակ՝ ապա սկսան համաճարակի պէս տարածուիլ նաև 'ի Թուլայլ (1), — որ կը գտնուի Մանանդի դաւառին մէջ, — և 'ի Խնուս։ Թուլայլի և Խնուսի աղանդաւորքը թէ և քանի մի կէտերով կը տարաձայնէին Թոնրակեցիներէն, և Մանիքեցի

1. Մագիստրոս՝ անունս Թուլայլ՝ յառաջ եկած կը համարի թոյլ և այլ բառերէն, իբր թէ ցրուեալ, թուլացեալ։ Այսպէս նաև Խնուսը կամ Խնուսն՝ « խցեալք 'ի խաւարի » կը մեկնէ։ Բայց այս մեկնութիւններս ըստ բաղդի և ըստ նմանաձայնութեան բանից եղած են. հետևաբար զուրկ են 'ի բանասիրական ստուգաբանութենէ։ Ուստի կամ տաճկերէն Թուրնալ կամ Թուրնիալ ըլլալու է. և իրաք այս անուամբ աւան մ'ալ կը գտնուի Անասիոյ բաժնին մէջ, և կամ մեր դրացի ասորերէնի մէջ որոնելու է անոր ծագումն։

կամ Մանիներեցի ևս կը կոչուէին, — որովհետև Մանեայ վարդապետութիւնն ասոնց մէջ աւելի պահուած էր, քան թէ Պաւղիկեանց և Թոնրակեցւոց մէջ, — բայց ամէնքն ալ հեթանոսաբար կ'ապրէին. այսինքն է՝ առանց մկրտութեան և այլոց խորհրդոց Եկեղեցւոյ, և առանց աղօթից և պաշտաման։ Ամենուն նպատակն էր ջնջել յաշխարհէ զկրօնս և զաստուածպաշտութիւն, և տալ զանձինս 'ի հեշտախտութիւն աներկիւղ։ Ասոնց առաջնորդներէն միոյն, այն է Կիւրղի արարքը, — զոր կը պատմէ մեզ Գր. Մագիստրոս, և ես կ'ուզեմ համառօտիւ մէջ բերել, — յայտնի նշան է, թէ ինչ աստիճանի զօրացած էին այն աղանդաւորքն, և թէ ինչպիսի՛ նեղութիւններ և դատխատինքներ կ'ընէին հաւատացեալ ժողովրդեան՝ յառանին և յեկեղեցիս, ուր յանդգնութեամբ 'ի ներքս կը սպրդէին։ Օր մի՝ այն ինչ հաւատացեալք պատկառանաք կեցել էին սուրբ սեղանին և պատարագի դիմաց, յանկարծակի բացագանչեր է առ Սրբութիւնն սրբոց. « Ո՛ անոտի յոյսդ քրիստոնէից. արդեաք զի՞նչ յոյս ունիք դուք։ Եւ նոքա պատասխանի տուեալ ասեն. Զպատշաճագոյնս մեր։ Իսկ նա ասէր ամպարիշտ բարբառով, առեալ խմոր կողովս առնէր ձեռամբն, և թացեալ 'ի գինի՝ արտաքս ձգէր և ասէր. Այդ է խաբէութիւն քրիստոնէիցդ. և այս էր Կիւրեղ անիծեալ առաջնորդն Թոնդրակաց, և այլ բազում հայհոյութիւնս 'ի սուրբ կոյսն Աստուածածին և յամենայն անօրէնութիւնս »։

Այրարատն՝ ըլլալով իբրև սիրտ Հայոց մեծաց, Թոնրակեցւոց աղանդն ալ այդ սրտին մէջ բունեալ վարակիչ հիւանդութիւն մի, ընդարձակ և անխուսափելի վտանգներ կը սպառնայր շուտով ապականելու ամբողջ մարմինն ևս. այնու մանաւանդ զի Արարատի ոստիկանաց սուրն և բռնութիւնն իսկ Թոնրակեցւոց հետ 'ի միասին կը ներգործէին։ Յովհ. Ովայեցի կաթողիկոսը, թէպէտ և իր խմաստուն վարչութեամբն և հոգեսէր հոկողութիւններով կը ջանայր այն կրկնակի և թիւնաւոր հոսանաց դէմ հակազդիչ և նախապահեստ դեղեր հասցնել, բայց 'ի զուր. զի Թովմ. Արծրունեաց աւանդաժին համեմատ՝ իշխանաց մեծագոյնմանն մի արդէն վարակեալ էին անոնց հեթանոսական գաղափարութեամբ, և կաթողիկոսին հակառակ կուսակցութիւն մ'ևս կազմած էին։ Ասհատասիկ Արծրունի պատմագրին խօսքերը. « Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ էր կացեալ յաթոռ հայրապետութեան Տէր Յովհան Կաթողիկոս Հայոց, և յաւէտ հրաշիւք յօրինէր զկարգս սրբոյ եկեղեցւոյ ուղղափառ առաքելական հաւատոց 'ի Տէր Յիսուս Քրիստոս. դնէր ուխտս ընդ իշխանս աշխարհիս

Հայոց գնալ ըստ արժանի հաւատոցն Քրիստոսի... այլ նոքա ոչ մեկնեալ լինէին 'ի ժանտագործ պղծութենէն զազրալից սոդոմական ախտից... գնային ոտնխեթի գայթ 'ի գայթս և աղտեղասէրս. մինչև զանբարկանալին Աստուած 'ի բարկութիւն ածել 'ի սատակումն անձանց և 'ի կործանումն աշխարհիս և յաւերժառանգութեան տանց հայրենի բնակութեանց»։

Այո՛, վերջնական արդիւնքն այն եղաւ, որ Կաթողիկոսն ինքաւ իր գահէն, և աշխարհս մատնուեցաւ յաւար Արաբացւոց և յապականութիւն Թոնրակեանց։ Ուխտապահ նահատակողաց հետ՝ ուրացողաց թիւն իսկ շատ մեծ էր. որոնց մէջն էր Կաթողիկոսի ախոյեանն և սպարապետն Հայոց Բագարատ Բագրատունի, որ նորոգեց Եկղեսիաւնուաց մեղրութիւնը, որ կ'ըսէ, թէ մեղք չէ ուրանալ զՔրիստոս առաջի բռնաւորաց, պահելով զհաւատս 'ի սրտի։ Սակայն նշանակելի է, — այս դժուարին ժամանակիս, — Հայաստանեայց եկեղեցւոյն և անոր հովուաց համաշունչ միդութիւնը, որով ոչ միայն 'ի դերև հանեց գազանաբարոյ Բուղայի պէս սարսափելի բռնաւորին հաւատուրացութեան համար 'ի գործ դրած միջոցներն, այլ նոյն իսկ կոչեց, — յանիրաւի հրաժարեցուցած, — սուրբ կաթողիկոսն իր գահուն վրայ, և շարունակեց իր պատերազմը Թոնրակեցւոց դէմ, մինչև որ նուաճեց զանոնք։

Յովհ. Ովայեցւոյ մահուանէն վերջ նորէն սկսած պիտի ըլլայ Թոնրակեցւոց բարոյական–կրօնական ժանտախտը։ Յամի Տեառն 945 արդէն խիստ ընդարձակ ծաւալ առած էր. վասն զի ժամանակին նշանաւոր վարդապետներէն մին Անանիա Նարեկացին՝ հրաման ընդունեցաւ, — անշուշտ իր համանուն կաթողիկոսէն, — սրել իւր դրիչն, և գիտութեամբ մենամարտիլ այն կախարդասար աղանդաւորաց փաղանգի դէմ։ Ոսկիբերանեան պերճաբանութեամբ և պղատոնական խորութեամբ շարադրած անոր ընդդիմաբանութեան գիրքն, — որ եղաւ իբրև զօրաւոր զէնք մի 'ի ձեռս մանկանց եկեղեցւոյ, — բաւական էր զինաթափ ընելու նաև զԹոնրակեցիս. բայց որովհետև սոքա աւելի ապականութեամբ բարուց և գաղտագողի, քան թէ գիտութեամբ գրոց՝ իրենց բազմաթիւ համախոհներ յարուցած էին, այն պատճառաւ իսկ մնացին յուժի։ Մանաւանդ թէ մէկ կողմէն իրենց համախոհ ունենալով Ովայեցւոյն հակառակորդ և ախտամոլ իշխաններն, իսկ միւս կողմէն ալ ժամանակին զեղծ եկեղեցականները, — զորս շահեցան մերթ իրենց խարազնագեղեցիկ ճգնութեամբ և մերթ ինքնահնար կրօնիւք և դիւթութիւններով, — տարածուեցան բոլոր Տարօնի հիւսիսակողմեանքն և 'ի

Միջագեաս, ունելով իրարու հետ հաղորդակցութիւններ, երբեմն յայտնի, և յաճախ ծածուկ միջոցներով։ Կաշառք և պէսպէս խոստումներով կազմեցին գաղտնի լրտեսութիւններ և ընկերութիւններ. քսութեամբ և չարախօսութեամբ՝ ցանեցին հակառակութեան և բաժանման որոմը՝ հաւատացեալ ժողովրդեան և առանձին ընտանեաց մէջ։ Գրգռեցին աշխարհական դասը՝ եկեղեցականաց, և եկեղեցական դասն՝ աշխարհականաց դէմ, — բանսարկու սատանայի նման՝ ասոնց քով բարեպաշտ և վրէժխնդիր աստուածային իրաւանց ձեւանալով, իսկ անոնց քով ոխերիմ թշնամի և պաշտպան ազատութեան մարդկան 'ի կրօնական պարտաւորութեանց։ Բոլոր այն անձինքը՝ զորս սրբութեամբ վարուց և հեղինակութեամբ՝ իբրև թակ կոչկոճիչ գիտէին իրենց աղանդին, որպէս զի մէջ տեղէն վերցնեն, ամբաստանեցին իբրև համախոհս Թոնրակեանց։ Այնպէս որ կրնանք ըսել, թէ Ժ դարն՝ էր Հայաստանեայց համար կասկածանաց (1) և սարսափի դար. եղբայր յեղբօրէ կը խիթար և եկեղեցականն յեկեղեցականէ. վասն զի թեթև ամբաստանութիւն մի՝ բաւական էր ամենածանր պատժոց ենթարկելու նաև ուղղադաւան անձինքները։ Այո՛, այսպիսի ամբաստանութեան և պատասխանատուութեան տակ ինկաւ նոյն իսկ ուղղափառութեան ջատագովն՝ Անանիա, և ստիպեցաւ իր մահուան անկողնոյ մէջ գրել իր խոստովանութեան երկրորդ գիրը։ Գր. Նարեկացին իսկ՝ որուն սրբութեան հոտը՝ ինն դարուց հետէ իբրև խունկ անուշ կը զմայլեցնէ զմեզ, և ամէն հայի սիրտ անուշութեամբ կը լեցնէ, չազատեցաւ անոնց ամբաստանութենէն, բայց եթէ գրելով ինքն իր ջատագովական թուղթը, — թէպէտ և ազգային պատմագիրներ՝ խորովեալ ազատներու հրաշքով կենդանանալուն և թռչելուն կ'ընծայեն զայն։ Կճաւայ վանից առաջնորդն և ուրիշ անձինք ևս, ամբաստանուած էին իբրև համախոհք Թոնրակեցւոց, զոր Գրիգոր իր թղթին մէջ կը յիշէ և կը մեղադրէ եղած ամբաստանութեամբք։ Հաւատաքննութեան բացուած ատեանը՝ կարի անաչառ էր՝ դատելու երբեմն և՛ զարգարն ընդ մեղաւորին. և ո՞ գիտէ, թէ քանի՛ քանի՛ ջերմ ուղղափառներ՝ իբրև կեղծաւոր Թոնրակեցիներ չդատեցան 'ի հուր, 'ի սուր և յաքսոր։

Սարգսի Աղ կաթողիկոսութեան ժամանակ, այսինքն է մօտ 1002 փրկչական թուին, յաջողեցան Թոնրակեցիք ոչ միայն

1. Ստուգիւ այս եղելութիւնս այնքան յայտնի կը տեսնուի Անանիայ և Գրիգոր Նարեկացիներու թղթերուն մէջ, որուն վրայ տարակոյս հանելն իսկ աւելորդ է։

որսալ իրենց ծուղակին մէջ Հարք գաւառի եպիսկոպոսն Յակոբ, — որուն վրայ ամէնքն ալ սուրբի համարում ունէին, — այլ նոյն իսկ համոյնք մ'ևս կազմելու այն գաւառին մէջ։ Մեծ քայլափոխ մ'էր այս և յաղթանակ Թոնրակեցի աղատամիտներու համար։ Արիստ. Լաստիվերտցին՝ այս կէտէս կը սկսի Թոնրակեցւոց պատմութիւնը, — առաջիններեր գոգցես իմն մոռնալով. — այս նշան է, թէ մեծ իրարանցումն պատճառեց այս միջադէպս Հայաստանեայց մէջ. որովհետև յառաջ իբրև քանի մի սոսկական և ախտամոլ անձանց ձկտումն կը նկատուէր այն ազանդը, որուն դէմ զինուած էին ազգիս գրէթէ ամբողջ եկեղեցական և աշխարհական իշխանութիւնքը։ Իսկ այս ժամանակիս Յակոբայ պէս բարձրաստիճան և առաքինի կարծուած եկեղեցականին հետ՝ խրամատեցաւ նաև եկեղեցական դասը. վասն զի Լաստիվերտցոյ ըսածին նայելով, նա իր կեղծաւոր պահեցողութիւններով և անդադար սաղմոսերգութեամբ « Շարժեաց 'ի զարմանս զմերձաւորս և զհեռաւորս. ամենայն ոք ցանկայր տեսանել զնա և զհետևողս նորա. նաև մեծամեծ իշխանք յարեցան 'ի նա... և այնքան եռոռն 'ի հնազանդութիւն նմա զանձինս, որ թէ և զհոգիս հանել հրամայէր՝ չէր ոք որ ընդդիմանայր և կամ իշխէր բանալ զբերան և ձիկ հանել »։

Այս կերպով Հայոց իշխանաց և ռամիկ ամբոխին սիրտն և աջակցութիւնն առ ինքն գրաւելէն յետոյ, սկսաւ արդիլել Յակոբ զքահանայս պատարագելէն. և ապա քարոզեց համարձակապէս Սմբատայ մոլորութիւններն, ունելով իր կողմը նոյնպէս բազում 'ի քահանայից։ Կը մոնէին, — երբեմն 'ի ծածուկ և երբեմն յայտնապէս, — հաւատացելոց տաճարները, կը սուլէին և կը նախատէին անոնց սրբութիւններն և նուիրական տեղերը։ Գայթակղութեան և զայրութի հետ՝ մեծ շփոթ և շչուկ ևս ծագեցաւ ժողովրդեան մէջ։ Ամէն կողմէն երկրայութիւնք կը յուզուէին քրիստոնէական խորհրդոց վրայ, և տկարամիտներն՝ իբրև զծով կը ծփային 'ի պէս պէս կարծիս։ Ազգին մեծամանութեան և ընտրելոց անընդհատ բողոքները՝ կը ստիպեն վերջապէս զՍարգիս Կաթողիկոսը՝ շուտով ժողով գումարելու. և կը խմբուի Հարքայ Ա. ժողովն։ Կոչուեցաւ կրկին և կրկին աղանդաւորն Յակովբ, գալ և համար տալ իր աշխարհաւեր ընթացքին. բայց նա խոյս տուաւ անկէց։ Ժողովքին սաստկապահանջ հրամանը շուտով հասաւ անոր եռեռն. կալանաւորեցաւ Յակոբ իբրև խռովիչ և մոլորեցուցիչ ժողովրդեան. աղուեսադրոշմ (1) խարանը դրոշմեցին անոր ճակատին վրայ և շրջեցուցին

1. Այս բանիս նշանակութիւնը կու տայ մեզ Մագիստրոս, ըսելով. « Նաև

զնա փողոցներու և հրապարակաց մէջ. քարոզն ընթանալով ա-
նոր առջևէն՝ կ'աղաղակէր. « Որ 'ի սուրբ հաւատոց Եկեղեց-
ւոյն Քրիստոսի սողոսկեալ՝ յանօրէն Թոնդրակեցաց 'ի մար-
դադէմ գազանաց փարախն մտեալ միաբանի, դատ և իրա-
ւունս զայս կրեսցէ »։ Սարսափելի էր այս դատավճիռս, թէ
Թոնրակեցւոց և թէ ուղղափառաց համար. զի անոր ահաւոր
գործադրութիւնն իսկ ակներև կը տեսնէին ամենեքեան։ Խայ-
տառակաբար չդրաւ Յակոբ առ Յոյնս, և պաշտպանութիւն գըտ-
նելու համար՝ կրկին մկրտեցաւ. սակայն անտի ևս հալածուելով
գիմեց 'ի Թոնրակ, և աստի 'ի Մուֆարդին. ուր միանալով այլ-
ազգի Մանիքեցւոց հետ՝ հօն անցուց իր վերջին օրերն և մե-
ռաւ, — թողլով տխուր յիշատակ մի միայն Հայոց եկեղեցական
պատմութեան մէջ. — իսկ իր հետևողները լռեցին այնուհետև,
և խսպառ հեռացան 'ի Հարքայ։

Բայց Թոնրակ՝ որ իբրև վիշապաբուն մի կեցած էր 'ի մի-
ջակէտ աշխարհիս Հայոց, չէր դադրեր բնաւ իր թունաւոր ազ-
դեցութիւններով լեցնել եկողներն և գացողները։ Հարքայ Ա.
ժողովէն և Յակոբեանց դատապարտութենէն երկու տարի վերջ՝
իժի նման սողոսկելով՝ անցաւ այն աղանդը Մանանաղուոյ մօտ
Շիրևի բերդաքաղաքն, ուր, — ըստ վկայութեան Լաստիվերտ-
ցոյ, — կուռնիկ շնանուն աբեղայ մի՝ նախ ինքն, ապա իր ձեռ-
քով որսաց լեզուանի և մեծատոհմիկ տիկինն Հրանոյշ։ Ասոր
շուտով հետևեցան իր աղդակիցներէն երկու քոյրեր, որոց մին
Ամնի և միւսն Կամարա կը կոչուէին։ Բաբելոնի այս մարմնա-
սէր դատերքս, ոչ պարզապէս իրենց կիրքերն յագեցնելու՝
քան թէ ճշմարտասիրութեան համար ընտրած էին այն հեթա-
նոսական աղանդը, յաջողեցան, — պէտ-պէս հրապոյրներով, —
որսալ նաև իրենց մերձաւոր ազգականը կամ լաւ ևս հարազա-
տը՝ Վրվէռ։ Այս բանիս վրայ ամբողջ հայութիւնը զարմացաւ,
համակելով 'ի սուգ անմխիթար. վասն զի իշխանիս բարեպաշ-
տութիւնն և եկեղեցասիրութիւնն ամենուրեք հռչակուած էր
նախապէս. կրօնասատան մ'ևս չինել տուած էր իր դրախտա-
նման կալուածոց մէջ և սիրայօժար կը յանձնէր։

Լաստիվերտցոյ աւանդածին համաձայն՝ Կաչէ և Աղիշոյ կո-
չուած գիւղերն, — որք անոնց ընդարձակ ժառանգութեան
մասը կը կազմէին, — ըրին իբրև կաղապ և հանգրուանս ափ-

մեր քահանայապետքն մատնեցին (զաղանդաւորս) 'ի կիզումն դիմաց և 'ի դրոշմ
աղուիսակերպ . . . իբրև զաղուէսս գոյս և ապականիչս այգեաց, որպէս ասէ Ի-
մաստունն »։

բոդիտական և բագոսական խնջոյից։ Խզելով վկապ մերձաւոր արիւնակցութեան՝ անխտրաբար կը պոռնկէին Վրվէռին հետ, այս ջամուկ կիները։ Բնակիչներուն ևս առհասարակ մատուցանեցին Թոնրակեցւոց աղանդն և իրենց պղծաշուրթ բաժակն։ Որոնք քիչ ատենէն արբեալ և մոլեգնեալ ոգւով ատելութեան, սկսան շրջել ասա և անդ, և այն տաճարները, — զորս իրենք կանգնած էին երբեմն 'ի փառս Աստուծոյ և իրենց ազգատոհմին, — հիմնայատակ կործանեցին. գիւղերու մէջ և յանցս ճանապարհաց, ուր որ տէրունական խաչի նշան կը տեսնէին, անպատկառաբար վար կ'առնուին, և նախատանօք կը խորտակէին։

Արդ այս և ասոնց նման դեռ ուրիշ շատ պատմական եղելութիւններ՝ յայտնապէս կը ցուցնեն, թէ Մանիքէա–Պաւղիկեան Թոնրակեցիներ՝ վանդալներէն վար չէին մնար. մանաւանդ թէ Թ և Ժ դարերուն նորոգեցին զվանդալականորթիւնը՝ բոլոր իւր ճիւղաւորութեամբք։ Մինչև հիմայ ըսածներէս դուրս՝ նոյնպէս Բազմաղբիւրի հրաշագործ խաչին, Վրվէռայ դատապարտութեան, ժողովրդեան այն մեծագոյն յուզման, և Հարքայ և Մանանաղի մէջ կատարուած իրաց մոնրամսան պատմութիւնը՝ ճարտար վրձինով նկարագրած է Լաստիվերտցին, — գժբաղդաբար առանց անոնց բուն պատճառները ցուցնելու։ Սակայն հանդերձ այսու յոյժ շնորհապարտ ենք անոր մեզի մատուցած այն մեծ ծառայութեան և մեծարգի տեղեկութեանց, զորս ուրիշ հեղինակաց քով չէ մեզ կարելի գտնել։

Թէպէտև լռած է նա ըսել, թէ վերոյիշեալ մեծատոհմիկ կանայքն ի՞նչ վերջ ունեցան, բայց Վրվէռի նորանշան հիւանդութեան և երկնատատ մահուան նկարագրութիւնն իրաւունք ամէն լսողաց զզուանք և սարսափ կ'ազդեն. մանաւանդ թէ կարծել կու տան, թէ ամէնքն ալ՝ իրե՛ց ախտամոլ անառակութեա՛ց և կորստական ճամբուն մէջ շարունակելով՝ այնպէս իրենց մահկանացուն կնքած ըլլան։ Անոնց տեսական մոլորութիւնքը, զորս կը համառօտէ 'ի վերջկոյս ԻԳ գլխուն, յար և նման են Սմբատայ մոլորութեանց. այսպէս նաև անբարոյական մեղնէութիւններն, որոց մասին, կ'երևի, թէ շատ բան գիտէր հմուտ պատմագիրս, բայց լսողաց զզուանք կամ ախորժ չի պատճառելու համար, հեռուեալ հակիրճ և միանգամայն համեստ բանիւք ուզած է արտայայտել, ըսելով. « Բայց զնոցա մեղեալ զգործն՝ անպատշաճ համարեցաք ընդ գրով արկանել, քանզի կարի աղտեղի է, և զի ոչ ամենայն ոք պնդակազմ է լսելեօք, բազմաց՝ մեղաց յիշատակն 'ի խղդռանս ձգէ զլսողսն և 'ի կատարումն գործոյն իսկ ածէ »։

Լաստիվերտցւոյ աւանդածէն ակներև կը տեսնուի, թէ ինչպէս Հարք՝ այսպէս ևս Մանանաղի գաւառի Թոնրակեցիք երկար տարիներ չունեցան, բարեբաղդաբար, իրենց աւերիչ գործն՝ ընդարձակաբար ծաւալելու Հայոց մէջ. վասն զի, յամին 1005, շնորհիւ Ելիասայ արդարադատ դատաւորին, — որ բիւզանդական կայսեր կողմանէ ուղարկուած էր 'ի Մանանաղի, — անոնց ծածուկ կերպով լարած դարաններն և ծրագիրներն յայտնուեցան և ճնացին անիրագործելի. իրենք հալածուեցան 'ի բաց, և իրենց բնակավայրքն աւերեցան խպառ։

Հարքայ Ա. ժողովին և Ելիասայ գործադրած խիստ միջոցները, — Հարքայ և Մանանաղի աղանդաւորաց դէմ, — կ'երևի թէ նոյն ազդեցութիւնը չունեցան Թոնրակեանց վրայ. որովհետև նոքա, — կամ՝ շնորհիւ իրենց ճկուն քաղաքականութեան, և կամ՝ խումբ մի հնարիմաց առաջնորդաց (1) ճարտարութեան, — կրցան խաբել իրենց հալածիչներն, և այնպէս շարունակեցին իրենց ընթացքը ցամն 1050։

Այս ժամանակիս երկու բարեպատեհ դէպքեր՝ բոլորովին մերկացուցին անոնց խաբէութեան դիմակն. այսինքն է, նախ Գր. Մագիստրոսի պէս աչալուրջ իշխանին Միջագետաց Դքսութեան հանելն. երկրորդ՝ երկու Թոնրակեցի աղանդաւորաց վերադարձն 'ի ծոց սուրբ Եկեղեցւոյ, դէք մկրտուելով (2) կոչուեցան մին՝ Պօղիկարպոս և միւսն Նիկանորա։ Սոքա յայտնեցին Մագիստրոսի ոչ միայն Թոնրակեցիներու բոյնը, այլ որ կարևորագոյնն էր 'ի գիտութիւն, նոյն իսկ անոնց ծածուկ մոլորութիւններն և գործած ամենօրեայ ոճիրները։ Մագիստրոս, — որ կայսեր հաւատարիմ ծառայութենէն դուրս՝ իրեն անհրաժեշտ պարտք կը համարէր քրիստոնէական սուրբ կրօնից և հայրենեաց անվթար պահպանութիւնն, — այս հաստատուն կռուաններուն վրայ յեցած՝ սկսաւ անմիջապէս իրրև բացար-

1. Երախտապարտ ենք Մագիստրոսի, որ իր բազմիցս յիշեալ Թղթին մէջ՝ ուրիշ շատ օգտակար տեղեկութեանց հետ՝ Թոնրակեցի աղանդապետաց անուանքն ևս աւանդել ուզած է մեզ յետագայից. որոնք են ըստ կարգի Թոդրոս, Ընանէ, Ադրքայ, Սարգիս, Կիւրեղ, Յովսէփ, Յեսու, Ղազար և Շէկ-Շուն։ Անոնց վրայ աւելցնելու ենք Լաստիվերտցիէն յիշուած Յակոբը, Կուլծիկ և Վրվէս։ Այս անձինքս և անոնց գործերն անծանօթ են օտարազգի հին պատմագրաց։

2. Նորադարձից մկրտուելով, Թերևս կարծուի, թէ Հայք ևս Օրդոդոքս եկեղեցւոյ պէս իրենց եկողները՝ կրկին կը մկրտէին։ Սակայն իրն այնպէս չէ. այլ ընդ հակառակն եզրակացնելու է, ըստ իս, թէ այս աղանդս դարաւոր կեանք ունենալով, անոր մէջ ծնուողներն ալ իրրև հեթանոս և անկնունք կը մեծնային. ուստի դառնալէն վերջ հարկ էր զանոնք մկրտել։

ձակ վարիչ 'ի գործ դնել բոլոր իւր մեծասաստ հրամանն և դատողական իշխանութիւնը։ Թոնրակեցւոց աղատութեան համար ալ ուրիշ միջոց չկար. այլ հարկ էր կամ քաջութեամբ կրել և մեռնիլ, կամ փախչելով ղերծանիլ, և կամ դառնալ խմբովին իրենց բռնած թիւր ընթացքէն և ապաւինիլ մեծ իշխանիս և անոր հոգևոր մօր՝ Եկեղեցւոյ գթութեանն։ Քիչեր կարացին իրենք զիրենք Ասորւոց կաթողիկոսին հովանւոյն ներքև ձգել, և իբրև հայ հաւատացեալներ՝ խաբել զնա։ Սակայն արքունն Գրիգոր՝ փութաց և իր մէկ ընդարձակ թղթովը պարզեց բոլոր անոնց ծագումը, խաբէական՝ ձկտումներն և գործած եղերունքը՝ կաթողիկոսին. յորդորելով որ չընդունի բնաւ զանոնք, այլ իրեն յանձնէ։ Այո՛, իշխանիս գրչին և գիտութեան հետ՝ գործունէութիւնն իսկ մեծ եղաւ այս ժամանակիս։ Գրեց թուղթ մ'ալ առ կաթ. Հայոց Պետրոս Գետադարձ՝ զինելու ընդդէմ խարդաւանաց Թոնրակեանց, որոնք խնդրած էին, և գրէթէ յաջողած իսկ վերատին խուժել 'ի Հայս։ Վերջապէս Մ'ագիստրոսի ձեռնարկած գործը յաջողութեամբ պսակուեցաւ. հիմնայատակ կործանեցաւ Թոնրակեանց ժողովատեղին, և անոր հիմանը վրայ բարձրացաւ Ս. Գէորգ եկեղեցին, զոր գերած էր աղանդապետն Սմբատ։ Հազարէն աւելի Թոնրակեցիք թողին իրենց աղանդն և մնան 'ի փարախ Ս. Եղեղեցւոյ, մկրտուելով 'ի ձեռն Եփրեմի ԲՀնեցւոյ եպիսկոպոսի։

Հոգևոր իշխանութիւնն՝ հաստատուն հիմանն վրայ յաւերժացընելու համար այս մեծ գործս, և մշտապէս վերջ տալու Թոնրակեցւոց աղանդին, խմբեց Հարքայ Բ. ժողովն, յամի Տեառն 1051. ընդունուեցան նորադարձք 'ի մկրտութիւն, և Հայաստանեայց եկեղեցին վերջապէս դաւաւ իւր 'ի վաղուց կորուսած խաղաղութիւնը։

Եղան ոմանք, — այս վերջին ժամանակներս, — ոյք խստիւ դատեցին Մ'ագիստրոսի գործածած տարապայման և անողորմ վարմունքը Թոնրակեցւոց դէմ, զանոնք և անոնց արարքն արդարացնելու չափ։ Սակայն իրաւացի չերևիր ինձ այսպիսի դատաստան մի. և իրաք նախ և յառաջ նոյն իսկ Մ'ագիստրոսի հետևեալ խօսքերը՝ բոլորովին հակառակը կը ցուցնեն. « Որոց հրամայեցաք տապալել զհիմունս յարկացն և հրձիգ առնել, և զինքեանս հանեալ 'ի սահմանաց մերոց. այլ ոչ զոք վնասեցաք մարմնական պատուհասիւք, քէպէտև յօրէնսն հրամայէ զվերջին պատուհասն կրել նոցա. որպէս և նախ քան զմեզ բազում զօրավարք և պետք 'ի սուր սուսերի մատնեցին զնոսա և անողորմաբար ոչ խնայեցին 'ի ծերս և 'ի մանկունս, որպէս

և արժանի էր »։ Երկրորդ՝ գիտելու ենք, որ այն գործին յաջողութեամբ կատարուիլն և բերած պտուղներն իսկ՝ մի մի փայլուն ապացոյցներ են անոր վարչական մեծ հանճարոյն։ Արդ՝ այս երկաթեայ բազուկս՝ եթէ իր բազմապատիկ ներողութեանց հետ, — առ ռամիկ աղանդաւորս, — զինուորական խստութիւնները ով ևս յապարէզ եկած չլինէր, անտարակոյս Հայոց ազգն և եկեղեցին՝ դեռ երկայն տարիներ պիտի տուայտէին, և Թոնրակեան աղանդաւորաց՝ անոնց մէջ գործած աւերածներն և ճնշողական ազդեցութիւնքը՝ շատ աւելի բազմադիմի պիտի լինէին, քան զոր կը կարծեն այժմ ոմանք։ Ուրեմն իրաւամբ և գովութեամբ կարելի է արդ եզրակացնել, թէ ինչպէս Պաւղիկեանց աղանդի բարձունքը՝ մեծապէս Յովհ. Օձնեցի հայրապետին, այնպէս ալ Թոնրակեանցինը՝ Գր. Մագիստրոսի պարտական ենք։

Մանիքէա–Պաւղիկեան Թոնրակեցւոց քննական պատմութիւնն այսպէս ներկայացնելէն վերջ, այժմ այս կարևոր հարցերս կ'ելլեն մեզ ընդ առաջ՝ բոլոր իրենց խոչընդոտներով հանդերձ. այսինքն են. ի՞նչ պատճառներ կային, որոնցմով այս աղանդս այնքան ձգիչ և գրաւիչ եղաւ. և թէ ստուգիւ բոլոր այդ աղանդաւորները ախտամոլ և անուս մարդիկ էին արդեօք, ինչպէս ուզած են ներկայացնել հինաւուրց եկեղեցական և աշխարհական մատենագիրներ։ Դարձեալ այդ կրօնական, բարոյական և քաղաքական հիրձուածն, որ, — ըստ վկայութեան Մագիստրոսի, – հարիւր–եօթանասուն տարիներէ աւելի տառապեցուց նոյն իսկ Հայոց ազգն և աշխարհը, որ երեքէն աւելի ժողովքներ գումարել տուաւ, և ԺԳ–ԺԷ. կաթողիկոսներ (1) տրամութեամբ իկոյց 'ի գերեզման, – ի՞նչ վերջնական արդիւնքներ ունեցաւ արդեօք. կամ լաւ ևս, իր ճնշողական արդասիքներէն դուրս՝ օգուտներ ևս ընծայե՞ց այն ազգին և աշխարհին, որուն կենսական ոյժերն սպառող մակաբոյսն (parasite) եղաւ ընդերկար։

Արդ՝ այսպիսի ծանրակշիռ հացմանց՝ բանաւոր և գոհացուցիչ լուծումն տալու համար, նախ 'ի նկատի առնելու ենք հի-

1. Այսինքն են Յովհ. Ոփայեցի, Զաքարիա, Գէորգ, Մաշտոց, Յովհաննէս, Ստեփաննոս, Թէոդորոս, Եղիսէ, Ղևոնիա, Խաչիկ, Սարգիս և Պետրոս Գետադարձ, ըստ Հ. Մէքայէլ Զամչեանի, — Պատմ. Հայոց. Հտ. Բ։ Իսկ Գր. Մագիստրոս, նոյնչափ ալ Աղուանից կաթողիկոսներ կը յիշէ, ըսելով. « Փոխանակ երկիցս և երիցս բողոքելոյ. զհարիւր և զեօթանասուն ամ երկքտասան քահանայապետք Հայոց Մեծաց, նոյնչափ Աղուանիցն, և բիւր եպիսկոպոսք և անթիւ քահանայք և սարկաւագունք բողոքեցին ձեզ, և ոչ լուայք. խօսեցան և յանդիմանեցին, և ոչ պատկառեցիք. անիծեցին և արտաքսեցին, և ոչ զղջացայք »։

նաւուրց պատմագրաց մեզ աւանդած այն սակաւաթիւ և ցանեցիր եղած տեղեկութիւնքն, որք, — անտարակոյս, — աւելի յոռետեսութեամբ՝ քան թէ բնորոշ յատկութիւններով և բարեշրջութեան օրինաց համաձայն գրուած են. իսկ միւս կողմէն ալ նոր քննադատից, — 'ի մանաւորի Գերմանացւոց յայտնած նոր կարծիքներն, — որք ընդհակառակն արևելասիրութենէ մղուած շատ բան լաւատեսութեամբ նկատած են, որք ըստ ինքեան եպերելի են։ Արդ՝ պատմական և քննադատական այս նժարներուս միոյն մէջ դրուած Մանիքէա–պաւղիկեան Թոնրակեցիներու աղանդն և աղանդաւորք առ հասարակ, դատուած են իբրև ամպարիշտք և ամպարշտոտութիւն, մոգնեռութիւն և մոգնեայք, շամբուշք և ախտամոլներ. իսկ միւսին մէջ այն աղանդներն առնուած են յաճախ իբրև լոկ կրօնական, քաղաքական և մտաւորական զարգացմունք և զառաջմունք ժամանակաց և մարդկութեան, և աղա՛ դաւորներն ալ աւելի կարող, գիտուն և ազատամիտք՝ քան թէ վաւաշ, շամբուշ և յաւէտ գնասակարք։ Սակայն մենք այս երկաբանչիւր կողման ապրայն հանելով, պէտք ենք ըսել, թէ այն աղանդաւորներն, այո՛, ամէնքն ալ, առանց բացառութեան, ամպարիշտ և ախտամոլ անձինք չէին, ինչպէս քրիստոնեայք ալ առ հասարակ առաքինի և ուղղադատան չեն։ Այո՛, շատեր կային այն աղանդներուն հակած և կամ անոնց մէջ ծնած, առանց գիտնալու անոնց էութիւնն և գաղտնիքը։ Եւ ստուգիւ, Մագիստրոս խօսելով Թոնրակեաններու այն խմբին վրայ, որք իրենք զիրենք քրիստոնեայս և արամեան գնդէն կ'անուանէին, կ'ըսէ. «Բացի նոցա դուռն ողորմութեան և մարդասիրութեան, վասն զի խուժադուժ ազգն այն անմեղք էին յայսպիսի մահաբեր թունից սրտմտութեան բաժակոյ նոցա»։ Իսկ գլխաւոր առաջնորդներն և օրինադիրներն, — Մանիէն սկսեալ ցվերջինն, — աւելի կամ պակաս զարգացած մտքեր էին, բայց ամէնքն ալ հելլանոսական, մոգական և նոր պղատոնական գիտութեամբ աւելի, քան թէ քրիստոնէական վարդապետութեամբ էին պատարուն, հետևաբար չէին մշակեր Աւետարանի պատուիրած առաքինութիւնները, այլ անձնատուր կ'ըլլային կախարդութեան և պէսպէս մոլութեանց. և պատմութենէ գիտենք, թէ անոնց մեծագոյն մասն ախտիւ որովայնի և գոլթութեամբ տանջուելով ելան աշխարհէ, ըլլալով զոհ իրենց ախտաւոր կրից և մեղնէութեանց։ Սակայն այս երկրորդ հարցս՝ երկրորդական ալ նշանակութիւն ունի. ուստի ուշադրութիւններս դարձնենք առաջնոյն վրայ։

Յիշեալ աղանդներուն հրապուրիչ և դիւրաւ ընդունելի ըլլա-

լուն կամ տարածուելուն՝ կան բազմապիսի պատճառներ, որոնցմէ զոմանս արդէն իսկ ցուցուցինք, յընթացս գրութեանս. իսկ այժմ հետևեալները մեզ աւելի հաւանական կ'երևին։ Ա. Դիտելու ենք, որ թէ Հայք և թէ անոնց դրացի ժողովուրդներն Արաբացւոց տիրապետութենէն յառաջ՝ Պարսից և ուրիշ հեթանոս ազգերու հետ ևս վերաբերութիւններ ունեցան, բայց անով ոչ այնքան իրենց մտաւորական և բարոյական և ոչ ալ կրօնական և ընտանեկան վիճակները փոխուեցան. քանի որ այն ազգերէն մին կամ միւսը հայ համայնքին մէջ դեռ թափանցած չէր և տեւական կերպով անոր հետ բնակակից եղած։ Բայց յէ դարուն՝ այլակրօնութիւնն՝ իր վարուք և բարուք մտաւ հայ ազգաբնակութեանց մէջ. յ'Ը որդին խորարմատ հաստատուեցաւ. իսկ Թ և Ժ դարերուն մէջ ունեցաւ իր գերագոյն ազդեցութիւնն՝ Հայոց ոչ միայն կրօնական, այլ և՛ առտնին կենաց և՛ առօրեայ ամէն գործոց մէջ. վասն զի Հայոց (ներուի ինձ ըսել) սրտին վրայ, — այսինքն է Դրունոյ մէջ, — դրած էին իրենց տիրապետութեան գահը, ուսկից ապա կը ծաւալէր բոլոր անոնց քաղաքային և մտաւոր հոսանքը։ Ո՞ւր թողունք ապա այն վաճառականական սերտ յարաբերութիւնները, զորս այս առթիւ հաստատեցին Հայք՝ Արաբիոյ և այլ հեթանոս ժողովրդոց հետ։ Արդ՝ այսպիսի կենսական յարաբերութիւններով և դարական բնակակցութեամբ՝ բարձած էր արդէն այն մեծ խոչը, որ հեռի կը բռնէր իրարմէ այլազգի և քրիստոնեայ ժողովուրդները՝ մեծ խորշումով մի, և երկուստեք ամուսնութիւնք և զաւակասերութիւնք կը յաճախէին, մինչև փոխել հայեցի անուանց՝ արաբացի անուններու. ինչպէս նաև սովորութիւնք և բարոյք։

Արդ՝ այս ամենայ՝ պատմական ամենաստոյգ եղելութիւններ ըլլալով, ուրեմն կրնանք զուրցել, թէ Արևելքի քրիստոնեայ ժողովուրդներն՝ Արաբացւոց, Պարսից, Սելճուքեանց և այլոց մարդախոշոշ սուրէն և բռնութիւններէն ազատուելու և իրենց գոյութիւնը պահելու համար՝ զարմանք չէ, թէ կամաւ կամ ակամայ համակերպած ըլլան Երկուութեան և խլամութեան օրինաց և ընտելացած. Մամելուքներն և տաճկացած Մանիքեցիք իսկ այս տխուր եղելութեանս զօրեղ ապացոյց մ'են, որոց համար կ'ըսուի, թէ քրիստոնեայ թլփատեալներ էին։ Իսկ մեծագոյն մասն հաւատացելոց չկարենալով բոլորովին հրաժեշտ տալ փրկաւէտ Աւետարանին, զոր իբրև իրենց հօրենական և մօրենական ժառանգութիւն մ'այնպէս ընդունած էին, փորձեցին, — տգիտաբար, — յիշեալ ազգաց կրօնից յարմարցնել զայն։ Խոստովանելու ենք, որ բիւզանդական կայսերաց և ժողովրդեան

զեղծ և ապականեալ ընթացքն ևս մեծապէս նպաստեց հեթանոսական գաղափարաց ընդունելութեան. վասն զի թուլացոյց նաև ընդհանուր կերպով իւր ձեռքի տակ եղող քրիստոնէական հողը։

Եթէ Յունաստան չունենար իր աքանչելի Ս. Հարքն և անոնց հրաշարուեստ երկասիրութիւնները, թերևս առաջին ոտնփոխն առնողը նա լինէր դէպ 'ի հեթանոսութիւն, որ անոր նախկին արդուզարդն և անկապտելի պերճանքն եղած էր, իր գիտութիւններովն և մեծագործութեամբքը։ Սակայն Հայք չունենալով անոնց ոչ ազատ տէրութիւնն և ոչ իսկ սրբազան դիւցազանց պերճաբան և անպարտելի փաղանգը, դիւրաւ կարէին ամէն նորութենէ գրաւիլ, և ամէն հայրենի հնաւանդութեանց յետս կալ. զի այս է վիճակ և բաժին ո՛ր և է նուաճեալ և ստրկացած ազգի մի։

Այո՛, այսպիսի պարագայից մէջ, նոր էին Հայոց համար բոլոր այն արաբացի և պարսիկ վիպասանութիւններն և գիտական և իմաստասիրական գրութիւններն, որոնք մերթ լրջօրէն հետազօտութիւններով, և մերթ ալ մոգական և կախարդական աբուեստգիտութեամբ կու գային և կը գրաւէին տգիտին հետ՝ նաև ուսումնասիրաց ուշադրութիւնը. որոնք կը նուաստացնէին զքրիստոնէութիւնն և կը բարձրացնէին զհեթանոսութիւնը։ Նոր էին այն ասպետական և սիրահարական բազմադրուագ արարուածներն, որոնք գրէթէ ամէն օր և ամէն հրապոյրներով կը կատարուէին անոնց աչաց առջև։ Նոր էին քրիստոսատեաց Հրէից Թալմուտին և Թարկումի հետ՝ նոյնպէս այն անհարազատ Աւետարաններն (¹) և հերետիկոսական գրութիւններն, որոնք մեծաւ մասամբ այս ժամանակամիջոցիս յօրի ուեցան և կը շրջէին նաև մեր ժողովրդեան մէջ և կը քակէին Հին և Նոր կտակարանի հիմունքն և Եկեղեցւոյ հեղինակութիւնը։ Միով բանիւ՝ նոր էր Հայոց համար նաև Յանէսի և Յամբրէսի ընծայուած Գիրքն (²), որ ամէն ճշմարիտ կրօնից և աստուածպաշտութեան

1. Ինչպէս կանխաւ իսկ ծանուցինք, Կոստանդինոս՝ Պաւղիկեանց մեծ աղանդապետն ստուգիւ Աստուածաբան այս աւետարաններէն մին կարդալով մոլորեցաւ, և յօրինեց իր մոլար վարդապետութիւն։. այս պատմական իր է։ Այսպէս եղան նաև Սերգիոս և հայազգին Սմբատ, կարդալով Պարսից կամ Մանեայ գրուածքը։

2. Այս գրուածքս կը պարունակէր Եգիպտացւոց գիտութիւնն և դիւթական արուեստներն և հմայքը։ Մի՛ք. Ասորին (Chronique p. 262) կը պատմէ Մահտիի համար, թէ կարդալով զԳիրս Յանէսի և Յամբրէսի, — զոր յղեց առ նա Լէոն Դ և որդի Կոստանդեայ կայսեր, — յափշտակուեցաւ, և այնուհետև անձնատուր եղաւ կախարդութեան։

դէմ ապստամբութիւն կը վարդապետէր, և Ցերեբինթի և Մանէսի գրուածոց հետ մեծ շառաչ և շչուկ կը յարուցանէր։

Արդ՝ այս ամենայն լաւագոյն և զօրեղ զէնքեր էին Մանիքէա–Պաւղիկեան Թոնրակեցւոց ձեռքը՝ հարուածելու զբրիստոնէութիւնն և մոլորեցնելու զբրիստոնեայս. Թոնրակեցւոց կ'ըսեմ, որոնց աղանդը թէպէտ և կանուխ թէպէտ և տարբեր աղբերականց կը ծագէր, բայց այս տղմաթիկ հեղեղներէն ևս քանզևս օժանդակուելով՝ եղաւ գետ մեծ և ողողեց մարդկութեան անդաստանն և մարդաստանը։ Հայոց և Աղուանից մէջ կարծուածէն աւելի կանուխ և անաչխատ մուած էր այն, և երկայն ժամանակ տևեց. և այս իսկ կրկին պատճառներով։ Ա. Վասն զի Թ և Ժ դարերուն՝ մեր ազգին մէջ հաղուագիւտ էին և ճրագով որոնելի եկեղեցական և աշխարհական հանճարներ, ոյք գիտութեամբ և առաքինութեամբ զինուած՝ կարենային դէմ դնել այն հոսանքին, — որ ոյժ առած էր դարուն ոգիէն և բուռն կերպով կը յառաջէր։ Իսկ եղածներն ալ քաշուած էին վանքերու և անապատներու մէջ, թողով խեղճ ժողովուրդն այն մարդորսակ մոլորեցուցիչներու ձեռքը. թէպէտև երբեմն 'ի հեռաստանէ իրենց ձայնը կը բարձրացնէին, բայց կը մնային միշտ իբրև ձայն բարբառոյ յանապատի. վասն զի իրենք ժողովրդէն և ժողովուրդն ալ իրենցմէ հեռի կ'ապրէին։ Բ. Թոնրակեան աղանդն ըլլալով բոլորովին երկրաւոր և շնչաւոր, հեշտալուր և դիւրընկալ կ'երևէր մարդկային անկեալ և ապականեալ բնութեան, — ուրիշ խնդիր է թէ այն անկեալ բնութիւնն աւրելէն դուրս՝ վերականգնելու ամենևին բաւականութիւն չունէր իր մէջ։ Դառնանք վերջին հարցը լուծելու։

Անտարակոյս, աղանդի մի կամ կուսակցութեան մի, — եթէ կրօնական համարինք և եթէ քաղաքական, — կարևորութիւնը կամ ազնուականութիւնն անոր բռնած ուղղութենէն և դրած նպատակէն դատելու ենք։ Արդ՝ Մանիքէա–Պաւղիկեան Թոնրակեցիներու աղանդն և աղանդաւորք այս երկու տեսակէտերով նկատելով, կը թուի մեզ, թէ ինքն ըստ ինքեան և ուղղակի կերպով՝ այն ազգաց և աշխարհաց, — ինչպէս և մերոյս, — որոց մէջ տևեց ընդերկար և գործեց, ամենևին օգտաբեր եղած չէ և չէր իսկ կարող լինել։ Հակառակն ենթադրելն՝ ուրիշ բան չէ, բայց եթէ ըստ անտուտ առածին՝ ուղել տատասկէն՝ թուզ քաղել և 'ի փշոց՝ խաղող։ Ընդհանրապէս ըսուած է, թէ չկայ յեղափոխութիւն մի, որ իր վատ հետևանքներուն հետ՝ բարերար արդիւնքներ ևս բերած չըլլայ ընկերութեան։ Եւ յիրաւի այս բանիս իբրև մի մի անժխտելի և փայլուն ապացոյց-

ներ կեցել են դիմացնիս Բողոքականուշքեան երեւումն ԺԶ դարուն և Ֆրանսայի մեծ Յեղափոխուշքիւնն, յամին 1789, որոնցմով խղեցան մարդկային միտքը կապող և կաշկանդող շղթաներ, տիրեցին ամենուրեք ազատութիւն կրօնից և եղբայրական հաւասարութիւն, այլովք հանդերձ, որով ապա գիտութիւնք և արուեստք նորանշան քայլեր առին, և մենք ունեցանք մեծ բազմութիւն մի երեւելի մատենագրաց և մատենից։ Իսկ գալով Մանէքէա–Պաւղիկեան Թոնրակեցիներուն, չենք կրնար ճանչնալ զանոնք գիտութեան և յառաջադիմութեան իբրև ճշմարիտ յեղափոխականներ, և ոչ ալ անոնց վարդապետութիւնն՝ առնուլ իբրև քաղաքական կամ կրօնական յեղափոխութիւն, և կամ յեղափոխիչ դրութիւն. որովհետև այդ աղանդաւորները՝ կամ համաշխարհի քաղաքացիներ էին՝ առանց հայրենեաց և ազգայնութեան, և կամ ցեց և ուտիճ էին իրենց ազգին և աշխարհին։ Եթէ դոքա Մանէսի գրած հիման վրայ հաւատարիմ մնացած և անոր դրական ուղղութեամբը միշտ գործած ըլլային, իրաւամբ պիտի ըսէինք, թէ ինչպէս անոր նպատակն էր զրադաշտական հին կրօնի վերահաստատութիւնն և իր ազգին բարոյականութիւնն, այսպէս ևս հայ Թոնրակեցիներու գլխաւոր նպատակն եղած ըլլար Արաքսներու և սօսանուէր Արաներու հինաւուրց բնապաշտութեան վերահաստատութիւնն և ազգային անկախութիւնը ձեռք բերելու ջանք մի. ինչպէս յոյն Պաւղիկեաններու նպատակն ալ եղած ըլլար կայսերութեան կործանումն և վերականգնումն նախկին հասարակապետութեան։ Այո՛, այս գաղափարս ունեցած եմ, բայց և առանց փաստի մնացած։ Սակայն ազգային և օտարազգի հեղինակաց վկայութիւնք, – զորս մինչև ցարդ մէջ բերինք, – մէկ կողմէն, իսկ միւս կողմէն ալ այն աղանդաւորաց բռնած ուղղութիւնն և գործերը՝ բոլորովին հակառակը կը ցուցնեն դժբաղդաբար, և հաստատուն կռուան մի չեն ընծայեր մեզ այնպէս կարծելու։ Ուստի ինչպէս արդի ընկերվարականներէն կարելի չէ յուսալ ազգի և հայրենեաց բարօրութիւն, այսպէս ևս ըսելու է Պաւղիկէա–Թոնրակեաններու համար, դոք ստուգիւ հին աշխարհի ընկերվարականներ էին. կը բազմանային բայց 'ի վնաս և յապականութիւն իրենց ազգին և աշխարհին. կը խօսէին և կը գործէին, բայց միայն մոլորեցնելու համար. անձամբ անձանց էին նպատակ, և ընդհանուրը կը զոհէին իրենց առանձնական հաճոյից։ Անոնց համար հայրենիքն երկրորդական, և կամ բնաւ նշանակութիւն չունէր. մանաւանդ թէ երկու դար շարունակ իրարու ղէմ կը պատերազմէին այս աղանդաւորներս, և հայրենիք և զիրար եղծանել կը ջանային։

Քաղաքականէն անցնելով մնաւորականին, փոքր ի շատէ մի և նոյն մակարդակին վրայ կը գտնենք զանոնք։ Հին աղբերացմէ աւանդուած չէ, և մենք չենք գտներ ուրեք, որ անոնք կամ զդաստիարակութիւնն և կամ զգիտութիւնն և գեղարուեստներ մշակած և զարգացուցած ըլլան։ Թէպէտև անոնք, — Մանիէն սկսեալ ցվերջինն, — իրենք զիրենք միայն ճշմարտութեան և գիտութեան ռահահորդներ կ'անուանէին և կը քարոզէին, սակայն բոլոր անոնց գիտութիւնը կախարդութեան և դիւթական արուեստից մէջ պարունակուած էր։ Անոնց ծայրայեղ ազատութիւնն իսկ բովանդակ, — որով թերևս ժամանակին աւելորդապաշտութեան դէմ կարենային պարծիլ, — վերջ 'ի վերջոյ սկեպտականութեան կը յանգէր, և ամէն բան արհամարհելու, փոխանակ գիտական և իմաստասիրական նոր դրութիւն մի հնարելու, և կամ եղածները դրականապէս բարգաւաճելու։

Անոնց մեզի հասած գրեանքը թուով և քանակաւ խիստ քիչ են, և գրէթէ ոչինչ, համեմատութեամբ Արիստոտենց և ուրիշ աղանդաւորաց. այս իսկ յայտնի ապացոյց է ըսածնուս։ Սերգիոս՝ որ, ըստ վկայութեան Փոտի, գերազանցեց հանճարով և չարութեամբ բոլոր իւր նախորդ և հետևորդ աղանդապետները, ունէր գրութիւն մի, որ կը բովանդակէր ամէն տեսակ մոլորութիւններ (1), և եղաւ պատճառ ամէն ամպարշտութեանց։ Մայրագոմեցւոյ աշակերտին Սարգսի գրուածքն ևս, — զոր Յովհան պատմաբան կաթողիկոսն իսկ հաւանօրէն կարդացած էր, — աւելի Ցերեբինթայ և Մանեայ (2) գրուածոց պէս խառնակոյտ մ'էր, իրարու անյարիր այլ և այլ աղանդոց, քան թէ գիտական ոճով լուրջ դրութիւն մի։ Սակայն այսու հանդերձ իր ժամանակին մեծ շառաչ հանած պէտք է որ ըլլայ. որով ստիպեցան ասորի (3) հինաւուրց հեղինակներ և անոր հերքումը

1. «Ex quo tempore usque ad praesens quae in nostris regionibus obtinet impietas *ab ejus pendet Documentis*, quae etiam aemulans omnes haereses obscuravit».

2. Այս աղանդապետի գրութիւնն յամին 1862 հրատարակեց գերմանացի գիտնականը Գ. Ֆլիւգէլ, թարգմանելով զայն իրմէ Էբի Եակուբ ան-Նադիմի Ֆիհրիստէն, և լուսաբանելով։ Գովելի և յոյժ շահագրգիռ հրատարակութիւնս եղած է 'ի Լայպցիգ, այս մակագրութեամբս. Mani. Seine Lehre und Schriften. Ein Beitrag zur Geschichte des Manichäismus; Arab Text, aus dem *Fihrist* des Ibn Abi Iakub an-Nadim, übersetzt und mit Commentar herausgegeben von G. Flügel. Leipzig. 1861.

Կը ցաւիմ որ Մանէսի վրայ գրած ժամանակ այս օգտաշատ գրուածս չունէի 'ի ձեռին, այլ 3 թերթերն արդէն տպագրելէն վերջ ճանչցայ զայն։

3. Այս ասորի աղբիւրներս և անոնց հնութիւնն արդէն իսկ մէջ բերինք Յովհ.

գրեցին, խօսեցան և խօսեցուցին։ Գրութիւն մ'ալ, կամ լաւ ևս՝ այլ և այլ թուղթեր կը յիշատակէ Մագիստրոս (1), զորս յայլևայլ գաւառներէ գրած էին Թոնրակեանք՝ առ առաջնորդն իւրեանց Յեսու. ինքն կարդացել էր զանոնք, և Ասորւոց կաթողիկոսին ևս կը յանձնէ կարդալ, անոնց կախարդութիւնն իմանալու համար։ Թէ բաց աստի ուրիշ գրուածներ և նամականիս ևս ունէին այն աղանդաւորներն, և գրով իսկ կ'արձանացնէին իրենց կախարդութիւնները, յայտնապէս կը վկայէ Գր. Նարեկացին՝ իր թղթին մէջ, խօսելով առ առաջնորդն կճաւայ՝ այսպէս. «Այլ եթէ ընդ գրաբաւնութիւն նոցին զարմանայք, գիտեմք և զատանայ սաղմոս ասացեալ յօր փորձութեան ամենափրկչին»։ Մանիքէա-Պաւղիկեան Թոնրակեցիներէն մնացած պէտք է համարել ոչ միայն Աւետարք և Գրապանակ անուանեալ այն գլանաձև գրութեանց կիրառութիւնն, այլ նոյն իսկ անոնց հնագոյն օրինակաց շատերը, որ երբեմն մինչև 60–70 մէտր երկայնութիւն ունին. և Ս. Հարց և Ս. Գրոց տեղեաց հետ՝ շատ և շատ մոլորական բանդագուշանքներ ևս կը պարունակեն, և կը յածէին միշտ 'ի ձեռս կախարդաց և դիւթից։

Բաց 'ի նիւթական գրութեանց, այն իմացական և կենսունակ մատեաններն իսկ, այսինքն է անաչխարհիկ Գնչուներն և Բոշաներն (2) ևս, —որոնք ոչ որոշ կրօնք մ'ունին և ոչ ալ բարոյական, այլ կախարդութեամբ և եղնգահայեցութեամբ կ'ապրին, — ըստ իս Մանիքէա-Պաւղիկեան Թոնրակեցիներէն յառաջ եկած համարելի են, և ամենայն իրաք զանոնք կը ներկայացնեն թէ՛ ըստ կրօնից, թէ՛ ըստ բարոյից և թէ՛ ըստ թափառաշրջիկ սովորութեան։ Այո՛, այս է թերևս պատճառ, որ Գընչուներու և Բոշաներու ծագումն, այսինքն թէ ի՛նչ ազգէ և ի՛նչ աշխարհէ յառաջագայիլն իսկ մինչև ցայսօր խորհրդաւոր մթութեան մէջ մնացած է, հանդերձ բազում ջանից և խուզարկու-

Մայրագոմեցւոյ և Սարգսի վրայ խօսած ժամանակ. այժմ այսչափս կը յաւելունք, թէ Սարգսի և Մայրագոմեցւոյ գրութիւնքն և յարուցած հերձուածն՝ Ասորոց մէջ ևս տարածուած էր, և գուցէ թէ հետևողներ ունեցած։ Բար-Եբրեոս սխալմամբ, կարծեմ, եպիսկոպոս կ'անուանէ զնա Եդեսիոյ, մինչդեռ անոր դէմ գրող ասորի հեղինակները՝ ընդհակառակն կը թուին հաստատել։

1. «Շնանակեցին մեզ յայնմ պղծանոցի խրճթին զբուղբսն առ անօրէն առաջնորդն Յեսու եկեալ յիւրաքանչիւր գաւառաց. աղէ, առ ընթերցիր, և գտցես 'ի նոսա աղճատանս ձօնելոցն դիւական... և խուզեալ մեր գտեալ ընթերցաք, զի չարաչար կախարդութեամբ և հայհոյութեամբ», և այլն։

2. Հայազգի Բոշաները բացառութիւն կը կազմեն, զի իրենց ազգին կրօնքն և բարոյականն ունին, փոքր 'ի շատէ, ինչ ինչ տարբերութեամբք։

թեանց. վասն զի անոնց պատմութիւնն իրենց կենաց պէս յեղափոփոխ է, և լեզուն ալ լեզուաբանական քաոս մի։ Մեր արտայայտած այս կարծիքը՝ դեռ ապացուցուած չէ, բայց կարծեմ, թէ այս տեսակէտով մանրազնին խուզարկութիւններ դեռ եղած չեն, և եթէ ըլլուին, կարծեմ թէ ամենէն աւելի յարմարոճը պիտի լինի Գնչուններու ծագման հանգոյցը լուծելու։ Այս ալ գիտելու ենք, որ Գնչուններու վրայ գրողներն, — ինչպէս և Բոշաներուն, — Ի և Ը երորդ դարէն անդին չեն անցներ անոնց գոյութիւնն 'ի Հայս, լեզուաբանական քննութեանց համաձայն։ Բայց միւս կողմէն զայս ևս մոռնալու չենք, թէ Մանիքէա–Պաւղիկեան Թոնրակեցւոց գրաւորական ամբոյութեան և անգործունէութեան իբրև միակ պատճառ՝ անոնց մեղկ և շուայտոտ կենցաղն եղած չէ, այլ ուրիշ պատճառներ ալ կան։ Այո՛, քրիստոնէից, նա մանաւանդ մոլեռանդն իշխանաց ոմանց՝ ամէն ժամանակ և ամէն պարագայից մէջ անոնց դէմ յարուցած հալածանքներն և տարապայման ճնշումներն իսկ յաճախ կը կապէին ա ոնց ձեռքերուն հետ՝ միտքն և գրիչն ևս։ Անոնց ամէն խօսածն և գրածը մոլորական և ամբարշտական համարուած էր. ամէն շարժմունքը՝ կասկածելի, և հուսկ ուրեմն ո՛ր և է գործն՝ աւերիչ և ապականիչ։ Ուստի նոքա այսպիսի կասկածանքներէն և ճնշումներէն, — եթէ իրաւացի ըլլայ և եթէ ա իրաւ, — ազատուելու համար իբրև լաւագոյն միջոց գտած էին կամ անգիր և բերանացի միայն ուսուցանել իրենց հետևողներն, որպէս զի ամբաստանուած ժամանակ դիւրաւ կարենան ուրանալ իրենց քարոզած գաղափարներն, և կամ նոր կտակարանէն իրենց յարմար և ընդունելի տեղերը միայն ընդօրինակելով՝ իրենց հետ կը յածեցնէին. որոնց մէջ ապա, — իբր 'ի ստուերագիծ նկարի, — իրենց ուզած յաւելուածներն և յապաւումնքը կ'ընէին, անձանց և պարագայից յարմար։ Արդ՝ սոյնօրինակ ճնշմանց ներքև չկարացին անոնք իրագործել բոլոր իրենց գաղափարներն և ձկտումներն, և հասնիլ և հասցնել այն կէտին իրենցմէ առաջնորդուած համայնքը. որով և մենք իսկ առիթ չկարողացանք ունենալ ճանչնալու անոնց վերջնական նպատակն՝ ինչպէս որ պէտք էր։ Սակայն և այնպէս այսպիսի եղելութեանց կան շշափելի յիշատակարաններ և աղաւաղեալ գրութիւններ, որոնց մասին յետոյ առիթ պիտի ունենանք խօսել, այս գրութեանս մէջ։

Իսկ անուղղակի կերպով անոնց պատճառած բարիքներն այն եղան, որ նախ և առաջ այս առիթիւ սրեցին իրենց միտքն և գրիչը ժամանակին մեր լուսամիտ հանճարներն, և 'ի լոյս ընծայեցին մեզ, գրով, իրենց գիտութեան և բարոյական հրաշա-

կերպքը, — զորս կանխաւ յիշատակեցինք, — և գուցէ թէ իրաց սովորական ընթացքովը չընծայէին։ Բ. Դիտելու ենք, որ ասոնց պատճառաւ մեր եկեղեցւոյ հօտապետները մասնաւոր կերպով ուշ դրին և հոգացին վերցնելու ժառանգաւորաց և աշխարհիկ դասուն մէջ մնած և արմատացած բարոյական և կրօնական զեղծումներն, և մոցուցին նորանոր բարեկարգութիւններ (1)։ Գ. Մեր եկեղեցւոյ մէջ արդէն 'ի վաղուց ծագած և այն ժամանակամիջոցին զօրացած այլ և այլ երկպառակութիւններն և հակառակամարտ կուսակցութիւններն՝ իրարու մօտենալով ձեռք ձեռքի տուին այն հասարակաց միասակար աղանդին և աղանդաւորաց ընդդիմադրելու աղագաւ։ Դ. Ասորւոց և Յունաց հետ խզուած կամ խզուելու չափ լարուած Հայոց բարեկամական յարաբերութիւնները՝ վերստին հաստատուեցան (2)։ Ե. Այս պատեհաւս Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետութիւնը ոչ միայն լաւագոյն կերպով պարզաբանուեցաւ, այլ նոյն իսկ յիշեալ աղանդոց դէմ անանցանելի պատուարներ կանգնելու և որոշ սահմանաւ մի անոնցմէ զատելու համար, մեր յաւէտ յիշատակաց արժանի Հայրք, ջանացին գիտութեամբ բարգաւաճել, և անոնց իրարմէ ունեցած փրկաւէտ և կորստաբեր տարբերութիւնքն աւելի ևս

1. Այս և հետևեալ նախադասութեանցս ստուգութիւնն հիմնուած է նաև յաւուրս Ն. Շինողի, Յովհ. Օձնեցւոյ, Յովհ. Ովայեցւոյ և Սարգսի և Պետր. Գետադարձի գումարուած ժողովոց կանոնական գործերուն վրայ, և չէ ենթադրական ինչ։

2. Այս ճշմարտութիւնս անկներև կը տեսնուի Մագիստրոսի առ կաթողիկոսն Ասորւոց ուղղեալ նամակի հետևեալ խօսքերէն. « Այլ վասն միաբանութեան ձերոյ գրեալ է և յիշատակեալ յաւուրս Տեառն Զաքարիայի և Տեառն Քրիստափորի, եթէ պարտ է մեզ վերստին միաբանել և հաստատել զուիտս հարցն, եթէ զոր հնարաւորն է 'ի կարգաց մեր և ձեր ուղղել, և մեք 'ի ձէնջ ոչ ինչ հայցեմք յաղագս հաւատոց. քանզի միաբանութեամբ պարսպեալ էք և ամենայն բարեձևութեամբ փարթամացեալք, և առ մեզ և 'ի մերում հայրապետանոցի քո սրբազնութեանդ, որպէս սրբոյն Կիւրղի և երիցս երանելեաց նարցն... այնպէս համարիմք աթոռակիցս, պատրիարգակից մանաւանդ »... և այլն։

Ուրիշ տեղ մ' այսպիսի միաբանութեան վերաբերութիւնն ևս կը նշանակէ, ըսելո , վասն թոնրակեցւոց որ խաբէական թուղթ մի գրած էին առ Պետրոս Գետադարձ կաթողիկոսն մեր. « Որ ըստ քում ի հաստատութեանդ... և քահանայապետական իշխանութեանդ առաջնորդեցար 'ի Հոգւոյն Սրբոյ և ժանուցեր մեզ (գրով) զայսոսիկ »։

Ն. Շնորհալւոյ առ Միջագետս և առ Յոյնս գրած թղթերը դեռ աւելի կը հաստատեն վերը ըսածնիս, և շատերուն ծանօթ ըլլալով զանց կ'ընենք մէջ բերել ասա։

զգալի ընել. որով ունեցանք պատմականին առընթեր՝ նոյնպէս և բարոյական և աստուածաբանական ճոխագոյն գանձեր։

Սակայն համեմատութեամբ այս կողմնակի աղէկութեանց, զորս աւելի վերնական Ցեսչութեան, քան թէ անոնց պարտականք ենք, որ, ըստ առաձին Օգոստինոսի, թոյլ կու տայ չարին՝ որպէս զի անկէց բարիքներ յառաջ բերէ, — մեծագոյն եղան Պաւղիկեա–Թոնրակեցւոց ուղղակի մեր աշխարհին հասուցած չարիքները, յորոց զոմանս արդէն իսկ մատնանիշ ըրինք, — այն աղանդոց պատմութիւնն ըրած ժամանակ։ Իսկ հօս մասնաւոր կերպով դիտելու ենք, որ այս աղանդաւորաց անկրօնութիւնն և անբարոյականութիւնն՝ իրենց ազդեցութիւնը դրոշմեցին ոչ միայն ժամանակակիցներուն վրայ, այլ նոյն աղանդը թիսեց և թողուց իր սերմն, որ մեր հայրենի հողին վրայ ծնանելով և սնանելով՝ հանեցին Մանիքէա–Պաւղիկեան Թոնրակեցւոց յաջորդներն, ոյք ծածուկ կերպով ապրեցան մինչև ցամն 1782, և կը մնան այժմ Այրարատ նահանգի մէջ, այսինքն է 'ի գիւղն Արխվալի և յԱղեքսանդրապոլ։

Սակայն դիտելու ենք որ արդի Թոնրակեցւոց, — ինչպէս և հայ Բոշաներու սերունդներն, — Այրարատ նահանգի բնիկ ընտանիքներ չէին, այլ յամի Ցեառն 1829 Ռուս–Օսմանեան պատերազմի ժամանակ կարնեցի կարապետ եպիսկոպոսի առաջնորդութեամբ խնուսէն եկող բազմաթիւ հայ գաղթականներու հետ եկան և տեղաւորեցան անդ։ Արդ՝ ինչպէս արդի խնուսը՝ հինաւուրց խնունէն տարբեր չէ, այսպէս նաև անկէ գաղթող աղանդաւորքն՝ հին Մանիքեցիներէն. ուրեմն այս կռուան մ'է, — ըստ ինքեան, – եզրակացնելու, թէ ԺԱ երորդ դարէն մինչև ԺԹ երորդն՝ յիշեալ աղանդները ծածուկ մնացած էին միայն, և ոչ երբէք հրաժարած իրենց պապերու և մամերու կորստաբեր ժառանգութենէն, — ինչպէս կը կարծէր Մագիստրոս, թէ խպատ հրաժարեցուցած ըլլայ և բարձած զչարն 'ի միջոյ։ Սակայն հակառակ կարծիս ևս կարելի է պաշտպանել, թէ Մանիքէա–Թոնրակեցւոց անթեղեալ կրակին հետ՝ անոնց արդի դարմն և սերունդն իսկ՝ բողոքական և Աւետարանական առաքեալները վերբստին արծարծած ըլլան ԺԸ և ԺԹ դարերուն։ Բայց այս կէտիս վրայ յետոյ ուրեմն առիթ պիտի ունենանք խօսելու։

Նոր ժամանակի և ժամանակակից Թոնրակեցւոց պատմութիւնն՝ արդէն իսկ Ադ. Երիցեան հրատարակած (1) է, յամին 1880, հանելով զայն Էջմիածնի Սինոդի 1837, 1838 և 1839 տարի-

1. Տես « Փորձ », Դ տարի, Հոկտ. N. X. էջ 91–130։

ներու Գորֆերէն (¹)։ Ցոյժ շնորհապարտ ենք հայազգի հնասէր հեղինակին՝ այնպիսի շահագրգիռ յիշատակարանաց հրատարակութեան համար, — զորս օտարաց հետ՝ մերայինք իսկ կ'անգիտանային, — որով ունեցանք Մանիքէա–Պաւղիկեան թոնրակեցւոց պատմութեան եթէ ոչ ամբողջ շարայարութիւնն, այլ դէթ անոր լրացուցիչ և կարևորագոյն մասն մի։

Վերը նշանակուած տարիներուն մէջ, Էջմիածնի Սինոդի հոգևոր վարչութեան հետ բարեսէր կայսեր Տէրութիւնն ևս միանալով՝ վերջ տուած կը համարին Արխվալեցի և Աղեքսանդրապոլցի աղանդաւորաց. բայց մենք առանց յոռետեսութեան իսկ կարենք ըսել, թէ ոչ միայն այն աղանդներն Հայոց միջէն դեռ վերջացած չեն, այլ նոյն իսկ ապագային, ո՞ գիտէ, թէ դեռ մեծ դեր չպիտի խաղան Հայոց ազգին և եկեղեցւոյ մէջ, քանի որ Բողոքական և Աւետարանական եկեղեցիներն ևս անոնց ոյժ և նեցուկ կ'ըլլան։ Ցիրաւի քանի որ անոնց դարական ընդհատութեան և վերայայտնութեան պատմութիւնքն իրրև շօշափելի փաստեր դիմացնիս կանգնած են, ո՞վ կրնայ վստահ ըլլալ անոնց առժամանակեայ և բռնի նուաճման վրայ, առանց հիմնովին փոխելու անոնց գաղափարներն և համոզմունքը։ Անտարակոյս այս աղանդիս յարատև շարունակուելուն և ամենէն աւելի երկիւղալի լինելու, չըսեմ միակ, այլ գլխաւոր պատճառն եղած է և պիտի լինի անոր հետևողաց կեղծիքն և կեղծուպատիր ուրացութիւնն։ Եւ ստուգիւ՝ երբ թոնրակեցութիւնը ներքին համոզումն է, և այդ ներքին համոզումը նեղը մնած ժամանակ՝ կը փոխուի արտաքին ատենից և սպառնալեաց առջև, ալ ուրիշ բան կարող չէ ընել այդ ատեանը, բայց եթէ ներել և ուրիշ պատեհից սպասել։ Բայց մենք այս աղանդաւորաց ապագայն յանձնելով ապագային, մասնաւոր կերպով մեր և մեր ընթերցողաց ուշադրութիւնը կը հրաւիրենք Սինոդի դիւանէն հանուած այն յիշատակարանին վրայ, որուն մակագիրն է « Բանալի (²) ճըշ-

1. Որոնք կը պարունակեն Ռուսիոյ տէրութեան և Էջմիածնի Սինոդի ատեաններու հարցաքննութիւնքն և նոր թոնրակեցւոց, այսինքն է Արխվալէցւոց, խոստովանութիւնն և տուած տեղեկութիւնքն՝ /բենց մոլորութեանց մասին։

2. Դրուածքիս ճակատին վրայ դրոշմուած է, թէ « Գրեցաւ 'ի Թուականիս փրկչին 1782, իսկ Հայոց ՌՄԼ, 'ի գաւառն Տարօնոյ »։ Հասարակ թղթէ ուռթածալ կազմուած գրքոյկ մ'է, 149 էջերէ բաղկացած, որոյ տեղ տեղ ամբողջական թերթեր դուրս հանուած են, տեղ տեղ ալ բառեր քերուած, — անշուշտ յերկիւղէ ուղղափառաց, – ինչպէս ըսինք յառաջագոյն։ Գրքուկիս տէրն էր Խնուսէն՝ յԱրխվէլի գաղթած Տօնս Կիրակոսեան։ Սակայն Սինոդի գործերէն մին, ըստ հրատարակութեան Երիցեանի, հետևեալ տեղեկութիւնը կու տայ մեզ. « Ի

մարտութեան », իսկ Աղ. Երիցեան՝ Գիրք վարդապետութեան Թոնրակեցւոց իսկ անուանած է զայն. և կ'ըսէ. « Պէտք է ասենք, թէ շատ դժուար պիտի լինէր 1837 թուին երևցած աղանդը Թոնդրակեցի համարել, եթէ յիշեալ Բանալի ձշմարտութիւնը չէր գտնուել Արխվէլցւոց ձեռքում »։

Երիցեան՝ այն նորագիւտ գրութենէն կ'եզրակացնէ, ուրեմն, Արխվէլցւոց Թոնրակեցի ըլլալը, բայց դժբաղդաբար առանց ապացուցանելու, թէ ստուգիւ այն գրութիւնն եղած է վաղեմի հաւատապատումն Թոնրակեցւոց, այլ լոկ այն գրութեան հակիրճ բովանդակութիւնն յառաջ բերելով բաւականացած է. այսպէս հին Թոնրակեցիներու պատմութեանն ալ՝ թէև այլ և այլ տոհմային աղբիւրներ կը յիշատակէ, բայց ինքն ուղղակի անոնց գործերն հարցուցած և քննած չերևիր, այլ Հ. Մկր. Զամչեանի Հայոց Պատմութեան Բ հատորին մէջ աւանդուածները միայն ծայրաքաղ ըրած. որով ոչ նորութիւն և ոչ ալ ուսումնական արժէք մի յաւելցուցած է հնոյն վրայ. մինչդեռ այն պատեհաւ կարէր քննել Էջմիածնի դիւանի դեռ աւելի հին յիշատակարաններն, որոց օգնութեամբը թերևս կարելի լինէր իմանալ, թէ խնուսի մէջ գրուած այն գիրքն և աղանդաւորք ո՞ր ժամանակէն մնացած էին, և ինչպիսի՞ պարագաներով պահպանուած։ Այո՛, այս կերպով ԺԱ. դարէն ցԺԹ եղած մեծ խրտրոցն պիտի լեցուէր ըստ մասին։ Մեր գործը չի ներեր ընդարձակ քննադատութիւն մի բանալ ասա՝ այս յոյժ շահագրգիռ գրութեան վրայ. բայց չենք ալ ուզեր բոլորովին լռութեամբ անցնիլ, այլ ըստ կարելւոյն համառօտիւ մեր կարծիքն յայտնել։

Նախ դիտելու ենք, որ « Բանալի ձշմարտութեան » ճակատին վրայ դրոշմուած գրութեան տարեթիւն և Սինոդի գործոց մէջ նշանակուած Յովհաննու ընծայուած շարադրութեան տարեթուի մէջ մեծ անհամաձայնութիւն կայ, կամ լաւ ևս հակասութիւն մի. որովհետև 1826ին շարադրուած գրութիւնը՝ նոյնպէս

1826 թուին 'ի ժամանակս լինելոյ բնակչաց Արխվէլի գեղջ ընդ տերութեան Օսմանցւոց 'ի գեւղն Զաուրմայ, ծագեալ քահանայ ոմն Յովհաննէս անուն, շարադրեալ զգիրքն այն կոչեցեալն Բանալի ձշմարտութեան, և 'ի կենդանութեան իւրում շնորհեալ է Մեսրովբին Բուդաղեան, և ինքն տաճկացեալ՝ որդնայից լեալ՝ զրկեալ է 'ի կենաց։ Իսկ վերոյիշեալ Մեսրովբն 'ի ժամանակս գաղթման տուեալ էր Կիրակոսին Աւդալեան, և 'ի նմանէ մնացեալ էր առ Տօնօ որդի իւր, որ այժմ բնակի 'ի գիւղն Արխվէլի։ Իսկ յաղագս չգիտելոյ նորա զընթերցումն գրոց, տուեալ է տիրացու Գէորգին Սարգսեան, բնակչի նոյն գեղջ, յորմէ ծագեալ է աստուածընդդէմ աղանդն այն, յոլովակի 'ի կիր առնելով զայն գրքոյկ առ բնակիչս Փամբակու և Շօրագեալու նահանգին »։

յամին 1782ին գրուած չկարէր լինել։ Ուրեմն Սինոդի գործոց շարադրեալ բառը՝ կամ ուրիշ բառի մ'աղաւաղութիւնն է, և կամ հակառակ իմաստով ընդօրինակութիւն հասկնալի է, զոր ըրաւ Զաուրմացի Յովհաննէս քահանայն, յամին 1782 'ի Տարօն գրուած գրչագրէ մի։

Բայց թէ արդեօք այս վերջին գրութիւնս՝ 1782 թուականէն յառաջ գոյութիւն ունէ՞ր, իրմէն աւելի հին բնագրի մի մէջ, թէ ընդ հակառակն այդ ժամանակամիջոցին շարադրեցաւ. այս կէտս իսկ՝ ոչ նուազ խնդրական և ուշադրութեան արժանի է։ Արդ՝ դիտելու ենք, որ գրուածքիս անոճ և աղաւաղ լեզուն, քերականական կանոնաց դէմ գեղծումներ, ռամկօրէն բանից և բացատրութեանց կիրառութիւնք և ուղղագրութեան վրիպակները՝ կը վստահացնեն զմեզ եզրակացնելու, թէ վերոյնշանակեալը՝ 1782 թուէն աւելի հին չկարէ լինել, ըստ ինքեան. և անոր գրիչն ալ հայազգի մէկն էր ստուգիւ։ Այս բանիս ապացոյց է, բաց յայլոց, Դ գլխոյն (էջ 15–19) հետևեալ բացատրութիւնը. « Նախ չարն եղև 'ի կերպ օձի և խօսեցաւ 'ի հայ (1) բարբառ յԵւայ »։ Բայց այս իսկ ստոյգ է, որ նոյն իսկ ԺԳերորդ դարուն այսպիսի շարաբանութեամբ գրուածներ հազուագիւտ չեն։ Այլ թէ « Բանալի ճշմարտութեանն » իցէ՞ արդեօք ԺԳ երորդ դարուն գրուած նախատիպ օրինակէ մի ընդօրինակուած և նորանոր յաւելուածներով առ մեզ հասած. այս մասին գրաւոր ոչ հաստատական ապացոյց ունինք 'ի ձեռին և ոչ այլ բացասական, բաց 'ի այն գրութեան ներքին պարունակութենէն։ Սակայն և այնպէս կան պատմական եղելութիւններ, որ աւելի կը թուին հաստատել զայն՝ քան թէ մերժել։ Ա. Դիտելու ենք, որ Գրիգոր կաթողիկոսի ժամանակ, այսինքն է յամի Տեառն 1136 վերատին բորբոքեցաւ Թոնրակեցւոց աղանդը՝ Միջագետաց Հայոց մէջ, այն է Ամայք և Շպղտան գաւառներում։ Հայոց Թուղկուրան, — որ և Առիւծ կոչուած, — աւանի բարեպաշտ իշխաններէն մին գրեց աղաչանաց թուղթ մ'առ կաթողիկոսն՝ դարման տանել շուտով եկած հասած չարիքին. և կաթողիկոսն ալ իր եղբօր Ն. Շնորհալւոյն յանձնեց այն թղթի շարադրութիւնը։ Արդ՝ շնորհաւորուղիս Ներսիսի այս թղթիս մէջ նորածին Թոնրակեցւոց վերայայտնութեան հետ՝ անոնց հանած մոլորութիւնքն ևս նշանակուած են, որոնք ունին աղերս ինչ « Բանալի

1. Դիտելու է, որ Ադամայ կամ օձին հայ լեզուով խօսելուն և մանաւանդ այն լեզուի հնութեան խնդիրն իսկ՝ վերջին կամ նոր ժամանակներու գիւտ է, և չիք մեր հին կամ միջնադարեան մատենագրաց քով։

ճշմարտութեան » գրուածքին հետ, — նկատմամբ Յեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի մարմնոյն և մահուան, ինչպէս նաև խաչապատին։ Ահաւասիկ Շնորհալւոյ խօսքերն՝ ուղղեալ առ մոլորամիտ քահանայսն. « Լուաք դարձեալ 'ի մոլար քահանայից, զծածկեալ գարշահոտ պղծութիւն անիծելոյն Սմբատայ Թոնդրակեցւոյ վերատին շարժեն 'ի կործանումն լսողացն, ասելով, թէ եկեղեցի ո՛չ շինեալն 'ի մարդկանէ, այլ մեք միայն, և Մաշտոցն գիրք, և որ 'ի նմա կարգեալքն են՝ խաչ օրհնել և եկեղեցի և այլքն՝ ո՛չ են ընդունելիք »։ Ուրիշ տեղ մի. « Պատուական իշխանիդ Առիւծոյդ՝ յորմէ հատու եղաք ունել անիմաստաբար հակառակութիւն առ միմիանս։ Ոմանց 'ի ձէնչ ասել յաղագս չարչարանաց և մահուան Յեսուն մերոյ, թէ Էական բնութիւն Բանին մեռաւ ընդ մարդոյն 'ի խաչին. և այլք՝ ընդդէմ այսոցիկ, թէ Մարդն միայն չարչարեցաւ և մեռաւ »։ Դարձեալ. « Յերկրորդ թղթի ասա՝ որ 'ի ձէնչ (լուաք) զոմանց, որք Եւտիքեան անիծելոյ և զայլոց հնոց հերձուածողաց շինչեալ բոցն վերատին արծարծեն, ասելով զմարմին Յեսուն մերոյ, եթէ ոչ էր 'ի բնութենէ մարդկան, այլ յաստուծոյ քան զլինելութիւն մարդոյն, և նախ քան զյաւիտեանս ընդ Աստուծոյ իւրոյմ »։ Արդ՝ այս և ասոնց նման դեռ ուրիշ անպատեհ առարկութիւններ, զորս Ս. Ներսէս մէջ կը բերէ և կը հերքէ, ոչ միայն կը ցուցնեն մեզ, թէ ՅԺԲ, — գուցէ և ՅԺԳ երորդ դարերուն Թոնրակեցի աղանդաւորներ կային, այլ թէ գրուածներ ևս՝ կը տարածէին ժողովրդեան մէջ. և չարամտութեամբ եկեղեցւոյ խորհուրդներն և արարողութիւնքը մերժելու համար՝ Մաշտոցին կ'ընծայէին անոնց գիւտն, և օտար 'ի հաւատոց կը համարէին։

Նոր Թոնրակեցի կոչուած աղանդաւորաց հաւատապատումն, այսինքն է « Բանալի ճշմարտութեանը », բաղկացած է համառօտագիծ Յառաջաբանէ մի և քսան գլուխներէ, որո՛ք հատուածներ կը ներկայացնեն մեզ, Ապաշխարութենէն սկսեալ՝ այլ և այլ խորհրդոց և հաւատոյ մասանց վրայ։ Այս աղաւաղեալ գրքով մեզի ներկայացուած կեղծուպատիր աղանդը՝ ճիշդ խուսափող ստուերի մի կը նմանի, զոր որչափ կ'ուզենք բռնել և երդուընցնել, այնքան ևս կը խուսէ 'ի ձեռաց. ոչ մի կէտի վերայ կարելի չէ յենուլ իբրև հաստատուն կռուանի, և ըսել, թէ այս այսպէս է. որովհետև այս ինչ տեղ ըրած հակակրօն վարդապետութիւնն՝ ուրիշ տեղ ուղիղ բացատրութեամբ մի կամ կը քօղարկէ, և կամ խպառ կը ջրէ։ Օրինակ իմն, զՔրիստոս՝ Հօր Աստուծոյ որդի, և մեզ ալ տէր և դատաւոր դնելէն յետոյ, անդէն արարած է կ'ըսուի, և ոչ արարիչ. մարդ էր, և ոչ Աս-

տուած։ Ոչ մէկ բան այնպէս որոշ չի ցուցըներ մեզ այն, ինչպէս այն աղանդաւորաց տգէտ, վատ, կեղծաւոր և խաբեբայ բնաւորութիւնը։ Սակայն մենք այն գրուածքին եթէ ոչ ուղիղ՝ այլ գէթ մոլորական կէտերուն վրայ վստահելով, կը համարինք, որ այդ նորակազմ աղանդաւորք, եթէ ունենան ևս ինչ ինչ 'ի հինաւուրց Թոնրակեցւոց, բայց և այնպէս անոնցմէ շատ կէտերու մէջ կը տարբերին. իսկ անոնց հաւատապատումը՝ կազմուած է մասամբ հին խնուսի Մանիհեցւոց և մասամբ ալ ԺԸ դարու կամ Կալվինական կամ Լուտերական և կամ՝ Աւետարանական որոնեցանի մի մոլորութիւններէն։

Արդարև այսպիսի եղելութեան մ'ի հաստատութիւն՝ կրկին փաստեր ունինք 'ի ձեռին. այսինքն են արտաքին և ներքին։ Արդ՝ Էջմիածնի Սինոդի գործերը կ'երաշխաւորեն մեզ, թէ Արխվէլի գիւղի բնակիչ աղանդաւորները՝ խնուսէն եկած գաղթականներ էին, և թէ իրենց գաղթելէն յառաջ իսկ ունէին այն աղանդը. իսկ որովհետև կանխաւ ըսինք, թէ Ժ և ԺԲ դարու խնուսի աղանդաւորքը Մանիհեցիներ էին, քան Թոնրակեցի. ուրեմն հետևութիւնն յայտնի է։ Բ. Ցամին 1838 Երևանի Կոնսիստորի գրածն առ Սինոդն, և Սինոդէն ալ Կովկասու Կառավարչապետին տուած գրաւոր տեղեկութիւնքը (1) կը հաստատեն, թէ «Բանալի ճշմարտութեան» գրչագրին կից էին նաև երկու տպագրուած տետրակներ. այսինքն է Պատմութիւն արաբ ֆառայի, և Կալարամօրպուս, որոնք 'ի Շուշի տպուած էին Կալվինականաց ձեռքով, յամի Տեառն 1829. և ապա բերելով 'ի Շիրակ՝ ձրի բաշխեցին բնակչաց։ Եւ կը յաւելու Սինոդը. «Բայց այժմ Գիւմրոյ մի քանի բնակչաց երևցած հերձուածքը առելի համաձայն է Լուտերական–Աւետարանական եկեղեցւոյ վարդապետութեան հետ, որի քարոզիչները սորանից մի քանի ժամանակ առաջ Շուշուայ մէջ հիմնել էին ուսումնարան և տպարան հայերէն լեզուի»։

Ընդունելով, թէ, — Երևանի Կոնսիստորի և Էջմիածնի Սինոդի վկայածին համաձայն, — Կալվինական և Լուտերական քարոզիչները վերոյիշեալ գրուածոց հետ՝ իրենց ազատ վարդապետութիւնքն իսկ տարածած ըլլան Շիրակայ գիւղօրէից և Աղեքսանդրապոլի Հայոց մէջ, գուցէ առարկուի, թէ ուրեմն Արխվէլի գիւղի աղանդաւորներն և անոնց հաւատապատումը՝ «Բանալի ճշմարտութեան», 'ի Լուտերականաց և 'ի Կալվինականաց ներշնչուած չէ։

1 Տես Փորձ, 1880 N°. X, էջ 106։

Այո՛, այսպէս պիտի կարծէինք, եթէ նոյն իսկ Աղեքսանդրապոլի աղանդաւորաց վարդապետութիւնը՝ Արխվէլցւոց և «Բանալի ճշմարտութեան», — ըստ ամենայնի, — համաձայն չԸԱՐ։ Սակայն մենք աչքէ անցնելով յամին 1837 Երևանի Կոնսիստորի ձեռքով՝ Էջմիածնի Սինոդին մատուցած Աղեքսանդրապոլեցի աղանդաւորաց չորս խոստովանութեան գրերը, կը տեսնենք, որ կատարելապէս կը համաձայնին Արխվէլցւոց «Բանալի ճշմարտութեան» վարդապետածին հետ։ Արդ՝ յիշեալ խոստովանագրոց առաջինը՝ Կարապետ Մկրտչեանին է, երկրորդը՝ Մանուկ Դաւթեանին, երրորդը՝ Աւօս Մարտիրոսեանին, իսկ չորրորդը՝ Գրիգոր Սարուխանեանին։ Զորսին պարունակութիւնն իսկ փոքր 'ի շատէ մի և նոյն ԸՍՊՈՎ, զոր լսած էր Աւօս Մարտիրոսեանը՝ Կաղզուանցի Գրիգորի սենեակը, — մենք կը բաւականանանք երրորդը միայն մէջ բերել ամբողջապէս, — իրին եղելութիւնն ակներև ընելու համար։ 1. «Ցաս պատուիրանքն պահեցէք, որ տուեց Աստուած Մովսէսին։ 2. Քրիստոս՝ չէ Աստուած, այլ Որդի Աստուծոյ և մեղ բարեխօս, նստելով ընդ ամենի Հօր։ 3. Միայն Քրիստոս ճանաչեցէք և Հայր, ծնացեալ ինչքան սուրբ կան և եղեալ են աշխարհիս վերայ, սուտ են։ 4. Չպէտք է ուխտ գնալ Էջմիածին կամ Յերուսաղէմ։ 5. Մեղքն՝ յեկեղեցին առաջի Աստուծոյ խոստովանեցէք միայն։ 6. Մեռոնն Էջմիածնի սուտ է, և մկրտելոյն չէ հարկաւոր, այլ երբ մի բուռն ջուր երեխայից վերայ թափէք՝ կը մկրտուի, զի Քրիստոս ջրով հրամայեց մկրտել։

7. Միշտ եկեղեցի գնացէք, և քահանային խոստովանելու ժամանակն ձեր մեղքն մի՛ ասէք, որ չիմանան. այլ հասարակաբար խօսեցէք։ 8. Միշտ եկեղեցի գնացէք, որ չլինի թէ մեր ազգն իմանայ մեր այս գործը, այլ առ երևս կատարեցէք ամէն ինչ, և այնքան ծածուկ կացէք, որ ժամանակ գտնուիք, և եթէ կարողացուք՝ բոլորը դարձնեմք այս հաւատին վերայ։ Եւ երդուա՛ք, որ թէ մեզ կտոր կտոր առնէին, չէինք պարտ յայտնել։ Կաղզվանցի Գրիգորն ասաց, թէ Ահա ես խաչ, երկու ձեռքիս մոմ կպցրէք և երկրպագութիւն տուէք, թէ ես կարող եմ ձեզ փրկութիւն տալ, այնպէս էլ խաչն և սուրբքն»։

Աղ. Երիցեանն՝ այս և միւս խոստովանագրոց այնքան կարևորութիւն չի տար, որքան «Բանալի ճշմարտութեան» գրութեանը. սակայն ըստ իս, — հետևեալ տեսակէտով, — այս խոստովանագրոց մէջ եղած վարդապետութիւնքն աւելի որոշ են, և հետևաբար ճիշտ, քան «Բանալի ճշմարտութեան» մէջ եղածներն. որովհետև սոքա — մասնաւորապէս առաջինն, այն է

Կարապետ Մկրտչեանինը, — մահուան անկողնոյ մէջ դարձի եկող և զղջացեալ սրտի մի անկեղծ խոստովանութիւն է։ Այս վերջին խոստովանութեան դիրն՝ անով իսկ առաւելութիւն ունի քան զայլս, վասն զի նախ կը յիշատակէ յանուանէ այլ և այլ աղանդաւորս, որոց ոմանք Արխվէլցի, ոմանք Կաղբզուանցի և ոմանք ալ Գիւմրեցի կամ՝ Աղեքսանդրապոլցի էին, և իրարու հետ գաղտանի ընկերութիւն մի կազմած էին։ Արդ՝ այս բանս յայտնի ապացոյց է, թէ չկար տարբերութիւն Արխվէլցի և Աղեքսանդրապոլցի աղանդաւորաց մէջ, որոնք Շուշու Կալվինականներէն իբր թէ ներշնչուած ըլլան։ Բ. Մնոր մէջ գրէթէ իրենց բնական վիճակով և տգեղութեամբը մերկացուած են այն մոլորութիւններն, որոց վերայ « Բանալի ճշմարտութիւնն » ստուեր մի ձգած է, իբրև զվերարկու։ Մաս մի միայն գնենք հօս Մկրտչեանի խոստովանագրէն, որով ոչ միայն « Բանալի ճշմարտութեան » վարդապետութիւններուն հետ ունեցած նմանութիւնն յայտնի պիտի ըլլայ, այլ նոյն իսկ վերջնոյս անջատուած տեղերն և հանդուցաւոր ասացուածները պիտի պարզուին և ամբողջանան։ « Արխվէլցի տիրացու Գէորգի քարոզելով, — կ'ըսէ նա, — Գիւմրցի Կիրակոս Քօսաբաբայեանը մոռացել էր սուրբ հաւատը, և ինձ Կարապետիս՝ այն Կիրակոսը քարոզեց, թէ Քրիստոս՝ Աստուած չէ։ Այս Կիրակոսի քարոզելով Թարգի Սարգիսն իւր տամբ, Դիլբանդ Մանուշկն, Կաղբզվանցի Գրիգորն իւր գերդաստանեաք, Երկար Ցակոբն, Կաղբզվանցի Աշօն և ես ժողովելով Կաղբզվանցի Գրիգորի սենեակն՝ երդուանք 'ի միասին, որ մեր խորհուրդն ամենեին չյայտնեմք ումեք։ Մանաւանդ նոքա ինձ հաւատացրին, թէ, Ա. Քրիստոս Աստուած չէ։ Բ. Խաչին ինձ հայհոյել տուին՝ թէ ոչինչ է. — Գ. Նաև Հայոց մկրտութիւնն և մեռոնը սուտ է. — Դ. Թէ կրկին պարտիմք մկրտիլ, որ մեր ճակատիցն գազանի մոռհրն վեր գայ. — Ե. Ոչ դատանին Աստուածածին կոյս, այլ ապականեալ. — Զ. Ոչ ընդունին զբարեխօսութիւն նորա, այլ և ինչքան սուրբ կայ չընդունին և ոչ նոցա բարեխօսութիւնը։ Է. Ոչ ընդունին զպատարագ և ոչ զՀաղորդութիւն, և ոչ զխոստովանութիւն. այլ ասեն. Քարի, փայտի խոստովանիր և Աստուած թողու. նաև ով կամի հաղորդիլ՝ նշխարն ուտեն և գինին վրէն խմեն։ Իսկ պատարագի հաղորդութիւնը ոչ ընդունի՝. ասեն, թէ աշխարհիս վրայ ճշմարիտ քրիստոնեայն միայն մենք ենք, իսկ Հայք, Ռուսք, Վրացիք և այլք սուտ քրիստոնեայ են, կռապաշտ են։ Ը. Երեսն խաչ չեմք հանիլ. — Թ. Ծնրադրութիւն սուտ է։ Ժ. Զպահս ուտեն. — ԺԱ. Զկանոնադրութիւնս սրբոց հայրապետաց չընդունին. ասեն. ժո-

զոնն հայրապետաց սուտ է, սատանայի խորհրդով կանոնք են դրեալ »։

Իսկ չորրորդ խոստովանութեան գրի հետևեալ կէտը միայն մէջ կը բերեմ, — ըստ բանից Ազ. Երիցեանի. — « Գիւմրցի Սարգիս Յարութիւնեան աւելացնում է, թէ Արխվալցի տիրացու Գէորգը, որի մօտ կայ մի ձեռագիր Բանալի ճշմարտութեան, որի մէջ բոլորը գրած, ասում է եղել, թէ բոլոր քրիստոնեայք սուտ են՝ բաց 'ի Նեմեցիները, որ ուղիղ քրիստոնեայ են »։

Արդ՝ այս վկայութենէս իսկ ակներև կը տեսնուի նախ, թէ բոլոր վերոյիշեալ աղանդաւորաց վարդապետութիւնքը գրուած էին նոյնպէս « Բանալի ճշմարտութեան » կոչուած գրքուկին մէջ. մանաւանդ թէ անկէց առնուած էին։ Բ. Թէ Նեմեցիները, այսինքն է կամ Լուտերականք և կամ Կալուինականք՝ ժամանակաւ անոր մէջ մատն ունեցած են։ Սակայն պէտք է ըսել և այս, թէ Էջմիածնի Սինոդին մեզի ընծայած « Բանալի ճշմարտութեանն » այժմ ամբողջապէս նոյնը չէ, ինչ որ այն աղանդաւորներն 'ի կիր արկանէին. այլ կամ մասամբ անոր վրայէն եղած ընդօրինակութիւն մ'է, զոր իրենց հարցաքննողաց բբռնութենէն ազատելու համար ներկայացուցին ա՛ռնց, խաբելով զանոնք, թէ իրենց ունեցածն այն էր միայն. և կամ եթէ իրենց ունեցածն էր, յառաջագոյն խմանալով ըլլալիքը՝ մէջէն յապաւեցին այն ծանրագոյն մոլորութիւնները, որք կարող էին զիրենք ծանր պատժոց ենթարկել։ Բայց հանդերձ այսու կանկէտեր, որ Մկրտչեանի խոստովանութեան գրի մէջ եղածներուն քաջ կը համաձայնին։ Օրինակի աղագաւ, Ի. գլխուն մէջ, յէջ 80, Քրիստոս արարած համարուած է և ոչ արարիչ. և յէջ 104 որոշակի կ'ըսուի, — աղօթելով առ Աստուած, — « Արդ գթալովդ քոյ Աստուածութիւնդ արարեր զնոր մարդն Յիսուս », որ կը համապատասխանէ Մկրտչեանի խոստովանութեան Ա. նախադասութեանը։ Ժ. գլխուն մէջ, յէջ 55, — Մկրտչեանի Բ. նախադասութեան համաձայն, — կը մեղադրէ զխաչապաշտ ուղղափառս՝ իբրև կռապաշտս, ըսելով. « Հետևող հօրն ձերոյ չարի (սատանայի) զարծաթ և զոսկի 'ի ձև պատկերի (այսինքն է խաչելութեան) առնել և երկիրպագանել։ Մի և նոյն իմում կը մերժուի խորհուրդն խոստովանութեան և թողութիւն մեղաց պաշտօնէի ձեռքով, — Մկրտչեանի Է. երրորդ նախադասութեան համաձայն, — ըսելով. « Ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ մի Աստուած։ Բ և Գ. գլուխներուն մէջ, թէև կ'առաջարկէ 30 ամեայ մկրտել, բայց անոր բուն նպատակն է Մկրտութեան խորհուրդն

եղծանել կամ Մանէսի մոքով ընդունել, — Մկրտչեանի Գ. նախադասութեան համաձայն. — վասն զի մկրտուած երեխաները « չար և որդի սատանայի », կանուանէ, և անոնց կնքահայրն ալ՝ « աւանակ » ։ Ի. գլխում, յէջն 122, — Մկրտչեանի Ե. նախադասութեան համաձայն, — կը ժխտուի Տիրամօր Աստուածամայրութիւնն և կուսութիւնն՝ յետ ծննդեան, ըսելով. « Աւետարանիչք, և սրբազան Առաքեալք և Տէրն մեր Յիսուս Քրիստոս նախ քան զծնունդն Մարիամու՝ կոյս ասեն, և յետ ծնընդեան կին կոչեն, և զկուսութիւն նորա 'ի բաց բառնան » ։ Ի. գլխուն մէջ, — յէջն 80, — կը մերժուի սրբոց բարեխօսութիւնն, այսպէս. « Հաւատայք դուք զբարեխօսութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և ոչ այլոց ». որ կը համաձայնի Մկրտչեանի Զ. երրորդ նախադասութեանը ։ Ա. գլխուն մէջ, յէջ 5–9, և մասնաւորապէս Թ գլխում, յէջն 27–29, մերժուած է, — Մկրտչեանի ԺԱ. երրորդ նախադասութեան համաձայն, — սուրբ Հայրապետաց և ժողովոց օրէնսդրութեան վաւերականութիւնն, ըսելով. « Զարն եղև 'ի կերպ եպիսկոպոսաց և կաթողիկոսաց... զի նոքա եւն տնօրինողք սուտ օրինաց, և ևս են ագահ և սուտ իրաց հաւնձարողք » ։ Պահոց վարդապետութիւնը, — որ Ե գլխուն մէջ կը գտնուի, յէջ 19–22, — եղծեալ և թերի է. ուսկից նպաստաւոր կամ անհպաստ բան չերևիր. սակայն ինձ կ'երևի, թէ հայրապետաց օրէնսդրութեան հետ, — զոր տեսանք Թ գլխում, — պահքն և ծնրադրութիւնն իսկ Մկրտչեանի Թ. և Ժ. նախադասութեանց համաձայն մերժուած են ։

Արդ՝ այս բաղդատութենէս ամենաորոշ կերպով կը տեսնուի խոստովանութեան գրոց և « Բանալի ճշմարտութեան » մէջ պարունակուած վարդապետութեանց նոյնութիւնը. ուրեմն այժմ մեզ ուրիշ բան չի մնար, բայց եթէ ներքին փաստերով ապացուցանել, թէ « Բանալի ճշմարտութեան » վարդապետութեան մի մասը՝ Մանիքեցւոցմէ փոխ առնուած է, և միւսն ալ 'ի Կալվինականաց և 'ի Լուտերականաց. և հետևաբար, թէ վերոյիշեալ աղանդաւորներն ընդհանուր առմամբ Թոնրակեան չէին, այլ նորակրօն Մանիքեցիներ, կամ լաւ ևս Մանիքէա–Կալուինական կամ Լուտերականներ, զորս Մասոն ևս անուանելու իրաւունք ունինք, ինչպէս իրենք ալ ձկտում մ'ունէին առ այն ։ Այս բանս կ'երևի Աւօս Մարտիրոսեանի խոստովանագրոց գրծուած տողերէն, որոնք կը յայտնեն մեզ անոնց նպատակակէտը ։

Ա. Մենք նախնաբար տեսանք, որ Թոնրակեանք կը ժխտէին բացէ 'ի բաց բոլոր եկեղեցւոյ խորհուրդներն. իսկ Մանիքեցիք՝ դէթ ըստ արարողական մասին, կամ արտաքին ձևով ոչ միայն

ընդունած, այլ նոյն իսկ կը կատարէին զայնս։ Արդ՝ մենք կը տեսնենք «Բանալի ճշմարտութեան» մէջ, — ի. գլ. էջ 134, — որ իբրև Քրիստոսի պատուէր, — 'ի մէջ այլոց, — ընդունուած և հարկաւոր (1) համարուած են առ փրկութիւն «Աստուածարոյ, Մկրտութիւնն և Հաղորդութիւնն սուրբ»։

Բ. Թոնրակեանք՝ ոչ միայն չէին ճանչնար զՏէրն մեր Յիսուս Քրիստոս իբրև Աստուած, այլ և ոչ իսկ Տէր և միջնորդ. իսկ Մանիքեցիք, — ըստ 24երորդ և 3րորդ նախադասութեանց, — կը ճանչնային զհոգին Յիսուսի կամ զՔանն՝ իբրև մնան Աստուծոյ, և զնախամարդն Յիսուս իբրև պատերազմող ընդդէմ խաւարին և միջնորդ բարութեան։ Արդ՝ «Բանալի ճշմարտութեանն՝» համաձայն վերջնոցս կ'ընդունի, — ի. գլ. էջ 80, 103–4, և 125, — զէթ իբրև մարդ զՅիսուս՝ միջնորդ, բարեխօս և Տէր մարդկութեան։

Գ. Թոնրակեանք ոչ միայն կը մերժէին Երրորդութեան գոյութիւնն, այլ նոյն իսկ գերարուն էակին Աստուծոյ և աստուածպաշտութեան գաղափարն ևս խպտա բարձած էին 'ի միջոյ, — բանիւ և գործով. — իսկ Մանիքեցիք, ընդհակառակն, կը հաւատային Աստուծոյ իբրև բարւոյ արարչի, և կ'ընդունէին երիս անձինս, թէպէտ և իրարմէ մեծ և փոքր և իրարու ստորակարգեալ։ Արդ՝ «Բանալի ճշմարտութեան» գրութեան մէջ, — ի գլ. 80, 84–103 էջերում, — երկու մասունքն ևս ընդունուած են՝ գեռ աւելի որոշ կերպով (2)։

Դ. Ըստ եցաւ, թէ Թոնրակեանք կ'ուրանային զհանդերձեալ կեանս և զպատիժ մեղաց. իսկ Մանիքեցիք, ընդհակառակն, երկուքն ալ կ'ընդունէին, — գէթ ըստ պահանջելոյ բնական օրինաց և վախճանի արարչագործութեան։ Այսպէս նաև «Բանալի ճշմարտութեան» մէջ, — ի. գլ. էջ 134, — նախ ընդունուած է մեղաց վարդապետութիւնն այսպէս. «Հց. Ապա որոնց է արժան մկրտութիւն և Հաղորդութիւն։ Պ. Նոցա, որք ուղիղ զմեղս սկզբնական և ներգործական»։ Իսկ նոյն գլխուն մէջ, յէջ 144 կ'ըսուի վասն դատաստանի. «Դատաստան Աստուծոյ վասն մեռելոց և կենդանեաց մի է». և ԺԷ. գլխում, յէջ 65 վասն արքայութեան. «Որք ոչ ունիցին զհաւատս... ոչ կարեն մտանել յարքայութիւն Աստուծոյ։ Այս իսկ դիտելու ենք, որ

1. Այս դատանութեանս մէջ, — դիտելու ենք, — Մանիքեցւոցմէ աւելի Լուտերականաց ազդեցութիւնն զգալի է, առ այս ընդունուած են այս խորհուրդք։

2 Չի կ'ըսուի այսպէս վասն Աստուծոյ. «Խոստովանիմք և հաւատամք զԱստուած մի ճշմարիտ գոլ։ Իսկ Երրորդութեան համար. «Երկրպագեմ զՀայրն՝ Աստուած, և զՈրդին՝ զմիջնորդ և բարեխօս, և զսուրբ Հոգին՝ բաշխող շնորհաց»։

այս գրութեանս մէջ ընդհանուր կերպով, — բայց մասնաւորապէս Ժէ. գլխուն մէջ, յէջ 68, — ոչ միայն Թոնրակեանց անբարոյականութիւնն և մեղանչական գործերը խստիւ արգիլուած են, այլ նոյն իսկ Հաւատոյ, Յուսոյ և Սիրոյ հետ՝ միւս առաքինութիւններն ևս պատուիրուած են, զոր Մանի իսկ կարևոր կը համարէր, լուսաւոր մասը խաւարի իշխանութենէն, կամ նիւթէն, ազատելու համար։

Այժմ մատնանիշ ընենք այն կէտերը՝ զորս 'ի Մանիքեցւոց առած չեն կարող լինել, այլ 'ի Լուտերականաց կամ 'ի Կալվինականաց, զի այնպիսի պարագայից և ձկտմանց կից են, որոնք Մանիքեցւոց ժամանակ չկային։

Ա. Մնոնց զսուրբ կոյսն Մարիամ, — յետ ծնանելոյն զՅիսուս, — իբրև սոսկական կին մի, և ոչ ևս կոյս անուանելն։ Բ. Սուրբ Աստուածածնի և այլ սրբոց բարեխօսութիւնը մերժելն։ Գ. Զխորհուրդս Եկեղեցւոյ, այսինքն է Դրոշմ, կարգ քահանայութեան, վերջին Օծումն կամ իւղն հիւանդաց և Պատկն, իբրև անպէտ և աւելորդ մերժելը։ Դ. Եկեղեցիէն օրինադրուած պահքն և այլ ապաշխարանս չընդունելն։ Ե. Առաջնորդին և երիցանց ընտրութիւնն և կարծեցեալ Ձեռնադրութիւնն, որ բոլորովին աշխարհական է, և իշխանաց և ժողովրդեան ձեռքը տրուած է։ Զ. Բառնալն 'ի քահանայից, կամ պաշտօնէէն Աստուծոյ, զիշխանութիւն՝ թողլոյ զմեղս։ Է. Խորութիւն չդնելը Սարկաւագի, Քահանայի, Եպիսկոպոսի և այլ հոգևոր աստիճանաց մէջ, այլ հարթ հաւասար համարել զանոնք։ Ը. Զընդունելն Եկեղեցւոյ անսխալականութեան վարդապետութիւնն և անոր գլխոյն գերիշխանութիւնը։ Թ. Առ ոչինչ համարելն սուրբ ժողովոց և սրբոց Հարց օրէնսդրութիւններն և միաձայն վկայութիւնքը։ Ժ. Բոլոր ուղղափառ եկեղեցւոյ պատերն, այսինքն է « պապը, կաթողիկոսն և առաջնորդս » ընդ « դերաքրիստոսի » դասելն, և այլ նման կէտեր։

« Բանալի ճշմարտութեան » հեղինակը կը ծանուցանէ, իր Յառաջաբանին մէջ, թէ այն գրութիւնը շարադրելու շարժառիթներէն մին ալ էր « աղաչանք բազմաց հաշտարարելոց », այսինքն է աղանդակցաց։ Իսկ վերջաբանին մէջ, — որ դժբաղդաբար թերատ է, — անոնցմէ ոմանց անուանքն ևս յիշատակած էր, ըսելով. « Ամենապայծառ Յովհաննէսին վահագուռնոյն... Քանզի սրբա մեծաւ ջերմեռանդութեամբ խնդրեցին 'ի մէնջ »։

Արդ՝ այս կրկին տեղեացմէ, — թէպէտև պակասաւոր, — կը տեսնուի, թէ այն գրութեան ժամանակամիջոցին, այն է 1782, մանաւանդ թէ յառաջ իսկ եղած ըլլան, — Խնուսայ, Բուլանըխի

և Մանազկերտի գաւառներուն մէջ, — բազմաթիւ հայ ազան-
դաւորներ, որք մահմէտականացած Մանիքեցիներ դարձած էին։
Ցիրաւի, այսպիսի տխուր եղելութեան շատ մանրամասնութիւն-
ներ կ'աւանդէ մեզ մեր Ուխտակից Հ. Պօղոս Վ. Մէհէրեանն՝
իր կենսագրական պատմուռքեան (1) մէջ։ Նա կը պատմէ, — յէջ
120, թէ 'ի Բերիոյ 'ի կարին ճանապարհորդած ժամանակ, —
յամին 1773, — քրդաբնակ գիւղի մի մէջ հանդիպեցաւ Հայե-
րու, որոնք ուրացեալ էին իրենց սուրբ հաւատքն, և « ազանդա-
ւորք էին իբրև զԹոնրակեցիս, կամ Կէսկէս էին, և կամ Ա-
բեւորդիք »։ Սոքա առանձին խումբեր կազմած, աւազակութիւն-
ներ ալ կ'ընէին, ինչպէս իրեն ինկեանած գիւղն իսկ այն գիշերը
50 ձիաւորաք պաշարեցին և հարստահարեցին։ Եւ Հ. Պօղոսի
Քիւրդ ընկերակցին ըսածին նայելով, նոքա ոխերիմ թշնամի
էին միայն Քրդաց. « Քանզի նոքա ոչ միայն զփոքս մեր առնէին
և զերիվարս, այլ և սպանանէին զմեզ, զի թշնամիք մեր են.
բայց դու հայ լինելով ոչ ինչ առնէիս կենաց քոց »։ Խէվակ
գիւղին մէջ 200 թուրքացած հայ ընտանիքներ կը յիշէ։

Իսկ գալով Յովհաննէս անուան, որուն խնդրանքաք գրուած
է « Բանալի ճշմարտութեան », դարձեալ նոյն Հ. Պօղոս Մէհէ-
բեանի պատմուռքեան մէջ կ'աւանդուին երկու միջադէպք, որոնց-
մով փոքր 'ի շատէ կը պարզուի վերջին ժամանակի Թոնրակեց-
ւոց պատմութեան սկզբնաւորութիւնն։ Հեղինակս կը պատմէ
նախ, թէ Բոռձիմատուրի վանաց մէջ Յովհաննէս անուամբ
առաջնորդ մի կար, որ ստութեամբ եպիսկոպոս ձեռնադրելով 14
քահանաներ ձեռնադրած էր, և կարնոյ կողմերը մեծ շփոթու-
թիւն հանած. որ յետոյ հալածուելով 'ի Հայոց՝ փախաւ 'ի կող-
մանս Մանազկերտի, և կը շրջէր 'ի գիւղօրէս։

Բ. կը պատմէ, թէ Զաքարիա Պատրիարքին և կաթողիկեայ
Հայոց դէմ յարուցած հալածանքի ժամանակ, — այն է յամի
Ցեառն 1774–1781, — Մշոյ կողմերէն 'ի Կ. Պոլիս եկող նո-
բադարձ հայազգի մէկն, որ Յովհաննէս կ'անուանէր, երկիցս
ուրացաւ զքրիստոնէութիւնն. նա ինքն կրօնական անլուր մոլ-
ութեանց հետ՝ քաղաքական ծանր յանցանք ևս գործելով, ութ
ամիս արգելանաց և թիւավարութեան դատապարտեցաւ։ Բայց
յետոյ Պատրիարքին ձեռքով ազատուելով, գնաց 'ի կողմանս
Խնուսայ, ուր ապա նորահնար ազանդ մի հնարելով, սկսաւ թը-
նուսի և շրջակայ գիւղօրէից և գաւառաց բնակիչները խոտո-

1. Այս անտիպ գրութիւնս, որ այժմ կը գտնուի մեր Ձեռագրատան մէջ, շատ
և շատ հետաքրքրական և կարևոր նիւթեր կը պարունակէ ժամանակակից պատ-
մութեան և Հայոց յանժամու կացութեան վերայ։

բեցնել 'ի քրիստոնէական սուրբ հաւատոց. որուն համար կըրկին անգամ՝ շղթայակապ եղած 'ի Հայոց ղրկուեցաւ Յէրմիածին։

Սակայն հօս կարևոր կը համարիմ, բոլոր իր մանր պարագաներովը մէջ բերել Մէհէրեանի մեզ աւանդած յիշատակարանը, որ պատմելով յիշեալ Յովհաննէսի Մուշէն 'ի Կ. Պոլիս գալն, — անտի 'ի Վենետիկ 'ի վանս երթալն, — և քիչ օրէն իբրև դիւամոլ և մոլորամիտ վռնտուիլն 'ի Կ. Պոլիս, — Բէյօղլիի մէջ ուղղափառ աղջկայ մի հետ ամուսնանալն, — այլազգութեան դառնալն, — անուանափոխ ըլլալն և գործած չարութիւնքն Հայ կաթողիկեայց դէմ, և այլն, — կ'ըսէ. « Իսկ թէ չար և անօրէն պտղող Ապտուլլան յետ այսորիկ զիւաւոր աղանդաւոր եղև, և զամենայն հաւատս և զաղանդս և զնաւապս արհամարհէր, պատմեցից ճշմարտապէս...։ Մինչ քրիստոնեայն էր Ապտուլլան՝ ամուսնացաւ ուղղափառապէս. և յորժամ ուրացաւ ևս՝ գնայր առ կին իւր 'ի Բէյօղլի յամենայն աւուր։ Բայց եթող զկին իւր և չոգաւ 'ի Կարին և անտի 'ի Մուշ առ բդեաշխն Մշոյ, և ասաց ցնա. Գիտասջիր զի ես Հայ էի և թուրքացայ. բայց այժմ կամիմ Հայ լինել։ Եւ բարկացեալ բդեշխին՝ առաքեաց առ մօղայս իւր, զի ուսուցեն նմա զտաճկութիւն։ Եւ յետ երկուց աւուրց մօղայք ծանուցին բդեշխին, թէ նա ուսուցանէ մեզ զտաճկութիւն, զոր մեք ոչ գիտեմք։ Եթող զՄուշ և եկն 'ի խնուշ, և ծանոյց դատաւորին թէ ես կամիմ Հայ լինել. իսկ դատաւորն խնուսայ հրամայեաց նմա, թէ երթ լեր Հայ։ Եւ նա չոքաւ 'ի գիւղն Մարուխ և ամուսնացաւ։ Յետ ամուսնանալոյն չոգաւ առ դատաւորն գաւառին, և ասէ ցնա. Կամիմ քահանայ ձեռնադրիլ, բայց ոչ ձեռնադրեն, թէ թուրքացեալ ես։ Իսկ դատաւորն առաքեաց զսպասաւորս իւր 'ի Կոբայ վանս, որ է 'ի Բուշանուխ՝ կից ընդ Մանազկերտ գաւառին, ուր էր եպիսկոպոս մի, զոր բռնութեամբ բերին 'ի խնուս 'ի գիւղն Մարուխ, և եռուն զուրացողն ձեռնադրել քահանայ։ Յետ այսորիկ սկսաւ աղանդ չար սերմանել 'ի գիւղն Մարուխ և յայլ գաւառս, զոր Հայք ծանուցին Ղուկաս կաթողիկոսին, որ և կալաւ զչարաճճիկն, և տարեալ Յէրմիածին, եդին 'ի բանտի, ուր եկաց մեաց ժամանակ ինչ. ապա զքուրձ իւր հատեալ՝ փոկ արար իբրև զպարան, և նոմաւ էջ 'ի պարսպէն, փախեաւ 'ի գիշերի միոջ։ Եւ 'ի յանցանելն զլեառն ինչ, շունք հովուաց դիմեցին 'ի վերայ նորա. իսկ հովիւք՝ համարելով, թէ գող իցէ, կալան զնա, և տեսին զի չէր գող. և իմացան, թէ փախուցեալ է. սորին վասն կալան զնա։ Իսկ ընդ լուսանալն եկին խնդրակք կաթողիկոսին, կալան կապեցին 'ի վերայ դրաս-

տուն՝ տանէին յէջմիածին։ Իսկ ուրացեալն աղաչէր զնոսա արձակել, զի 'ի պէտս նստցի։ Եւ 'ի յարձակէն նոցա փախեաւ 'ի մէջ թփոց եղեգանց և մացառախիտ լերանց, և եկն վերըստին 'ի խնուս 'ի գիւղն Մարուխ, և սկսաւ տարաճել զքիւն իւր։ Բայց մինչ դաւառապետ պաշտպան իւր աքսորեցաւ 'ի խընուսայ 'ի Կարին, և ինքն չարաճճին երկեաւ մնալ 'ի խնուս, առեալ զկին իւր և զորդիս չոքաւ 'ի Կարին. բայց Հայք ոչ ընդունեցին զնա և ոչ յեկեղեցիս իւրեանց թողին մտանել։ Այլ սակայն մինչ գլխատեցին զպաշտպան իւր դաւառապետ՝ խնուսայ, յայնժամ մահմէտականք կալան զնա, յամին 1801, և ասեն ցնա, թէ Թուրք ես դու և թուրքացեալ. և զիա՞րդ Տէրտէր եղեր։ Պատասխանի ետ նոցա, թէ զի՞ բռնադատէք զիս, վերըստին թուրքանամ և թուրքացուցանեմ զորդիս իմ. և եղև զորդ ասաց որդին կորստեան։ Բայց կինն ոչ թուրքացաւ, այլ բաժանեցաւ 'ի նմանէ, և գնաց ընդ հօր իւրում 'ի խնուս»։

Արդ այս յիշատակարանովս՝ խնդիրը բոլորովին պարզուած համարելու է, և այլ ևս չենք տարակուսիր եզրակացնել, թէ ստուգիւ «Բանալի ճշմարտութեան» գրութեան հեղինակն՝ այս չքահանայ Յովհաննէսն եղած է, զոր Սինոդի գործերէն մին քահանայ կ'անուանէ զնա և տաճկացեալ։ Ժամանակն և բոլոր միւս պարագայք իսկ զայս կը հաստատեն։ Բայց թէ այն գրքոյկը գրել տուող «ամենապայծառ Յովհաննէս վահագունին» արդեօք նախայիշեալ ստանուն եպիսկոպոսն է, թէ ընդհակառակն խնուսի դատաւորը, այս կէտերս ստակաւին մութ են մեզ համար, թէպէտև վերջինն աւելի հաւանական կ'երևի, ենթադրելով որ զՅովհաննէս–Ապտուլլահը ձեռնադրել տուողն և խրախուսողը, թուրքացած հայ–Մանիքեցի մի պէտք է որ եղած ըլլար. ապա թէ ոչ տաճիկ մի չէր կրնար դիւրաւ հրաման տալ տաճկացած Ապտուլլահին, որ վերստին հայանայ։ Երկրորդ անոր ամբաստանուին և մահուան դատապարտին իսկ՝ Ապտուլլահի և Հայոց մէջ ծագած մեծ չփոթութեան մի պատճառաւ թերևս եղած ըլլայ, զոր Հայք ամբաստանած էին իբրև յանցաւոր յօրէնս Տաճկաց։ Նախընթացին հետ՝ այս վերջին կէտերուս մասին իսկ ընելիք նորանոր յայտնութիւնները՝ կը թողունք Էջմիածնի ուսումնատենչ միաբաններուն, մանաւանդ թէ կը սպասենք անհամբեր. զի ունին ամենահարուստ դիւան մի նաև այս ժամանակի անցից և պատմութեան։

Այստեղ ստիպուած ենք, վերջացնել Մանիքէա–Պաւղիկեան Թոնրակեցւոց աղանդի ուսումնասիրութիւնը, թողլով ուրիշներուն այն բազմաստեան բազմակնճիռ հարցը, թէ ի՞նչպէս տա-

բածուեցաւ այս աղանդս յԱրևելից (¹) յԱրևմուտս, — կամ ընդհակառակն, — և ծագումն տուաւ Կաբարացւոց, Բուլղար աղանդաւորաց, Բոգոմիլներուն և Ալբիգացւոց. և դարձնել ընթերցասիրաց ուշադրութիւնն ուղղակի Գր. Նարեկացւոյ թղթին վրայ, զոր կ'ընծայենք 'ի վայելս ուսումնասիրաց։

1. Ոմանք արդի Եւրոպացի մատենագրաց Ջանացին պաշտպանել, ընդհակառակն, թէ ոչ եթէ Արևելքէն՝ յԱրևմուտս, այլ Արևմուտքէն, — այսինքն է հարաւային Գաղղիայէն Ալբիժուաներ տարածեցին Ներբենց աղանդը Բուլգարաց, Դաղմատիոյ և ուրիշ արևելեան երկիրներու մէջ։ Սակայն դիտելու ենք, որ նախ բառս Bougre, — որ Bulgare, անուան կրճատումն է, — Ալբիժուաներուն մէջ պահուած է, որ զհակառակն ենթադրել կու տայ։ Երկրորդ, Բուլգար աղանդաւորաց հնութիւնը մինչև ԺԱ. դարը կը հասնի, մինչդեռ Ալբիժուաներունը համեմատաբար նոր է։ Մելդաց մեծանուն եպիսկոպոսը՝ Բոսիէ, Յայտնուրեան Մեկնութեանը մէջ, — Ի. 7, — առաջին կարծեաց աւելի նպաստաւոր կ'երևի, յասելն. « Pour mieux porter le caractère de *Gog*, ils (Մանիքեցիք ԺԱ. դարու) étaient originaires de la *Gogarenne*, province d'Arménie, où ils s'étaient cantonnés ; et *ils venaient des Bulgares*, nation scythique, dont on sait que *Magog* a été la source ».

ԹՈՒՂԹ[1]

« Ամենաշնորհ վարդապետին Գրիգորի Նարեկացւոյ, զոր գրեաց 'ի հոյակապ Ուխտն Կճաւայ[2], վասն կարծեացն ասիծելոց Թոնրակեանց Յանէսի եւ Յամրէսի, որ եկն զգեստիւ ոչխարաց, եւ 'ի ներքոյ գայլ յափշտակող, որ եւ 'ի պտղոյ ծանուցաւ ամենից, զոր սուրբ վարդապետին լուեալ, գրեաց սակս ազատութեան[3] 'ի չար կարծեացն »։

1. Որ կը գտնուի « Թղթոց Գրքին » մէջ. ուսկից ապա գաղափարեց բարեյիշատակ Հ. Բառենաբաս Վ. մեր Եսայեան, յամին 1851 Հռոմ եղած ժամանակ, և բերաւ 'ի վանս։ Իսկ բնագիրն « Թղթոց Գրքին », — որ այն ժամանակ Անտոնեան Հարց Մատենադարանին մէջ կը գտնուէր և այժմ չգիտեմ ուր, — գրուած է 'ի Հռոմկլայ, 'ի Թուին Հայոց ՉԽԸ, — այսինքն է Հռոմկլայի առնուելէն քիչ ետքը, — Հռոմկլացի Թովմաս քահանայի ձեռքով. որուն նշանաւոր Ցիշատակագիրը կը գտնուի մատենին վերջ, բայց 'ի վերջոյ թերի։ Հոն կը պատմէ յիշատակագիրն՝ Հռոմկլայի պաշարումն, առումն և Հայոց քաջաց կոտորածը։ Ձեռագիրն է բոլորգիր՝ բամբակեայ թղթի վրայ գրուած։

Նախկին օրինակն կամ բնագիր գրչագրին Թովմայի՝ եղած էր Գրիգորիսի վկայասիրինն, և կը հասնէր ցէջն 175, ուր կայ և Հայրապետիս Ցիշատակագիրն այսպէս. Զվահրամ որդի Գրիգորոյ Մագիստրոսի յիշեսջիք յաղաւթս ձեր, ով երջանիկ դասք ուղղափառաց խմբիցդ ասքանազեան սեռի. Շիլ. թուականիս »։

2. Տասներորդ դարուն մէջ հոյակապ հռչակուած այս վանքիս անունը՝ գրէթէ ազգային մատենագիրք առ հասարակ 'ի մոռացութեան թողած են, — չգիտեմ ինչպէս։ Հռիփսիմեանց Պատմութեան հեղինակը միայն կը յիշէ զայն, իր հնագոյն արարուածովն ի միասին, այսպէս. « Եւ անտի փոխին, և գնացեալ 'ի գաւառն Մոկաց, Սուրբ-Խաչ կոչեցեալ տեղի, որ և մեծ աքանչելիս կատարեաց Աստուած 'ի ձեռն նոցա պատուական խաչիւն Եսայեայ և Դանիելի, որում ես և դու հասու, և մեզ երկրորդել զի։ Կճաւն կոչեցեալ տեղի՝ դիւաց լցեալ պաշտամամբ, հասեալ անդ առաքելանման քահանայիցն և սրբոց կուսանացն, զընդդիմամարտն արգելուին զձիոցն. յորում զայրագնեալ դիւացն՝ դիմեալ 'ի վերայ խեղէին, ծռէին, պնչատէին զպաշտօնեայս իւրեանց... վասն որոյ և տեղին կոչեցաւ Կճաւ, որ և յետոյ զտեղին հաստատէ վանս սուրբն Գրիգոր »։ Երզնկացին ևս մէջ կը բերէ այս տեղիս (Տես 'ի Տօնապատմառն, 981) առանց նորութեան, ըսելով. « Վասն որոյ տեղին կոչի Կճաւ (իբր) թէ 'ի յայսմ տեղւոջ Կճատեին դևքն զմարդիկ »։ Թէ Երզնկացին և թէ իր նախորդն ուղած են Կճաւ անունը կծել և կամ կճատել բայէն յառաջ բերել, բայց 'ի զուր. զի կճատել բայն իսկ բացառութիւն կը լազմէ մեր լեզուի և բառարաններու մէջ։ Ուստի կամ կրճատ ուղղագրելու է Կճաւն, և կամ՝ կրճատել բայէն ծագած ըլլալու է։ Եւ իրօք Հռիփսիմեանց Պատմութեան, Էջմիածնի Օրինակին մէջ « Կրճատ » գրուած է, այսպէս. « Սապէս և 'ի Կրճատն կոչեցեալ տեղի դիւաց »։ Այս վանքս կը գտնուէր Մոկաց գաւառին մէջ, և անշուշտ իր հնութեան համար համբաւաւոր կը համարուի ատ։

3. Դիտելու ենք, որ յամի Տեառն 987 ժամանակամիջոցը կը յիշեցնէ մեզ,

« Տէր Հայր[1], զոր գրեմն, իբր չհաւատալի համբաւ՝ չար տե-
» ղեկութեամբ, զի թէպէտև յորոց լուանն հաւատարիմ կարծէին,
» և չէր ինչ խէթ կարծեաց քինիւ՝ ոչ այլ ինն ունի կերպարան
» հակաճառութեան. քանզի լուայ, թէ յանյիշելի ամենազաղիր
» մծղնէութիւն աղանդաւորութեան անիծելոց Թոնրակեանցդ
» 'ի միջի ձերում բարեխորհիցդ յիշատակի[2]. և հիացայ զար-
» մացայ ընդ այդպիսի անյարմար երեսս[3] բանի՝ Աստուծոյ ա-
» տելեացդ, որ ասեն զձէնջ ասել առաւել զայդ գիտնական ա-
» նուն Մուշեղայդ[4], թէ Տեղեկացեալ եմք 'ի մերմէ առաքեալ

յորում կեղծաւոր Թոնրակեցւոց աղանդին պատճառաւ և աղանդաւորաց մէջ՝ սրբասունքն անգամ 'ի Հարս վանորէից ամբաստանուեցան իբրև անոնց համախոհներ։ Ասոնց մէջ էր և սուրբն Գրիգոր, զոր Թշնամիք Ծայր կ'անուանէին, այն է ուրացեալ 'ի հաւատոց։ Այս բանս քննելու համար, նշանաւոր վարդապետաց և իշխանաց ժողով մ'եղաւ 'ի Թագաւորանիստն Անի, ուր և Գրիգոր արդարացաւ։ Բայց որովհետև ամենուն ծանօթ չէր իր անմեղութիւնն, անոր համար ստիպեցաւ ասոր անոր Թուղթեր ալ գրել, Թէև այս Թուղթս անձնական ջատագովութիւն չերևիր։

1. Հոս յիշուած « Տէր Հայրը » Կճաւ կամ Կրճատն վանքի վանահայրն է. սակայն դժբաղդաբար ինչպէս յիշեալ վանքին, այսպէս և անոր վանահայրերու մասին տեղեկութիւնք մեզ հասած չեն. հետևաբար չենք կրնար ըսել, Թէ ո՞վ և ինչպիսի՞ մէկն էր. Թէպէտև Ս. Գրիգոր անոր վերայ մեծ համարումն կը ցուցընէ այլ և այլ տեղեր, բայց ոչ առանց կասկածի։ Այս վանահօրս վերայ ևս ամբաստանութիւնք եղած էին, և մինչև Գրիգորի առանձնարանին մէջ տարածուած. որոնց Թէպէտև սուրբ վարդապետը չէր ուզեր հաւատալ, բայց իր, — և իրմէ աւելի՝ իրեններուն, — գայթակղութիւնն ուղղելու համար գրեց անոր այս նամակս, յորդորական բանիւ։

2. Որչափ որ մեղմօրէն բացատրութեամբ « յիշատակի » գրած է Գրիգոր, իր մտերիմ բարեկամը չխռովելու համար, սակայն կ'երևի, Թէ կամ այն վանքի միաբաններէն իսկ ստուգիւ Թոնրակեանց Թակարդին մէջ ինկողներ եղած էին, բարեմտութեամբ. և կամ, — ինչպէս Նարեկացւոյն հետագայ խօսքերէն կը տեսնուի, — այն աղանդաւորներէն ոմանք չարութեամբ այս տեղեկութիւնս տուած էին Գրիգորի, որպէս զի զինքն ևս վաստկին։

3. Դիտելու ենք, որ Գրիգոր այս ասութեամբ, միտք կամ կարծիք կը հասկնայ։

4. Այս Մուշեղիս յիշատակութիւնն առաջին անգամ կը գտնենք Նարեկացւոյ քով միայն, — իբրև Թոնրակեան աղանդաւորի, — որ գիտնական անուն իսկ ժառանգած էր իր ժամանակակիցներուն առջև. այս տեղեկութեանս համար յոյժ շնորհապարտ ենք Գրիգորի։ Բայց Թէ ո՞վ էր այն, աշխարհիկ ոք և տոհմիկ, Թէ ընդ հակառակն եկեղեցական, այս յայտնի չէ։ Սակայն ժամանակն և ժամանակակից դէպքերն 'ի նկատի ունելով, շատ հաւանական է, որ Կարուց իշխեցողն Մուշեղ Բագրատունի Աբասեանն ըլլայ. որ ըստ վկայութեան Ասողկայ, — Գ. 11 և 12, — յամի Տեառն 984 պատերազմ իսկ բացաւ իր հօրեղբօր Սմբ-

» թղթաբերէ, որ չեն նոքա աւտար յառաքելականդ դաւանու-
» թենէ. և ըղձալ բաղձաւ մեծաւ փափագանաւք հաւասարիլ
» մասին նոցա, և խառնիլ յարեան ընդ կոտորեալսն 'ի սրոյ
» վրէժխնդիր հեթանոս Ամիրային Ապլ-վարդայ[1]. որ արդարև
» գաւազան սրամտութեան 'ի ձեռին Տեառն Յիսուսի. և թէ
» յո՞ր գիրս հրամայէ նզովել զոք, և զերջանիկ տեառն մերոյ
» Անանիայի զզարմանալագիտ հակաճառութիւն նամակին, զրա-
» բանականս ասել[2], կամ անպատեհս, կամ ոչ Աստուծով խաւ-
» սեցեալ։ Արդ եթէ այդոքիկ ազդեցան 'ի ձէնջ, թողում ա-
» սել թէ հաւանեցան, և անխայեմ գրել թէ ճաշակեցան, ապա
» գլխաւորեցաւ առ ձեզ նախագրեալն, թէ կերակուրք նոցա
» ընտիրք՝ զազրացան։

» Բաղում ինչ աստուածային և առաքելական, ամենայն ինչ
» ուրացեալ է 'ի նոցանէ[3] և խափանեալ յաստուածային կար-
» գաց։ Զեռնադրութիւնն, զոր Առաքեալքն 'ի Քրիստոսէ ըն-
» կալան։ Եւ Հաղորդութիւն մարմնոյ նորա, զոր ասաց Առա-
» քեալ, եթէ Զհացն[4] Հաղորդութեան ճաշակելով, զնոյն ինքն

բատայ Տիեզերակալի դէմ։ Յետոյ զեղխութեամբ շուայտելով՝ ախտաւորութեան տուաւ ինք զինքը բոլորովին, և դաշնադիր ըլլալով Դունայ այլազգի Ամերային հետ, հրաւիրեց զայն 'ի Շիրակ, յաւեր և յապականութիւն երկրին։

1. Այս անունս իսկ առաջնոյն պէս անծանօթ է մեզ. ուստի կամ ըլլալու է ամիրայն Դունայ Ապլ-Հաձոյ, կամ ամիրայն Գողթան՝ Ապուտղուի, և կամ Ատրպատականի արշաւադիր բռնակալներէն մին, զոր Գրիգոր յայնժամու սովորութեան համաձայն ամիրայ և վարդ թարգմանած է։ Ինձ կ'երևի, թէ անուամբ չատերուն անծանօթ այս բռնակալս, իր մարդախոշոշ գործերովն ամենուն ծանօթ պէտք է որ եղած ըլլար ի դարուն. մանաւանդ թէ նոյն ամիրայն ըլլալու է, որ Մուշեղայ թելադրութեամբ, յամին 984, թափեցաւ 'ի Շիրակ, և հրով այրեց Հոռոմոսի վանքը։ Ասողիկ, — Գ. 13, — Ապուտղուփայ գործած կոտորածին հետ՝ հայազգի ինկողներուն վերայ ուրիշ բան մ'ալ կը պատմէ, զոր ինձ լռել միայն արժան է։

2. Գրիգորի այս խօսքերէն կ'երևի, թէ Կճաւայ վանահայրը, բանիւ կամ գրով դէմ խօսած էր Անանիայ Նարեկացւոյն և մէկ կողմէն համարձակութիւն տուած էր Թոնրակեցւոց, միւս կողմէն ալ գայթակղեցուցած էր ողջամիտներէն զոմանս։ Այս բանէս, այսինքն է Կճաւայ վանահօր՝ Անանիայ Նարեկացւոյ դէմ ցուցուցած հակառակութենէն, — եթէ ստոյգ է, — կարելի է հետևցնել, թէ կամ ի դարուն Կճաւայ և Նարեկայ վանքերն իրարու նախանձընդդէմ դիրքի մէջ էին, և կամ այն վանահայրն ստուգիւ իր միաբանութեան մէջ ևս տարածել կ'ուզէր Թոնրակեան աղանդը։

3. Թոնրակեցիները կ'ակնարկէ այս տեղ, յայտնի է, և ոչ թէ յիշեալ վանքի հասարակութիւնը։

4. Այս պայծառ վարդապետութենէն յայտնապէս կը տեսնուի, թէ Գրիգորի

» զԱստուած միացեալ 'ի մարմնի ընդունիմք և ճաշակեմք, զոր
» Սմբատ՝ հասարակաց կերակուր՝ զսարսափելին վարդապե-
» տաց[1]։ Եւ զծնունդն հոգևոր երկանցն՝ որ 'ի Լրոյ և Հոգւոյ,
» ծանուցեալ, թէ որդիս Աստուծոյ գործէ, Լուր ինչ լուալեաց
» զնոյն նոցին ուսոյց։
» Եւ զաւրհնաբանեալ զաւր կիւրակէին, յորում արար
» (Բանն Աստուած) զլոյսն առաջին, և կատարեաց զլոյսն[2] յա-
» րութեան իւրոյ 'ի նմին. և զլոյսն կենարար գալստեանն՝ նո-
» վաւ տնօրինեաց, զայն պատկեր[3] պաշտելի աւուր՝ ընդ այլոցն
» զուգաթուեալ նոցին թարգմանեաց[4]։ Արդ՝ զորս յայսցանէ
» զնոցա գիտեմք խափանեալս[5] ոչ առաքելական կամ աստուա-

հետ՝ Հայաստանեայց եկեղեցին իսկ կ'ընդունէր, — լռելեայն, — թէ մէկ տե-
սակաւ, այսինքն է սրբագործեալ հացիւ, — որ ոչ ևս է հաց, — հաղորդուող-
ներն իսկ հաւասարապէս զնոյն ինքն զԱստուած մարմնացեալ և կենդանի կ'ըն-
դունին. և կը յանդիմանուի անոնց տկարամտութիւնը, որք ծիսականը՝ վաւերա-
կանին հետ չփոթելով, կամ լաւ ևս վաւերականութիւնը՝ ծիսին զոհելով, կը
կարծեն սխալմամբ, թէ հացի տեսակաւ հաղորդուողները՝ զուրկ կը մնան յա-
րենէն Քրիստոսի։ Եւ Հայաստանեայց եկեղեցւոյն ըսինք, որովհետև եթէ այս
վարդապետութիւնս իրաք իրենը չըլլար, ոչ Ս. Գրիգոր պիտի իշխէր վարդապե-
տել, և ոչ ալ եկեղեցին պիտի լռէր ներողամտութեամբ։

1. Թէպէտ և այսպէս ընդօրինակուած է, բայց ուղիղը վարդապետաց
պիտի ըլլայ։

2. Այս ընթերցուածս կարելի էր ուղղել, յոյս յարութեան, որովհետև Քրիս-
տոսի յարութիւնը մերինին յոյս և նախատիպ օրինակ եղաւ, և ոչ թէ լոյս. սա-
կայն հետևեալ նախադասութենէն կը տեսնուի, թէ Գրիգոր տարբեր մտքով
« լոյս » գրած է. այսինքն է Ս. վարդապետս կը համարի, թէ յաւուր կիւրակէի
եղած ըլլայ առաջնաստեղծ լոյսը կամ առաջին արարչագործութիւնը. կիւրակէի
կատարուած ըլլայ լոյսն յարութեան, կամ լաւ ևս երկրորդ արարչագործութիւն
մեռեալ բնութեանս. կիւրակէի պիտի լինի նաև Քրիստոսի գալստեան կենսաբեր
լոյսը, զոր յարութեան լուսովը տնօրինեց, կամ լաւ ևս պատրաստեց մահկա-
նացու մարդկութեան համար։ Դիտելու ենք, որ առաջին կէտի նկատմամբ Գրի-
գոր կը թուի տարաձայնիլ միւս Վարդապետներէն, որոնք Ս. Օգոստինոսի հետ՝
շաբաթը կամ կիւրակէն՝ օր հանգստեան կը համարին, և ոչ թէ արարչագոր-
ծութեան։ Ուստի Գրիգոր կամ այլ ինչ կ'ուզէ հասկցնել անով, և կամ ըստ
եբրայականին կը վարէ զայն։

3. Այս բառովս կամ կանոն կը հասկնայ, և կամ քանորդն աւուր եօթնեկի
ամսոյ։

4. Այսինքն, ուսոյց կամ վարդապետեց իրեններուն, շարն Սմբատ։

5. Այսինքն է, թոնրակեցիք կիւրակէին հետ՝ անոր խորհրդաւոր նշանակու-
թիւններն ալ կ'ուզէին խափանել, պատճառելով, թէ այն բաները ոչ առաքելոցմէ
օրինադրուած են, և ոչ իսկ յԱստուծոյ։

» ծականս։ Զհնարադրութեան խորհրդական պաղատանս[1], զոր
» ինքն արարիչն ամենայնի (Յիսուս Քրիստոս) խոնարհեալ կըրկ-
» նեաց։ Թէ զաւազանն[2] ուրացեալ 'ի նոցանէ, յորում ինքն
» Քրիստոս մկրտեցաւ։ Թէ զՀաղորդութիւն[3] անմահութեան,
» զոր ինքն Տէրն բոլորիս ճաշակեաց։ Թէ զմծղնէական ան-
» խտիր պղծութիւնն, զոր Տէրն զհայեցուածն արգիլեալ խոտեաց։
» Թէ զնշանն երկրպագեալ, զոր Աստուածն մարդացեալ՝ յուսն
» իւր բարձեալ կրեաց, իբր զփառս ինքեան և զիշխանութիւն։
» Թէ զմարդապաշտ ուրացութիւնն, որ գարշելի է և անի-
» ծեալ քան զկռապաշտութիւն։ Թէ զինքաձեռն քամահանաց[4]
» քահանայութիւնն, որ սատանայի է նմանութիւն։ Թէ զպա-
» կին ամուսնութեան անգոսնութիւն, զոր Տէրն ինքեա՛ն[6] աքան-
» չելեալք, և մարբն իւրով Աստուածածնաւ յարգեաց և պա-
» տուեաց, զպսակն անգոսնեն, և զոր սիրով մերձենան առ

1. Այս տեղ «պաղատանք» բառով՝ կամ ընդհանուր, և կամ մանաւանդ տէրունական աղօթքն «Հայր մերը» կը հասկնայ հեղինակս։

2. Այսինքն է Մկրտուրեան խորհուրդը, զոր անկարօտն մաքրութեան Քրիստոս ընդունեցաւ և ուսոյց կատարել։

3. Դիտելու ենք, որ այս տեղ ուղղակի վերջին Ընթրեաց վերայ է Գրիգորի խօսքը, և ոչ թէ ընդհանուր կերպով Հաղորդութեան վերայ, զոր արդէն յառաջագոյն մէջ բերաւ։ Սմբատ մերժելով Քրիստոսի Ընթրեաց հաստատութիւնը, մերժած էր նոյնպէս ոչ միայն Տեառն մերոյ կենարար մարմնոյ և արեան Հաղորդութեան ճշմարտութիւնն, այլ և Հայաստանեայց եկեղեցւոյ տօներէն հնագոյնն և նուիրականը, զոր այնքան շքով և պատուով կը կատարէին։ Այս պատճառաւ ուրեմն Գրիգոր մեծ կարևորութիւն տալով, առանձին յիշատակած է զանոնք, իբրև կրկնակի և կարևոր նիւթեր՝ Սմբատայ ուրացութեան։

4. Գրիգորի այս տեղին շհասկցուելու շափ մութ է. սակայն ինձ այնպէս կը թուի, թէ ըսել կ'ուզէ (Սմբատայ համար) ուրանալով Քրիստոսի աստուածութիւնն, իբրև լոկ մարդ կը դաւանի զնա. և կամ ինք զինքը պաշտելի ընելու համար՝ կ'ուրանայ Քրիստոսի աստուածութիւնը։

5. Այս բացատրութեամբս կ'ակնարկէ աղանդապետին այն յանդուգն ձեռնեռիցութիւնն, որով ինքը, — թէև սոսկ աշխարհական մ'էր, — բայց արհամարհելու համար զխորհուրդն Քահանայութեան, ձեռնադրութիւններ կ'ընէր։

6. Այս տեղ՝ Կանայ Գալիլեացւոց հարսանիքը կը յիշեցնէ, զոր պատուելու համար հոն գտնուեցաւ Յիսուս իր մօրը հետ, և աքանչելեաք զջուրն 'ի գինի փոխարկեց։

7. Այս նախադասութեամբս, — դիտելու ենք, — որ Գրիգոր ուզած է թոնրակեցւոց այն մոլորութիւնը մէջ բերել, որով կ'ուրանային Պասկի խորհրդական մառն, և իբր բնական դաշինք մի կը համարէին զայն։ Եւ որ շարագոյն է, այդ դաշինքն իսկ՝ ամէն առն և կնոջ համար և ամէն պարագայից մէջ օրինաւոր և վաւերական կը համարուէր, բառական էր, որ անոնք բնական յօժարութիւն ու-

» յիրեարս, կատարեալ սէր համարին և յԱստուծոյ, և հաճոյ
» Քրիստոսի, թէ Աստուած սէր է, և զսիրով միաւորիլն կամի
» և ոչ զպատակ։ Թէ զերախայրեացն կատակերգական։ երգի-
» ծանութիւնն, զորս Աբէլ և Նոյ, և Աբրահամ և Դաւիթ, և
» Սողոմոն և Եղիայ աստուածային բարկութեան ցուցին հաշ-
» տարարութիւն։ Թէ որ զգլխաւոր[2] աղանդին իւրեանց գար-
» շութեան (զգլուխն) յա դգնեալ Քրիստոս անուանեն, զոր Քրի-
» ստոս կանխաւ վկայեաց, թէ Ցարիցեն սուտ մարգարէք. և այս
» է ասելն մարգարէին, թէ խորհեցաւ անզգամն 'ի սրտի իւրում,
» թէ ոչ իցէ Աստուած։

» Արդ այսոքիկ են քննաւղիդ Մուշեղայ՝[3] անխոտոր հաւա-
» տոյ առաքելականքս[4]։ Արդ զայսոսիկ հաւրեղբայրն մեր և
» վարդապետ մեծաւ քննութեամբ խնդիրս արարեալ, իբրև
» զԱստուծոյ ջատագով, և անդստին իբր զիմաստուն նախամար-
» տիկ տապալեաց զառասպելաբան՝ հայհոյութիւն անաւրինելոցն
» Թոնրակեանցն, թէ (ապա թէ) ոչ՝ մեք զանուն պղծոցն 'ի
» համբաւուց 'ի սակաւ ինչ լրոյ գիտէաք։ Արդ՝ զի՞նչ պարգևս
» ընտրութեան տեսեալ 'ի գարշելին Կումբրիկոս[6], և կամ յի-

նենային իրարու հետ միանալու, թէ և այդ յօժարութիւնը առանց զաւակասե-
րութեան նպատակի, այլ պարզ հեշտութեան համար ըլլար։

1. Տեղիս ուղղակի ակնարկութիւն է Թոնրակեցւոց այն մոլորութեան, որով
կը ծաղրէին, — այլ և այլ ծաղրապատկերներով և անհեթեթ պատմութիւննե-
րով, — քրիստոնէից՝ Աստուծոյ կամ անոր պաշտօնէից ձօնած նուէրները,
տասանորդներն և պտղիները։

2. Ինչպէս կանխաւ ըսինք, Թոնրակեցիք իրենց գլխաւոր աղանդապետքը
Քրիստոսի տեղ կը պաշտէին. Բայց Սմբատ առաջինն եղաւ, որ կամ բռնի և
կամ իր ըրած կախարդութիւններովն՝ ինքզինքն իբրև Քրիստոս երկրպագել տուաւ
իր հետևողներուն, և այս է Գրիգորի ակնարկածը։

3. Այս Մուշեղս՝ վերոյիշեալին հետ նոյն է, որուն ջատագով կանգնած էր Կը-
ճաւայ վանաց վանահայրը։ Գրիգոր անուղղակի կերպով առ այն կը խօսի. զի իր
նամակն վերջնոյս ուղղած էր։

4. Հօս կամ հենգնօրէն զՄուշեղեանս կը յանդիմանէ Գրիգոր, և կամ մէջ բե-
րած մոլորութեանց և ուրացութեանց դէմ իրմէն յաւելցուցած վարդապետու-
թիւնքը միայն « առաքելական » կ'անուանէ։

5. Եթէ ուրիշ ապացոյց չլինէր, այս պարագայս իսկ բաւական զօրեղ ապացոյց
մ'էր, թէ թուղթս Գրիգորի Նարեկացւոյ հարազատ գործ է, թէ և այն թղթի մա-
կագրութիւնն ուրիշ յետագայ գրչէ մի յարմարեալ է, իբրև հիմն և ենթակայ ու-
նելով իրեն դարձեալ այն թուղթը։ Այո՛, Գրիգոր, — թէ շատ՝ անոր հարազատն
Յովհաննէս — կրնար հօրեղբայր անուանել զԱնանիա Նարեկացի, զի ստուգիւ այն-
պէս էր, և այս բանս ուրիշ յաղբերաց իսկ քաջածանօթ է։

6. Այսպէս կ'անուանէր ինք զինքը Մանի. դեռ իր աղանդը չի հնարած. բայց

» շատակ բարոյ 'ի Սիմոն, և կամ յոյս ակնկալութեան 'ի նեռն,
» որոց նոցա են աշակերտեալք. որ զերախտիսն անպատում
» բարեգործութեան չարչարանացն մոռացեալ, զնոսա կարդան
» ապաւէն, որ զնոցանէն ստացեալ։ Որք են շարք շանց և գու-
» մարք գողոց, և գունդք գայլոց և դասք դիւաց. և ագինք
» աւազակաց և կոյտք կերչաց, և բոյլք բարբարոսաց և խում-
» բքք խաչահանուաց, և ժողովք չարեաց և արք արեանց, և
» երամք թունաւոր աւձից և վտառք մարդադէմ գազանաց, և
» կաճառք կախարդասարաս աղանդաւորաց. և ոչ միայն եկեղե-
» ցականաց, այլ և հեթանոսաց են անդոսնելիք։

» Քանզի և այն հզաւր[1] այր՝ խնդրող վրիժուց նախատանացն
» Քրիստոսի, որ զանիծեալ զնախնիս նոցա խայտառակամահ
» սատակեաց, զայս ինչ ասէր ցերկրորդն[2] Յամրէսի, թէ Քրիս-
» տոս յերիր աշուշր յարեաւ. արդ մինչ դու զքեզ Քրիստոս
» անուշանես, սպանանեմ զքեզ և թաղեմ, և դու զկնի երեսուն
» աշուշր կենդանացիր, ես գիտեմ թէ Քրիստոս իցես. թէպէտ
» այնքան աշուշրաք բազմաշաք յետոյ յարիցես։ Արդ նա մերձ
» էր և դրացի դառնացողացն մոլեգնութեան. և զայն լուր 'ի
» բազմաց ճառողաց կրթեալ էր, և Քրիստոսի ճշմարիտ յա-
» րութեանն ամենայնի հաւատայր. և զնոցայն այպն արարեալ՝
» իբր զարժանիս հենդնելոյ եթող յիշատակ բանից գովելեաց.

չեմ կարող պնդել, թէ Գրիգորն ես նոյնը կը հասկնայ, և ոչ այլ ոք. որովհետև այս անունս արևմտեան աղբերաց միայն ծանօթ է, և կը գրուի Կիբրիկոն Κίβριχον, Urbicum, Corbicium: Գրիգորի գործածած ձևն՝ յունին աւելի մերձաւոր է. ուստի կամ Փոտէն և կամ Ս. Աղբեղաւոսէն փոխ առնուած է. բայց Նարեկացւոյն ընծայածն աւելի ուղիղ կ'երևի։

1. Մեր պատմագիրներէն ոչ ոք կը յիշէ յանուանէ այս նոր Եղիազարոս, և ոչ ալ անոր վրէժխնդիր գործը, զորս գժբաղդաբար քօղարկելով մէջ բերած է հմուտն Գրիգոր. հետևաբար մենք ալ չկարեմք ստուգութեամբ նշանակել անոր ո՛վ ըլլալը. սակայն երկբայութեամբ հաւանական կը համարինք ըսել, թէ Բագարատ Բագրատունին եղած ըլլայ, որ Յովհաննէս Ովայեցի կաթողիկոսին ժամանակից էր։ Այս իշխանս, — զոր պատմագիրք մեր հզոր և յոյժ կրօնասէր կ'անուանեն, — թէպէտ և յետոյ Հագարացւոց Ամիրապետին և որոյն առջև թուլնալով՝ առ երեսս ուրացաւ իր հաւատքը՝ կեանքն ապրեցնելու համար. սակայն յառաջագոյն միշտ պաշտպան հանդիսացած էր Քրիստոնէութեան և սուսեր հատու անհաւատից. այնպէս որ Ամերապետին դուռը կանչուած ժամանակ իսկ՝ Ս. Կտակարանաւ և դասուք քահանայից չոքաւ անդ։ Եւ կամ Սմբատ Ա. էր, եթէ Ասողկայ հետ ընդունինք, որ Թոնրակեցւոց աղանտապետը՝ Յովհ. Պատմաբան կաթողիկոսի ժամանակ 'ի վեր երևեցաւ, և ոչ թէ Ովայեցւոյն։

2. Երկրորդ Յամրէսի անուամբ՝ զաղանդապետն Սմբատ կը հասկնայ Գրիգոր, — ինչպէս ըսինք յառաջագոյն, — և այս բանս յայտնի է ոչ միայն Գրիգորի այն խօս-

» քանզի և զայն Աստուած՝ և ոչ երկրային խորհուրդ տնկեաց.
» հրամայեալ տնտեսեաց նովաւ չարաւ զչարիսն խրատեալ և
» կամ սատակեալ. որպէս զվիշապն ահագին հնդկային[1] ետ
» կերակուր, և զՀրէայսն՝ քաղդեացովքն խրատեաց, և զխա-
» չահանուսն՝ Ցիտոսիւ և Վեսպասիանոսիւ և Ադրիանոսիւ դա-
» տեալ խորտակեաց. և զեգիպտականացն ազգ՝ Կիւրոսիւ կործա-
» նեալ կրկին կշտամբեաց. և մեծ հեծան հարուածոց ասի նոյն
» ինքն Բելիար կախեալ 'ի տաճարին հրամանաց ահաւորին։
» Արդ զևքն՝ Աստուած գիտացին զՄիածինն և դատաւոր ա-
» մենայնի դաւանեցին, և պիղծն Սմբատ կրկին Սիմոն՝ իւրոցն
» դառնարմատ և որոմնաբոյս աշակերտացն՝ զինքն ետ երկիրպա-
» գանել. որպէս մոգն այն[2] Սամարացի, և Մոնտանոս և Պիւ-
» թագորաս՝[3] անգրական և հեթանոսային իմաստասէր։ —

քերէն, որ կ'ըսէ, — թոնրակեցւոց համար, — թէ « Զգլխաւորն ազանդին իւ-
բեանց Քրիստոս անուանեն », այլ նոյն իսկ հետևեալ պարբերութենէն, ուր յիշեալ
դէպքը օրինակներով պատմելէն վերջ անմիջապէս կը յարէ. « Արդ զևքն՝ զԱ-
տուած գիտացին զՄիածինն... և պիղծն Սմբատ... զինքն ետ երկիրպագանել »։

1. Այս տեղիս՝ ակնարկութիւն է Յովբայ, գլ. Լթ. 25ին, ուր աներևոյթ վիշապի
զգալի նկարագրութիւնն ընելով, կ'ըսուի. « Կերակրեացին նովաւ ազինք, և բաժա-
նեսցեն զնա ազգք Փիւնիկեցւոց », և այլն։ Հնդկային ըսելով՝ այն ծովը կը հասկնայ
հաւանօրէն Գրիգոր, որ աւելի ծանօթ էր հնոց՝ իր վրայ եղած զանազան առաս-
պելաբանութիւններով. և կամ Ս. Գրոց տարբերութարգմանութիւն մ'ենթադրել
կու տայ։

2. Դիտելու ենք, որ զՍիմոն Մոգը կը հասկնայ Գրիգոր, զոր քիչ յառաջ յիշա-
տակեց իբրև նախատիպ կախարդին Սմբատայ։ Անոր Սամարացի ըլլալը՝ Գործոց
Առաքելոցի Ը և Թ գլուխներէն գիտէր հաւանօրէն Գրիգոր։ Սակայն սրբազան հե-
զինակն անոր, — յամին 36, — 'ի Սամարիա գտնուիլն և Փիլիպպոս առաքեալէն
հոն մկրտուիլը միայն կը յայտնէ մեզ։ Յուստինոս, — Apol. I, C, 26, — անոր
ծննդավայրը Գիտտոն աւանն եղած կը համարի Սամարիայի մօտ. իսկ Յովսե-
պոս, - Ant. Iud. l. XX, C, 7, 8, §. 2, - Գիտտոնացի անուանեալ Սիմոն մի կը
յիշէ, ծնեալ 'ի Կիպրոս կղզի։ Ուստի այս և ուրիշ հին ազգաց տարաձայնութենէն
կը հետևի, որ այլևայլ Սիմոն մոգեր եղած ըլլան, Սամարացւոյն պատուին արժա-
նանալու համար. զի Յուստինոս կ'աւանդէ, թէ Կղոդիոս կայսեր ժամանակ, Տիբե-
րիսի մէջ արձան մի կանգնուեցաւ Սիմոնի, այս վերտառութեամբս. Simoni, Deo
Sancto. Եւ իրաք յամին 1574 գտնուած կ'աւանդուի յիշեալ կղզւոյն մէջ, 'ի Հռովմ
սիւն մի, որուն վրայ գրուած էր. Simoni Sancto Deo Fidio Sacrum:

3. Նարեկացւոյ այս բացատրութիւնս Ս. Եպիփանու Հերձուածոց գիրքը կը յի-
շեցնէ մեզ, և կամ լաւ ևս այն գրութեան հայերէն համառօտ թարգմանութիւնն,
յորում « հեթանոս » և « գնացողական » գրուած է, փոխանակ « անգրական » ի։
Գրիգորի զնա յիշատակելուն պատճառն իսկ այս գրուածքէս յայտնի է, այսինքն է,
զի « զինքն Աստուած անուանեաց վասն իմաստուրեան », որպէս Սմբատ կախարդու-
թեամբ։

» Արդ ամենեին նուազս 'ի յոքունց և սակաւս 'ի բազմաց
» գծագրեցի և մեամ լսել 'ի բանից ձերոց. քանզի առաջի է
» տէրունական կանոնի սահման. Եւ 'ի բանից քոց արդարացիս
» և 'ի բանից քոց պարտաւորեսցիս։ Այլ եթէ ընդ գրաբա-
» նութիւն[1] նոցին զարմանայք, գիտեմք և զսատանայ՝ սաղմոս
» ասացեալ յաւր փորձութեան ամենափրկչին։ Եւ արդ եթէ
» ոչ անէծս կրկին և նզովս բազմապատիկս ոչ արձանացուցանէք
» սկզբնահաւրն նոցա Սմբատայ, և մեռելոց նոցա և կախար-
» դական կրօնից և դաւանութեան նոցա, և զոր բարին կեր-
» պարանին՝ կրկին կղկղանս գրէք և առաւել ուրացութիւն վար-
» կանիք, և յիմ[2] նամակիդ ոչ նշանակէք՝ որով զձեզ անարատ
» յարմար է առնել, և զդայթակղութեանն խէթ տարագրել. և
» գիտէք և իմանայք եթէ վասն ձեր բարւոյ և խաղաղութեան
» և սիրոյ գրեցի և հոգացա (յ). զի (եթէ) ամրոցդ[3] այդ ապաս-
» տանի՝ 'ի պահողայ[4] դորին նենգեսցի, ապա դուք ձեզէն պա-
» տուականութեան ձերում մատն եղէք. զի այդ Մուշեղ՝ վարդա-
» պետ զինքն գրէ, պարտ է ախոյեան զինել ընդդէմ հակառակոր-
» դին և զխրատն հատեալ՝ կարկատել, և զթերին պատսպարել և
» խաւարելոյն լոյս և աղ և խրատիչ լինել, ըստ աստուածային կա-
» նոնին. ապա թէ լոյսդ կարծեալ 'ի դմա՝ խաւար է, ստուգա-
» պէս աւձահար թովիչ է և անիմաստ դեղատու. զի գիտութիւն
» ոչ աւժանդակեալ մատամբն Աստուծոյ, ձայն է անընդրական՝
» անյարմարապէս աղդեցեալ, և պատգամ է նենգական՝ խա-
» փանիչ խաղաղութեան։ Եւ արդ ո՞ւր գիտութիւն դորա՝ ա-
» սելդ[5], թէ Յո՞ր գրոց ուսիցն ևզովել զոք։ — Պաւղոս և զՀրեշ-

1. Զրաբանութիւն թերևս. վասն զի, — ինչպէս տեսանք, — Թոնրակեանց մէջ քիչեր կային, ընդհակառակն, գրաբանք կամ գրագէտք։

2. Այս տեղ Գրիգորի խօսքն՝ ուղղակի ամբաստանուած վանահօր՝ առ ինքն գրելիք պատասխանին համար առնելու է, և ոչ անոր յառաջագոյն առ Գրիգոր գրած ուրիշ նամակի մի. բայց թէ Նարեկացւոյն պէս առն Աստուծոյ, այս աղու և միանգամայն սպառնալից խօսքերն արդեօք իրենց վերջնական արդիւնքը ունեցան Կճաւայ վանահօր վրայ, և թէ ի՞նչ պատասխան գրեց նա առ Գրիգոր, և ի՞նչ վերջ ունեցաւ յիշեալ վանահայրն, այս ամենայն անյայտ մնացած են ցարդ։ Սակայն անկէց վերջ եկող դարուց այն վանքի վրայ կափարչի մի պէս ծանրացած գերեզմանական խոր լռութիւնն՝ աւելի ձախող, քան թէ յաջող ելից կը թուին ըլլալ առհաւատչեայ։

3. Ամրոց ըսելով, անտարակոյս Կճաւայ վանքը կը հասկցուի, ուր ապաւինած էր աղանդաւորն Մուշեղ, և հաւանօրէն պաշտպաններ և համախոհներ ևս վաստկած էր, գիտնական վարդապետ ձևանալով բարեմիտ աբեղայից առջև, թէպէտ և ինքն թովիչ էր և դեղատու մոլորութեան։

4. Այն վանքին առաջնորդները կ'ակնարկէ։

5. Մուշեղայ այս և ուրիշ խօսքերը, զորս մէջ կը բերէ Գրիգոր, կը ցուցնեն, թէ

» տակն աւտարի։ ոչ (՞) խորհող, նզովեալ և զնոյն կրկնեալ ոչ
» պատկառեաց. և Դաւիթ՝ զխոտորեալսն ինքն անէծ, կշտամ-
» բութեամբ ստորագրեաց։ Եւ Ցէրն՝ զընաւ ահեկանացն դա-
» սալքութեանն ասէ. Երթայք յինէն անիծեալք. և զհերձուա-
» ծողական չարափառութիւնն 'ի Նուագ[2] դաւանութեանն որ
» զկնի Աւետարանին կանոնեալ[3] պաշտի կրկին[4], նզովեալ 'ի
» սուրբ ժողովոյն Նիկիա[5] ընկալաք և ուսաք. դարձուցաց քղ-

կամ այդ անձը գրաւոր Հակաձառութիւն մի գրած էր ուղղափառաց դէմ, որոնք Թոնրակեանց դէմ նզովք կը կարդային, զգուշացնելու համար անոնցմէ զժողովուրդն. և կամ նա ինքն Գրիգոր բանիբուն մարդկանցմէ բանիւ և գրով շատ ընդարձակ տեղեկութիւններ առած էր Կճաւայ վանականաց, անոնց վանահօր և Մուշեղի մասին, որոնք տակաւին անյայտ կը մնան ցարդ։

1. Հայերէն թարգմանութիւնը՝ զաւելին աւետարանողը կը գրէ. հօս ալ Գրիգորի կամ աղբիւրը տարբեր էր, կամ ինքն աղատաբար Ս. Գրոց օրինակները մէջ կը բերէ, և կամ այս տեղիս պակասաւոր է։

2. Այս երկու բառերովս « իսկ որք ասեն », և այլն, դաւանաբանական նզովքը կը հասկնայ սուրբ վարդապետս, զոր Աւետարանէն վերջ կ'ընթեռնուին 'ի լուր ժողովրդեան. մինչդեռ այսօր Հանգանակեն վերջ կը կատարուի։ Ուստի Գրիգոր « զկնի Աւետարանին » ըսելով կամ Հանգանակն ևս 'ի միասին ուզած է հասկցնել, և կամ Ժ դարուն Հայաստանեաց եկեղեցին այժմեանէն տարբեր կարգաւորութեամբ կը կատարէր զայն։ Մեզ համար առաջին կէտն անտարակուսելի է, — Է և Ը երորդ դարու հեղինակաց վկայութիւններով։

3. Այսպիսի կանոնադրութեան և « կրկին » գործադրութեան բուն ժամանակամիջոցն յայտնի չէ մեզ. բայց հաւանօրէն Զ երորդ դարէն և այսր պէտք է որ եղած լինի. այսինքն է, Հայաստանեայց եկեղեցւոյ Հանգանակի ներմուծման ժամանակ։ Այսր ապացոյց է այն աչքի զարնող երևոյթն, այսինքն է, առաջին անգամ Աբրահամ կաթողիկոսի և Ն. Շինողի դաւանաբանական Շրջաբերականներու և թուղթերու մէջ միայն կը հանդիպինք, յիշեալ Նզովքէն մէջ բերուած հատուածներու, որոց կը ձայնակցի ապա Լամբրոնացին, — Պատարագի Մեկնութեան մէջ. — իսկ անոնց մէ յառաջ ոչ այլ ուրեք։ Երկրորդ դիտելու ենք, որ այն նզովքը միայն Հայոց եկեղեցին կ'արտաբերէր 'ի ժամ Ս. Պատարագին, Յունացմէ և Լատինացմէ հեռանալու դիտմամբ. իսկ յիշեալ եկեղեցիք, — այսպէս և Դ և Ե երորդ դարու մեր եկեղեցին, — Մկրտութեան և ուխտադրութեանց ժամանակ կը պաշտէին զայն, զկնի Հանգանակին։

4. Կրկին բառով, — եթէ « Նուագին » վերաբերենք, — « իսկ մեք փառաւորեսցուք » աղօթքը կը հասկցուի, — զոր ազգային աւանդութիւնը Ս. Գր. Լուսաւորչին ընծայած է, բայց սրամիտն Հ. Յով. Գաթրճեան Զ երորդ դարուն շինուած կը ցուցնէ։ — Իսկ եթէ « պաշտի » բային վերաբերենք, կը նշանակէ, թէ կամ յիշեալ նզովքն երկու պարագայից մէջ կը կատարուէր, այսինքն է 'ի ժամ Ս. Պատարագին և 'ի Մկրտութեան, և կամ առաջին կիրառութիւնն ընդհատուած ըլլալով, երկրորդ անգամ ևս կանոնեցին Հայք կատարել զայն այնպէս։

5. Գրիգոր այս տեղ միայն Նիկիոյ Ս. Ժողովոյն կ'ընծայէ « իսկ որք ասեն »

» թոցն պատասխանեցաց Պետրոսի 'ի Սահակայ՝։ զորոշեալսն
» 'ի քաղկեդոնականացն նզովական բանիցն խրատեաց։ Եւ
» Կիւրղի Աղեքսանդրացւոյ գլուխք նզովակա՛նացն հաստատեցոց
» ընդդէմ Նեստորի, և Հենատիկոն թուղթն Զենոնի կայսեր, որ
» նզովէ յանուանէ զընաւ հերձուածողսն. զի թէ որ 'ի մնանէ
» ունի թերութիւն՝ պատուիրանաւ պարտիմք նզովել, ո՞րչափ
» առաւել զբազմհերձուած ժողովոյն զդասս, որ կարեալ են 'ի

Նզովքը, և անկէ միայն ընդունած. սակայն դիտելու ենք, որ անոր վերջի մասը, — որ հոգեմարտից դէմ է, — Կ. Պոլսոյ ժողովքէն ընդունած են մերքս։

1. Հօս յիշատակուած Սահակն և անոր պատասխանական թուղթն առ Պետրոս, — այսպէս նաև անոր ժամանակակից Պետրոսն — որոշ պարագայիւք յիշուած չեն. բայց հետևեալ բացատրութենէն, ուր Քաղկեդոնի ժողովոյն յիշատակութիւն կ'ըլլայ, կարելի է ըսել առանց երկբայութեան, որ Ս. Սահակ Պարթևը չէ նա. որովհետև՝ Պարթև հայրապետս յիշեալ ժողովէն յառաջ արդէն վախճանած էր, հետևաբար և ոչ իսկ կարէր անոր մասին խօսել։ Ուստի կամ Սահակ Բ. կաթողիկոսն ըլլալու է յիշեալն, և կամ Սահակ Գ, որուն անուամբ ընդարձակ թուղթ մ'ալ հասած է մեզ, — 'ի թղթոց գիրս, — հետևեալ մակագրութեամբ. Բացայայտութիւն հաւնձայն աստուածաբանութեան հոգեղից հարցն սրբոց ըստ առաքելականաց աւանդիցն եկեղեցւոյ Քրիստոսի, հանդերձ հաւատաբանութեամբ ուղղափառ և ճշմարիտ դաւանութեան Հայաստանեայց, ասացեալ սրբոյ վարդապետին Յահակայ Հայոց կաթողիկոսի և մեծի թարգմանչի՝ ընդդէմ երկարնակաց Նեստորականացն »։ Այս թղթիս մէջ, — ուր ընդհանուր Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանաբանութիւնը կ'ըլլայ առ Հայաստանեայս, — Քաղկեդոնի ժողովոյն և անոր վերաբերեալ խնդրոց մասին իսկ երկարօրէն և խրատաբանական կերպով կը խօսուի, որ քաջ կը համաձայնի Նարեկացւոյ ըսածին, թէ « Զորոշեալսն 'ի քաղկեդոնականացն նզովական բանիցն՝ խրատեայ »։ Սակայն մեր ընդօրինակութեան խանգարուած և պակասաւոր տեղերէն դատելով, կրնանք ըսել, թէ անոր բնագրին մէջ ևս օտար ձեռք մտած է, և ուղիղ ասացուածներն ըստ կամս թիւրած կամ քերած է։ Գրութեանս հեղինակն՝ իր թղթին հետևեալ խօսքերով կը ցուցնէ, թէ առ խնդրող ոմն գրած է, ստուգիւ, իբրև պատասխանի հարցմանց. « Բայց դու խնդրողդ ուղիղ հաւատոյ բանի, զայս ամենայն առեալ և առաւելեալ 'ի նմա... յաղթեա հերձուածողական հնարից »։

Իսկ թէ յիշեալ Պետրոսն էր արդեօք այն խնդրողն, և թէ ով էր այն. որոշ բան մի չենք կրնար ըսել։ Թղթոց դրքի մէջ Պետրոսի ուրուն թուղթը կայ, գրեալ առ աննդակից իւր և եպիսկոպոսակից, այս մակագրութեամբս. « Հաւատարմագունի և խնամատանագունի և սիրագունի Էդեսայ՝ ողորմելիդ Պետրոսի՝ Ցերաւք խնդալ »։ Այս թուղթս իսկ առաջնոյն նիւթոց վրայ կը խօսի և քաջ կը համաձայնի անոր. բայց անոր հեղինակն ասորի եղած կը տեսնուի, և դաւանութեամբ ալ ոչ ուղղափառ. զի կը յիշէ զՏիմոթէոս իբրև իրեն նախահայր, և զԻբաս Նորա. իսկ Տիմոթէոսն այն՝ եթէ կուզ մականուանեալ Աղեքսանդրիոյ եպիսկոպոսն է, այն ատեն Պետրոսն ալ Կնափեցին կրնայ ըլլալ, որոնք կ'ապրէին 470–482 ին։ Սակայն այս կերպով շատ կը հեռանան Սահակ Բ և Սահակ Գ կաթողիկոսներու ժամանակակից ըլլալէն։

» Քրիստոսէ, և կապեալ միացեալ ընդ սատանայի։ Եւ արդ,
» Տէր Հայր, մի՛ դժուարիք ընդ բանս գրոյդ, և զանխարդախ
» սէրդ՝ ատելութիւն վարկանիք. զի սէրն Քրիստոսի ստիպէ
» զմեզ յայսոսիկ, և կամիմք զձեզ ամբիծս լինել. և զՀաւրն Մնա-
» նիայի զլիագիտութեամբ զմատեանսն, որ ընդդէմ հերձուածո-
» ղացն՝ հոգս տարեալ գրեաց[1], և դուք գրել[2] հրամայեցէք »։

1. Դիտելու ենք, որ Գրիգորի զմատեանսն յոքնակի բառը՝ երկու բան կարող է նշանակել աստ։ Ա. այլևայլ գրուածներ։ Բ. Սաուար մատեան մի, որ բաժնուած էր մի քանի մասանց կամ գրոց։ Մենք վերջին նշանակութեամբ եղած կը կարծենք Անանիայ Նարեկացւոյ՝ ընդդէմ Թոնրակեանց գրութիւնն. որովհետև թէ Մագիստրոս և թէ Գրիգոր՝ այլուր եզակի թուով կը յիշատակեն զայն։

2. «Գրել» ըսելով սուրբ վարդապետս՝ կամ ընդունել, ձանչնալ կ'իմանայ, և կամ լաւ ևս կը խնդրէ Կճաւայ առաջնորդէն, որպէս զի ինքն ալ Անանիայի օրինակին հետևելով, նման գրուածով մի հերքէ և նզովէ Թոնրակեանց աղանդը։ Այս բանիս յայտնի ապացոյց են անոր նախագրեալ սպառնական խօսքերն իսկ։